





АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ  
ИНСТИТУТ ИСКУССТВ

ГЕНРИХ ОГАНЕСЯН

ДРЕВНЕАРМЯНСКАЯ  
ДРАМА И ЕЕ  
МОДИФИКАЦИИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ  
ЕРЕВАН 1990

891.981.09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԳԵԲՈՒ ԽՈՏԻՏՈՒԹ


ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅ ՀԻՆ ԴՐԱՄԱՆ  
ԵՎ ՆՐԱ

ՊԱՅՄԱՆԱՉԵՎԵՐԸ

Հ 81/936



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՍԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆ 1990

**Հ 854** Տպագրություն է Հայաստանի ԳԱ արտիստի ինստիտուտի դիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
արվեստագիտության թեկնածու Դ. Հ. Ղազարյան

Գիրքը Հրատարակության և հրաշխավորել  
բանասիրական գիտությունների գոկուր Լ. Հ. Հախվերդյանը  
և բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Մ. Խաչուրյանը:

### ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ Հ. Վ.

**Հ 854** Հայ Հին գրաման և նրա պայմանաձեկրությունը (Պատ. խմբ. Վ. Հ. Ղազարյան): Արվեստի ինստ.—օր.։ Հայաստանի ԳԱ հրատ., 1990. 296 էջ 5թ. նկ.

Աշխատությունը շրջափում է Հայ Հին և ժողովրդական դրամագիր պատմատիպաբանական և թեմատիկ առնչությունները: Ֆննը-վում և՛ Հնագույն խորհրդապաշտական գրամայի առասպելաբանական և ժիռային արժանաները, խորհրդանիշների ու պայմանաձեկրություններին ընդհանրությունները, ինչպես նաև ժողովրդական գրամատիկական խաղերի թեմաներն ու արտաքին նշանները:

Գիրքը նախատեսվում է Հին բանահյուսության ու գրականության խնդիրներով հետաքրքրվող մասնագիտների, թատերագիտների և գրամայի անսությամբ ու պատմությամբ զբաղվողների համար:

4907000000

**Հ ————— 87—89**  
**703 (02) — 90**

ԳՄԴ 85.33+83

(C) Հայաստանի ԳԱ հրատարակության, 1990

## ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Միջնադարում հոլովված մի զրուց, ծիսական մի հին ավանդություն, լեզվական վկայություններ, մատենագրական ինչ-ինչ ակնարկներ, որ հուշում են ավանդման զրամատիկական եղանակ, մեզ մի ծայրով ձգում են հետ՝ զեպի նախարրիստոնեական շրջան, մյուսով հասցնում նոր ժամանակների դուռը Ռևտի, հին ասելով հասկանում ենք հնավանդ, հնություն բերող, հնից պատմող:

Այսպիսին է մեր ուսումնասիրության առարկան:

Հնադարյան վկայություններ չունենք և չենք էլ փրնուրում. ենում ենք երեսութի միջնադարյան անդրագարձումներից. Փորձում ենք հնադարը դիտել միջնադարյան լապտերով, աշքի առաջ ունենալով ժողովրդական ավանդների դրավոր ու բանավոր հետքերը:

Խնդիրը հայ հին դրամայի պատմատիպաբանական և թեմատիկ աղերսների քննությունն է որոշակի մի շրջանակում, առասպելաբանական ու ծիսային պայմանաձևերի և համեմատաբար ուշ ժամանակներում դիտված ժողովրդական դրամատիկական խաղերի իմաստաբանության ու ներքին առնչությունների որոնումով: Նկատի ունենք երեսութիւնները, նկարագիրն ու տիպը, այն գծերը, որոնք հայ ժողովրդական դրաման մերձեցնում են թատերական հնագույն համակարգին՝ պարերգական (խորային) դրամային: Հին-խորհրդապաշտականը և միջնադարյան-ժողովրդականը շենք փորձում նույնացնել, բայց հակված ենք այն մտքին, որ դրանք նույն արմատին ձգտող տարրեր ճյուղեր են: Մեղ հետաքրքրողը հայ դրամատիկական բանահյուսության թաքնված երակն է՝ իր առասպելաբանական ակունքով,

կրոնաաշխարհայացքային հոսանքներով; պաշտամունքաշին խորհրդանիշերով (որոնց վրա բավական ծանրանալու ենք) և ամենակարենորը՝ ծիսական ու խաղային պայմանաձևերով:

Քննախոռվող ժիաստերից ամենաակներեց ժողովրդական զրաման է՝ միջնադարով անցած, սոցիալ-պատմական տարրեր նստվածքներ կրող խաղային բանահյուսության մի դրսեօրում, արտաքուստ կոպիտ ու պարզունակ: Բայց դա ավելին է, քան թելագրում է նրա տեսքը: Այստեղ այնպիսի խորքեր կան, այնպիսի անտեսանելի շերտեր, որ առարկան ճանաչելու համար հարկ է դիմել կողմնակի զուգահեռների, հեռանալ ակներևությունից, երբեմն մոտեցնել ժամանակի ու միջավայրի առումով անհամատեղելի թվացող նշանները: Բայց նկատի առնե՞նք արդյոք նախագրական շրջանից եկող բոլոր ծեսերը, սինկրետիկ բանահյուսության բոլոր հայտնի ձեմերը, կենցաղի պայմանականության այն բոլոր դրսեռումները, որ ներառում են գործողության, խաղի ու ծեսի տարրեր: Սովորաբար այդպես է ուսումնասիրվում հին դրամանու Գրանով ստեղծվում է հեղհեղուկ վիճակ, և առարկայի սահմանները մնում են անորոշ: Մեր խնդիրը սակայն կոնկրետ է:

Նշանակություն տալով պաշտամունքային նշաններին, հին հավատալիքներին, թերթելով Հայոմավուրբը, Ավետարանն ու Աղաթանգեղոսը, ուշագրության առնելով որոշ հնավայրեր, նորոգված հիշատակներ, փորձում ենք մտորել որոշակի խնդրի շուրջ և որոշակի ուղղությամբ: Նպատակն է շոշափել դրամայի ընդհանրական նախաթեման, դնել նրա դրսեռումները բանահյուսական, կրոնական և գեղարվեստական գիտակցության պայմանաձեռների միջավայրում:

\* \* \*

Գրաման ու թատրոնը և տարբեր, և համատեղելի շասկացություններ են, երբեմն հոմանիշներ: Բառի նոր իմաստով դրաման բհմադրական նյութն է, ենթադրվող գործողության խոսքային անդրադարձը, գրությունների ու

խոսքի սյուժետային ներկապակցում, իսկ թատրոնը՝ տեսանելի աշխարհ, իրականության լեզվական և արտավեզվական ոլորտների պայմանականացված ամբողջություն հրապարակային իրազրության մեջ:

Թրամային և թատրոնի տարրերակումն առավելապես տեսական իմաստ ունի, համատեղությունը՝ գործնական։ Հսանորոցյա բարդառումների, զրաման է թատրոնիր որպես համադրական արվեստի, հիմնական կառուցվածքային տարրը, զրություններին շարժում հազորող բանական ուժը Ռամաի, թատրոնը կոչվում է նաև զրամա կամ զրամատիկական արվեստ։ Պայմանականորեն ևնում հնօր այս նշանակությունից, զրամա բառն ընդունելով որպես ընդհանրական պայմանական համապարփակ մոդիֆիկացիա, թատերական արվեստը Շոտլանդող համապարփակ մի հասկացություն։

«Պէտք, — զրում է կծեն Յոնեսկոն, — մի աղուցվածք է՝ կատարությունների ու պայմանների մի խոսքը վիճակներից, որոնք գնալով թանձրանում են, խառնում, հանգույցաւերքեւմ, շփոթվում, որպեսզի կրկին հանգույցաւերքին կամ ավարտին անելանելի ու անհնարին ըրությամբ։ Յոնեսկոն միտում է զրամայի, որպես թատերագրության տեսակի, սահմանումին և անուղղակիորեն ընութագրում զրամատիկական գործողության էությունը, յերձենում զրամա հասկացության նախնական և ընդհանրական իմաստին։ Այստեղ ընթերցվում է զրամատուրիական սեհի թերես ամենաճշգրիտ ընութագրումը։ Ինչպես հասկանալ այս Գործողության ընթացքը զրամայում չկհասնում նահատակության բարձունքին (ողբերգական ավարտակետ), ոչ էլ մարում խայտառակության հատակին (կատակերգական ավարտակետ), այլ մնում է շարունակական վիճակում՝ կանգ առնում նոր հանգուցի վրա, շսպառելով նախնական «շափավոր» լիցքը։ Սա նուրբ հատկություն է և զրաման դարձնում է թատերագրության բոլոր տեսակների՝ մեջ ամենաունիվերսալը։

Յոնեսկոյի դատողությունը, ըստ էության, զրամատիկական գործողության և թատրոնի տրամաբանական

<sup>1</sup> M. Esslin, The Theatre of the Absurd, New York, 1961, p. 131.

Հիմքի սահմանումն է: Այստեղ է դրամատիկական բոլոր կարգի խաղերի բովանդակային-կառուցվածքային արմատը, և սրանով է արդարանում դրամա և թատրոն հասկացությունների նույնացումը դասական և այժմեական գեղագիտության լեզվում: Դրամա է կոչվում թատրոնը ամենալայն առումով՝ սկսած հնագույն պարերգական ձեերից մինչև հույն դասական ողբերգությունն ու կատակերգությունը և նոր ու նորագույն ժամանակների թատրոնը: Դրամայի և թատրոնի բոլոր դրսնորումները պարփակվում են այս տարողունակ ու պայմանակերպ հասկացության մեջ: Ուստի, մեր խնդրի տեսակետից էլ նպատակաշարժմար ենք համարում դիմել ոչ այնքան թատրոն, որքան դրամա հասկացությանը:

Ժողովրդական դրամատիկական ստեղծագործությունը, անկախ դրսնորման եղանակներից, ժանրային ձեերից ու նպատակներից, ընդունված է անվանել դրամա: Խաղերում, ծեսերում, երգային-վիճական բանահյուսության ամենատարեր ձեերում առարկայական ակներեսությամբ ի հայտ են գալիս ժողովրդի խառնվածքն ու բնավորությունը, նրա ենթագիտակցական-խաղային վերաբերմունքը իր կեցության ու կենսաձևերի հանգեաք: Հին ժողովուրդներից քշերն ունեն դրամա, բայց բոլորն, առանց բացառության, ունեն իրենց դրամատիկական բանահյուսության ձեերը, և դրեթե բոլորը՝ ժողովրդական դրամա:

Դրամատիկական բանահյուսություն և ժողովրդական դրամա հասկացությունները տարբեր են:

Դրամատիկական բանահյուսությունը լայն է՝ ներառում է երգի ու ստեղծաբանության (իմպրովիզացիա) գրեթե բոլոր կարգի տրամախոսական դրսնորումները, որոնք այս կամ այն շափով ենթադրում են անձերի փոխհարաբերություն, մարդկային շփման կենդանի պահերի. պայմանակերպի ձեերը: Ժողովրդական դրաման խաղային բանահյուսության ավելի բարձր ու կազմակերպված ձև է՝ ունի սյուժետային կայուն ամբողջություն՝ սկիզբ, ընթացք ու ավարտ, դեմքեր ու դեեր, դրությունների տիպարանորեն ավարտված ու որոշակի տեսք, ներկայացման մշակված եղանակ-

ներ: Ժողովրդական զրաման նախատեսում է և խաղու պատահականություն, և ծիսային ծրագրվածություն՝ ազատություն և սահման, տարերք և կանոն: Դրամայի ու թատրոնի բոլոր տարրերը գործում են այստեղ, բացի գրական հիմքից: Վերջինս գրականության ոլորտն է և հին զրամայի ուսումնասիրության տեսակերպից պակաս էական:

Դիմելով հայ հին և ժողովրդական զրամայի պատմատիպահական և առավելապես պատմաբանասիրական քննությանը, փնտրում ենք մի կողմից նրա ավարտված, տիպաբանորին կազմավորված վիճակը, մյուս կողմից՝ զրական հիշատակումները, հետքերն ու անզրադարձումները: Դալով զրամայի ծիսական ու խաղային հիմքերին, նկատի ունենք ոչ թե զրամատիզմը (զա շատ լայն ոլորտ է), այլ զրամատիկական կառուցվածքը: Զշփոթենք զրամատիկականի երկու կողմերը՝ զրամատիկականը որպես հուզական վիճակ՝ լարման ընդհանուր մակարդակ և՝ որպես կառուցվածք, խոսքային իրազրության կազմակերպում: Դրամատիկականը սոսացին զեպքում էսթետիկական հատկանիշ է, որ նշանակում է ներքին սլրկվածք, շարժման կամ ցնցումի հնարավորություն և կարող է հատուկ լինել գրական բոլոր սեռերին, զրսնորվել գեղարվեստական մտածողության բոլոր ձևերում: Սա զրամատիզմն է, որպես էսթետիկական որակ: Երկրորդ զեպքում զրամատիկականը գեղարվեստա-արտահայտչական համակարգ է՝ սեռը հատկանշող կառուցվածք: Դրամատիկական կարող է լինել սուրյեկտիվիտի դիրքը, նրա փոխհարաբերության կերպը իրականության հետ, երբ առարկան զիտվում ու զերարտազրվում է «սուրյեկտիվ ակտիվ աղատության» (Հեգել) դիրքերից՝ որպես նս-ի և Դու-ի հարաբերություն: Կարծում ենք, սեռ ասելու փոխարեն կամ զիճակ, զիրք, օրինակ՝ խոսքի զրամատիկական վիճակ, էպիկական (պատմողական) վիճակ: Դրամատիկականը այն զիրքն է կամ վիճակը, որտեղ զրսնվորվում է կամ ներակա (պոտենցիալ) հնարավորությունն ունի անհատի գործնական կամքը, իրազրությունը ներկա վիճակ է (ոչ անցյալ, ինչպես էպիկականում), և գործողությունը՝ նպատակ:

Դրամատիկականը, որպես արտահայտչակարգ, եթե չի

Հանգում դրամայի, ապա բերում է նրա գաղափարը, որպես անմիջական հնարավորություն կամ դրամատիկական մողել: Եթե վիճակը իր ընդհանրականությամբ կրկնելի է՝ զուգահեռներ ունի կենցաղում, պատմության ու դրականության, մանավանդ բանահյուսության ու խաղի մեջ, ի հայտ է դալիս այսօնեացին տարբեր կառուցվածքների հիմքերում, անվանում ենք դրամատիկական մողել կամ պայմանաձև Այսպես, գետակի նեղ կամբոջակի վրա հանդիպում են երկու այդ. նրանք դրված են անշրջանցելի բախման և ուկամա մելչավարության վիճակում: Մա դրամայի առակային պայմանաձևներ է, դրամատիկական ամենասպարզ և ամենաճշգրիտ մողելը, որ ունի նաև իր բանահյուսական-խաղային տարբերակը՝ մանկական խաղ՝ «կծակորիվ»<sup>2</sup>:

Տրամախոսությամբ արտահայտվելու կիրար և՛ն ըրությանների արայունք կամ նշան չէ, չի հանգում դրամատիկական պայմանաձևների: Բայց հայ երգային-վիպական բանահյուսության մեջ առկա են դրամայի միջնորդված նշաններ և անուշակե անդրադարձումներ: Դրանք բազմազան չեն և չեն կարող աչզպես լինել: Դրամատիկական պայմանաձևները սահմանափակ են ըստ տիպարանության և բազմազան են երեսն, քանի որ հանդես են գալիք բազմազան կոնտեքստներում: Դիմելով հայ հին բանահյուսության տրամախոսական ու պարերգական բնույթի հատվածներին ոչ թե դրամայի ենք ուղարկում վերածել վիպական սկառումները, այլ դռնել դրամայի տիպարանությանը հատուկ նշանների:

Դրամատիկական պայմանաձևներն առավել ակնհայտ են խաղային բանահյուսության մեջ: Առաջնության վիճարկումը, զրության տերը դառնալու պայքարը, որտեղ հոգեկան լարումը դրսորդում է թեկուզ ֆիզիկական արարքների տեսքով, ինքնին հանգեցնում է դրամայի: Նման խաղերը ժողովրդի հեղերանության ու աշխարհայացքի բաց դրսելումն են, թեպետ նրանց իմաստաբանությունը (սեմանտիկա) տեսանելի չէ: Խաղի խորհուրդը մեծ մասամբ ան-

2 ուշադ ժողովրդական խաղեր», աշխատակի, Վ. Բղոյանի, հ. 3, Երևան, 1983, էջ 127:

ըմբռնելիք է կամ մոռացված և խաղացողիք, և դիտողի չպահար: Բայց խաղն անխորհուրդ ժամանց չէ: ոչ էլ սոսկ մարդական միջոց, որքան էլ այդպիս ընկալիլի Եթե երկութականն ու էականը նույն մակերեսում լինեին, ոչ մի ուսումնասիրության կարիք չէր զգացվի: Ամեն մի պայմանական իրավիճակ, սովորական-ծիսախաղային կամ արտասովոր-իրկնսային, ունի թատերացին տարր և նշանացին է: Իսկ նշանի թիկոնքում միշտ էլ կա մեկնություն խնդրող անտեսանիլի իմաստ:

Խաղը իրականության նշանակերպ պատկերն է, կյանքի զուգահեռը, թեպետ խաղացողը կարող է բնավ շիմանալ, թե խորհուրդ կա իր տեսանելի արարքների անտեսանելի խորցում: Խաղը կրկնվում է որպես սովորություն, սրահպահում արտաքին տրամաբանությունը և կորցնում իմաստաբանությունը, կամ պարզապիս չի էլ փնտրում այն: Այդպիսին է կրկնուը իր դրամատիկական հիմքերում՝ շըք-ված դրամա, կյանքի անհավանական ու անսպասելի պատկեր Բայց մինույն է, խաղն իր կենտրոնաձիգ և կենտրոնախույս տրամաբանությամբ, պայմանական աշխարհ է և ունի ոչ միայն իր իմաստաբանությունը, այլև փիլիսոփայությունը, բարոյաբանությունը (էթիկա), իրավաբանությունը, գեղագիտությունը: Բովանդակացին ու արտահայտչական հզրերն այստեղ շրջված են և ուղիղ չեն նայում միմյանց: Եվ այնուամենայնիվ, կա մի շըքբռնված ու շբացատրված կապ խաղի արտաքին կերպի ու ներքին իմաստի միջև: Պատահական չէ էստոնացի սեժիսոր Վոլգենմար Պանսոյի սրամիս խոռըը, թե Անգլիան ստեղծել է երեք մեծ քան՝ ֆուտբոլ, բոնցբամարտ և Շեքսպիր: Խաղի ու գրամատիկական արվեստի, կրկնուի ու գրամայի անտեսանելի կապի գիտակցումն է, որ թատրոնում ծնունդ է տվել մեյքերխոլդյան էքսցենտրիզմին՝ գերթատերացին մտածելակերպին: Առավել ևս պատահական չէ, որ Շեքսպիրի հայրենիքում դրամատիկական երկնանվանում են խաղ (play):

Խաղը գրամայի և թատրոնի բանական (ռացիոնալ) հիմքն է: Այստեղ է երեսում թատրոնի, որպես նշանացին համակարգի, լեզվական միավորը՝ արարքը: Բնեմական արվեստի հին ու նոր տեսաբանների համար վաղուց անմի-

ճելի է, որ «թատրոնում խաղը նախորդում է խոսքին»<sup>3</sup>(Ֆ.  
Լանգ)<sup>3</sup>, և «ամեն ինչ սկսվում է գործողությամբ (with ac-  
ting)<sup>4</sup>», այն է՝ խոսքի դրամատիկական իրածեր ստեղծ-  
վում է դրությունների հիմքի վրա: Թատրոնը գոյության  
այլ համակարգ է՝ թաղված բառերի կույտի տակ, բայց բա-  
ռերից դուրս, դրից անկախ: Այս այս խաղային համա-  
կարգի միավորներով և պայմանանիշներով ենք ճանաշում  
և դրաման, և դրամատիկական պայմանաձևները, լինեն  
դրանք խաղային, հետային-լինական, թե պատմողական  
կոնտեստներում:

Դրականությունը, որպես զիտակցված մշակույթ, հն-  
թակա է այլ գործունների, օրինակ՝ պաշտոնական-կրոնա-  
կան գաղափարախոսության, ունի իրեն հատուկ օրինա-  
շափություններ և կարող է նաև շատնշլել բուն ժողովրդա-  
կան աշխարհայացքին: Այդպիսին է, ասենք, սանսկրիտյան  
դրաման, որտեղ, ինչպես նկատել է Ալեքսանդր Վենե-  
լովսկին, բացակայում է «Հոգեկան պայքարը»<sup>5</sup>: Այստեղ  
չկան ցնցումներ ու խզումներ, և հաշտությունը ներկայաց-  
վում է որպես հնարավոր վախճան: Բախման շեղոքացումը,  
դրությունները զիափի խաղաղ ելք մղելը հին հնդկական ազ-  
գային հոգերանության մեջ եթե ինչ-ինչ հիմքեր ունի, գա-  
լիս է կրոնից և ծրագրված կենսափիլխոսովայություն է դրա-  
կանության մեջ: Բայտ բրահմանյան հայացքի, անհատն  
իրեն պարտադրված հակասական վիճակների, ընդդիմադիր  
հանգամանքների և սեփական տարակուսանքների լուծումը  
պետք է փնտրի ոչ թե բախման մեջ, այլ ինքնաղարձ (ինտ-

<sup>3</sup> Хрестоматия по истории западноевропейского театра, т. I, М., 1953, с. 806.

<sup>4</sup> Strasberg at the Actors Studio, ed. by Robert H. Hethmon  
New York.. 1965, p. 63.

Դա Բ.М. Веселовский, Историческая поэтика, Л., 1940, с. 302.

Վիճակ ըստ այս

хопуպեկտիվ): Հայեցողութքան: «Բայց հակասությունը, մինի ընության կամ հասարակության մեջ, թե անհատի ներաշխարհում, օրինաչափ է՝ կրոնից, աշխարհայացքից ու բարոյաբանությունից անկախ: Կենցաղը, ինչ էլ լինի, պետք է ունենա որևէ խաղային դուզահեռ:

Հին Հնդկաստանը գտել է իրականության ամենավերացական և ամենաբարար խաղային-տրամաբանական՝ մողելք՝ շատուրանգան: Այս խաղի կազմը կյանքի հետ հեռանդոր ու վերացական է: Բառն էլ երկիմաստ է ու խորհրդավոր. մի ընթերցումով նշանակում է շուրջնկողմյան (շուրջ-շորս, անցակողմ), բառածալ կամ բառանկյունի (առկա-անկյուն): այլ ընթերցումով կարող է նշանակել հնարամիտ կողմեր (catura-ճարպիկ, հնարամիտ, catur-հմտություն): կամ՝ հակառակություն (sátrus -հակոտնյա): Հին հայերն ենարեակ և ենարեկուց բառերում ընթերցվում է շատուր (հակոտնյա) իմաստը: Գուցեն այս իմաստով են խաղն ընկալել սարսիկները, որ անվանել են շարքանց<sup>8</sup>, հետագայում՝ շախմատ (մահ արքային): Շախմատը, որպես դրամատիկական զործողություն, երկու անձի պայմանական բախում է, ուր զործում են Հին Հնդիկների պատկերացրած երեսուներեց մարդկային հույզերը՝ ցանկություն, նախանձ, տագնապ, շփոթմունք, ցասում, հրաժարում և այլն<sup>9</sup>: Այս բախումը սակայն չի ստեղծում մարդկային վիճակների թատերային տեսարան, որը դառնա նպատակ, բայց փորբիկ մի տարածության մեջ տեղավորում է աշխարհը: Շախմատային բնակարթակի սահմանափակ բառակուսին դառնում է դիրքային զաղտնիքներ թաքցնող մետաֆիզիկական

6 Հ. Անայան, Հայերն արմատական բառարան, Հ. Ա., Երևան, 1971, էջ 200, գ. Գ, էջ 190:

7 Т. Барроу, Самсекрет, пер. с англ. Н. Ларикой, М., 1976, с. 162, 210, 357.

8 Այս բառը Կարնո բարբառում, սարունջ ձևով, ունի յուրահատուկ և Շլոտարքիր իմաստ՝ նշանակում է զործվածք, ցանց (Վ. Բդոյան, նշանաշխան, հ. Յ, էջ 223):

9 В. Эрман, Теория драмы в древнениндийской классической литературе, сб. «Драматургия и театр Индии», М., 1961, с. 34.

տնսահմանություն։ Ըստ դրամայի Հին Հնդկական տեսության՝ ԲՀարաթի «Նաթյաշաստրայի» (III-IV դդ.), դրամանը վիճակների հակադրություն է<sup>10</sup>, և շախմատում էլ վերացական նշանների երկու համարժեք նվիրակարգ (Հիերարխիա) հակադրված են բատ վիճակի՝ առաջին քայլի իրավունքի Անտեսանելի դավեր են նյութվում, հետահար հարվածներ ծրագրվում, արժեքներ են նվաճվում ու զոհարերվում, աներեսոյթ ամրոցներ են կառուցվում ու փլվում, նժոյգներ են արշավում, նվազագույն մի հետևակ կատարում է ճակատագուական դեր... Դժվար է պատկերացնել ավելի դրամատիկական միկրոաշխարհ։ Դժվար է մտածել ավելի անսուարկա և իմաստուն պայքար, անվարժ մտքին անըմբռնելի և ի վերջո՝ «ցաւ սրտի անվնաս և խնդութիւն անօգուտ», ինչպես ասել է Արգար թագավորը (V դ.) Հոռմեական թատրոնի մասին<sup>11</sup>։ Եախմատը դրամայի մետաֆիզիկան է։ Այստեղ առկա են դրամատիկական բախման բոլոր օրենքները որպես մարի սեալություն, կյանքից դուրս և նրա թելադրանքներից անկախ, ներփակ ու գաղտնի աշխարհում։ Խակ դրամայի ու թատրոնի աշխարհը ներփակ չէ գալիս է իրականությունից և միշտամտում իրականությանը։ Կրելով մեր զիտակցության մեջ ոնեալ աշխարհի բախումնային վիճակների փորձը, ակամա կյանքի լույսով ենք դիտում շախմատային բեմահարթակում տեղի ունեցող անառարկա պայքարը, որ իմաստավորվում է ինքնին, չունի իրենից դուրս որևէ դադափար։ Բայց առ էլ կյանքի մի զուգահեռ է՝ վճիռների ազատությամբ ու հարկադրված քայլերով, կարգավորեածությամբ ու տարերգով (արվեստացին Հատիկանիշ), սայթաքումներով ու զղումներով (ողբերգական սխան) և առանց արհեստական դիպվածների (deus ex machina)<sup>12</sup>։

10 Նույն տեղում, էջ 24։

11 Մ. Զամշևանց. Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 282։

12 «Կյանքի յուրաքանչյուր իրադրություն, — տանը է Տիգրան Պիտոսյանը, — ինձ հիշեցնում է շախմատային որոշակի դիրք, իսկ շախմատին դիրքերը՝ կյանքի էպիզոդներ։ Նույնիսկ ոյուժներ եմ տիսնում. օրինակ՝ թագավորն անպաշտպան է։ Սաև ու սպիտակը, թվում է, պիշերն

Կլանքի դիպվածային ընկալումը, որ գրամայում երցին գործում է, ծնունդ է այլ հայացքի: Խաղաթղթերով գուշակությունը (ևլրոպական միջնադարում տարածված) թվում է գրամայի ցուրաճառուկ անդրադարձում: Իրական վիճակներ ևն ակնարկում գիմակային և խորհրդանշական-թվակարգային արժեքների անտրամարանորեն պատճական, խաչաշքան-կանոնիկ զուգըզումներով՝ արքաների (Փետզալ Հայրեր), որի ու սիրո ասպեկտների, մայր և իշխանութիւն ամիկնանց, աղնվածիան օրիորդների, խաչի, սրբի և այլ խորհրդապատկերներուն: Գործում է ևլրոպական թատրոնի ուշ միջնադարում կազմակորմած խաղային պաշտոնների (ամպլուաններ, զիմակներ) նվիրակարգը: Աղջվական շիերարթիուն պատճեմ է սեղանի թիժաճարկակում, և սոսացուում ևն րւ խման ու համերաշխության, շահի ու կորստի, անհայտ խարդախներների, ճանապարհի, արկածի, բացակայության ու վեհաղաքածի ևնթաղրցակ վիճակներ: Թվում է՝ այստեղ խորհրդակապված են ֆրանսիական ասպետական վետրը, խուլական նոտիլը, անդլիւտական ու խապանական գրաման Յուզ խաղաթղթների օթառությունը ու ուսումնակածի թագավորությունը է, քրիստ հիշերի ու փակութների մոտ, քոլոր ճանապարհների զլիսին կանգնած է նորին մեծություն ողատաճականությունը՝ ոչ թե հերթպիշիույան այսիսն (ողորերգական դիպված), այլ բախտի ուրովականը՝ կույր ու խուլ:

Խաղի ու գրամայի միշտ շնա իհարկի ուղիղ կապ: Նրանք համաձան (թղոմորթ) չեն, միջնանց կողքի չեն, չեն փոխարինում և չեն հրկուրդում միմյանց, թեպետ աճում են նույն հողի մրաւ: Գրամայի մետա ֆիդիկան ստեղծող միշավայրը՝ չին Հեղեկաւտանը պրամատիկական չէ իր գրամաներում ոչ այն պատճառում, որ անկիան ու հաղթանակի գաղափարներն արգեն արտաճայտել է մի հանձարեղ խաղում: Պաշ-

ու ցերեկն են, աներով տոմելու հարավորությունը մեծ է: Շախմատում կա նաև մարդկային ճշմարիտ և անճշմարիտ վարքազի պատկեր, այն-տեղ ու մի սխալ անպատճ չի մնում: (Համ Վաղիմ Մելիքսեբյանի պատմածիք), Հմմտ. Բ. Վասիլևս, Ակտեր շախմատի պատճենների պատմանը, ու անկիան ու հաղթանակի գաղափարը՝ գրում այստերների բնմական վարքագիծը՝ մարդկային բնավորության ու հոգեքանակության գրսնորումը խաղի մէջ:

տոնական կրտսեական գաղափարախոսությունը վտանգի ու  
 մաշվան գաղափարներն ընդունել է փրկության ու չարքե-  
 րյան գաղափարներից անբաժան, և այդ հաշտվողական  
 հայացքը գրել է բրահմանյան պոետիկայի հիմքում<sup>13</sup>: Խա-  
 ղաթղթերով գուշակությունը ծնունդ է այնպիսի միջավայ-  
 րի, որը դրամատիկական է և իրականության մեջ, և թատ-  
 րոնում եվրոպական աշխարհում միանգամայն հասկանալի  
 է Հեղելի դրույթը. «Դրամատիկական գործողության համար  
 է հերուցելու ի, որ արթնանա անհատական ազատության և  
 ինքնուրույն լույսի սկզբունքը կամ ինքնորոշումը՝ սեփա-  
 կան արարքներին և նրանց հետեւանքներին տեր կանգնելու  
 ազատ կամքը»<sup>14</sup>: Հեղելը նկատի ունի զասական ողբերգու-  
 թյունը և նրա գոյատեման հասարակական միջավայրը՝ Սո-  
 ֆոկլես և աթենական պոլիսային զեմոկրատիա: Գասական  
 Հունաստանի օրինակն առիթ է ավել Հեղելին կառուցելու  
 ներդաշնակ իրավիճակներ, սահմանելու իդեալական օրի-  
 նաշափություններ: Բայց պատմության ու կյանքի բնթացքը  
 քմահաճ է երեսում: Դրամայի իդեալական հոգը (եթե եղել  
 է) վերացել է, և դրաման փոխել է իր դրսնորման ոլորտ-  
 ներն ու մակարդակները: Դրամայի հեղելյան տեսությունը  
 մնացել է անփոփոխ մի կողմնորոշիչ, երեսովի կառուց-  
 վածքն ու տրամարանությունը բացահայտող պայմանական  
 մի ապարատ, որը մնի համար պարզում է ամեննեին ոչ  
 իդեալական երեսովներ: Այն, ինչը Հեղելը համարում է  
 ողբերգական գործողության պայման, ի հայտ է զալիս և՝  
 դրամայում, և խազի ու խազային բանահյուսության մեջ,  
 բայց՝ կեցության ո՞ր ոլորտում, ոգու ո՞ր սահմաններում և  
 արտահայտության ի՞նչ ընույթով ու կերպով:

Այս է, ահա, մեր քննախոսության եւակեսը: Այսաւեղից  
 ենք ուզում յայնացնել դրամայի և դրամատիկականի ըմ-  
 բընման սահմանները: Հետեւարար, ասելով հին և ժողովը-  
 դական դրամա, մտնում ենք երգային-վիպական և խաղա-  
 յին բանահյուսության աշխարհը, գտնելով այնուեղ ավարտ-  
 ված երեսովներ, երեսովի փոխակերպված ձեհը, պոտեն-  
 ցիալ վիճակներ ու մողելներ:

<sup>13</sup> Ե. Թրման, ազգ. աշխ., էջ 43:

<sup>14</sup> Գեղել, Сочинения, т. XIV, М., 1958, с. 371.

Հայ ժողովրդական խաղերի բոլոր տեսակները չեն, որ զրամատիկական կարելի է անվանել կամ զրամատիկական ժողովների հարմարեցնել Բայց կան խաղեր, որ է ությամբ և ինքնին ացզպիսին են, որոնց տեսքում ակներեն է մեր փնտրած երեսը, խաղեր, որոնց իմաստաբանությունը դրամա է հուշում: Այդպիսին է, օրինակ, լախտախաղը՝ արտաքուստ կոպիտ և ըստ բովանդակության սիմվոլիկ բախում, ուր վիճարկվում է զիրքային իրավունքը բացահայտվիկիական միջոցներով, բայց ոչ ֆիզիկական հաղթանակի նոպատակով<sup>15</sup>: Դրամատիկորեն անհամեմատ մեղմ, թատերացնորեն առավորիչ ու խորիմաստ է լարախաղացությունը՝ որ մարզու իրականության հանգելով բռնած զիրքի էքսցենտրիկառարկայական և խորհրդանշային վերաբատազրությունն է՝ ներգաշնակության անսանելի խորհրդարձը, գուցե և կրկնելու իմաստաբանության հիմքը: Եթե երկու այժերի առակը դրամայի պարուագույն ժողովն է, ապա լարախաղացությունը թիրես համարենք թատրոնի հիմնական դետերմինանտը: Սա ժողովրդական միրակլ է (սքանչելիք) և մորալիտե (բարոյակերպում)՝ մի կողմից մարդկային կեցության երկմիասնական վիճակի ցույց, մյուս կողմից՝ մարզու և երկնացին գերքնական ուժերի հարաբերության խորհրդապատշաճական վճիռա<sup>16</sup>:

Հին և միջնադարյան թատրոնի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ ժողովրդական դրամատիկական արվեստում ամենակենսունակը (գուցե և նախնականը) պարերգական գիծն է: Հնագույն դրամայի շատ զծեր խամբել ու անհետացել են, բայց այս մեկի ժայրը հասնում է նոր ժամանակները: Պարերգական դրամայի, որպես թատերական հնագույն համակարգի, նշանները նշմարվում են ժողովրդական խաղերում, վեպերի ավանդման եղանակներում, կենցաղի տարրեր պայմանաձևերում, եկեղեցական ծիսակարգում: Այս ամենն ակնարկված է տողերին հեղի-

15 Հմմտ. Հայ ժողովրդական խաղեր, աշխ. վ. Թղոյանի, հ. 2, երեսն, 1980, էջ 20—22:

16 Հմմտ. թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 251—254: Այս խաղը պահանջում է ավելի հանգամանալից մեկնություն:

նաև նախորդ աշխատությունում<sup>17</sup>, բայց անհրաժեշտությունն է զգացվում պարերգական դրամայի ոլորտները բացահայտել մեկ առ մեկ, վերաիմաստավորել ըստ տիպարանաբանի շատկանիշների: Կրկնության շնոր դիմում (ընթերցողը մեկ-երկու տեղում կարող է ստանալ այդ տպավորությունը), այլ փորձում ենք զարգացնել հարցը:

Փողովրդական պարերգական դրաման գիտել ենք որպես վաղ միջնադարյան թատրոնի տեսակներից մեկը և նրա միերապրուկները վնարել ենք երգային-գիտական բանահյուսության մեջ: Այժմ փորձում ենք մեկնարանել նույն երեսը՝ արպես Հայ Հին և ժողովրդական դրամայի հիմնական տեսակը: Թատերական այդ ունիվերսուն բնարում ենք որպես պատմատիպարանական կողմնորոշիչ: Աշխատության բովանդակային առանցքն է սա: Հետևաբար, թատերական ուսադային բանահյուսության ամեն փաստ չի կազմում Հին դրամայի հետ: Խնդիրն այն է, թե պարերգական դրամայի բովանդակային-կուռուցվածքային սկզբունքը ի՞նչ կարգի խառներում ու ծեսերում է ոսկի, որպես հիմնական, որոշիչ առանձնահատկություն:

Գալով, ուրիմն, Հին խորհրդապաշտական դրամայի ազգային մեկնությունն ստացած, մեղ հայտնի հնագույն մեջայից (միթոլոգիական ուսումնածե), ուստիերգական դրամայի լեզվական հետքերից, ինչպիս նաև դրամայի ընդհանուր կրօնաւաշխարհայցքային Հիմքերից<sup>18</sup>, փորձում ենք հնադարի լույսով դիտել նոր ժամանակներում դրավագի խաղային բանահյուսության այն ճյուղը, որ բանագետներն (Գ. Սրվանձտյանց, Ա. Հայկունի, Յ. Տեկանց, Վ. Տեր-Միհայան, Յ. Լալայան և ուրիշներ) անվանել են անդիք դրաբություն, ժողովրդական ծես, հնագայում՝ խաղ (Վ. Բգոյան), ժողովրդական թատերախաղ (Ա. Արշարունի), թատերական ներկայացում (Սրբունի կիսիցյան), ավելի ուշ՝ ժողովրդական դրամատիկական ստեղծագործություն և

17 Նույն տեղում, էջ 106—143, 185—199.

18 Դրամայի կրօնաւաշխարհայցքային Հիմքերը «Թատրոնը միջնադարյան Հայաստանում» աշխատությունում շաշափված են, բայց միակողմանիորեն (տե՛ս էջ 144—181): Խնդիրը կարիք ունի վերաբերման, ճշշգրտումների և լրացնումների:

ֆոլկլորային թատրոն<sup>19</sup>։ Միսային և տարբեր բնույթի խաղերից առանձնացնում ենք խաղերի որոշակի տեսակ՝ դատական խաղերը և նույն տրամաբանությամբ կառուցված շրջանակենտրոն խաղերը, որոնցում ակնհայտ է պարերգական դրամայի օպսիսը կամ տեսարանային կարգը (Արքատութելի նվազաւում և անձ և միջավայր, պայմանական բախում, գործողության պայմանավորված (ժիսային) և տարերային (խաղային) ընթացք, ստեղծարանություն, զրությունների տարամետ փոփոխություն և ներկայացման այնպիսի պայմանաձեռնոր գիտակցված են օրինական ու սուրյականը (գեր և գերակատար), իրականի ու պայմանականի, հանդիսատեսի ու հանդիսացողի սահմանները։ Անվանելով դրանք ժողովրդական դրամա, փորձում ենք նաև որոշարկել այդ խաղերի բնույթին ու առանձնահատկությունը՝ սահմանազատիլ դրաման կամ դրամատիկական մոդելները խաղային բանահյուսության այլ ձեերից, դրամատիկական ծեսերը ոչ դրամատիկական ծեսերից։ Դրանով հստակվում է նաև հին թատրոնի ըմբռնումը։ Թատերայնությունը, որքան էլ ավելի լայն հասկացություն լինի (դա այդպես է), թատերական արվեստում չի կարող պատկերացվել դրամատիկականից (կամ դրամատիկական գործողությունից) անկախ։ Այդ միասնականության գիտակցումը, որքանով նկատել ենք, թույլ է ժամանակակից հայ թատերագիտության մեջ, թեպետ այս երկու հատկանիշների տարբերակումն ու կապակցումը առկա է անցյալ դարի դրամայի տեսություններում, մասնա-

<sup>19</sup> Այս աշխատաւթյունը հիմնականում ավարտված էր, եթե լույս տեսավ էմիտ Պետրոսյանի «Հայ ժողովրդական դրամատիկական ստեղծագործության սյունեներն ու կերպարները» հոդվածը (Ընթագման թատրոֆօդ ՀՀՀՀ, համար 1985, մայիս ամսաթիվ)։ Հայ ժողովրդական սյունեներն ու կերպարները կամ դրամատիկական անվանումն այնքան էլ հարմար չէ. դա ընդհանուր և անորոշ հասկացություն է և թելադրված ոչ այնքան հեղինակի հարցագրմամբ, որքան վերահիշյալ ժողովրդատիպ սկզբունքորեն անճշշտ խորագրավի կարծում ենք, ճիշտ կերպներ ասել թատերական բանահյուսություն, ոչ թէ բանահյուսական թատրոն։

վորապես՝ Ֆրանց Գրիլագարցերի տեսական դատողություններում<sup>20</sup>։

Արոշարկելով Հին և ժողովրդական դրաման, ճանաչելով հնագույն դրամատիկական թեման Հայ բանահյուսության մեջ, փորձում ենք շոշափել Հայ Հին թատրոնի անկյունաթարր, գտնել նրա և նոր ժամանակներում դիտված ժողովրդական դրամայի պատմական, թեկուզ և հնաւոր կապը։ Ներկա աշխատության առանցքային հարցերից մեկն է սա:

Ժողովրդական դրամա հասկացությունը չի շրջանառվել մեր բանագիտական դրականության մեջ։ Դրաման տեսականորեն չի սահմանազատվել խաղային բանահյուսության այլ տեսակներից։ Փաստական նյութը հավաքվել ու հապարակվել է միսած անցյալ զարավերքից (Պ. Պողյան, Բաֆֆի, Գ. Մրկանձտյանց, Ե. Տեկանց, Վ. Տեր-Մինասյան, Հ. Մալխասյան, Ե. Լուտյանց և ուրիշներ)։ Նյութը համակարգված է (Վ. Բգոյան) և այսօր դժվար է նոր փաստեր գնել շրջանառության մեջ։ (Ներկայիս ժողովրդական կենցաղը չունի աղդագիրական նախկին հարստությունը, զյուղականից մերածվում է քաղաքային վիճակի)։ Եթև այնուամենայնիվ, նյութի տեսական բննություն, հատկապիս ժողովրդական դրամայի տիպարանական տարրերակում չի եղել։ Առ այսօր ժողովրդական թատերախաղ է կոչվում ամեն մի ծխացին երեսությ, օրինակ՝ հարսանիքը<sup>21</sup>։ Վիճելի մոտեցում է առ և զալիս է անցյալ զարից։ Պատճառներից մեկը դրամայի և թատրոնի տեսության, նաև դասական գեղագիտության փորձի անտեսումն է։ Գտ իր Հետ բերել է եզրերի, հասկացությունների ու առարկաների շփոթ, մի բան, որ առկա է նաև անցյալի ոռու թատերագիտության մեջ՝ երեսում է Պյոտր Մորոզովի, Յու. Վեսելյովսկու<sup>22</sup>, Վ. Վասիլովսկի—Գերբորսսի աշխատություններում։ Անցյալ դարի հայաց-

20 Տե՛ս Ա. Անիքտ, Թեория драмы на Западе в первой половине XIX века, изд. «Наука», М., 1980, с. 123—125.

21 Ա. Արշակոնի, Հայ ժողովրդական թատերախաղեր Երևան, 1961, էջ 206—208։

22 Ю. Веселовский, Очерки армянской литературы и культуры, Ереван, 1972, с. 72—74.

բը վոխանցվել է նոր հեղինակներին և մինչև օրս չի վերանայվել տեսականորեն։ Կարծում ենք, ավելի արտապողէ, երբ զրամա և թատրոն անուններն են տրվում թագման արարողությանը։ Գարեգին կեռյանը, նրա հետևողությամբ Գնորդ Գոյանը IV դարի ողբերգություն են համարում Փալլասոս Բուգանդի «Հայոց պատմության» մեջ վկայված Գնելի թագման և Փառանձմի ողբի նկարագրությունը<sup>23</sup>, այն դեպքում, երբ խորհրդապաշտական ծեսը, որպես նավասարդյան տոնի բաղկացուցիչ, հայոց մեջ եղել է շատ ավելի վազ՝ բայ Խորենացու, Վաղարշ Ա. Բագավորի (117—140 թթ.) ժամանակ<sup>24</sup>։ Ինչպես կտեսնենք այս զրբի էջերում, Հայ Արշակունիների Շամանակ արդեն գոյություն ուներ թատրոնի խորհրդապաշտական (միստերիալ) տիպը, և հեթանոսական ողբի բարբարոս ձևերից (Փալստոսը նկարագրում է) չէր կարող զրամա ստեղծվել։ Հոգևոր կյանքի ինչ աղքատություն պետք է լիներ զրա համար, այն էլ Հայ նախարարության ժաղկման ժամանակներում։

Հասարակական կենցաղը, Հատկապես Հին և միջին դարերում, և նեցել է բազում ծիսային զրսերումներ, եթե շասինք, որ ամբողջապես ծիսային է եղել։ Հիմքեր լունենք կենցաղը, որքան էլ թատերային լինի այն, ներկնացնելու կենցաղում մշակվող կամ նրա պայմաններում գոյատեսող բանավոր ստեղծագործության հետ։ Մեսը, երբեմն լինելով իմաստագրկված Հավատալիքների մեխանիկական դրսերում, Հասարակական շփման միջավայր և կայուն հղանակներ է ստեղծում անդիր դպրության, ժամանակորապես զրամացի համար, ոչ թե ինքն է դառնում այդպիսին։ Միսականության ուսումնամիբությունը բնավ անկարևոր չէ մեր խնդրի տևակետից, բայց շշփոթենք միջավայրը ։ Նրանում գոյատեսող երեսոյթների հետ Այս ժամանակին խոսելու առիթ եղել է<sup>25</sup>։

23 Գ. Լեռնան, Թատրոնը Հին Հայաստանում, Երևան, 1941, էջ 45—54, Ղ. Գօրի, 2000 լեռ արմանական թատրոնի պատմության, տ. I, Մ., 1952, է. 281—308.

24 Մովսէսի Խորենացոյ Պատմություն Հայոց, աշխ. Մ. Աբեղյանի և Ա. Հարությունյանի, Թիֆլիս, 1913, էջ 202։

25 Աթատրոնը միշնադրյան Հայաստանում, էջ 15—17։

Հայ հին և ժողովրդական դրամայի ուսումնասիրության մեջ ենում ենք և՛ ծեսերից, և՛ խաղերից, երկուսն էր ընդունելով՝ որպես դրամայի կառուցվածքային՝ սկզբումքը որոշող գործոններ կամ դրամատիկականի դրսերման տարրեր մակարդակներ Բայց այստեղ էլ տարրերակում է պահանջվում։ Դրամատիկական դգացմունքն ավելի շատ պատահանության ու տարրերի՝ խաղային վիճակի, քան պայմանավորվածության՝ ժիսային վիճակի արդյունք է։ Իսկ ծիսը պայմանավորված ու կայուն երևությ է, որ նախատեսում է թատերայնության դգացում։ Հետեւարար, ծեսի ու խաղի միջն ենթադրվում են մոտավորապես նույն հարաբերությունները, ինչ թատերայնության ու դրամատիզմի։ Միսականությունը խաղային վիճակի կարգավորումն է, ինչպես և թատերայնությունը՝ դրամատիկական դգացմունքի։ Թատերական արվեստը այս երկուսի ներքին դիալիկտիկական կապն է։ Միսային և խաղային նախահիմքերի հակադրամիասնության գիտակցումը, ըստ Էության, նոր է և XX դարասկզբի թատրոնի մարդկանց մշել է այն մտքին, որ թատրոնը տաճարի ու խաղահրապարակի համերաշխումն է, «քրմի ու խաղարկությ» փոխհամաձայնությունը<sup>26</sup>։ Այս աշխատության մեջ փորձում ենք դիտել երկու նախահիմքերն առանձին-առանձին և միասնարար, ըստ նշանային կապերի։

Որպես հարցադրման կարգ և հերթականությունը ընդունում ենք դրամայի՝ Արիստոտելի սահմանած վեց մասերը՝ առասպել կամ ֆարութ (բնօչ), բարք կամ բնավորություն (թօօչ), խոսք (հէւչ), միտք (ծագութ), տեսիք կամ անսարքանակարգ (ափւչ) և նվազ (աւնոութ)<sup>27</sup>։

Սրանք, ըստ Էության, մասեր չեն, այլ համաժամանակյա (սինխրոն) կառուցվածքային տարրեր կամ շերտեր<sup>28</sup>, որոնցից մեկի կամ մյուսի բացառումը խախտում է առար-

26. И. Аполлонская-Стравинская, Христианский театр, СПб., 1914, с. 27—29.

<sup>27</sup> Aristotle, The Poetics, London, 1965, p. 23 (Տին հունարեն և անգլերեն)։

<sup>28</sup> Հմատ. Р. Ингарден, Исследования по эстетике, пер. с немецк. М., 1962, с. 164։

կան։ Դրամմաս, որպես զրականություն, Արիւտուտելը պատկերացնում է ուսանց տևարանակարգի, որն «ամենից ավելի քիչ է հատուել բանաստեհությանը» (... ոչ ու ուստանա է շուշյա՞լ։ Ըստանելի աշխարհը՝ բատրոնը անկախ ու ինքնուրույն է՝ խոսքից դուրս գոյածեւ Դա մի կողմից ենթադրվող իրականությունն է (ըստ Ռոման Ինգարդինի մեկնության)<sup>30</sup>, մյուս կողմից զրական նյութի թատերական-օրինասիկ-Հրապարակային իրականացումը՝ առարկայական գիտերինանարու Համաձայն կառուցվածքին վեց տարրերի՝ Արիւտուտելի սահմանած հերթականության, զրամացի հիմքում նախ և առաջ թեման է առասպելը, այժմնական տերմինարանությամբ՝ միթուղթիական պայմանաձևը (մողուս)։ Բնալորությունը (անձ, կերպար, որին առիջական է առամարանության, ենթակա և սոսակելին ու նրա սյունեատցին կարգավորումնը Բնալունելով այս սկզբանքը, ունեց է ասենք, որ ընալորությունն առարկայանում է, եթե առասպելը ենթարկվում է և հասկանակարգին (օպիյա), գուսու զախիս զրականության (Հրիւտուտելի իրասրու արեգաւայրից Այստեղ Հեղ Համար ծագում է ծիսացին պայմանաձևի գաղափարը՝ որն իր հերթին հանգում է խաղացին պայմանաձևի։

Երեսութիւն ներքին ուրամարանությունը, ինչպիս նկատում հնը, զագուց է դիտված, և մեկնաբանության հիմքին էլ արդեն արված են։ Դա մեզ թելադրում է հարցադրումները ստորակարգել հետեւալ հաջորդականությամբ։ ա) միթուղթիական պայմանաձև, բ) ծիսացին սրացմանաձև, գ) խաղացին պայմանաձև։

Ըստ այսմ, առաջին զլիսում քննում ենք առասպելը, արիսետիպը (էքոս) և խորհուրդը (դիանոյա) երկրորդ զլիսում՝ ծիսակարգացին հետքերն ու փոխակերպումները, երրորդ զլիսում՝ խաղացին պայմանաձևերի ուշ վկայությունները, այն է՝ ժողովրդական դրաման իր մողեներով։ Հետեւում ենք մեր ունեցած փաստերի պատմական հաջորդականությանը,

<sup>29</sup> *Aristotle*, p. 28.

<sup>30</sup> *P. Hnagardzen*, c. 165.

հնիւարկաւելով՝ նյութի բնձեռություններին։ Սա, ի՞ւարկե, պայմանական վիճակ է։ Գրամայի կառուցվածքային տարրերը գտնում ենք տարրեր ժամանակներում ու տեղերում, միմյանցից հեռու և անկազմ կապերը տեսնում ենք ըստ մեր քննախոսության նպատակների։

վրապականության պատկեռացրւմներից խոսքերը հայտնի են բանագետներին, բայց մեկնարանված չեն: Զբուցագիրն ակամա արձանագրում է մի հին պատկեր կամ հիշողություն նախարրիստոնեական ժամանակներից: Թվում է, ուս ակներին է, և խոսքը հնագույն խորհրդապաշտական դրամայի մասին է: Բայց ակներնեությունն էլ ապացուցման կարիք ունի: Պհաք է, թերես ավելորդ անգամ, զննել միթուղպիական պայմանաձևը նախ վկայության հնությունն ու հավաստիությունը պարզելու համար և ապա՝ ընդունելու այդ որպես հին գրամայի կառուցվածքային շերտերից առաջինը: «Գիշքիրով և տեսարաններով (քաշարունիք)» կամ «գեմքերով են վարում» խոսքերը առիթ հն ծառայում՝ խնդիրը վերաբերձիկու

Հայոց ավանդական պատմության մեջ շղթայվածի առասպելանշանը զործում է մի քանի տարրերակներով, արտահայտության և իմաստի տարամերժ փոփոխակներով, իսկ արխեախոր կրօնմ է երեք խորհրդապոր անուններ՝ Շիդար, Աւափազդ, Մներ: Առասպելն արտահայտում է սովորման էսիսառուղղական (վախճանարանական) գաղափարը, հերոսն իմաստավորվում է որպես անհայտ ու անըմբանելի ուժ՝ կաշկանդված «յազան ի վեր ի Մասիս» կամ Վանաժայուս: Իսկ պաշտամունքը, որի խորքում միթրականություն է աւ<sup>2</sup>, ենթադրում է հակոսնյա զգացմունքներ՝ հույս և տագնապի ինչ պայմանաձև է սա, զոյարանական, սոցիալ-սպատմական ու բարոյափիլիսոփայական ինչ շերտեր է երում ավանդությունը, կարծես թե պարզ է: Բայց վերընթեռներով նրա տարրերակները՝ աղդային ու միջազգային, տևանում ենք մոլիք անկյուններ, ուր պիտի է մեկ-երկու մոմ վառել: Շղթայվածի առասպելի խորքում դրամա տեսնելու մեր միտումը թելադրում է փոքր ինչ այլ կարգի մեկնություն՝ ոչ այնքան պատմական: ու բարոյափիլիսոփայական, որքան խորհրդապաշտական հիմքերի զըննում, ոչ այնքան աղգային-բանահյուսական, որքան թե-

2 Փ. Ավղալքելյան, «Միհրը հայոց մեջ», «Հայագիտական հետազոտություններ» Երևան, 1969, էջ 13—29:

մատիկ-տիպարանական ընդհանուր գծերի համադրական մեկնություն։ Ժամանակակից տեսական բանադիտության մեջ շրջանառվում է միթոլոգիական մողուս (առասպելարանական պայմանաձև) հասկացությունը (Կ. Ակի-Մտրոսս), որի լույսի տակ թափառող սյուժեների տեսությունը հին ու պարզունակ է երևում։ Ինչպես մեր ընտրած բնարանն է ասում, միջնադարում եղել է տարրեր միջավայրերում ըստեղծվող՝ առասպելների թեմատիկ նույնության կամ համանմանության գիտակցումը։ Գրիգոր Մագիստրոսի համար, ինչպես նկատում ենք, դա պարզ ու անվիճելի էր<sup>3</sup>։ Թվում է, ՀI դարի մտածովը շոշափում էր արդեն միթոլոգիական պայմանաձևի գաղափարը։

### ՄԻԹՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՁԵՎԸ

Առասպելը լեռան բարձունքում շղթայված ուժի մասին թերևս այնքան հին է, որքան կրակի պաշտամունքը։ Որտե՞ղ է Հորինվել առասպելը, Միջագետքո՞ւմ, Մարաստանո՞ւմ, հին իրանո՞ւմ, Բալկաններո՞ւմ, Կովկասո՞ւմ, Հայկական լեռնաշխարհո՞ւմ, թե՝

<...> աշխարհի հնուավոր ծայրին՝  
Սկյութիայի ճամփին, որրազան մի անապատում,  
շխնձ լեն ուս ուղօսքն նկառան ունօս,  
Սանդր էս օւսու, ձիրտու ուս ձրցււան։<sup>4</sup>

Դրական հին ազրյուրը՝ Հեսիոդոսի «Թեոգոնիան» վկայում է, որ մոլեգնող ուժը շղթայվել է փայտին (խաչի նախատիպը), երկնքի ու երկրի միջև։ «Պրոմեթեսս փիլիսոփայական օրացույցի ամենազնիվ սուրբն ու նահատակն է», — ասում է Կարլ Մարքսը<sup>5</sup>։ Գուցե ասենք, թե շղթայվածը մարդկության ստեղծած ամենահին սուրբն է։ Էսքիլեսի անունով ավանդված ողբերգությունը մեզ հայտնի երկրորդ դրական վկացությունն է, ըստ որի շղթայվածի լեռը մոտ է

<sup>3</sup> Գրիգոր Մագիստրոսի Թզբերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 90—91։

<sup>4</sup> Aeschylus Tragoedia, ed. H. Weil, Lipsiae, 1913, c. 5.

<sup>5</sup> K. Marks և Fr. Энгельс, Собр. соч., т. I, М., 1938, с. 12.

մեր՝ աշխարհին։ Ուժն ու իշխանությունը Պրոմեթեսին տարել էն հանգած հրարուսների երկիր՝ Կովկաս, քարձրացրել հրաբաժակ, երկաթածին ( «Եղիսաբեկ» ) լեռների գագաթները, զրել երկնքից իշնող հրեղեն մուրճերի հարվածների տակ։

Սկսելով առասպելի հունական տարրերակից, բաներ վկայարերելով, մակդիրների դիմելով, նպատակ չունենք վերապատմել հայտնի զրուցը։ Հունական աղբյուրների բառապաշարում ու պատկերներում անուղղակիորեն ի հայտ է գալիս առասպելի թերևս նախնական մտահղացման օնթուղիան։ Միշավայրն ու առարկաները՝ քարաժայո, շղթա, մուրճ, կայծակ, պարզ գեղարվեստական պատկերներ չեն մեզ համար, այլ (մեր հետապնդած խնդրի տեսակիտից) խորհրդանշային արժեքներ։ Առասպելն իր բոլոր փոփոխակներով կապվում է երկաթի ու հրի պաշտամունքի հետ։ Շըդթայվածը բնության շնանաշված ուժերի սիմվոլացումն է, էսքիլեսի ողբերգության մեջ մարդկայնացված։ Ավելին՝ սառւժի, որպես այս հասկացության վերացական բմբոնման, այլարանությունն է։ Ուժն իմաստավորված է որպես բնության հավաքականություն, մարդկային գեմքով ու կերպարանքով, ինքն իր ամբությամբ կաշկանդված և ձգտում է

6 Գրականագիտության մեջ կասկած է հայտնվել «Եղիսաբելած Պրոմեթեսը» ովքերգության՝ էսքիլեսին պատկանելու խնդրի շուրջ վիճակը Եմիդար (1919) բերել է մի շարք փաստարկների՝ ապացուցելու, որ էսքիլեսի ովքերգությունը հորած է, իսկ մեզ հասածը նվրիստիկասի մամանակների կամ հելլենիզմի շրջանի դրվագը է։ Այս կարծիքին է եղել նաև մեր զարի Յօ-ական թվականների ամերիկյան թատրագիտ Ավգուստ Մառը (The Origin of the Greek Tragic Forms, New York, 1938, p. 177—178), Եմբափի բերած փաստարկների հմտնական մասը (հերոսի անհատականացում, անհատի ապրումների վերաբարպրություն, կարիկցանք հայցող խոսքեր, խորային հատվածների ոչ մեծ ծավալ, գիտությունների ու արհեստների զիֆերենցված ըմբռնում)։ Ա. Լուսը համարում է համոզիլ (տե՛ս Проблема СИМВОЛА и реалистическое искусство, М., 1976, с. 230—232)։ Նշված բոլոր հատկանիշները, իշարկե, հատուկ են և վրիսիզմայտան շրջանի, հատկապի հելլենիզմի շրջանի արվիստին։ Էսքիլեսի անունով ավանդված ովքերգությունը բավական ռեալիստական է, և հին խորհրդապաշտական շերտը երեսում է միայն առանձին բառերում։ 7 Հմատ. Թ. Ավղալինյան, նշվ. աշխ., Կողմնորոշվում ենք հիմնականում այս աշխատության զրութեարուվ։

ազատագրվել, ճեղքել իր իսկ գոյածնը կազմող նյութական կամանքը Բնության և մարդու մեջ նիրճող անհայտ ուժի տարերային գիտակցումն է այս, որ պետք է արտահայտվեր միթոլոգիմի ձևով, և գրան պետք է տրվեր մարդկային վիճակի տեսքը։ Հին ասորաբարելական գրականության մեջ՝ այդ գիտակցումը վաղուց հանգել էր միստիկայի և ոգու ազատագրման գաղափարին։ Այս գաղափարը շատ ավելի ուշ սիփականացնելու էր բրիստոնեությունը, հասցնելու էր նարեկացու միստիկական ողբերգությանը և շեքսափիրյան։ Համեմտի օրեանի այս պինդ, խիստ պինդ մարմինը հալվեր ու լուծվերը<sup>8</sup>, «օրը այս մահացու կապանը մեղանից թոթափած լինենքը»<sup>9</sup> խոսքերին։ Մեր ժամանակներում էլ մտքեր ազատագրումը իմաստավորվում է շղթայվածի միթոլոգիմով<sup>10</sup>,

Մեր առանպելը տալիս է բնության և մարդկային ուժի ազատագրման նախնական և սինկրետիկ գիտակցումը։ Ազատագրված ուժի խորհրդանիշը կրակն էր՝ երկաթի մուրճի հարվածից պոկվող կայծը, որ նույնացվում էր երկնքից իշնող, մեկ ուրիշ անհայտ զորությունից ծնված սարսափի՝ կայծակի հետ։ Կրակը երկաթը նվաճող ուժն էր, իսկ երկաթը՝ այդ ուժի աղջյուրը, որ «զամենայն պնդութիւն նուանէ և ինքն ջրով և թիթ նուաճի»<sup>11</sup>։ Շղթայվածը, որպես գոյարանական խորհուրդ, այս դիալեկտիկայի կրողն է, որպես բարոյական իմաստ՝ շարի և բարու հակազրամիասնությունը, իսկ վիլիսովիայական ավելի լայն իմաստով (դա կտես-

8 Վ. Շեխապիր, Բնութիր երկեր, Հ. 1, թարգմանություն Հ. Մասհեյանի, Երևան, 1951, էջ 13։

9 Նույն տեղում, էջ 50։

10 Ի. Բանինը և Տոլսոյի մահը համարում է նրա ոգու ազատագրումը («Собрание сочинений», т. 9, М., 1967, с. 7—168)։ Ամերիկան փիլիսոփա Քերրուուզ Գանհեմը փիլիսոփայությունն անվանում է «մարդու ազատագրման տեսություն» («Гигант в Цепях», изд. «Наука», М., 1984, с. 7)։

11 Նոր բազիրք հայկազնան լիդուի, Հ. 1, Վիեննաի, 1836, էջ 686։

հենք)` ժամանակը, ներկայի ու անցյալի համատեղ ներկացությամբ<sup>12</sup>: Խորհրդապաշտությունը նշմարվում է նաև էսքիլսի անունը կրող ողբերգության սյուժետային. կառուցվածքում, որ, ըստ էության, արիստոտելյան միքասի՝ գրամայի նախնական տարրի վերարտադրությունն է: Գործողությունն սկսվում է Հեփեստոսի մուրճի հարվածներով և ավարտվում որոտ ու կայծակով. շղթայվածն սկզբում լեռան գագաթին է, վերջում գահավիժում է տարտարոսը: Առասպելաբանական խորհրդապաշտությունը կրկնվում է գրական-դրամատուրգիական մշակմամբ:

Առասպելի հնագույն պատումներից մեկի համաձայն, որը գիտենք Պլատոնի «Պրոտագորասից», ըմբռստացող տիտանը կրակը հափշտակել է ոչ թե Զևսի բնակարանից, այլ Հեփեստոսի դարբնոցից<sup>13</sup>: Կովկասի գագաթներին էլ այդպիսի մի դարբնոց կա: Ամպրոպային մի աստվածություն՝ նարտական Բաթրազը, որ հանգստանում է երկնային գարբին Կուրդականի մոտ, ժամանակ առ ժամանակ հրեղեն մուրզով դարձում է կովկասյան գագաթներին և պղղացնում երկիրը: Երբեմն էլ նա հանում է Արարատյան գաշտ, և էջմիածնի բնակիչները գորդ են փռում նրա ոտքերի տակ: Այս ավանդությունը վկայարերում է ֆրանսիացի արենելագետ Ժորժ Շապիլը<sup>14</sup>, թերևս չկուահելով, որ գործունենք արդեն հայ ավանդության հետ, իշնողը վիշտապամարտ Վահագն է, իսկ գորզը... թերևս վիշտապազորդ: Խորհրդանշականն իշման գաղափարն է, կապված իսկապես էջմիածնի հետ, և աշեղ ուռնավորի պատկերը, որոնց հանդիպելու հնք ուշ՝ Դրիգոր Լուսավորչի տեսիլքում:

12 Պրումեթեսյան խորհրդանիշի շատ շերտեր մնում են լրացահայտված: Մեկնարաններին ավելի շատ հետաքրքրել է բարոյագաղաքարական հմաստը, շղթայվածի հերոսական-ուժանտիկական բնավորությունը:

13 Ալեքսին նույնական այդ է ներշնչում (տե՛ս նշվ. աշխ., էջ 258—306):

14 Ж. Диомезиль, Осетинский эпос и мифология изд. «Наука», М., 1976, с. 59—60.

Ո՞ւր է տանում ի վերջո այս խորհրդանիշերի տրամադրանությունը:

Պրոմեթեոյան թևման, իր խորհրդապաշտական շերտում, անմիջական կապ ունի պարսից Միթրայի և Հայոց Միթրի պաշտամւնիների հետ<sup>15</sup>: Պրոմեթես անվան ստուգաբանությունն էլ այս առումով կարենու է: Արևելագետն Բողրիի կարծիքով, անունը ծագում է սանսկրիտ թրամանությունից կայտից: Դա նշանակում է փայտի ձող, որը պտտեցրել են սկավառակի կենտրոնում (չմոռանանք այս սկավառակն ու պտույտը) բացված անցրում՝ կրակ ստանալու նպատակով: Հնագարքում այս եղանակով կրակ ստացողը կոչվել է զյամատուս<sup>16</sup>:

Այսին, այսուհետու է կրակը գողացվել աստվածներից: Բայց մինչը ունենք մրցունի ու զնոպանի, երկաթի ու կայծքարի գաղափարները, և երակապաշտության աստվածներն էլ քարածին են, ինչպես նարտական Բաթրազը<sup>17</sup>, շղթայված են ժայռին կամ կաշկանդված են քարում, ինչպես Հայոց Մհերը:

Պրոմեթես անվան հին հռոմարեն նշանակությունն է կանխատեսող<sup>18</sup>: Եթե բառն ստուգաբանները դարձյալ սանսկրիտի օգնությամբ, կհանդիպենք նախախորհություն իմաստին (թրամախ, սկիզբ, ուսու-խորհրդակցիլ)<sup>19</sup>: Սա նույն բան տրամաբանական է երեսում, ինչպես պրամատուսը: Առասպեկտում կա կանխատեսման գաղափարը: Շղթայվածին հայտնի է զղթայողի՝ Զնսի վախճանը, և Զնսն ուղարկում է Հերմեսին՝ կորզելու նրանից այդ գաղտնիքը: Առասպեկտի սյուժեատային այս կետն ակնարկվում է պարզորեն Պլատոնի «Գորգիասում»<sup>20</sup> և Լուկիանոսի «Աստվածների զրոյցում»<sup>21</sup>: Լիսիասի, Թունոֆոնի և այլ հիշատակումներից հայտնի է, որ Պրոմեթեսը նախքան ողբերգության հերոսի:

15 Թ. Ավղալբեզյան, նշվ. աշխ., էջ 36 և շարունակ.:

16 П. Лагард, Экономический детерминизм, М., 1923, с. 271.

17 Հեմու. Ժ. Ջյումզիլ, նշվ. աշխ., էջ 65:

18 Greek-English Lexicon, Oxford, 1968, p. 1489.

19 T. Барроу, Санскрит, пер. с англ. Н. Лариной, М., 1976, с. 260, 266, 339.

20 Платон, т. I, նշվ. Հրատ., էջ 360:

21 Лукian, Сочинения, т. I, М., 1915, с. 49—50.

սինրածվելն ունեցել է ծխական խորհրդանիշի իմաստ, և Հին Հունաստանում քաղմաթիվ այլ տոների կողքին եղել է Պրոմեթեյա կոչվող տոնը, որ հավանաբար կապված է եղել կանխատեսման խորհրդի հետ: Կանխատեսումը, ինչպես հայտնի է, այնքան էլ հեռու չէ կրակի ու ծխի խորհրդապատկերներից: Հիշենք գելփյան գուշակավայրը: Այստեղ Պրոմեթես անվան երկու ստուգաբանություններն ել արամարանական են: Անկախ այս ամենից, պրոմեթեսյան առասպելում կա Մեսոփայի գաղափարը՝ մի բան, որ առկա է բոլոր հին ժողովուրդների ծխական ավանդներում<sup>22</sup>: Եթե իշխանություն և աստված նույնանում են բոնության գաղափարի հետ, ինչպես էսքիլեսի ողբերգությունում է, ստեղծվում է նրանց հակոռնյան՝ թարնված, կալանավորված կամ հեռու մի տեղ շղթայված, որի գալստյանն սպասում են որպես անհայտ մի ուժի հայտնության: Պրոմեթեսյան թեման այս կետում սպասվում է, քանի որ առասպելաբանական ցիկլում կա նաև ազատագրված Պրոմեթեսի գաղափարը:

Եղթայվածի միթոլոգիմը կիմաստագրկվեր մեզ համար, եթե նրա զուգահեռ լիներ Սուաջավոր Ասիայում ու Կովկասում: Հավերժական կաւանավորի գաղափարն ավելի խորիմաստ է (ուժը չի ճեղքում իր էռությունը կազմող կապանքը), քան ազատագրված հերոսինը: Համեմատելով հայոց Արտավազդին ու Վահագնին, որոնք ծնվել են նույն կրոնաշխարհայացքալին հողում, Թ. Ավղալբեզյանը հանդում է այն նորակացության, որ Արտավազդի առասպելն ավելի խորիմաստ է, որպես տառապող ուժի վիճակ<sup>23</sup>: Արտավազդըն ու Մհերը հավերժորեն շղթայված են, որ նշանակում է, թե ուժն անհայտ է՝ միախառնված են չարն ու բարին, և հայտնի չէ՝ ինչ է բերելու ազատագրումը:

22 Առասպելում կա նաև «վերին դատաստանի» գաղափարը: Ըստ Հունական մի ավանդության, Հեփեստոսը բողոքում է Զեսին, թե անզրաշխարհում խառնվել են արդարներն ու մեղավորները, հայտնի չէ՝ ովքեր են երանելիների կղզում, ովքեր Տարտարոսում: Զեսն ասում է, որ Պրոմեթեսին պետք է պարտադրել, «որ նա մարդկանց դրկի կանխատեսման շնորհցը» (ΠΛΑΤΟՆ, Խով. Հրատ., էջ 361):

23 Հմմատ. Թ. Ավղալբեզյան, հշվ. աշխա., էջ 39—40:

Բայց մինչ այս կետին հասնելը, անդրագառնանք իրա-  
նական տարրերակին:

«Ի բարսից առասպելեաց. յաղագս թիւրասպի Աժգա-  
հակայ», — կարդում ենք Խորենացու առաջին և երկրորդ  
դրերն ընդիշարկող Հատվածը: Խորենացին առասպելը  
կարգացել է «ի բաղդեական մատենի» և բանի որ նա ամե-  
նուրեք փնտրում է պատմական Հիմքեր, կարդանք առաս-  
պելի ոչ Հրաշապատում Հատվածը: Բյուրասպի Աժգահակը  
պարսկ. բյուրանժույզ վիշապ) այստեղ երկում է սոցիա-  
լական հերոսի գծերով: Թվում է, Համայնավարության վաղ  
վարդապետներից մեկի այլարանական պատկերն է այսու  
«Հասարակաց քէննցաւու և ու մէր ցուցանել ամենեցուն, և  
ասէք՝ ոչ ինչ իր առանձին ուրուր պարտ է լինել, այլ Հա-  
սարակաց. և ամենայն ինչ յայտն: և բան և գործ. և ի ծա-  
ծուկ ինչ ոչ խորհէր, այլ զամենայն յանդիման արտաքս բե-  
րեր լեզուով զծածուկս սրտին: Եւ զել և զմուռ բարեկամացն  
որպէս ի տուքնչեան նոյնաէ: և ի վիշերի սահմանէր»<sup>24:</sup> Աժ-  
դահակը գործել է բացահայտ, Հրապարակավ, Հերոսի նման:  
Երա երկրորդ անունն է Կենտորոս Պյուրիդա (Հուն. κεντρόν  
սանձող, πυρές -կրակ):<sup>25</sup> նշանակում է սրբազան Հուրը  
աանձող: Սոցիալականն ու խորհրդապաշտականը կարծես  
Համերաշխ են Բյուրասպի Աժգահակի դիմագծերում: Այս  
խենթը կամ առաքյալը Հայտարարվել է վիշապ և ամբոխա-  
հալած եղել: Ամրոխը, ինչպիս պատմում է Խորենացին,  
«յանկարծօրէն Հասանէ ի վերայ՝ վնաս առնելով սաստիկ.  
այլ յաղթէ բազմութիւն, և փախստական լինի Բյուրասպ. և  
Հասիալ սպանանեն զնա մերճ ի լեառնն, և ընկենուն ի վիճ  
մեծ ծծմբոյ»<sup>26:</sup>

Ամեն ինչ, բացի լեռան խորհրդանիշեց ու ծծմբի վիճից,  
կարծես փաստացի և իրական լինի, թեպետ ակնհայտ

24 Խորենացի, նշվ. Հրատ., էջ 91, 92—93:

25 Древнегреческо-русский словарь, т. 1, с. 935, т. 2, с. 1442.

26 Խորենացի, նշվ. Հրատ., էջ 90:

«*ի՞շ: Եղիսկս կոն պայմանաձեր*<sup>27</sup>: Պատմական ինչ-որ իրողությունն զերաբառդրվել է այդ պայմանաձեռում, մի երեսըթորին հանգիստիու ենք նաև հայոց ավանդական պատմագրության մեջ՝ պատմական փաստերի առասպելոցում։ Աժդանակի առասպելի՝ Խորենացու բերած առաջին հատվածն ավելի միթոսային է։ Ամդպահակն այստեղ վիշապ է (Խորենացու բմբանումը՝ մարդ, վիշապից ծնված ու վիշապներ ծնող, իհարկե՝ այլաբանություն), և նրան շղթայում է հրապաշտոն Հրուդենը, որ «*Շահնամենում*» դառնում է Զոհակ-Դահակ վիշապին հազբող Ֆերիդուն, «*Ընձենավորում*»՝ Ֆրիդոն։ Հրուդենը նույնպես խորհրդանշում է նախախնամության գաղափարը, ինչպես Հեփեստոսը հունական առասպեկում։ Նա Բյուրասպի Աժդահակին պղնձակապ (երկաթի խորհրդանիշը շի զործում) քարշ է տալիս «յայբս ինչ լերինն և կապել, և զինքն անզրի բնդդէմ նորա հաստատել, յորմէ պակւցնել, հնադանդաւ կայ շղթայիցն, և ոչ զորէ ելանել և ապականել զերկիրը<sup>28</sup>։ Իրանի Դմրավանդ քաղաքի բնակիչները ամեն տաքի աշնանամուտին տոնում են հրամեծար Հրուդենի հաղթանակը<sup>29</sup>։ XVII դարի քրանսիացի հանապարհորդ Ժան Շաբրդենը, որ շատ բան է տեսել պարսկական ալ հելքում, տեսել է նաև Մեհրգան կոչվող հրապաշտության այդ տոռնը<sup>30</sup>, Մեհրգանը հիշատակված է նաև «*Շահնամենում*»<sup>31</sup>, կոչ-

27 Այս առասպելի պատմական հիմքը համարվել է Կամե անունով դարբնի ապոտամբությունը (Մ. Էմին, «*Եպր Գեոյին Հայուսանի, Մոսկվա, 1851*», էջ 65) և մազգակյան աղանդի շարժումը (Յ. Ակիբեյան, «*Բյուրասպի Աշուածակ և համարնապարն Մարզակ հայ ապահովակերի մեջ բատ Մավրիկ Խորենացու, «Հանդիսա ամսօրյա», Վիճենն, 1936, էջ 15): Ակիբայնի տեսակետը մերժել է (Պ. Չուապյան, «*Հայ-իրանական գրական առջություններ (5—8-րդ դդ.)*, Երևան, 1963, էջ 62—90, Ալ. Տանսուլյայշ, «*Շահնամեն* և հայկական ապբյուրները, Երևան, 1967, էջ 112—114): Հայտնի է, որ համայնապարական շարգապիտություն Իրանում եղել է Մազդակից առաջ, որը զործել է Կավադ Ա-ի (488—531) թագավորության շրջանում (Յ. Տեր-Մինասյան, «*Միջնադարյան աղանդների ժագման և շարդացման պատմություններց*», Երևան, 1968, էջ 107—108):*

28 Խորենացի, նշվ. հրան., էջ 90:

29 Н. Кисляков. Некоторые иранские поверья и праздники. «Мифология и верования народов восточной и южной Азии» (сб.), изд. «Наука», М., 1973, с. 187.

30 Фирдоуси, Шахнамэ, т. V, М., 1984, с. 123.

վում է և Միհրացան (Միհր աստծու ամսվա անունով), նշանակում է, հավանաբար նոր իմաստով, աշնանամուտ<sup>31</sup>, եվ Հրուգենի հազթանակի գաղափարը, և շղթայված Բյուրասպի Ամդահակի առասպելը կապվում են միհրականության հետ: Բայց պարսից առասպելում իրավիճակը շրջված է<sup>32</sup>: Հերոսը շղթայվածը չէ, այլ շղթայողը (ոչ թե Պրոմեթեսը, այլ Հեփեստոսը): Նախախնամությունը, որպես բարի ուժ, կաշկանդել է մոլեգնությանը՝ վիշտապակերպ կրակը զրել է փակի տակ: Կրկնվում է Սպանդիարի (Քաֆանդիար) Սարալան լիոնն վրա կաշկանդվելու իրազրությունը: Եղթայվածի հակասականությունը, որը թվում է, ավելի հին շերտ պետք է լինի, լուծվե չ է որ ական ու բացառական բնվենիերի երկատումով: Գոյարանական ու սոցիալ-սպատմական շերտերը տակն ու վրա են եղել: Պարսից մազդեկանության տեսակետից սա ուրամարանական է, ժողովրդական հայացքի տեսակեռ լը՝ ոնտրամարանական:

Առասպելի գաղափարը՝ ան շերտն ավելի պատճառարանված է երևան և ամերիկա և արևելյան ավագակիության ու մազդականության: Միհրը արել ու լուսի տառվածն է, իսկ արևն ու լուսը հավասար Են բարձր և առարակության բոլոր անդամներին: Պաշտամունքն ինքնին թելազրում է հավասարության և Հւմայնալու բարեյան գաղափարները, հիմնկատի առնենք, որ առասպելաբանական գիտակցության մեջ բնությունն ու հասարակությունը, բնագիտությունն ու հասարակագիտությունը սինկրետիկ ամբողջությունն են: Երակն ու լուսը հավասար բաժանվելիք միակ նյութն են: «այն չի պակասում, երբ ուրիշն էլ է օգտվում նրանից»<sup>33</sup>,

31 Բառարան պարսկերեն, կազմ. Գ. Տեր-Հովհաննիսյան, Կ. Պոլիս, 1826, էջ 365:

32 Ենթազրության կա, թե Խորենացին վերաբաղրում է երկու առասպել, և վերնացիրը պետք է ընթերցվի «Յաղագս Բիւրասպեայ և Ամդահակայ» (տե՛ս Ալ. Շախումյանյան, նշվ. աշխ., էջ 778): Հեարավոր է, որ հոկու ապամական հիմքեր միացել են մեկ միթոլոգիական պայմանաւում, բայց Խորենացին նման ընթերցման հիմք չի տալիս նշանաւում է՝ պայմանաձեռ երան է հասել ամբողջական տեսքով: Դրիգոր Մագիստրոսի հիշատակումն էլ այդ է ասում (թշթիր, էջ 90—91):

33 Այսուհետեւ, Սочинения թ. I, նշվ. հրատ., էջ 46:

ասում է կուկիանոսի Պրոմեխնսոր Կրակի հավասար բաժանման գաղափարը կարող է խսկապես շատ հինել նախնադարյան դուալիզմի ծնունդու Բյուռասպի Աժդահակը այդ գաղափարի մարդակերպ խորհրդանշն է<sup>34</sup>: Նա պատըժվում է, որպեսզի բացվի Միթրայի իրանական մեսսիայի ճանաւրաբնոր, թեպետ Աժդահակն էլ մեսսիայի մի փոքրակեցություն է: Եթեու մեսսիա չի կարող գիտակցմել մեկ վարդապետության մեջ, որքան էլ նրանք նման լինեն: Բայց ժողովրդական ավանդությունը կարող է նույն գաղափարը հուլուն տարբեր առասպեկտներում տարբեր անուններով, պահեց նույն առասպեկտի ու նույն հերոսի շատ տարբերակներ, պայմանաձևով մեկնել բնության կրկնվող և հասարակրւթյան ու պատմության շերկնվող երևույթները:

Միթրեզե: միշտ հին է և ունի պոտենցիալ գոյություն, իսկ պատմական փաստը՝ միշտ նոր ու եղակի: Միթրոզեմով եղակին վերածվում է ընդհանրականության և ժողովրդական հիշողության մեջ ամրակայվում խորհրդապատկերներով, ստեղծում էսթետիկական գոյարանություն և առասպեկտարանական իմացարանություն<sup>35</sup>: Առասպեկտում պատմական ըւժերը վերածվում են բնության ըւժերի, բնության ուժերը՝ հասարակական օրենքների: Հնագարյան Շարոր չն անջատում բնությունը աստվածներից, հասարակականորեն հանաշված ուժերը բնության անձանաշելի ուժերից, մեկի միշտը ուժիմվուացնում է մյուսը, կապ ստեղծում կրոնի, բնության, բարոյականության ու քաղաքականության միշեւ: Այդ կապն իրականանում է միթրոզեփիական պայմանաձևով, որը անհատի ու նրան շրջապատող երևույթների աշխարհի, մարդու և տիեզերի միասնության գեղարվեստական նշանն է, Կանոտի լինվով ասած՝ «ինքնազիտակցության տրանսցենդենտալ միասնություն»<sup>36</sup>:

Մարդկային առօրյա գիտակցության մեջ միասնական են ներհայեցողականն ու արտահայեցողականը, մտածության ձեռնոն ու արտաքին փորձը, իսկ հնագարյան մարդու

34 Խ. Աղալպելիան, նշվ. աշխ., էջ 50.

35 Հմմտ. Я. Голосовкер, Логика мифа, М., 1987, с. 10—19.

36 Кант, Сочинения, т. 3, изд. «Мысль», М., 1964, с. 192.

Համար՝ նաև բնականն ու սոցիալ-հասարակականը։ Հնադարյան մարդը եթե կարողանար տարրանշատել այս շերտերը, նրա տիեզերքը կխախտվեր՝ շղթայվածը կաղատվեր իր կապանքից ու կերծաներ աշխարհը։ Եվ մարդը չէր իմանաւ իր տեղը աստվածների և բնության, գերբնականի (անդրացատրելիի) և բնականի (բացատրելիի) արանքում։ Առասպելը նրան տալիս է ունիվերսալ մողուս և ամեն ինչ դարձնում բացատրելի։ Մարդը և աստվածները, բնությունը և հասարակությունը, ըստ առասպելաբանական հայցքի, պետք է համերաշխ լինեն, և որպեսզի այդ համերաշխությունը շխախտվի, անհայտ ուժի շղթան պետք է ամուր մնան Ռւստի, բրւոր շղթայվածների գլխին մի ուսնավոր (մրճահար, դարրեն) է կանգնած։ Առասպելի իրական վերսիայում, ինչպես նկատեցինք, հակասությունը պարզ լուծում ունի. շարն ու բարին բնեացված են տարրեր կետերում։ Պա, իհաբեկ, ժողովրդական աշխարհայցք չէ, այլ զալիս է պարսից զրագաշտական կրոնից<sup>37</sup>. Հռւնական առասպելում շղթայվածը զրական ուժ է, բայց այս մասին էլ գ'տենք մշակված զրականության միջոցով։

Առասպելի կովկասյան և առաջավորասիական մյուս վերսիան երը կարծես ավելի «մարուր» նախնական տեսքով են ներկայացնում իրավիճակը։ Անհամեմատ հակասական են երեսմ հայկական Արտավազզը, Շիդարն ու Մհերը, վրացական Ամիրանին, իմերեթյան Ռոկապը, նարտ-Օսեթակամ Ամրանը, արխազական Արոսկիլը և անգամ այս միշտավայրից հեռու սերրական էպոսի հերոս Մարկո Կոռալելիցը։ Այստեղ էլ կան հնարարյան ու միջնադարյան (քրիստոնեական հայցքի հնիքարէված, զրական մշակումով անցած) շերտեր Վրացականում, ինչպես պարզ երեսում է Վ. Միլլերի, Ա. Խախանովի, Ի. Զավախիշվիլու, Մ. Զիկովանու և առաջնասիրություններից<sup>38</sup>, չին ու նոր շերտերն ակնհայտ են։

37 Հմմատ. М. Дандамаев, В. Луконин, Культура и экономика древнего Ирана, изд. «Наука», М., 1980, с. 305—330.

38 В. Миллер, Кавказские предания о великанах прикованных к горам, «Журнал Министерства народного просвещения», СПб., 1883. М. Чиковани, Народный грузинский эпос о прикованном Амирани, М., 1966.

Հելիշաւաների ու գեերի դեմ կովող Ամբրանին զիվացման է հնդարկվաւ, կամ, ազելի ճիշտ, ի հայտ է զալիս նրա զիվական էռոթյունը, երբ հանդիպում է քրիստոնեական աստծոն։ Թվում է, Կովկաս է հասել մի հին առասպել (կամ Պրոմեթեսի առասպելն է Կովկասից հասել Բալկաններ), ստացել միջնադարյան գումավորում և տարարեկվել ժողովրդական պատումներում։ Բարի ուժը, որ Ամբրանին է, մոլեգնում է ու դառնում խննիլ։ Ամբրանին ուզում է բրոնագատել աստծուն, թե՛ հանիր մինչև երկրի խորք թաղված իմ դափաղտնը Ուրեմն, երկրի սկավառակը սյուտվում է Ամբրանիի գավաղանի շուրջը, և Ամբրանին, Եթե հիշենք Պրոմեթես անվան Բողրիի ստուգարանությունը, պրամատուս է՝ հրաստեղծ նկատի առնենք նաև Ամբրանի անվան՝ Մատի ստուգարանությունը՝ արհակ<sup>39</sup>, Սստված Հանուս է ձողբու եթե սիմվոլիկա ենք անհներու այստեղ (և ուրիշ ինչ կարելի է անհնել), աստծո դեմ բարցուացող ուժը զրոկվում է հրաստեղծի ու հրասպաշտի վիճակից։ Սստված անիծուս է նրան և զգթայում լիռան բաշճրուում, ինչպես Զեսը Պրոմեթեսին Նրա կալանավայրն է դառնում Արու լինոր Զրույյի ջարուեակությունը համալիսո է հայկական առասպեկին։ Շունը՝ լիզում է տիրոշ շղթաները, և ամեն հենգշաբթի՝ երկրի խորքից դուրս է դարրին մի զարրին (Հեփիստոսի քումը) և ամրացնում շղթան Ռունավորը հայտնը-վում է լիռան զագաթին՝ հրաբխի ժայթքան տեղում՝ կոնլու կրակն ի բաց արձակող դյուցազնի շղթան։

Միջնադարյան-քրիստոնեական մեկնությունը շղթայիմածի վիճակին տվել է բարոյափիլիսոփայական իմաստը Ամբրանին՝ սպասում է վերջին դատաստանի օրվան, ինչպես Վանա Ազումակու քարում կաշկանդված Մհերը, «չուր Քրիստոս զա դատաստան»<sup>40</sup>։ Վերջին դատաստանի գաղափարը միհրարկան մեջ էլ կա, բայց այս դեպքում դատելու է Միհ-

39 Փ. Ավղալբեզյան, Աշխ., էջ 51։ Ռւսունասիրովները սովորաբար անցատում են կրակի և արեի պաշտամունքները, բայց շղթայմածի առասպելի կովկասյան տարեկաներում, նաև հայ ժողովրդական էպուուններում կազմակերպում են։

40 Մասնա ծրեր, աշխ., Ս. Հարությունյանի, Երևան, 1977, էջ 355։

բը<sup>41</sup>: Մշերի Ազուավու քարից ելնելու հավատալիքում ժողովրդական մեկնությունն է ստացել Միջնի՝ ժայռից ծնված լինելու գաղափարը: Նկատենք, որ Մշեր անունը նույն Միջնի է՝ սեռական հոլովաձևով<sup>42</sup>:

Գոյարանական և ընկերային (սոցիալական), բնակիւթեավոյական և սոցիալ-ժիշխառափայական մոտիվները, որ միունն էրն ու նույնական են խորհրդապատճական ծեսերում, սինկրետիկ և ավելի իմաստալից այլարանության են ենթարկված Սասնա վեսպի վերջին նյուղում: Հողը թուլանում է ըմբռոտացող ուժի ծանրության տակ:

Եկոնի հեղին թուլացիք էր,  
Զին կը խըրժիք մընչ խսօնի,  
Խոզ չը զարդի չե չե Մշերին<sup>43</sup>:

Հեր ե՛ բնությունն է, և՛ հասարակությունը: Բնությունը, բայց ժողովրդական պատկերաւոր մտածելակերպի, չի կարգ զիմանալ իրենից ծնվող ուժին: Դա նշանակում է, որ մարդեւ ոյտունը դեռ պատրաստ չէ բառաստանու օրուան, դեռ չեն ծնվել հերոսին սատարող ուժերը, հերոսը մնանակ է, չունի հասարակական հենարան:

Խառն հոմիա մանզըցիք ա,  
Սև օր ցինիմ, զուս ցիզամ,  
Եղ հող բնձի չվիշտ<sup>44</sup>:

Մեսիայի ժամանակը հեռու է, և ուժը զսպված է. նա սպասում է «չուրի զիտին խայիմնա»: Սա ժողովրդական ամենայիմաստուն վիճունն է՝ ուժի ամրությունն և մեկուսացյալ վիճակ, զսպված ոռողոք և անսկառքաստ աշխարհ: Հողն ինչքան պիտք է «խայիմնա», որ կարողանա աճեցնել «ցորեն քընց մասուր» և «զարի քընց ընդուղ»: Կարողանա դիմանալ

41 Ե. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 12—13:

42 Հմմտ. Ա. Վ. Նազարերյան, Հայր և դիցարանություն Հայոց, օբագմանեց, 1894, էջ 265:

43 Սասնա ծեր, նշվ. Հրատ., էջ 355: Հողի թուլացման զաղափարն ինքնամբ է՝ հասունի է միայն հայ ավանդությանը: Սա հերոսի ուրիշի տակ բացվող անգունդն է՝ «խոր իմն մհծ» Արտավազդի առասպելում:

44 Նույն տեսում, էջ 247:

տիեզերական ցնցումին Ցնցումը լինելու է անհավասարագործություն: Մտածվում է բնության ու հասարակության երևակայելի գոյածերի աներևակայելի համերաշխություն ու ներդաշնակություն: Պատվւամ է տիեզերական համաստեղությունների օդակը՝ «Հարսի ֆալաքը», որպեսզի կանգ առնի մի օր իր ամենամշագրիտ կետում՝ մարդու և աշխարհի վերջնական համերաշխության սահմանում: Սպասման խորհրդանիշը շրջալվածն է՝ երկաթե սուրբ քարում կաշկանդած Մարկոն, իր հրեան նժուզգի հետ ժայռում փակված Մհերը: Իսկ հույսի գաղափարը սիմվոլացված է կնոջ պատկերով: Դա այն կույսն է, որ զնում է վասկելու իր ճրագը Մհերի հավերժական հրից: Մհերի քարի ձեռքից լույս է երևում, և հանգած մարխը ձեռքին մի աղջիկ մտնում է այստեղ՝ «Էն ումուտով, թէ ժամն ի»: Սա, ըստ երեւյթին, հրապարական տաճարի Հուշն է՝ պահպանված Հայ ավանդության մեջ, քարակոփ եկեղեցին, որպես Փրկչի բնակարան և այրվող մոմք, որպես զոհարերության գաղափար: Աղջիկը մտնում է ներս, քարը փակվում է: Աղջիկը մնում է Մհերի հետ փակված մեկ տարի (տասներկու ամիս, Հինգ օր, ըստ Հայոց Հին օրացույցի): Հայրը աղջկան սպասում է մեկ տարի, իսկ Մհերի բանտում տարին անցնում է ինչպես մեկ օր:

Ախշիկ զճրագ կպուց.  
Ինչ տուռ բացվագ, էլավ տուա,  
Զճրագ առից, էկավ տունձ:

Ուշագրավն այստեղ շրջապատվածի, որպես ժամանակային միավորի, գաղափարն է, որ անրաժան է միթուղիական պայմանաձևից: Սասնա վեպը մեկ կարծես Հեռացնում է բուն խնդրից: Բայց շղթայվածի առասպելի բոլոր մեկնություններն ամփոփում են այստեղ: Ըմբռութացող ուժի թեման ավելի լայն է: Վերադառնանք, ուրեմն, մեր առասպելի նախնական տարբերակին և Արտավազդի թեմային:

Առասպելը տարածված է աշխարհով մեկ։ Բալկաններից մինչև Իբրանական բարձրավանդակ (Սարալան, Դըմբավանդ), այնտեղից մինչև Կովկաս (Արուլ) Այրարատյան աշխարհ և գեղի Հյուսիս՝ Ազովի ծով, ամենուրեք կա շրջայիմծի լեռ ու ամանդության մի տարրերակի եվ, այսուամենայնիվ, առասպելն այնքան է կապված Հայ քնաշխարհին, որ եթե ուզենք արժատախիլ անել, լեռ ու Հող տակն ու վրա կլինի։ Բայց Հողն ամուր է մեր ստրերի տակ, և առասպելի խորհրդավոր միջավայրը՝ մեր Հայացքի առջև կանգուն է լյան Մասիս, իր հոկայատեսիլ ճեղքածրով, միջօրյա արեի տակ հարճքում է Երասխի հնագարյան Հունը, խորհրդապի բլրին (նկ. 1) կանգնած է Լուսավորչի մատուր, պիղվում էն Հին Արտաշատի հետքերը, և շամբուաներում արածում է կինճը՝ Հայոց վերջին հեթանոս թագավորի առասպելանշանը։

Հայ առասպելը բոլոր գծերով Համափոսու է բնդՀանուր ու այցմանաձեին և իր խորհրդանիշերով, որոնք մեզ Համար առարկայորեն շոշափելի են, ամուր է նստած մեր Հողին։

Թերթինք ուղիմն Գրիգոր Խլաթեցու (1350—1426) խմբագրած «Յայսմաւորք» ժողովածուն և ուշադիր կարդանք առասպելի՝ միջնադար Հասած Հին տարրերակներից մեկը, որը, եթե Հին էլ չլինի, միենույն է՝ Հին Հիշողություն է արձանագրում։

Ամեն ինչ պատմված է կարծես միամիտ Հեթիաթի նման։

«Թագաւոր մի կայր Հայոց Արտաւազ անուն և ուներ որդի մի խելագար որոյ անուն էր Շիդար։ Եւ եղեւ յորժամ մեռաւ արքայն Արտաւազ Հայրն Շիդարայ <...> զի խելագար էր։ Վասն [որոյ] և աշխարհս յիրար դիպաւ և աւերումն լինէր ոչ սակաւ Եւ յաւոր միում Հեծեալ Շիդարն ի ձի և ետ փող Հարկանել՝ թէ կամիմ թագաւորել և ել գնաց ընտիր Հեծելօթ ի զբոսանս և ելեալ ի վերայ կամրջի գետով՝ վասն անցանելոյ և անդէն շարժեալ զնա այսոյն պղծոյ անկաւ ի գետն և կորեաւ. և Հեծելազորքն Համբաւեցին, թէ Հյաստուածքն Շիդարայ յափշտակեցին զնա և եղին ի սեաւ լեռան, որ է աւագ Մասիս, և անդ կայ շղթայած և Բ

շոնիքը մին սպիտակ և մին սևաւ կու լիզեն հանապազ ուշպիտյան Շիդարայ և ի տարելիցն ի մալն դայ, որ թէ կտրի նա ելանէ և զւ շխարձս անցուցանէ: Վասն որոյ կարգեցին կախարդը առասպել դիմօր և թէատրունար՝ թէ ի տարեկատն ի նաւասարդի ի Ա ամենայն գործաւոր զիւր զինչ և իցէ գործն կոփէ դարբինն և այն ամենայն: Զի կապն Շիդարայ, որոյ միկ մաղն եկեալ է ի կտրի, դարձեալ ամրանայ և ոչ ելանէ և անցուցանէ դաշխարճու Այսպիսի առասպել զիմօր վարելին Հայք մինչև ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչն: Եւ իմացեալ սուրբն Գրիգոր դայսպիսի առասպել տօնն և կամիցաւ խափանիչ այսու. որ կարգեց Ի նաւասարդի ի Ա տօնել ո. Կարապետին և Մկրտչին Քրիստոսի Յովհաննեւս Զի սուտն և առասպելն խափանեցի և սուրբն և Ծջմարիտն հաստատեցի ի փառք Քրիստոսի (աստուծոյ մերոյ)»<sup>46</sup>:

Միր սոցի, ինչպիս նկատում ենք, յտարածված մի պատումն է Արտավազդի առասպելի, որ Հայտնի է առավելապես Խորենացու Կրական մշակումով:

Արգեսպի պստկերն ավելի ուարու լինի, մեկ անգամ ևս կարդանք Խորենացու տարրերակրու:

\* Յ Յ Ա Արտավազդի թագաւորէ Արտաւազդ որդի նորա և Հալածէ յԱյրաբատայ զամենայն Խորարս իւր <...><sup>47</sup> Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, անցեալ զր-

46 Մեազիքը Հրապարակիվ է «Բագրմակնուում» (1877, էջ 276), որտեղ բացակայում է մեր Հրմենական կուտանք՝ թէատրոնօր բարոյ Երկրորդ անգամ Հայունիվ է Փ. Խալաբյանցի նշված աշխատությունում (մ. Ա, էջ 73—75): Վեհափառիկ Մայթեալյան մատենագարանի մեկ ձևուղիքի, «Բագրմակնուաթար տարբերակի և Ալեքսանդրապոլիք» և Ա. Աստուծուին հեկեցու շրու ձեռագրերի (XVII դ.). Հիման վրա ևեւ թէատրոնօր ու օճուղու բառու անձնութիւնը է Խալաբյանցը, բացառություն համարելով վենետիկյան ձեռագրերը Մինչես, Խալաբյանցու «Յայումաւուրբի» ձևագրերը հասնում են 700-ի, որոնցից 200-ը նկրկայումս Երեանի Մաշտոցի անվան մատենագարանում են: 1980-ին բանասեր Մայքս Ավգալբեգյանը իմ ուշագրությունը Հրավիրեց զրանցից երկուսի վրա՝ 4826 (1477 թ.) և 5313 (1465 թ.), որոնցում կար մեկ հնատարբրութ լոգիական վկայությունը: Հիմք եմ բնգունել 4876 ձեռագրեր (էջ յա). փոքր համեմունքը Խալաբյանցի Հրապարակածից են:

47 Խորենացի, նշմ. Հրատ., էջ (9): Զրույցն ընդմիշարկված է պատմական ամանգությամբ թէկապիված խոսքերով, որոնք բաց եմ թօնում: Դրանց կանցրագաղանեանք բայտ անհրաժեշտության:

եթէ ի ծննդենէն և եթ մոլութեամբ լեալ, մինչ հովիմբ և վախ-  
ռաննցաւ<sup>49</sup>,

Երկու տարրերակների համազրությամբ ստանում ենք  
ֆարուկայի մոտավոր պատկերը, որն, այնուամենայնիվ,  
ամրողական չէ և, եթե ենինք մեզ հայտնի մյուս տարրե-  
րակներից<sup>50</sup>, զարձյալ հնարավոր չէ ամրողացնել: Ակըն-  
հայտ է, ի՞նչարկե, Խորենացու տարրերակի ոճական հին  
կերտվածքն ու Հզկվածությունը, և այն՝ որ պատմագիրը  
վկայարերում է երեք ֆրագմենտ՝ երգիշներից ու գուսաննե-  
րից լսած: Դրանցից երկուսը (առղատվածները) «գործող  
անձանց» շափածո խոսքի օրինակներ են, որ կարծես հատ-  
կանշում են խաղային-դրամատիկական իրադրության մո-  
տավոր, ենթադրելի մի դրվագ: Այս, առաջմմ միայն են-  
թադրելի, և ենթադրության հիմքը Հայումավորքի խոսքն է՝  
«առասպել դիմօք»:

Հայումավուրբի տարրերակը, Խորենացու վկայության  
հետ համեմատած, պարզունակ է, զրուցատրական, և գրա-  
ռումն էլ անարվեստ է՝ «անկոփի բան կատակական», ինչպես  
կասեր Գրիգոր Մագիստրոսը: Դա հիշեցնում է ուշ միշնա-  
դարյան աշխարհիկ զրուցների ոճը: Պատմելակերպի, գրառ-  
ման ու ձեռագրերի ժամանակի (XV դ.) հակասություն չի  
նկատվում: Թվում է, թե զրուցն ուշ միշնադարում պատ-  
մուիլիս է եղել միշին հայերենով, և գրառողն է վերար-  
տադրել պարզունակ զրաբարով: Երկու տեղում նկատելի

49 Խօրենացի, Եղիվ. Հրատ., էջ 192:

50 Առանցքը, մին նկատի շատենք պայմանակի այլ դրսերում-  
ները, միշնագարի ժամենագրության մեջ ունի ինք վկայություն. Եզնիկ  
Կողբացի («Եղիծ աղանդոց», 1.ին), Մովսես Խորենացի, «Ռակեփորիկ»  
(«Բաղմավեամի» տարր.), Վարդան, Վանական վարդապետ, Գրիգոր Անա-  
դարդեցի, Կիրակոս Արեւելցի (XIII դ.), Գրիգոր Խլաթեցի (XIV—XV դդ.)  
և «Փողթան երգ վերնագրով մի վանկային, անհանգ ոտանակոր» («Բա-  
նասեր», Կ. Պոլիս, 1891, էջ 239—240): Վերշինս Հիշատակված է Գր.  
Գրիգորյանի «Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բա-  
նահյուսությունը» (Հ. 1, Երևան, 1972) աշխատությունում (էջ 221): Բո-  
լոր տարրերակները հրապարակել է Գր. Խալաթյանը (նշվ. աշխ., մասն  
2), բացի «Գողթան երգից», որը ոչ մի բառով կամ նշանով Խորենացու  
տարրերակից չի հետառում և, թվում է, երա տպագրությամբ սարքած  
18-րդ դարի բանաստեղծություն է՝ զրաբարի շափարերական վարժություն»

ჩ. ուամկարանություն կամ քաղաքացին-խոսակցական ոճ.  
«...մի խելազար, որոց անունն էր Շիդար», «աշխարհ» յիրար  
դիպաւու: Եվ այնուամենայնիվ, Գրիգոր Խալաթյանցը Հայո-  
մավուրքի տարբերակը համարում է ավելի հին: Խալաթ-  
յանցի նկատառումները Խորենացու ժամանակի կամ նրա  
րանացյաւական աղբյուրների մերաբերյալ այս գեպքում  
էական չեն: Շիդարի զրուցը կարող է խելազես ավելի հին  
աղբյուրից ծագած լինել և ավելի հին բան վկայել, քան  
Խորենացու՝ առ իւրեաւ իսկ ժամանակաւ լսած վիպասանա-  
կան երդը կամ առասպելը: Հին ասելով, նկատի ունենք ոչ  
զրուցյան ժամանակը, ոչ իսկ, ինչպես Խալաթյանցն է  
ասում, «Ճողովրդական հնավանդության գծերն ու առաս-  
պելարանական երանգը» («черты народной старины и  
мифологический их колорит»)<sup>51</sup>: Ի գեպ, առասպելարա-  
նական երանգը Խորենացու տարբերակում ավելի թանձր է:  
Բայց առասպելի ծիսական ավանդման, նավասարդյան տո-  
նի ու բազինների հիշատակումը<sup>52</sup> (զրանց կանգրագառ-  
նանք իր տեղում), որ Խորենացու տարբերակում չկա, շատ  
էական է: Իսկ եթե հարցը ձեռագրերին կամ «Յայսմառուր-  
քի» խմբագրման ժամանակին է վերաբերելու, ապա՝ Խո-  
րենացու երկի ամենավայր ձեռագիրն էլ XIV դարից հին չէ:

Գործ ունենք շղթայվածի առասպելի հայկական տար-  
բերակի երկու խոռոշ կազմող վկայությունների հետ՝ Եղ-  
նիկ ու Խորենացի (Արտավագդի առասպել) և Հայումավուր-  
քի խումբ<sup>53</sup> (Շիդարի զրուց): Մեկն անվանելով առասպել,  
մյուսը զրուց, նկատի ունենք պատումների ոճական ա-  
ռանձնահատկությունները, ոչ թե թեմայի բնույթը: Գրա-  
կան մշակման առումով սրանք հավասարաբժեք չեն, Խո-  
րենացունք, ինչպես տեսանք, բարձր է՝ բանաստեղծակա-  
նություն և ոիթուլոգիական լիցք ունի: Խալաթեցու տարբե-

51. Г. Խալաթյանկ, նշվ. աշխ., Վ. I, էջ 316:

52 «Եւ ի նոյն աւոր ի նաւասարդի մեկն որ տօնէին Հայք այնմ  
քաղնացն, որ անդ էին և պղծոյն Արամազդայ...» (Մատենադարան, ձեռ.  
-4876, էջ յայտ):

53 Պայմանականորեն նկատի ունենք տեղեկությունների առումով  
Խալաթեցու տարբերակին համերաշխ վկայությունները նաև Հայումավուրքից  
պուրա (Վարդան, Վանական վարդապետ):

բակը, իր խմբով, որքան էլ զրական առումով պարզունակ լինի, Հարուստ է տեղեկությունների առումով:

Հայ առասպելը աշխարհագրականորեն և պատմա-ավանդաբանական հիմքով և ազգային է, և, ինչուս կտև-նենք, ոչ միայն թեմատիկ, այլև ծագումնային կապ ունի պարսից (գուցե ոչ միայն պարսից) առասպելի հետ, թեև կոռուաշխարհայցքային առումով տարրեր է նրանից: Չու՞ն ու բարին պարսից առասպելում տրոհված են և պարզ հակագրություն են կազմում (Աժգահակ և Հրուդեն), իսկ հայ ու ռասսակի և՛ անձնափորփած են մեկ էության մեջ, որ-պես ներքին հակագրամիասնւթյուն՝ զիվացում և տառա-պանք, տառապող աստված և առռապող զե, զիվականը և աստվածայինը մարդու մեջ: Այս զիմակերպն ավելի բարդ է, քան հունական Պրոմեթեսինը:

Ի՞նչ է պատմում հայ առասպելը իր խորհրդապաշտա-կան և մարդկային-Հոգերանական շերտերում: Պրոմեթեսի-ողբերգությունը ներծծված է բարոյական հումանիզմով, իսկ խորհրդապաշտականը անտեսանելի շերտում է ու գրեթե չի երևում, եթե նկատի շունչնանք մեկ-երկու լեզվական հետքերը: Հայ առասպելում, որը չի ունեցել զրական այն-պիսի մշակում, ինչպիսին էսթիլեսի անունով ավանդված ողբերգությունն է, մարդկայինը պատած է խորհրդապաշ-տության ստվար շերտով: Պեղենք այդ երկու շերտերը:

Հայտնի է խորեննացու Հայացքը. առասպելները «զարշ-մարտութիւն իրացն այլարանարար ցինքեանս ունին թա-քուցեալ»: Այս առասպելն էլ, ահա, պատմական հիշողու-թյուն է հայոց և մարաց ռազմական ու արքունական հա-լարերությունների մասին<sup>54</sup>, արտաշեսյան ցիկլի ներքին հյուղերից մեկը, որը, եթե կողմնորոշվենք մեզ հայտնի միջազգային թեմաներով (նախկին թափառող սյուժեները), պետք է անվանենք խննի արքայազնի պատմություն: Փոր-ձենք վերականգնել այդ պատմության ֆարուկան կամ պատ-ճառահետնանքային ընթացքը, որը Խորեննացու երկում խախտված է հասկանալի պատճառներով: Առասպելի ֆա-րուկան և Խորեննացու պատմության սյուժեն չեն կարող

54 Մ. Աբեղյան, Երկեր, Հ. Ը, Երևան, 1985, էջ 183—184:

Համընթաց լինել. առասպելի պատումնային ֆրագմենտները ցրված են և որևէացու երկի առաջին մասի տարրեր գլուխներում:

Առաջին առաջին հղեալ ի կանոնցն Արտաշեսի՝ ձեանի նմազերասացզ <...> (լ.):

<...> զիշապազուք զաղացան զմանուկն Արտաւազդ, և զե փախանակ եղին (ՊԱ):

<...> տենչայ Սաթենիկ տիկին տենչանս՝ զարտախորտ խաւարտ և դարձ խաւարձիք ի բարձրին Ազաւանայ (լ.):

<...> արփանը Սաթինկան բնդ զիշապազունան՝ առասպելաբար, այսինքն բնդ զարմա Ամդահակայ, որ ունին զամենայն զառ ստորոտավն՝ Մասնաց (լթ):

Ի չափ չասեալ Արտաւազդայ որդոյ Արտաշեսի, եղե այլ քաշ, անձանած և զպարա <...> (ՊԱ):

<...> նախանձ է երկելով բնդ ձերունոյն Արդամայ յ Արտաւազզ յ Հրապուրիաց զնայր իւր ցանով Արդամայ, որպէս թէ բագաւորել ի վիրաց ամենային խորհրդից (ՊԱ):

<...> ճաշ զործել Արդամանայ ի պատիզ Արտաշեսի, և խարդաւանակ լեալ նշին ի առանքին զիշապաց (լ.):

<...> երթալով Արտաշեսի ի ճաշ Արդամայ, կասկած իմն անկեալ, իւր թէ դուռ զարտան խորհրդան <...> և զապարանան Արդամայ այրել <...> իսկ Արտաւազդայ <...> ոչ կարածել ճամդ երել որդոյն Արդամայ, բնդը բարդապանա նմա պատերազմաւ. բայց յաղինել արքայուրդոյն՝ ստասիկ զամենայն ծնունդու Արդամայ <...> (ՊԱ):

Այս Արդամ է որ յառապելին Արդաման անուանի, և այս պատճառ պատերազմին բնդ Արդամազզան (ՊԱ):

<...> Արտաւազդայ ոչ զնեալ <...> տեղի ապարանից ի հիմնանակ Արտաշատու. եա անց, զնաց և շինեաց ի մեջ Մարաց զՄարակերու (լ.):

Ե՞նչ է ա: Կոյի ունենում առասպելի ակնհայտորնն Հասկանալի, և արւելային—ա՛ս գերանական Հարթությունում, և ինչ խորհրդապանիշերի զարտանի խորխորաւում:

Պատմենք «տեսանելինա»:

Ծնվում է Արտաշեսի ու Սաթենիկի անդրանիկ որդին՝ զահաժառանգը, անունն Արտավազդ Արտավազդի մայրը տենչում էր զահերեց իշխան Արդամի սերը Արքայազնը մեծանում էր զառնում Հանգումն ու Հպարտ և լսում (մութն է այս կետը), թէ զգում, որ մայրը Արդամի տարփուհին է: Նա զրգուում է Հորը՝ Արտաշեսին Արդամի զեմ, որպէս թի

վերջինս կամենում է տիրել գահին: Խնջույքի պահին, որու տեղի է ունենում Արգամի պալատում, կասկած է ընկնում Արտաշեսի որդիների սիրու, Արտավազդն է կասկածը զցում, թե Արգամը զավադրություն է պատրաստել: Բարձրանում է աղմուկ ու իրարանցում: Արտավազդն իր եղբայրների հետ այրում է Արգամի պալատը, կոփ հայտարարում է կուսորում նրա տոհմը: Շարունակությունը հայտնի է. Այս վաղբեր նախանձում է Հոր փառքին և թագման պահին, ին դեմքնանի մետ բմբոստանում՝ «հս աւերակաց ում իւ զւ: հմ ։ Հայոն անիծում է որդուն, և որդին, երբ զնում է վայրի խողեր ըրավու, կամուրջն անցնելիս ցնորդում է ու ջրամույն լինում:

Պատմենք «անտեսանելին»:

Արթաշաղն Արտավազդին մանուկ հասակում գողանում են Մասյաց ստորոտներում ապրող վիշապազուների կանայք, Աժդաշակի դարմից, և տեղը դե զնում: Արտավազդի մայրը՝ Սաթենիկը Հմայում է վիշապ Արգավանին՝ նրա բարձից խավարա ու խավարել: Խոտեր թոցնելով: Սաթենիկը դասնում է վիշապի տարիունին, խոկ նրա դիվացաւ որդին դավեր է նյութում, իրար դեմ հանում իր Հորր և Արգավան վիշապին, սպանում վերջինիս, այրում նրա ապարանքը, բմբոստանում Արտաշեսի դեմ, անիծվում նրանից, և բաշքերը, թե վիշապները (Աժդաշակի զարմից), ինչպես ստեղծել էին այս դիվական ուժը և զրել գողացված արքայազնի տեղում, այնպիս էլ հետ են վերցնում, տանում «յաղատն ի վեր ի Մասիս» ու շղթայում լեռան այրերից մեկում: Իրավիճակը էղոթերիկ իմաստ է թարցնում, որ շգիտենք: Դիվական ուժը, որ զործում էր, վերադառնում է իր նախկին՝ պոտենցիալ զոյությանը, իրականությունից վերածվում է մի նոր հնարավորության (Հիշենք Յոնեսկոյի զատողությունը<sup>55</sup>), որպեսզի կրկնվի ցիկլը: Սա առանձին հարց է, որին կանողրադառնանք:

Առասպելի չպատմված շերտում հավանական սյուժետային մի դիմ է հնթաղում Գարեգին Արգանձոյանցը-

55 Հմմտ. Ներածություն, էջ 7.

«Արտավազդն պառազն Սաթինկան տարփանաց բարձիցն Արգավանաւ...»<sup>56</sup> Արտավազդն, ուրեմն Սաթենիկի դավաճանության արգյունքն է՝ Արգավան վիշապի որդին (Աժգաճակի զարմը) և բմբոստանում է իրեն ծնունդ ավող դիվական ամի դեմ (էղիպյան կոմպլեքս): Սրբանձտյանցը ենում է «դե փոխանակ Եղին» խոսքից: Խեկապես նման գաղտնիքը կա այստեղ, թե՛ բահագետի այրական երեակացությունն է խոսում: Հետազոտողի «խարդավանքը» մեզ էլ հրապուրիչ է երեսում: Բայց Սրվանձտյանցը թերեւ հիմքեր ուներ բան տեսնելու առասպեկտի ամենամութ անկյունում: Բանաձյունական նյութի խոր իմացությունը, ազգագրական տեղեկությունների հարստությունը կորող էին նկատել տալ այս դիմք առասպեկտի էղորիկի շերտում: Աչ պակաս հետաքրքրիք է Արվանձտյանցի զբան ու ծազովբական մի հեքիաբը արքայազնի, նրա մեր ու վիշապի մասին: Գործում է նույն արխետիփը նույն միթոլոգիական պայմանաձևում: Բախումը արքայազնի և իր մոր տարփածուի միջև է, հայրական պատիփ պաշտպանությունը, մոր ու վիշապի դավադրությունը արքայազնի դեմ, վերջինիս կորուստը, մահը, հարությունը, վրիժառությունը<sup>57</sup>: Միշազգային հեքիաթ է հայտնի է և սլովակյան տարերակիք Ֆյոդոր Բոււլակիչ գրառմամբ<sup>58</sup>:

Հասնում ենք, այսպիսով, Սաքսոն Քերականի (XII դ.) «Դանիացվոց վարքի» (Gesta Danorum) հայտնի զրուցին՝ «Սագա Ամլեգուսի մասին»: Ամլեգուս—Գերուտա—Ֆենգոնիիսիսհարաբերությունը պարզ տիպարանությամբ նման է Արտավազդ-Սաթենիկ-Արգավան փոխհարաբերությանը: Ամլեգուսը խննի արքայազնի դանիական տարբերակն է, հավանաբար՝ իսլանդական ծագումով: անունն ստեղծված է իսլանդերեն ամլուdi (խելապակաս, խենթ) բառից<sup>59</sup>: Դիվացման կամ դեերից պատուհասվելու թերեւ ուղղակի հիշողությունն է այս՝ արտահայտված որպես ձևացալ խեն-

56 Գ. Արվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 179:

57 Մ. Արելյան, Երկեր, հ. Ը, էջ 186—187:

58 Նոյն տեղում, էջ 187:

59 Зарубежная литература средних веков, изд. «Прогресс», М., 1974, с. 384.

թություն։ Ուրվականի հետ խոսելու և հետո խնդիք ձեռնաւուու (կամ այդպես համարվելու) երկույթը թեմայի շեքսպիրյան մշակման մեջ է և պետք է ունենա դարձյալ բանահյուսական ժաղաց՝ Սաքսոն Քերականից տարբեր մի ազգություններում գաղափարը, այնաշխարհային բարեկամած, ձեռացյալ, թե միշտայիշությունը վերապոված, բոլոր դեպքերում հին մշտի՛ է<sup>60</sup>։ Ամենավայր խնդիք է ձեռնում թարցընելու համար իր գավաղությունը և... խաղում է կրակի ու մըխրի հետ<sup>61</sup>։ Դժվար է չնկատել կրակապաշտության կամ խնդիքի կրակի բարեկամած է նույն կերպ, ինչ Արտավազզը Արգավանի։ խնդրւուն ու գինարբուրք վերածում է հրդեհի, կրակի է մատնում սրահը, պալատը, բոլորին։

Չափազանց բարեկամած է խնդիք արքայազնի և վրոպատկան զրույցի թեմատիկ-տիպաբանական կապը հայ հնագույն զրամատիկական այլ ժեղի հետ Կարծես թե շոշափում ենք մի շատ հին ու խոր թագված արմատ զրամայի ամենահին և բնիվերսալ գիծը։ Գո անհատի և արտաքին իրականության կամքի սիմվոլիկ-զրամատիկական զիտակցումն է։ Մոտենում ենք հին մէստերիաների բովանդակային հիմքին։

Մարդու և աշխարհի փրխճարարերությունը միայն խորհրդապաշտական շաբաթ կարող էր ունենալ հին զրամացյում, որ նշանակում է, թե Հին զրաման միայն ու միայն միստերիա պետք է լիներ, ժաղովրդական կամ պաշտոնական, միւնքուն է։ Մեզ հայտնի նյութը հնարավորություն չի տալիս որոշել այս երկուսի սահմանը, այն էլ հնագարում։ Բայց խորհրդանշակարգը, որոնց էական նշանակություն ենք տալիս, նշատ հնք բացատրում, թե մշտավոր (գուցե և սխալ), բնակ երկրորդական չեն։ Առասպելում գործող յուրաքանչյուր առարկա՝ կենդանի, բուրո, իր, նյութ, ամեն ունիթագրվող առարկայական թիմակ կամ առարկայորեն

60 Այս պայմանաձևում է նաև Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատռեասիք հերոոք» Զացկին։

61 Зарубежная литература средних веков, с. 61.

62 Կրակի պաշտամունքը հնուու չեն զալ միջնադարյան եկրոպացը (տե՛ս Ջ. Փրեզեր, Золотая ветвь, М., 1980, с. 676—685).

ներգործող մակդիր, պատկերավորության ու ռեալիզմի ամեն մի հետք՝ կյանքի զգացողության ամեն մի նշան իր ակնհայտ, զգայական իմաստից բացի ունի ավելի էական, խորհրդանշային իմաստ, որը թերես զիտակցված չէ մեզ հայտնի գրական աղբյուրներում։ Առանց խորհրդանշային իմաստների հին առասպեկտարանությունը մեզ կարող է երեալ շատ միամիտ ու պարզունակ։ Բայց այդպիս չէ։ Հնագործան մարդու միտքը թերես եղել է պարզունակ (կամ նրա մողուսներն են տարրեր ու մեզ համար անհասկանալի), բայց նրա զգայական հայեցումների աշխարհը երբեք պարզունակ չի եղել։ Ժամանական պատկերացումներն ու առասպեկտարանությունը, որից շատ բան չգիտենք, կարգավորել են մարդու հեղեկուն աշխարհը։ Իսկ մտքի շփոթմունքները անհատին դաբճիք են ապատամք կամ խենթ, ուղղորդված, հասարակությանն ու միջամայրին օտար։ Եթե ժամանակակից լեզվով արտահայտվենք, սա հին մարդու կյանքի դրաման է, որը պետք է լուծվեր ինչ-որ կերպ։ Եվ լուծվում էր այդ դրաման գերբնական ուժերի հրաշալի միշտառությամբ՝ կախարդանքով, աղոթքով, «թուղթ ու գրով», հմայական խոսքով կամ երգով, ծեսով, միստերիայով։ Միստերիա բառի հին հայերն համարժեք բավական իմաստալից է՝ խորհուրդուց։ Մեր քննության առարկա դրույցը կամ առասպելը, ինչպիս բոլոր հեղինակների վկայություններն են ասում (կանգրագառնանք դրանց), նման ծագում ունի Չենք կարող, ուրեմն, նրա դրամատիկական կամ միստերիալ-թատերական բնույթը պարզել առանց հիմնավորապիս (հնարավորության սահմաններում) շոշափելու դրույցի ինացիոնալ խորքը։

Համեմատելով Շիդմարի զրույցը, Արտավազդի առասպելն ու Սարսոն Քերականի գրառած Ամլեդուսի սագան, նկատում ենք, որ հայ բանավոր ավանդության մեջ միավորվել են երկու միթոլոգիական պայմանաձևեր՝ շղթավուժի առասպելը և ինենթ արայազնի առասպելը, և ստեղծվել է մեկ ֆաբուլա, պատճառականականքային «Հպատճառաբանված» բնիթացք։ Ո՞րն է այս զրույցի երկու մասերից դրա-

ման, դժվար է որոշել: Թվում է՝ այն, որն ավելի խորհրդապաշտական է՝ շղթայվածի առասպելը, ինչպես հուշում է Հայսմալուրքի զրուցը: Ամէնդում սագան, որ խորապես դրամատիկական սյուժե ունի, Ենքսպիրի ձեռքի տակ է վերածվել դրամայի, և մեզ համար հետագաբձ անդրագարձումների մզող պատկերագոր մի կողմնորոշիչ է: Թեպես, ո՞վ գիտե, նրա արժատները որտեղ են:

Արդ, եղել է մի առասպել բարձունքում շղթայվածուժի մասին, և՝ մի առասպել ինենթ արքայազնի մասին՝ «ի ծնանելն զիակեալ պատահարանաց իմն»<sup>64</sup>: «Որդի մի էր նորա Արտաւազդ անուն, — կարգում ենք Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» խոսքում, — զոր Շիդարն կոչեն»<sup>65</sup>: Վանականի զրառումն ավելի հին է, քան Հայումավուրքի տարբերակը, և այստեղ առաջին անգամ Արտավազդ և Շիդար անունները հանդիպում են իրար որպես մեկ անձի անուն: Ո՞րն է այս անուններից նախնականը, առայժմ էական չէ: Առասպելի ժամանակային շերտերն էլ դժվար է անունների մեջ փնտրել: Բայց մինչեւ անունների ստուգաբանությունը մի անդամ էլ անցնենք առասպելի միջավայրով, փորձենք մեկ-երկու խորհրդանիշ էլ շոշափել:

Շիդարը՝ մոլիք, իշխանատենչ, նախանձ, հայրատայաց, հանդուգին, բռնացող, խելսպակաս ու որկրամոլ, թափառում է ամայի վայրերում՝ Մասյաց առապարներում, Գին գետի ակունքների մրտա, թե Սև ջրի ափերին՝ «ի վայր իսպառ շամբախիտ»<sup>66</sup> և կինճ է հալածում: Այս պատկերը, որ փորձում ենք կառւցել ըստ գրական վկայությունների՝ առանց հոր մակընթերներ ու հատկանիշներ ավելացնելու, մասամբ շիշեցնում է վյունիկյան Աղոնիսի վւրազն որսը Լիբանանի լեռներում<sup>67</sup>: Գուցե և կինճը պատահական մի ատրիբուտ է՝ առասպելի միջավայրից եկող: Բայց այդ կինճին մենք

64 Խարենացի, Ֆըլ. Հրատ., էջ 192:

65 Վանական վարդապետի ասացեալ յաղացն Տարեմտին, Մատենագարանի գիտական հյութերի ժողովածու, № 1, Երևան, 1941, էջ 166:

66 Նկարագրում է Խաչատոր Արովիանը (Ելք, Հ. 8, Երևան, 1956, էջ 14—15):

67 Հմայտ. Գ. Ղափանցյան, Արա Գեղեցկի պաշտամունքը, Երևան, 1944, էջ 48—49:

Այի ենք հանդիպելու ամենեին ոչ պատահական տեղում։ Այսպես, «Հեծեալ Շիդարն ի ձի» քշում է «յազատն ի վեր ի Մասիս» և աճաբեկվում, այսահար լինում՝ գուցե լեռան բարձունքներում խորտակվող սև ոռոցների ողբայինից, որի արձագանքը մեծանում է գագաթից մինչև ստորոտ իշնող հսկայական խոռոշում, հասնում ձորի ծայրը<sup>63</sup>, որտեղ հետագայում՝ շատ ուշ կառուցվել են սուրբ Հակոբի աղբյուրն ու մենաստանը։ Ամենայն հաւանականությամբ շրի պաշտամունքի հետ կապված հնագույն մի սրբավայր է եղել այստեղ, և այդ վայրին մէակ աղբյուրը, թվում է, նույն խորհուրդը պետք է ունենա, ինչ Ազուակու քարի ջուրը, որի ժողովրդական բացատրություններից մեկը կապվում է տառապող աստծո գաղափարի հետ։ Հեռան ստորոտում հոսող աղբյուրն իմաստավորվում է որպես տառապող աստծո կամ սրբի արտասուր<sup>64</sup>, Խորենացու ասած «վիշապաց տաճարը» գուցե իր խորբում այլ իմաստ էլ ունի՝ չի նշանակում անպայման վիշապների ապարանը (Յեպետ այդ իմաստը հուզվել է միջնադարում), և միշտ յառը (Վիշենք վիշապարերը)<sup>65</sup> գուցե այստեղ չըի պաշտամունքի իմաստազրկված մի արձագանք է։ Զրի ու կրակի պաշտամունքները, ըստ հայ ժողովրդական հերօսավեպի՝ «Սասնա ծոհերի» և բանահյուսական այլ տվյալների, հակառակ չեն իրարկրակն ու ջուրը քույր ու եղբայր են<sup>71</sup>։ Ինչպես նկատել է Գրիգոր Դափանցյանը, վիշապաքարից կապ ունեն Արտա-

63 և. Արովյանի նկարագրությունից (տհ'ս նույն հրատ., հ. 10, էջ 14):

64 «Մասնա ծոերիք պատումներից մեկում քարից հոսող ջուրն իմաստավորված է որպես Մշերի արտասուր, իսկ Մշերը կոչվում է Ակոսի ...Ակըուսու քար կասին, պացվալ, կնաց մեջ։

Մըկա պուտ-պուտ ճուր կըկյա, Կասին՝ անու աշից արտըսուրն իւ Պատմողը՝ շատախցի Ռաշո Զալոյանը «Ակըուսու քարը» ստուգաբանում է «Ակոսի քարը», որի մեջ մտել է Հակոբը («Մասնա ծոեր», գրասումը և բնադրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, 1979, էջ 150):

70 ՏԵ՛ս Գ. Կառավար, Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975, с. 317—328.

71 Մ. Արեվյան, Եշվ, հրատ., հ. 1, էջ 58—59:

վաղղի առասպելի հետ Գտնվել է մի վիշտարար (թեպետ Հայաստանի սահմաններից հեռու), որի վրա պատկերված են շղթու և երկու շուն՝ ներփակ շրջանում: Ըստ Պատմանց-յանի՝ միանգամայն հիմնավոր Անթաղրության, սա շղթայ-վածի առասպելի կովկասյան հոլովումներից մեկի ելուստն է<sup>72</sup>:

Այնուամենայնիվ, չհեռանանք մեր առասպելի բնաշ-խարհցից: Հետեւնք Մասյաց ստորոտում ու Երասխի ափե-րին թափառող խննի արքայազնին: «Աղմկեալ իմն ի ցնո-րից խելագարանաց, ընդ վայր յածելով երիգարաւն», դի-վահալած Շիդարը քեզէ է դեպի Երասխի ճահճուտները<sup>73</sup> կամ Սև ըրի երակը, ուր վիստում են վայրի խողերը<sup>74</sup>, և ան-հետացել: Ճահճում է խեղզել, թե կինճերի կերակուր շար-ձել (իրական դեպքերի հիշողություն) կամ, Արտաշատի կամքով անցնելիս, ջրում տեսել է իր ցոլացումը, սարսնել, գլորվել ձիուց և անհետացել գետի ալիքներում:

Այժմ այդտեղ ոչ գետ կա, ոչ կամուրջ Երասխը փոխել է իր հունը, հեռացել Արտաշատի բլուրներից, և խոռ ու մացառ է աճում Երասխի հատակին: Մեզ է նայում Խոր-վիրապի անխոս րլուրը, ինչպես ամայի մի կղզի կանաչ հարթավայրում:

Այս պատմության մեջ, ուր աշխատեցինք չհեռանալ մի-շավայրից կամ խորհրդանիշերի իրական աղբյուրից, նշմար-գում են հեթանոս պաշտամունքի պատկերները՝ ջրամույն հեծյալը՝ թերևս Հելիոսի ստվերը, որպես մայրամուտի խոր-հըրգանիշեր<sup>75</sup>, եղեգները («երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ»), որպես կայծակի ու արևի աստծո՝ Վահագնի առասպելի հիշեցում, և կինճը՝ վյունիկյան մեռնող ու հառ-նող աստվածության՝ Ազոնիսի առասպելանշանը: Ըստ Պա-

72 Ի. Կապանցյան, նշվ. աշխ., էջ 338.

73 Անցյալ դարի ոսւս ճանապարհորդները (Շոազեն, Օգարովսկի) նկա-րագրում են այս վայրերի ճահճուտները, որ բռնել են բավական մեծ տա-րածություն (Թ. Ավդալբեյյան, Արաբսի ճանապարյան հունը, նշվ. տեղ. էջ 98—100):

74 Խ. Արովյան, նշվ. հրատ., հ. 10, էջ 11:

75 Հմայտ. Ю. Иванова, Следы солярного культа, сб. «Кален-дарные обычай и обряды в странах зарубежной Европы» изд.

փանցյանի, Արտավազովը կամ Շիդարը «մեռնող և հարություն առնող աստվածության հետ որոշ շափով առնչակից է զառնում»<sup>76</sup>: Բատ մի ավանդության, Աղոնիսը զո՞ւ է զնացել կինճին, որսի ժամանակ<sup>77</sup>: Մյուս ավանդությունն ասում է (սա կարծես ո առջինի լրւ ցաւը լինի), որ կինճ որսաւու որս չին Ազնիսին սպանել է գարրինների աստված Հեփիստոսը<sup>78</sup>: Երեակայական համարենք զուգահեռները, գաղտնատեսության փորձ կամ երկրորդ մի խորհրդապատություն, ուինչ է: Եթե խորհրդանշերը այս թվացյալ կապն ել չլինի, ակնհայտ է երկու սուսապելների՝ թիմատիկ-գեղարփեսաւելու կազմը, որ ոգարդ տիսանելի է Խորենացու երկեւու:

Խորենացուն հայտնի է երկու միթելոգիմ մեկ առասպեկում կամ երկու զրուց՝ մեկն իրապատում, մյուսն այլարանական: Դրանք միախառնվել են ու տրուցել ըստ հեղինակի պատմագիտական ժամանացման և տեղ գտնել «Պատմավրյան» տարրեր հատվածներում ու զգուխներում: Առասպեկտ ազգեցությունն այնուհետ մեծ է մեր պատմագրի վրա, որ նա Արտավազդ անվանը հանդիպելիս ակամաժմնում է առասպեկտի շափիդները, և ազգարանությունների ու խորհրդանշերի ստունում են սեալ իրավիճակների ու առարկաների տրժեր: Այսպիսով, նրբեմն խառնվում են պատմական ու առասպեկտական դիմքերը: Տեսանք, թե ինչպես են միացյուտնել Արգամինի ու Արգամի զիմու զծերը: Այսպես ել երկու Արտավազդները, որոնք հերենացու համար տարրեր դիմքեր են, տարրեր ժամանակներում ապրած, բնութագրվում են համանման արարքներով, և դա անկասկած զալիս է միթելոգիական պայմանաձևեց: Առասպեկտի հերոսը, ըստ Խորենացու, Արտաշես առաջինի (189—160 մ. թ. ա.) որդին է, մյուս Արտավազդը Տիգրան Առաջինի (= Երկրորդի) որդին՝ պատմականորեն վկայված Արտավազդ երկրորդը (55—34 մ. թ. ա.), որը ոչ մի կապ չունի առասպեկտի հետ: Գժվար է ասել, թե Արտաշեսի որդին ինչ

«Наука», М., 1983, стр. 106.

76 Գ. Պավանցյան, Արա Գեղեցկի պատմությը, էջ 58:

77 Հմմատ. Նույն տեղում, էջ 48:

78 Ջ. Փրեզեր, Երվ. աշխ., էջ 522—523:

կապ ունի առասպելի հետ, բայց նա մեզ հայտնի է՝ միայն առասպելով։ Որ Խորենացին Տիգրան Երկրորդի գործերը վերագրում է Տիգան Առաջինին և ըստ այդմ էլ նրա Արտավազդ որդուն տանում է հետ՝ Արտաշեսի որդուց առաջ, հայտնի է պատմաբաններին, բայց որ նա Երկուսին էլ ներկայացնում է բացասական դույներով, մեկին զվարճանեց ու որկրամոլ, մյուսին դիմանար, քմանաձ ու ամրաբառավան... սա արդին այլ բան է։

Պատմական փաստերի կամ վկայությունների փոխառեղումը սովորական շփոթմանը չէ։ Դա գալիս է բանավոր աղբյուրների բնույթից, վիպասանական պատմության տրամաբանությունից։ Ինչ տրամաբանությունն է այդ, եթե ոչ միթելոգիական պայմանաձևի կենդանի շարժում, իրականության առասպելաբանական ճանաշողությունն, անունների ու սիմվոլների ճնշմամբ։ Եթե երկու գեմքեր, մեկը պատմական, մյուսն առասպելական, ներկայանում են գրեթե նույն բնավորություններով ու համանման ճակատազրերով, մնում է (մեր խնդրի տեսակետից) ճշգրիտ համարել նախ միթելոգիական պայմանաձևի գոյությունը, որի խորհրդանշիշերին բախվելու հնք այլ տեղերում ևս։

Ահա Տիգրանի որդի Արտավազդը Խորենացու «Պատմության» իր (22) գլխում, և ահա Արտաշեսի որդի Արտավազդը ԿԱ (61) գլխում։

### ԻՐ

Հայոց թագաւորք Արտավազդ  
որդի Տիգրանայ։ Սա ժառանգեց-  
ցուցանէ գեղերարս և զեռս ի գա-  
ւաս Աղբովտի և Ասրերանոց,  
թողլով ի նսաս զմասն արքունի  
<...> միայն օրինագրէ ոչ կհալ  
յԱյրարատ ի բնակութիւն ար-  
քալի։

Բայց ոչ ինչ գործ արութեան  
և քաջութեան եցոյց այլ ուսե-  
լաց և քմակելեաց պարապեալ։

### ԿԱ

Հետ Արտաշիսի թագաւորք  
Արտավազդ որդի նորա և հալածէ  
յԱյրարատայ զամենայն Էզրարս  
իր ի գաւաս Աղբովտայ և Առ-  
բերանով, զի մի բնակեսցն յԱյ-  
րարատ ի կալուածս արքայի  
<...> Որ յետ սակաւ ինչ աւորց  
թագաւորելոյն իւրոյ, անցեալ  
զկամրջան Արտաշատ քաղաքի  
որսու կինճս և իշավայրիս զա-  
կամրջը Գինայ, աղմկեալ իմն ի

մօրից և եղեգնապուրակաց թա-  
փառեալ շրջէր առապարաց, դի-  
շավարիս և խոզ արածելով  
<...><sup>79</sup>

ցնորից խելազարանաց, ընդ վայր  
լածէլով երիվարան <...><sup>80</sup>

Տիգուանի որդին գերեվարվում է Անտոնիոսից, շղթայ-  
վում, չորս տարի անցկացնում հոռմեական բանտում ու գրե-  
խատվում (34 թ.), Արտաշեսի որդին (Կթի պատմական անձ  
է, ապրել է Տիգուանի որդուց մոտ Հարյուր քամն տարի ա-  
ռուց) պատուհանվում է քաջրերից ու մնում Հավերժորին  
շղթայլած: Առաջին փաստի պատմականությունն ստուգված  
է, երկրորդը նրա հետազարձ անդրադարձումն է առասպելա-  
վիալական հոլովումով<sup>81</sup>: Այդ հոլովումը Համերաշխ է միթո-  
ւոգիական պայմանաձևին, որը, ինչպես նկատել ենք, հին է և  
մեր պատմական փաստից, և առասպելից: Բայց մենք երկու-  
թեմա ունենք, և այդ երկուսից նախնականը, եթի Պրոտեթիսի  
առասպելով՝ կողմնորոշվենք, պայմանականորին Համարելու  
ենք բարուստի ու շղթայլածի կամ Հավերժական կալանավորի  
թեման: Այսանձնանում և ինքնատիպ է երկում խենթ արքայազ-  
նի առասպելը, որը XIII—XIV դարեր է հասել որպես Շիգարի  
զրոյց: Վանական վարդապետի Հաղորդած տարրերակի հա-  
մաձայն, Արտավազը Շիգար է՝ «բախտի ի մանկութենէ,  
զոր Շիգարն կոչեն»: Շիգարն այստեղ մականուն է երկում,  
իսկ եթե անուն է, դարձյալ նշանակում է խենթ (բախտած-  
խանգործված ինչ-որ հոգեկան հարվածից) և, հասկանալի է:  
պատմական անձ չէ: Այս անվան կամ բառի բոլոր մեկնու-  
թյուններն այդ են ասում<sup>82</sup>:

Հին է, թե նոր Շիգարի զրոյցը՝ հնադարյան, թե վազ  
միջնադարյան, դուցք առհասարակ շկարողանանք պարզել  
Բայց խենթի թեման խոր արմատներ պետք է ունենար հայ  
վիալական բանահյուսության մեջ, որ անցներ «Սասնա-  
ծոկերին»: Իսկ որ անցել է, ակնհայտ է: Եվ անցել է շղթայ-  
վածության գաղափարի ու հրապաշտության խորհրդանիշե-

79 Խորենացի, նշվ. Հրատ., էջ 137:

80 Նույն տեղում, էջ 191:

81 Հմմատ. Մ. Արենյան, նշվ. Հրատ., հ. 9, էջ 63—74:

82 Հ. Անառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 515—516:

րի Հետո: Վեպն սկսվում է ծովային ծնունդով, ամպրոպային հերոսով (Սանասար), զիշապամարտությամբ, կայծակի թրով, ինչպես Վահագնի առասպելը<sup>83</sup>, և ավարտվում հույսի կրակը ժայռում անթեղելով, ըրպեսցի կրկնվի մի օր Միջի ծնունդը քարից, ինչպես եղել է<sup>84</sup>, այսինքն՝ մեսոփայի Հայտնըվելով լունվի ցիկլը: Ծղթայիվածի ու խենթի առասպեկտների բոլոր խորհրդանիշերը կրկնվում են վեպում: Որոշ տարրերակնեռում կրկնվում է ճակատագրի անեծքը՝ Հայրական նույնի նամ գերագույն իշխանության բանադրանքի ձևով (Հմմտ: Զես և Պրոմեթես, Աստված և Ամիրանի): Այսուղ, ինչպես և առասպեկտում, նպովքի շավում է անդրաշխարհից<sup>85</sup>:

Այս և նման դուդահեռներ դիտված են, Հայտնի հն բանագիտականին: Ավելացնենք դրանց մեկ-երկուսը ևս: Մե ցրի Ճահճուտը, որ ուղղակիորեն չի նկարագրված առասպելի մեջ Հայտնի տարրերանիներում (ասված է Եղեգնապուրակ), նույն խորհրդանիշը չէ՝ արդյոք, ինչ Մհերի ոտքերի տակ թույացող Հոռը: Խսկ ցրի մեջ ածող Եղեգները որևէ կապ չունեն Վահագնի երգի «երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեցնիկ» խոսքի Հետո: Ջրում և Եղեգնուտում անհետացող Հեծյալը, ևթե Հելիոնի ստվերն է, ապա այդ միթոլոգիմբ ծնունդ չի՝ առեւ արդյոք մայրամուտի կարմրող Եղեգնուտի պատկերից, և Վահագնի ծնունդը՝ արեածագին կարմրող ցրերից ու Եղեցներից: Նման հապեր պետք է ենթադրել, ևթե Վահագնոր և Արտավաշոց ամպրոպային աստվածություններ, են՝ նույն պաշտամունքի տարրեր կողմերից լսվող 22ուները: Վերջապես, Արտավազդի կինծ Հալածելը չի՝ շրջափոխվում արդյոք Համանման մի պատկերի «Սասնա ծոերում».

83 Հմմտ. Մ. Արենյան, Երկեր, Հ. Ա., 1996, էջ 414—418:

84 Հմմտ. Գ. Պափանցյան, Եղվ. աշխ., էջ 58—59:

85 Անդրախարհից լսվող Հոռ Հոռու Հայնը՝ պահանջող, պատմիրող, նախատող, զիշեցնում է «Համելետի» Հայտնի տեսարանը: Եկբագիրի աղբյուրն այսաւեղ Ասթուծ Գրամատիկուսի սազան չէ (այնուղ նման բան չկա), բայց պետք է ենթադրել միթոլոգիական որևէ ավանդություն:

...ինչքան շեյրան գնաց, մինք դնաց,  
քարափըն բացվագ, շեյրան մղագ քարափ,  
մինք լե ձիով մղագ քարափըն<sup>85</sup>,

Հսու խորհրդապաշտական բովանդակության, քարածին  
ամպրոպը հանդշում է մոր զրկում:

Մոտենանք մարդկային, ուսալիստական շերտին: Մհերը  
շփոթված է, տարակուսած, ուղեկորուլս, անհնարան, կաթ-  
վածահար («բախսած ի մանկութենէ»), օտարացած աշխար-  
հից ու չարացած, ինչպես Արտավազզը («յաւերակացս ո՞ւմ  
թագաւորեմ») և «Ճուռ», ինչպես Շիդարը՝ խենթ: Խենթության,  
Հանդպնության ու Հերոսականության գաղափարները վիստա-  
կան բանահյուսության մեջ նույնանում են: Դա հատուկ է,  
ինչպես նկատում ենք, ոչ միայն հայ վեպին ու առասպելին,  
եւ այսուեղ ինքնատիպության հարց շկատ Զկա առհասարակ  
զուտ աղդային թեմա, այլ կա թեմաների ու մոտիվների աղ-  
դային կազմակերպվածք կամ միթոլոգիական պայմանաձեռի  
աղդային դրսեորում: Եղթայվածի, տառապող աստվածության  
և մերժված ու գահաղուրի արքայազնի նույնացումը կարծին  
է: խատ լւ սիսէան բնազդի արտահայտություն է այն ծովո-  
վընդի համար, որն Արտաշեսյանների անկումից հատո պա-  
հել էր շղթայակառ Արտավազզ Երկրորդի հուշը և սպասում  
էր աղդային միապետի: Ուրիշ պայմաններում շղթայվածի  
առասպելը թերևս այդքան Հովովվեր հայոց ավանդական  
պատմության մեջ:

### ԱԲՏԱՎՈՅԾ ԵՎ ՇԻԳԱՐ, ԹԵՇ ՇՂԻԱՅՅԱՌ ՓԱԼՍԱԿԱՆ

Արտավազզ և ՄՀԵր անունները, որպես հրապաշտու-  
թյան խորհրդանիշեր, պարզված ու բացառոված են մեր ա-  
ռասովելազիտական գրականության մեջ: Մ. Արեգյանի, Թ.  
Ավագյանի և Գ. Ղափանցյանի ուսումնասիրությունները,  
ինչպես նաև Հ. Աճառյանի լեզվական ստուգարանություննե-  
րը, շատ առումներով սպասիչ են: Մեր խնդիրը թելագրում է  
վերարձարձել Արտավազզ անվան ստուգարանությունը:

85 «Սասանա ժոհր», 1979, էջ 296:

«Արտավագդ անունը բնիկ հայկական անուն չէ,— զրում է Ավդալբեղյանը,— Մի՞ն անվան նման Արտավագդ անունն էլ միշաղքային անուն է ևղել Սուածավոր Ասիայում, մի անուն, որի սկիբորը թաղված է հազարամյակների ժայրեցումը<sup>87</sup>: Հնագույն համարվում է Ավեստայում պահմած Աշաւազծանի ձեր, որից ժադում են Արավազ, Արավազ և նման ձեւը<sup>88</sup>: Դ. Խալաթյանցի կարծիքով, մեր առասպելը մի արձագանքն է իրանական Հին զրուցների, որոնք ստեղծվել են Հայաստանի նպատ լնուան մոտ գտնվող Անահիտի տաճարում սպասավորող Ասավաղդո-Արտավագդ քրմի անվան շուրջ<sup>89</sup>: Խալաթյանցի ազրուրը մեղ հայտնի չէ, ե իրավիճակը պարզ չենք պատկերացնում: Ավդալբեղյանը, սակայն, հավանական է համարում այս ենթագրությունը: Նա միաժամանակ նմանություն է տեսնում Արտավագդ անվան և առտուած քառի զավառական փոփոխակների (աված, ասված, ասքած և այլն) միջենու Ավդալբեղյանը նաև հավանական է համարում արև արմատը, որ նշանակում է մարուր, և Արտավագդ անունը թարգմանում է մայրամեծար: Նա ուշադրություն է հրավիրում Ֆերդինանդ Յուստիի ստուգաբառության վրա, բայց որի արև-ը հնչյունների ետևառաջությամբ կապվում է աւոր-կրակ բառի հետ<sup>90</sup>: Մեր զննումների կոնտեքստում սա տրամարանական է: Այսպիսով, Արտավագդ պիտք է նշանակի մաքրամեծար կամ հրամեծար՝ կրակապաշտ քորմ: Մոտենում ենք պարսից ատրուշանին: Եթե բառը համեմատենք գենդերեն մինրաբանի հետ, որ նշանակում է բայց Միջրի գործող, Արտավագդ կնշանակի բայց կրակի ողբերգությունը: Այս իմաստին միանգամայն համերաշին է հնչյունն Աճառյանի ստուգաբառությունը, բայց որի, Արտավագդ պահապետներն նշանակում է հաստատուն արդարությունը ունեցող<sup>92</sup>, արգարակյաց:

87 Թ. Ավդալբեղյան, նշ. աշխ., էջ 36:

88 Նույն տեղում, էջ 37—38:

89 Դ. Խալաթյանց, նշվ. աշխ., մասն 1, էջ 316:

90 Թ. Ավդալբեղյան, նշվ. աշխ., էջ 38:

91 Նույն տեղում, էջ 37:

92 Հ. Անառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 210:

Այս բոլոր տվյալներով, որոնց նոր բան ավելացնել չենք փորձում, և կարիք էլ չկա, Արտավազդը քրմական անուն է: Թվում է, Հիմքեր ունենք այդ քրմական անվան հետ կապելու Արտավազ տեղանունը ևս՝ «Քաղաք Այրարատա Կողովիտ գավառի մոտաց<sup>93</sup>: Պատմության մեջ հայտնի քաղաքը չէ. հավանաբար պետք է քրմական-պաշտամունքային կենտրոն եղած լինի սա: Նման մի սրբավայր է եղել գուցե (շատ հավանական է թվում) «Արտավազդա ապարանքը» (կամ՝ Արտավազդա ավան, Արտավազդական), որը, որպես քաղաքի անուն, առանձնապես հայտնի չէ: Պատմության առանցքը գրեխավորապես համարակալաքական իրադարձություններն են, և սրբավայրը չէր կարող այս առումով նշանակություն ստանալ: Երբ տեղում «ամայի վանք կամ անապատ մը եղած կա Այրարատա Նիգ դավառի Բջնութիւնակի մեջ, Արասածորի մոտաց<sup>94</sup>: Դա այժմյան Արդական գյուղի մոտ է<sup>95</sup>: Հնարավորէ, որ Արդականը լինի Արտավազդականի սղված ձեզ: Վերջապես, դարձյալ Այրարատում, Արագածոտն գավառի մեջ. Բյուրական գյուղի աղենելյան կողմում կա մի ավերգած եկեղեցու՝ մատուի վերածված մի հատված, իր անհամերաշխ. Երկարավուն, լուս դանդակատնով և կոշլում է Արտավազիկ (նկ. 2). Հետևելով էփրիկյանի բառարանին, մի պահ վստահութեան ընթերցում ենք Արտավազ՝ ժողովրդական դրույցով ավանդված անունը: Բայց տարակուսանքի մեջ է զցում արտավազիկ հասարակ անվան միակ վկայությունը Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում»: «...արտավազիկ արշաւանօք ընդ, փախիցին», «ի բաց արտավազէել»<sup>96</sup>: Էստ այսմ, արտավազիկ, ոչ թէ արտավազիկ, նշանակում է փախստական: Ինչո՞ւ պետք է եկեղեցին այդպես կոչվեր, անհասկանալի է առայժմ: Վեւ նշանների տարրերությունը, պարզ է, ոչինչ չի նշանակում ժողովրդական-բանավոր խոսքում: Իսկ եթե Արտավազ

93 Ս. էփրիկյան, Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան, հ. I, Վենետիկ, 1902, էջ 323:

94 Նույն տեղում, էջ 324:

95 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 41:

96 Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, 2է, 1:

անունն էլ, ինչպես տրված է Շիդարի գրուցում (որպես Հոր, ոչ թե որդու անուն), նշանակում է փախստական, փլվում է հրապաշտության մեր երեակայած տաճարը։ Կամ գոյք Դրիգը Մագիստրոսը մի բառ է Հորինել, և մենք շփոթվո՞ւմ ենք։ Երկու վիճակներն ել հավանական են։

Ինչեւէ. կանգ առնենք «Արտավազդա ապարանքի» մոտ։ Դիտենք, որ վաղ միջնադարյան (կամ վաղ համարվող) կամ Հետագայում շենացված եկեղեցիների տեղերում եղել են հեթանուական սրբավայրեր։ Դրանց հիմքերում պետք է փնտրենք հրապաշտության մեջյաները և հնագույն միտուերիաների օջախները։ Պատահական չէ, որ հիշյալ սրբավայրերը Այրարատյան դավառում են՝ թագավորական ուստանից ոչ շատ հեռու և հայտնի չեն որպես բնակավայրեր կամ ամրոցներ։ Հայտնի է, որ Արտաշեսյան Հարստության թագավորները եղել են գերագույն քամեր։ Արտավազդ անունը պատահականորեն չի դարձել թագավորական։ Անվան տարածված լինելը սպարթեական ու մարտական աշխարհում հատկանշում է պաշտամունքային ընդհանրությունը արեմինյան ու պարթևական ժամանակակիցներում<sup>97</sup>։

Միշնադարյան հեղինակները կարող եին շիմանալ առասւլելի հնության աստիճանը (մեզ էլ զա հայտնի չէ), կարող էին շիմանալ Արտավազդ անվան կրոնական ծագութը, և առասպելով ավանդված մի անուն վերագրել հայտնի պատմական անձանց ու պատմել նրանց վարքը խենթ արքայազնի միթուրդիմի համաձայն։ Անուններին առարկայություն գոյցություն վերագրող, անունը և իրը սպիտակական կապի մեջ տեսնող միջնադարյան իդեալիզմն է սա (որ կոչվում է ունալիզմ) և մեզ չպետք է շփոթեցնի։

Արդի ի՞նչ կապ կարող է լինել Արտավազդ և Շիդար անունների միջև։ Եթե Շիդարը մակիր է, ինչո՞ւ է ալշանդրված որպես հատուկ անուն։

Շիդար բառը նոր հայկադրան բառարանում չկա և չըւնի չին վկայություն։ Ամենահինը XI դարից է՝ ուարձյալ

97 Այս բնդհանրությունը Ավետարի վարդապետության հետ որեւէ կապ չունի (Հմմտ. Ա. Մելք., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 118—121)։

Մագիստրոսի «Թղթերում»: Հավանաբար, դա դիտվել է որպես ինչ-որ աղավաղում կամ քմահաճ ձև, որ հատուկ է Թահրավոնի իշխանի ոճին: Աճառյանի ստուգարանությունը և Ստ. Մայխասյանցի բացատրությունը ենում են Մագիստրոսից՝ իսկենի, իսկապար, դիմանար, դե, չար ոգի»<sup>98</sup>: Բայց մինչ ստուգարանությանն անդրադառնալը կարդանք Մագիստրոսի թուղթը՝ Սեանա ուստի առաջնորդ Սարդիս վարդապետին:

Մագիստրոսն անուղղակի ակնարկով վկայարերում է սանդարամետում կաշկանդված ինչ-որ ոգիների, մարդկանց խուժապի ու խելացնորության մատնող դիեցի, որոնց անվանում է շիզաք: «Եւ ահա կարծիս կասկածանաց մեղ հղեալ Աշտիշատայ դից դիսցաղնական դիւական հարձակման, գուցե սանդարամետականին խղեալ կատանաց <...> կամ շուայտական շիզարանցն շարս շամանդաղեալ շուանան ի կերպը՝ մերը»<sup>99</sup>: Բարգմաններ. «Եւ ահա կարծիս մեղ թվում է, թե Աշտիշատի դյուցաղնածին ստուգածներն են դիմակատնորեն հարձակվում. գուցե սանդարամետի կապանքներն են խորտակվել, կամ շվայտ շիզարների մշուշուտ ամբոխը հարձակվում է մեղ վրա»: Նման մի վկայություն կա երուսաղեմի «Ս. Հակոբեանց» մատենադարանի 1353 ձեռագրում: «Զինչ ևն համբարուկը, եւ յուշկապարիկը, եւ ծովացուզը, եւ յարալեղը, եւ պայք, եւ քաշը, եւ խիպիլիկը, եւ պարիկը, եւ հաղիոն, եւ շիզարը, եւ այլ ինչ ինչ սոսկ անուանք»: Պատասխանը, «զեւք ապստամբեալք միշտ շարք են առ ի մոլորեցուցանել շմարդիկ. եւ անուամբ կերպս ի կերպս լինելով, զի որուացին զմենգ ի կորուստ»<sup>100</sup>:

Ե՞ւ Մագիստրոս՝ անուղղակի համեմատությունը, և այս բացատրությունը վկայում են, որ միջնադարում պահպանված է եղել շիզարներ կոչվող մոլորեցնող ոգիների հա-

98 Հ. Աճառյան, Հայերն արմատական բառարան, Հ. Յ., էջ 515, Ստ. Մայխասյանց, Հայերն բացատրական բառարան, Հ. Յ., Երևան, 1944, էջ 515:

99 Գրիգոր Մագիստրոս, Խցկ. աշխ., էջ 87:

100 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Հ. Գ., կազմեց Ն. Կառողաբեան, Երևանացի, 1969, էջ 629:

մատալիքը։ Շիդար է կոչվել և մոլորեցնող կամ սարսաւոհեցնող գեր, և դեմք զարկվածը։ Ալիշանի բացատրություննել այս է ասում. «այսոնք (շիդարը) ոչ աշաց, այլ մտաց կուրացուցիչը զեր էին, այսինքն խելագարող, խենթացնող, ինչպես Հիշեցինք Արտավազդա Համար»<sup>101</sup>, Ալիշանի մեկնառնության մյուս տարրերակում, որ վկայակոչում է Ներսիս Անդրիկյանը, մի երանդ կա. Խնթաղրվում է, որ բարը ժողովրդական Հոլովմամբ է կարլել Արտավազդի Հւտ՝ «ասմիկը իրրե զատ անձ մի Արտավազդա որդիքեր են»<sup>102</sup>. Կութեցու տարբերակի առաջին տողերը («թագաւոր մի կայր Հայոց Արտաւագ անուն և ուներ որդի մի խելագար Շիդար անուն») իհարեկե ժողովրդական զրոյցի ոճով են գրված, և Շիդարի՝ Արտավազդի որդի գառնալը պարզ աղավաղում է։

Բառի և մտածվող երեսովի միջնադարյան իմաստը երկու փոխառնչված շերտեր ունի՝ դե և դիվաճար Թվում է, որանք պատմական շերտեր են կամ մտածվող երեսովի երեկո կողմերը, որոնցից մեկը կարծիս արմատն է ու ծառի բունը, մյուսը՝ տերեր կամ պտուղը։ Տպագորությունն այնպիսին է, թե սրանցից առաջինը նայում է դեպի խորք՝ հնագար, երկրորդը՝ միջնադար։ Բառի միջն այժմ Հայտնի ստուգարանությունները թեքված են միջնադարի կողմը։ Խենթի, մոլեգնածի, վայրենամիտ ցնորվածի, կրոնական խեռաթյան ու «մարգարեռության» գաղափարները միջնադարյան են՝ կապվում են ընկնավորության, ցնորքի, գուշակության հետ։ Միջնադարին հատուկ է խենթակերպության դիմակը, միջավայրից անկախ գործելու, մեկնուսացյալ աղատություն վայելելու եղանակը։ Նման դիմակով է գործում Սարսոն Քերականի ներկայացրած Ամենդումը, որ ցեխուում է դեմքը, որպես խենթության նշան։

Շիդար բառի ստուգարանությունները ենում են ենթագրքով հասկացրւթյան միջնադարյան շերտից։ Անդրիկյա-

101 Պ. Ալիշան, Հին հավատք կամ Հեթանոսական կրոնը Հայոց, Վենետիկ, 1910, էջ 219։ Նաև՝ Հ. Անդրիկյան, Քննություն մը Շիդարության, «Բաղմավեա», 1906, էջ 56—59։

102 Ն. Անդրիկյան, նշվ. աշխ., էջ 56։

Ար նկատում է, որ «Հայերնի մեջ այս բառն անծանոթ է. մեր լեզվով անկարելի է ստուգաբանել» և գտնում արարեցին շար բառը, որ նշանակում է անառակ, մոլեգին. «Արտավազդ մոլեգին, ինչպես խտալացիք կուն Ռուանտ մոլեգին»<sup>103</sup>. Այս համեմատությունն ավելի հետաքրքիր ու դիպուկ է, քան բառի արմատը արարեցնում փնտրելը:

Հ. Աճառյանը բերում է բոլոր վկայված ձևեր՝ շիդար, շիրար, շիրառ, շիդար, շդառ, համեմատում ասորերեն նշելու (խենթ, ապոչ), արարեցին նշելու (Հանգուգն, խարերա), պարսկերեն շայդա (խենթ) բառերի հետ: Աճառյանն այս բառը համարում է սհմական փոխառություն<sup>104</sup>. Այնքան էլ հավանական չի թվում ն. Անգրիկյանի բացատրությունը, բայց որի, զա Աշխաղար թագավորի անվան աղավազումն է<sup>105</sup>: Քիչ է համոզում շիդարը շիրապ (շտապ) և շիրափիյար (շտապող) պարսկերեն բառերի հետ. կապելը, որքան էլ, զա ձեռէտու և մեռ հարցագրմանը: Մտածել է տալիս Ալբարեդյանի բացատրությունը՝ Աժդահակ-Ածդահար-Աշխանակ-աՇիդահար-Շիդար<sup>106</sup>: Այս բացատրությունները կարծես մոտենու: Իսկ Խորենացու ակնարկին՝ Արտավազդին որպես զի, Աժդահակի զարմից բերելը, և՝ Սրվանձնույանի բանագիտական «գովազդությանը» («...պտուղն Ամբինկան ի բարձրից Արգաւանայ»): Անունը և՛ հնուանում է, և՛ մոտենում կրակալաշտության գաղափարին:

Մի ճանապարհ էլ ունենք: Դա Պափանցյանի ստուգացանությունն է. շեր (խենթ)-առ մասնիկով<sup>108</sup>, Պափանցյանը բառը համարում է բնիկ հայերեն: Բայց այստեղ էլ իմաստը վրացերենի կազմն է թերվում. Ցըտօ (շերի)-խենթություն, Ցըտօօնօ (շերիանի)-խենթ<sup>109</sup>: Շիրառ ընթերցումով

103 Նույն տեղը, էջ 57—58:

104 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 516:

105 «Հայերնի ոչ մեկ ձայնաբանական օրենք չի հակառակիր, որ Աշխաղարը Շիդար եղած ըլլա» (Ն. Անդրիլյան, նշվ. աշխ., էջ 58):

106 Թ. Ավագյանը, նշվ. աշխ., էջ 58:

107 Գ. Մրգաննայանց, նշվ. աշխ., էջ 179:

108 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 516:

109 Նույն տեղում, էջ 512—513:

մոտենում ենք շիր (կրակի բոց) արմատին<sup>110</sup>, կարող ենք ուրեմն, շիրառը թարգմանել հրից զարկված, հրազդայտ, կրակատար, պրամատուս (Թրոմեթես): Հիշենք Բյուրասապի Աժգահակին Մագիստրոսի տված անունը՝ Կենտոռուս Պյուրիդա, որ հունարեն է և նշանակում է հուր զալող, հրասանձ: Եթե այս իմաստը համադրենք բիւրասպի (Բյուրանժույգ) բառի հետ, կմտենանք կրակի և ձիու համասիմվոլացմանը կամ հրեղին նժույգի պատկերին: Հրեղին հեծյալը Հելիոսի առասպելանշանն է, նրա ջրամույն լինելը՝ ինչպես տեսանք, մայրամուտի խորհրդանիշը:

Կարծես թե փաստարկումից անցնում ենք գեղարվիստական պատկերների տրամարանությանը կամ շրջում պատճառի ու հետևանքի կարգը: Թիրեմս՝ ոչ ժողովրդական լեզվում (Լոռվա բարբառ) կամի խոսք՝ «Ճին շիդարեց», այն է առաջին երկու ոտքերը կապել միմյանց, կենդանուն զրկել վազրի հնարավորությունից: Զիդար նշանակում է կապ, կալանդ (կանալ), նույնն է կաղանդ՝ տարեկապի տոն<sup>111</sup>: Բառն արտաքին նմանություն ունի շիդար ձեր հետ, որը, որպես շիդար-ի հնչողական մի տարրերակ, վկայաբերում է Աճառյանը «Տաշյան ցուցակից»: Եթե Արտաւազ-ը՝ զրուցի ելաթեցու տարրերակում վկայված անունը կապ ունի արտավազել (ապստամբել, դուրս փախչել, զայնալիք) և արտավազիկ (փախստական, դասալիք) ձերի հետ, և բառը պետք է ստուգաբանենք հայերենի հիմքի վրա, մոտենում ենք շղթայված ապստամբի գաղափարին, որ մեր առասպելի բուն է ուժումն է: Հին հունարենում կաշկանդման իմաստը տրված է երկու ձևով՝ հետաքաշ (դեսմոտես) և օւծուքու (սիդեռ) կամ սիդարո (զորիական բարբառ): Ըստ մինչ այժմ հայտնի տվյալների, Արտավազդին Շիդար է անվանում Վանական վարդապետը (XIII դ.): Դա աբովո՞ք Արտավազդ Բ-ի շղթայվելու անուղղակի հիշողությունը չէ, որ միջնադար է հասել հունական աղբյուրներից: Երկար բառը հին հունարենում

110 Նույն տեղում, էջ 516:

111 Հ. Անառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 485:

Հնչում է երկու ձևով՝ օճախու (սիդերու) հոնիական և օճախու (սիդարու) գորիական բարբառում<sup>112</sup>:

Դարձյալ փլվում է մեր հրապաշտության տաճարը:

Բայց այս իրավիճակն էլ չի հակասում շղթայվածի առասպելի օնթողոգիական հիմքերին, պայմանաձևին ու անուններին՝ բնաշխարհիկ, թե տարաշխարհիկ, Պրոմեթես, Պյուրիդա (Հրասանձ), պրամատու (Հրաստեղծ), Արտավազդ (Հրապաշտոն), Արտավազիկ (փախստական, ապստամբ), Միհր (արեւ): «Ինչպես հին է Արտավազդի առասպելը, — գրում է Անդրիկյանը, — նույնպես հին Համարենք և Երկար Հորժորջումը, տարրեղ մեկնության մը կհանդենք»<sup>113</sup>: Այո՛, իսկապես տարրեր, բայց ինչպես էլ դառնանք, ուր էլ նայենք, հանգում ենք նույն կետին:

Հին Հայաստանում եղել է երկաթի պաշտամունք<sup>114</sup>, և երկաթը շիղար կոչելով, անկախ նրանից բառը սեմական փոխառություն է, թե Հռամական, Հնագւրին ենք մոտենում: Իսկ խննին ուր մնաց: Հիշենք «Սասաւ ծոերը» ու տեսնենք, թե Զոշանց տան «ծուռ» Հերոսներն ինչքա՞ն անբաժան են երկաթից ու Հրեզեն նժույզից, ինչպե՞ս է գործում երկաթի խորհրդանիշը Հայ Հերոսավեպում, ինչպե՞ս է շեշտվում նրա գոյսությունները: Նրկաթն անբաժան է առասպելի հին ու նոր փոխակերպումներից, հրով կոած և Հուր ծնող երկաթը՝ մի գեպքում շղթայի, մյուս գեպքում մուրճի, այլ զեպքում սրի տեսքով: Իսկ զարդնի ուրվագիր անդամները, որին պայմանաբար Հեփեստոսի քուրմ ենք անվանում, անբաժան է շրջբայցածից: Նոր Հայկազյան բառարանում եւեկար բառին տրված բացատրությունն այնքան պատկերավոր ու բանաստեղծական է, որ, թվում է, աղոթքից կամ երգից է գալիս: Տողատենք այդ բացատրությունը, և բանաստեղծականությունն ակներև կդառնա.

Հանք թխազոյն, ժանգահար,  
Կարծր և տռկուն,

112 Древнегреческо-русский словарь, т. 2, с. 1472—1473.

113 Ն. Անդրիկյան, Աշխ. աշխ., էջ 28,

114 Մ. Արեգյան, Երկեր, հ. է, Երևան, 1975, էջ 73—76,

115 Նոր բառգիրք Հայկազեան էղոտիք, հ. 1, էջ 686:

Որ զամենայն պնդութիւն նուաճէ  
Եւ ինքն հրով և եթ նուաճի<sup>116</sup>

Թվում է, մի հին հավատալիք հմայական աղոթքի ձևով  
կամ գուցե այլ ճանապարհով հասել է XIX դարի զիտնական  
բառարանագրի ականջին: Բացատրությունն անխորհուրդ չէ:  
Նրա թիկունքը և հշշողության նման մի բան կա: Կամ՝ եր-  
կարագիր իսկապէ՞ս նշանակում է միայն «գրեալ գրչաւ-  
երկաթեաւ»<sup>117</sup>: թե՞ գաղտնաբանություն է սա՝ կապված հմա-  
յական դրի հետ, որ հնտագայում իմաստափոխվել է:

Ոչինչ պատահական չէ այս առասպելում, ինչպես և  
առհասարակ՝ բոլոր առասպելներում: Ամենից ավելի ակըն-  
հայտ է կայծքարի ու հրահանի գաղափարը: Եղել է մի շատ  
հին հավատալիք, թե ամպրոպի հուրը մտել է քարի մեջ  
(տեսանք արդեն, թե ով է մտել քարի մեջ) և երկաթով կա-  
բելի է նրան դուրս քաշել այնտեղից կամ պահել կաշկանդ-  
ված<sup>118</sup>: Հայտնի է նաև ժողովրդական մի նախապաշար-  
մունք, սատանային հալածում են հրահանը կայծքարին խփե-  
լով<sup>119</sup>: Ժողովրդական մի գարձվածք կա՝ «Հախմախին տալ»:  
որ նշանակում է ըմբռուտանալ: Որդին իրավունք չունի, ինչ-  
պես լոռեցիներն են ասում, «Հոր ըղաքին շխմախին տալ»:  
այն է՝ հակադրվել հորը: Այդ իմաստն է ունեցել հոր ներ-  
կայությամբ ծխելը, որ մինչ այսօր էլ չի մոռացված, բայց  
մոռացված է, որ դա նշանակում է «Հախմախին տալ»:

Արտավազը շախմախին է տալիս հոր ուրվականի,  
նույնն է, թե աստծո առջե, և դրանով էլ նա Շիդար է: ուզում  
եր երկաթ հասկացեք, ուզում եք՝ խենթ: Ջոշանց տան  
«ծռերն» էլ շախմախին են տալիս այնքան, մինչև վերջին  
կայձն անթեղվի քարի մեջ:

Այստեղ է հայ հին դրամայի միջուկը: Սա հնագույն  
միստերիան է, բանի որ նրա հիմքում մարդու ամենահին հա-  
վատալիքներից մեկն է դրված:

Առասպելը ծնունդ է այն միջավայրի և բնության, որոն-

116 Նույն տեղում:

117 Ազգագրական հանդես, հրատ. Ե. Լալայանի, Հ. 2, Թիֆլիս,  
1897, էջ 195:

118 Մ. Աքեղյան, Երկեր, Հ. է, Երևան, 1975, էջ 75:

ցով սնվել է այդտեղ ծնված ու ապրած սերունդների երևակակալությունը։ Մասիսը հանգած հրաբուխ է, հրաբաժակ լին, որի ապառաժներին ամպրոպներ են ճայթում, հրեղեն մուրշեր են զարկվում։ Գուցե լեռան ընդերքից ելած կամ երկնքից իշած հրդեհներն են մեր առասպելի բերած գոյարանական պատերացումների հիմքում։

Այս առումով շղթայվածի առասպելն իրոք կարող է շատ հին լինել։

Փորձենք տեսնել առասպելի ամենաիրական հիմքը։ Ամբողջ լեռան վրա, — պատմում է Արովյանը 1844 թվի անհաջող վերելքի մասին, — չեին էարող լինել այնքան մետաղյա մասնիներ, որքան որ մենք մեզ հետ ու մեր վրա ուն ենք, այդ պատճառով էլ փոթորիկն իր ամրող ուժն ուղղում ե սպառնում էր հենց այն տեղի վրա, որտեղ մենք ինքն էանդում, այնպես որ մինչև իսկ ձողերի ծալքերը, որոնք ցցված էին մեր շուրջը վրանի կտամը մեզ վրա պահելու համար, ու կեցին ճրագի պես վառվել, իսկ շանթի էայժերը, իսրեւ հրդի ոներ, թոշում էին մեր մոտից՝ ճայթյունով ու շառաչյունով<sup>119</sup>։

#### Շիդարն է մոլեգնում։

Առասպելն ու նրա հերոսը բնության արձագանքն են, ծնվել են այս լեռան ապառաժներից։ Երկաթն ածուխի պես այրող ամպրոպային փոթորիկներ հնադարի մարդուն էլ են հանդիպել այս բարձունքներում։ Մինչև շանթարգելի գյուտը մարդը տեսել է երկաթի այրվելը և սեփական փորձով համոզվել, որ երկաթածովը շանթարգել դարձնելու համար պետք է բավականաշափ խորր մեխել հողի մեջ։ Հիշենք Ամբիգանիի գալագանքը։ Էներգիայի աղատագրման գաղափարը, որ ծնվել է մարդակային պարզունակ փորձից, ծնունդ է տվել այս խորիմաստ առասպելին ու նրա հերոսին, ստեղծել հրածին ու երկաթածին։ Շիդարին նույն այդ պարզունակ փորձը գուցե թելազրել է մարդուն, թե խելազրի

119 Տ., Արովյան, Ելք, 4, 8, Երևան, 1956, էջ 459։ Այս վերելքը նաև ամենահին էր գերմանացի երկրաբան, ակադեմիկոս Զեբուան Արքիմիք (1806—1886)։ Արովյանը, ինչպես հայտնի է, չի ուղեկցել նրան մինչև զարգաց։

միտքն է միայն ազատ՝ չի զգում իր «սեփական մարմնի բանտը»<sup>120</sup>. Այդ գաղափարն անուղղակիորեն արտահայտվել է նաև Հովհաննես Հովհաննիսյանի հայտնի բանաստեղծությունում: Առասպելի սիմվոլիկան XIX դարի բանաստեղծն արտահայտել է մասնակիորեն, բոլորովին նոր և իհարքեալ այլ գաղափարի լույսով, թեպետ բնության տարերքի ու ապրատամբ անհատի զուգահեռով շոշափում է դարձյալ առասպելի արմատը:

Զարկեցք կունք, խորտնեկ քարայրից  
Ահա շար հողմի հնատ հասնում են ձայներ.

Տուացագ փայլակն արքայի աշրից,

Դեպի վեր թոշում են բարկության կայծեր:

Կամի նա ելանե վրեմիսդիքի հոգով՝

Յուր ամբողջ տանշանքի թույնը մահուցեր

Աշխարհի շորս կողմը շադ տայու մորօվ,

Բայց ամուր են նորա ժանր շղթաներ:

Մտերիմ զամփուր կրծում են կապանք,

Երծում են անդադար կապանքն արքայի.

Սրտավագդ, վերջ չունի հոգուդ տառապակնը...<sup>121</sup>

Զարի և բարու խնդիրը, որ համեմատարար քիչ է զբաղեցրել ուսումնասիրողներին, սկզբունքորեն էական չէ: Առաջպելի ու հերոսի բարոյական մեկնությունը գալիս է միջնադարյան մշակումներից և, կարծում ենք, հեթանոս միստերիան կարող էր շղթավվել խղճի հարցով և իսկապես հակասական ներկայացնել տառապողին, ինչպես՝ հին հունական առասպելների ու նրանց ֆարուշաներով զրված ողբերգությունների հերոսները: Պետք է համաձայնել Ավդալ-րեկյանի կարծիքին, որ շղթայվածը սկզբնապես մարմնավորել է բարի ուժի գաղափարը<sup>122</sup>: Դա երևում է Եղինիկ Կողբացու վկայությունից: Եղինայվածն այստեղ հեթանոս հայերի մեսսիան է: Նրան սպասել են հույսով ու սարսուռով «որպահէս և Հրեայք՝ որ իզուր ակնկալութիւն կապեալ կան, թէ

<sup>120</sup> «Я открою тебе сокровенное слово «Литература Вавилонии и Ассирии», пер. с аккадского, М., 1981, с. 220.

<sup>121</sup> Հավի. Հավիաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1964, էջ 111.

<sup>122</sup> Թ. Ավդալբեզյան, նշվ. աշխ., էջ 55—56:



Դաւիթ գալոց է՝ շինել զերուսաղէմ և ժողովել զՀրեայս, և անդ թագաւորել նմա նոցա»<sup>123</sup>, Եղնիկն առասպելի ամենաառաջին վկայողն է և, անկախ իր՝ քրիստոնեական մեկնությունից, ասում է, որ շղթայվածի արխետիպում ամփոփված էր հայ ժողովրդի հեթանոսական էսխատովոգիան՝ ակընհալությունը վերջին ցնցման, որ բերելու էր փրկություն կամ տանելու վերջնական կորստի: Առասպելի ժողովրդական իմաստավորումն է այս: Պաշտոնական քրիստոնեությունը մերժել էր այդ մեսսիան և, ինչպես կտեսնենք այս զլիի վերջում, առատագրել էր շղթայվածին և նրա արխետիպում տեղավորել մի առարջալի՝ Գրիգոր Լուսավորչին:

Շիդարի բնավորությունը միանշանակ չէ<sup>124</sup>, Շիդարի բարդ խորհրդանիշ է և հնարավոր չէ հանգեցնել բարու կամ շարի: Բնավորության արխստուելյան ըմբռնումն իսկ՝ Յօհ-ը. չի ենթադրում բարոյական հայեցակետ: Անտիկ դրամայում բարոյախոսական արմատը խորը չէր, հերոսները գործում էին ոչ թե խզի, այլ իրադրության թելադրանքով: Բարոյական ճշմարտությունը զիտակցված էր փիլիսոփայության մեջ. Սոկրատն իդուր չէր խմել մոլախինդը: Բայց դրաման առասպելից էր գայիս և ծեսից. նրա ներքին նպատակն այլ էր: Խղճի ու կարիկցանքի գաղափարները բերում էին նվրի-

123 Ազնիայ Կողբացայ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 93.

124 Շիդարի, որպես խորհրդանշային կերպարի, վերջնական իմաստը մեզ համար առեղջառածալին է զառնում մեկ փաստով ևս, որը կամ դուրս է շղթայվածի թեմայից կամ նրա մի փոփոխակը: Ավ. Խաչակրանը 1907 թ. դրել է մի այլարանական պատմեածք՝ «Աշասֆերը», որը հետազոտման մշակել ու վերահրատարակել է «Թափառ» հրանեա վերեադրով (1923): Այս նույն զրուցյա 1927-ին հրապարակ է եկել «Շիդհարը» վերեադրով և աւելի էլ մտել Խաչակրանի երկերի բույր հրատարակությունների մեջ: Այս զրուցյի այլարանական հերոսը՝ Շիդհարը կոչվում է սղարերի անդուլ թափառական», զատապարտված է անմահության ու թափառութեան ներք, նրա աշքից ու զիտակցությունից աննկատ առնում են հաղարամ-բակները, իսկ ինքը մնում է: Շիդհարին մի տեղ ասում են «խեք թոցքը ես», աշխ երեսում, թե դու խելազար ես», մի տեղ էլ՝ «երկաթեղեն ոտներով մոտեցավ նա» (Ավ. Խաչակրան, երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975, էջ 119 և ծանոթ., էջ 461): Գուցե և այս Շիդհարը ու մի աղերս լունի շղթայված Շիդարի հետ: Խաչակրանի աղբյուրը մեզ անհայտ է մնում:

պիդեսի. և նրան հաջորդող ժամանակների դրամատուրգիանու Որքան հետ ևնք զնում Արիստոտելի դարաշրջանից, այնքան փոքրանում է չթշ՝ ի, որպես բարոյական հասկացության, նշանակությունը<sup>125</sup>: Ծղթայլածի առասպելը խոսում է հնագույն ժամանակների հետ, և բարոյախոսականն այստեղ (Եթե կա) միջնադարյան նստվածք է: Հեթանոսական խորհրդապաշտական դրաման ենթադրում է մարդկացին զիտակցության այլ ոլորտներ: Ապստամբն այստեղ ոչ թե շար է կամ բացասական բնավորություն (սոցիալ-բարոյական առումներով), այլ խելագար է, անհասկանալի ու երկյուղալի՝ պատրաստ քանդելու հավասարակշռության կապերը: Լավի ու վատի, բարու և շարի խնդիր չկա մեր ծիսային դրամայի բուն հիմքն ու նախատարրն է: Ոչ սոցիալական, ոչ բարոյական, այլ՝ նախապաշտրվածի հավատ ու սարսուս Սա բոլորովին ուրիշ զգացմունք է: Բախվում ենք բոլոր առումներով սինկրետիկ վիճակի: Գրիգոր Խաթեցու «Քեարունօք» բառը, որ առիթն է մեր հարցադրման, բավական նոր է հնշում: Թվում է, իսկապես այս բառն ավելի նոր է, քան առասպելի ծիսական խորհուրդը:

Մի ենթադրություն ես:


Արտավազդ և Ծիդար անունների խորհրդապաշտական կապը կարծես հասկանալի է: Վերը բերված տվյալներով ու փաստարկումներով Ծիդարը երևում է ավելի հին: Խալաթյանցի ենթադրությունը, թե առասպելում գործում է Անահիտի տաճարի քրմի անունը, մտածել է տալիս՝ գուցե արարողապետի անունը, ինչպես ընդունված է եղել հին ծիսակարգերում, փոխանցվել է արարողության օբյեկտին: Բայց ենթադրությունից ավելի հեռում չընանք և փնտրենք մեր «առասպել տօնը» նպատ լեռան ստորոտում, Արածանիի ամփին:

125 Հմմտ. В. Ярхо, Была ли у древних греков советов? сб. «Античность и современность», М., 1972, с. 262—263.

1. *lambula* *hannai*



Vol. 2. *Umanjali*:



Վերադառնանք Շիդարի գրուցի դարձյալ վերջին տողերին, ուր վկայված կամ հիշատակված է ավանդման հինգեանակը թատերային-դրամատիկական, միստերիալ գործողությունը, որ արդեն անվանել ենք խորհրդապաշտական դրամա. «<...> կարգեցին կախարդն առասել դիմօֆ. Երեաւունօք՝ թէ ի տարեկապն ի նաւասարդի ի Ա ամենայն գործաւոր սիւր զին և իցէ գործն կոփէ երեք անգամ, դարսին և այլն ամենայն: Ձի կապն Շիդարայ, որ մի մեկ մազն եւ եալ է ի կտրիլ, զարձեալ ամբանայ և ոչ ելանէ և անցուցանէ շաշխարհու Այսպիսի առասպել դիմօֆ վարէին Հայք մինչեւ ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչն եւ իմացեալ սուրբն Գրիգոր զայսպիսի առասպել տօնն և կամեցաւ խափանել. <...><sup>126</sup>

Ակնարկը գրուցի ավանդման եղանակի մասին նույնը քան առեղջմածացին է, որքան գրուցը Թվում է, մեր քնզ-ը մած բառերում, պարզորեն հիշատակված է նախաքրիստոնեական դրաման Բայց վկայող ազրյուրը, արդեն գիտենք, հին չէ XIV—XV դարերից է: Կարո՞ղ ենք արդյոք ուշ միջնադարյան վկայությամբ անվերապահորեն դատել նախաքրիստոնեական երևոյթի մասին: Եթե ոչ, ապա մնում է եղբակացնել, որ մեր առջև միջնադարյան թատրոնի փաստ է, գուցե արհեստավորական եղբայրությունների ծիսական խաղերից մեկը: Դրանով երևոյթը ներկայանում է թերեւ ավելի հետաքրքիր. պարզվում է, որ միջնադարում ներկայացվել է հեթանոսական մի առասպել, այն է՝ հին ավանդությունն Բայց ինչպես էլ մտածենք, գրուցը և նրա վերատադրության եղանակը միջնադարի հետ չեն հաշտվում: Այստեղ խոսվում է «առասպել տօնի» հեթանոսական լինելու և Գրիգոր Լուսավորչի ձեռքով խափանվելու մասին: Կարծիս ակնհայտ է, որ զրոյցը գրառողը այս «թէսաւորնի» ականատեսը չէ, թեպետ հնարավոր է, որ ինչ-որ մի վերապուկ կամ փոխակերպում հասած լինի նրան: Եթե «առամ-

126 Մատենադարան, ձեռ. 5313, էջ 6ա (Ընդգծումներն իմն են—Հ. Զ.)

պել տօնը» ուշ միջնադար է հասել, ապա հաղիվ թե պահպանած լիներ իր լիակատար տեսքն ու հեթանոս բովանդակությունը: «Թէատրոնը», թվում է, պետք է խամրած լիներ: Դրա մի հետքը երեւմ է Խորենացու վկայությունում, որ ավելի հին է, ու առ մերով իսկ ժամանակաւ բազումք ի դարբնաց, գհետ երթալով առասպելին, յաւուր միաշարթոց երիցս կամ չորիցս բախևն զատն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազայք<sup>127</sup>: Հայսմավուրքի տարրերակում մեր ընդգծած բառերից ոչ մեկը, բացի առասպելից, Խորենացու վկայության մեջ չկա: Խորենացին պարզ ակնարկում է ավանդման երկու եղանակ՝ «երգիշքն Գողթան առասպեկարաննեն», ողբուցն զամանէ և պառաւունք»: Ոչ մի խոսք տօն-ի կամ քէատրոն-ի մասին: Ինչ վերաբերում է դարրին-ների կոնահարությանը՝ շարաթվա մեկ օրը դատարկ սալը երեր կամ չորս անգամ բախելու սովորությանը, ապա այստեղ էլ չի եղեւում, թե ծիսական ինչ կոնտեքստից է մնացել վերաբերուկը:

Սյապիսով, «առասպել դիմօր և թէատրոնօր» կոչվող գրամատիկական խաղի պատկերը գրական վկայություններում անորոշ է: Արարողությունը, կարծում ենք, միջնադար չի հասել: Հայսմավուրքն արձանագրում է աղճատված, միջնադարյան հեղինակների համար իմաստագրկված մի ավանդությունն Կմնանք այս տեսակետին այնքան, քանի դեռ չունենք նոր վկայություն, որ լուսավորի հայ միջնադարյան թատրոնը:

Որտեղից է հայտնվել, սակայն, քէատրոն բառը, որը հայոց լեզու է մտել թարգմանական գրականությամբ (Հին կտակարան, Եվսեբիոս Կեսարացի)<sup>128</sup>, Այս բառը տեղ է թողնում մտածելու, որ Խորենացուց առաջ եղել է թերեւս գրավոր մի վկայություն շղթայլածի առասպելը «թէատրոնօր» ներկայացնելու մասին:

Թէատրոնը զրբային, ինչպես Աճառյանն է նկատում, ողուտ ուսումնական փոխառություն է»<sup>129</sup>, Այս բառը գրժ-

127 Խորենացի, նշվ. Հրատակ., էջ 192:

128 Հմատ. Է. Հովհաննիսյան, նշվ. աշխա., էջ 132—134:

129 Շ. Անապան, Հայերեն արմառական բառարան, գ. 2, էջ 183:

մար թե բանավոր ճանապարհով փոխանցվեր: Խոսակցական հայերենում ավելի ընդունված պետք է լիներ ասորերենի միջոցով և ավելի վաղ փոխառված ու սեփականացված քառա ձեզ<sup>130</sup> կամ ցուցի-ը որը, չենք կասկածում, թատրոնի երևույթի հին հայերն անվանումն է և, որպես այդպիսին, պահպանվել է հայոց լեզվի մի շաբթ բարբառներում<sup>131</sup>: Թագի այդ, թէատրոնի իր փոխառվելու շրջանում իսկ, կամ որոշ ժամանակ անց, թարգմանվել է տեսլարան (Յէշ-տ'-սիլ): Սա հունարեն բառի իմաստային-կառուցվածքային պատկերը լիարժեքորեն արտահայտում է: Բայց այս բառով էլ շի ավանդվել հիշողությունը: Թէատրոն բառը ժամանակին թարգմանվել է նաև այսայրան, որ նշանակում է «դիւական կամ դից հանդիսարան»<sup>132</sup>, Ամենից ավելի այս բառն է հունապատասխանում Ծիգարի առասպելի բովանդակությանը, բայց այսայրանն էլ շի փոխանցվել: Այս բոլորի փոխարեն մեզ է դիմում հունարենից փոխառված, պերճախոս ու քեզ անունը հայտնի մի երևույթի, որ բացվում է ինչպես «հասարակաց հանդէս»<sup>133</sup>, «տեղի հանդիսի խաղուց», կամ աշխարհաժողովը բազմութեան, հրապարակ շրջափակ»<sup>134</sup>, «հանդամանք խաղացողաց»<sup>135</sup>: Այո՛, ամենից առաջ՝ նախնական իմաստով՝ խաղավայր, հանդիսավայր, շրջանաձև, ներփակ հրապարակ. այս է թէատրոնը: Բայց այս բառը մի էական իմաստ էլ ունի, որ տեղ շի գտնել հին հայերնի բառարաններում: Միջնադարի մատենագրության մեջ, լատիներեն և հայերն (հունարենը բացառվում է), թէատրոն բառը մեծամասամբ գործածվում է փոխարերական իմաստով: Թէատրոն է կոչվում առհասարակ տեսանելի աշխարհը՝ բնության պատկեր, ճակատամարտ, մրցություն, հրապարակային պատիժ: Թատրոնի անտիկ-դասական իմաստը միջնադարում մոռացվել է, և բառը հաճախ փոխարինում է ցույց

<sup>130</sup> Նույն տեղում:

<sup>131</sup> Հմմտ. Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 123—134:

<sup>132</sup> Նոր բառիքիք հայկագեան լեզուի, հ. 1, էջ 94:

<sup>133</sup> Հ. Անայիս, Հայերն արմատական բառարան, հ. 2, էջ 157:

<sup>134</sup> Նոր բառիքիք հայկագեան լեզուի, հ. 1, էջ 810:

<sup>135</sup> Թատենադարան, ձեռ. 450, էջ 35ա, 36բ, 113ա, ձեռ. 623, էջ 87ա:

և հանդէս բառերին, երբեմն էլ ոչ մի առնշություն չունի խաղային արվեստի հետ։ Միջնադարում հայերը խաղ են անվանել երգն ու պարը, իսկ բոն թատրոնը կամ կրկնային ներկայացումը՝ կատակերգութիւն, Եվրոպայում՝ կոմեդիա։ Այսպիսով, կարծում ենք, որ Շիդարի զրուցի վերջում բերգած թէատրոն բառը պետք է թարգմանել տեսարան։

Այս է, ահա միակ նշանը, որ ենթադրել է տալիս, թե շղթայվածի առասպեկտ հնում վերարտադրվել է թատերային-դրամատիկական նզանակով։ Եվ այդ էլ քիչ չեւ Շիդարի առասպեկտի վերարտադրությունը, հավանաբար, ինչ-որ ընդհանուր մի նմանություն ունեցել է ուշ հելլենիստական թատրոնի՝ Բյուզանդիայում պահպանված ձևերի հետ, և զուցի այս է պատճառը, որ երեսուցի դասական անունը հասել է ուշ միջնադարու նկատենք, որ XIV—XV դարերում թէատրոն են կոչվել բմբամաբար, հեծելախաղը, գնդակախաղը, ճոկանը, (Ճոկեյ), Կիլիկիայում՝ ասպետական տուրնիրը («Ճիմավարժն ի թատերին»— Գրիգոր Տղա) և առհասարակ կրկնաը՝ բոլոր ձևերով։ Բայց երբ առասպեկտն է այդպես կոչվում... Բարի նման վկայություն այլ աղբյուրներից առաջմմ մեզ հայտնի չէ։ Սա, անկասկած, ծագում է գրական մի հին աղբյուրից։ Հայսմավուրբում ենթագրվում են հին շերտեր, այստեղ ժամանակին առուներ են լցվել, որոնց ակունքները կորած են։ Բայց, ահա, մի ոսկե ձևնիկի լողում է այդ լճում։ Դե՛, եկ ու պարցիր, թե որտեղից է եկել։ Շիդարի զրուցը, որպես խաղ կամ ներկայացում, չէր կարող թատրոնի ուշ անտիկ ձևերին պատկանել։ Բայց ինչ-որ ընդհանուր, տիպարանական մի հատկանիշ հուզել է, թե այս էլ կարելի է թէատրոն անվանել։ Սա մի բան նշանակում է, թեպես մեզ համար դժվար է հայ Շեթանոսական խորհրդապաշտական դրամայի զրուց պատկանից բանալ։ Համեմատության օրինկար, կարծում ենք, անտիկ դրաման չպետք է լինի։ Հունաբնից փոխառված բառը օտար է թվում մեր առասպեկտի նախաստեղծ ոգուն։ Հետեարար, ավելի հետաքրքիր ու ներշնչող են երևում առաս-

պել դիմօք և առասպել տօն անվանումները<sup>136</sup>: Արարողության հին շերտն այստեղ է: Հայսմավուրբի զրուցում երեք անգամ կրկնվում է մեզ հետաքրքրող առարկայի ազգային, ինքնատիպ անվանումը, և պետք է դրան էլ հենվենք:

Ինքնատիպ անվանումը թերես հնթագրում է ինքնատիպ երեւյթ: Հունարեն բարի առկայությունը կարող ենք նույնիսկ պատահական համարել՝ ձեռագրական ուշ ընդդիչարկություն (զրուցի որոշ տարրերակներում և ձեռագրերի հիմնական խմբում բացակայում է այդ բառը): Չտարակումելով, ուրեմն, որ այստեղ հիշատակված է հայ հնագույն խորհրդապաշտական դրաման, թարգմանենք հատվածը: Դա անհրաժեշտ է երեւյթի պատմական իմաստը ճիշտ ըմբռունելու համար:

«Կախարդներն առասպել ստեղծեցին դեմքերով ու տեսարաններով, թե տարեկապին, նավասարդի մեկին ամեն գործափոր, ինչ էլ լինի իր գործը՝ դարբին է [նա], թե այլ լարհեստավորը, երեք կամ չորս անգամ զարկում է [սալին], որպեսողի Շիգարի կապը, որի կտրվելուն մազ է մնացել, գարձյալ տմրանա, և շի ելնում [Շիգարը] աշխարհն ավետելու Այսպիսի առասպել էին դեմքերով վարում հայերը մինչև սուրբ Գրիգոր Լուսավորչի [Պալը]: Եվ սուրբ Գրիգորն իմանալով այսպիսի առասպել [ապատում] տոնի [մասին] կամ հցավ (= վճռեց) խափանել <...>»:

Լուսավորիչն արգելել է շղթայվածի միստերիան, որ կատարվի իրա է եղել տարիվա վերջին օրը կամ նոր տարիվա առաջին օրը՝ Նավասարդի մեկին: Շղթայվածի առասպելը ներկայացնել է որպես նավանարդյան ծիսական խորհուրդ:

Իսկ ի՞նչ կախարդների մասին է խոսքը:

Հայոնի է, որ միջնադարում թատրոնը համարվել է կաժմարդների ու գեերի գործ: Բայց ոչ դիվականը (հմմտ. «Վասնանօրէն թատերաց դիւականաց»<sup>137</sup>): ոչ էլ կախարդը պարզ

136 Գեորգ Զահուկյանը նույնպես այս անվանումները համարեց ավելի էական ու հետաքրքրիր, անհամեմատ ուշագրավ, քան թէատրոն քառորդ:

137 Յովնաննու Մանդակումոյ Ճառք, Վենետիկ, 1860:

մակղիր և այլարանություն չեն։ Դա նկատեցինք այսայացան բառի օրինակով, որ վկայված է Կյուրեղ Ալեքսանդրացու «ի վերայ ս. կուսին Աստուծամօր» ճառում<sup>138</sup>։ Նոր հայկազյան բառարանի «դից Հանդիսարան» բացատրությունը սպառիչ է և իրերի տրամարանությանը համերաշխ Կախարդը դիվապաշտության կամ դիցապաշտության քուրմենէ։ Դա բավական պարզ երևում է Եղնիկի վերսիայում. «Ճուրդությունը իսարեաց զդիցապաշտու Հայոց, թէ զոմն Արտաւառու արշեինաւ լոյն դիւաց»<sup>139</sup>։ Եղնիկի վերսիային, ինչպես նշառում է Խաչարուանցը, շատ մոտ է Վարդան վարդապետի (13-րդ շ.): «Հարցմունք և պատասխանիքը»<sup>140</sup>, «Մոլորութիւն դիւաց խարեաց զկուապաշտուն Հայոց ի ձեռն քրմացն, որբասէին, թէ գԱրտաւազդ ոմն (ոմն թագաւոր Հայոց) վիշապ(թ)՝ [վիշապը] արգելեալ են կենդանի ի Մասիս լիառն. ի նաւ(ե նա) ելանելոց են [է] (ելանելոց է) և զաշխարհս (զաշխարհ) ունելոց. և ոմն (Եւ ոմն մի յանմտաց, որ ունէր...) այլվայլմտաց ունէր զիշխանութիւն Հայոց. զարհուրեալ Հարցանէր զդայս (զզձապատումս դիւացն) որում դիւաց և զկախարդս (զկախարդս). թէ Ե՞րբ լինի Արտաւազայ (Արտաւազդայ) ելանելն (ելանել) ի կապանացն Եւ նորա առեն (ասացեալ՝ թէ) ցնա. թէ ոչ կամիս զելանելն (զելանել) նորա ի կապանաց (ի կապանացն) Հրաման տուր ընդ ամենայն աշխարհս (աշխարհս Հայոց) զարբնացն (զարբնաց) որ ի նաւասարդի օրն (որ) ամենայն զարբին կորէ (կուանաւ կոփէ ի վերա սալին իւրոյ) կուանաւն ի վերայ սալլի իւրոյ և երկաթն (երկաթքն) Արտաւազայ անդրէն Հաստատի (Հաստատին...) Եւ կատարեն զնոյն Հրաման այժմ ամենայն դարբին որ ի նաւասարդի կուանաւ Հարկանեն...»<sup>141</sup>.

Վարդանի տարբերակով, որը նախորդում է Խլաթեցու տարբերակին, ակնհայտ է դառնում զրույցի ծիսական բնույթը, իսկ արարողությունը ներկայանում է որպես քրմա-

138 Նոր բառգիրը Հայկազեան լեզուի, հ. 1, էջ 94:

139 Եղնիկ Կողբացի, Խշկ. Հրատ., էջ

140 Ղ. Խալատելիկ, Խշկ. աշխ., էջ 317:

141 Նույն տեղում, մասն 2, էջ 74—76 (փաքր փակադծերում տարբերցումներն են):

Արան գործ Նույնը հաստատում է Կիրակոս Արենլցու Հայսմավուրբը (1435 թ.) «եւ աւրինդարեցին քուրմքն ամենայն արունստաւրի միանգամ բախել զարուեստն իւր ի մին ի նաւասարդի, զի զաւրասցին կապանքն Արտաւաղդայ»<sup>142</sup>, և լամբեցու ասած կախարդները, բայտ Վարդան վարդապետի քրմեր են, բայտ Կիրակոս վարդապետի, քրմեր-են, բայտ Կիրակոս վարդապետի Արամազդի և Անահիտի տաճարի քրմերը: («Եւ զի յայնմ աւուր տաւնէին Հայք՝ ի կռապաշտութեանն Արամազդայ եւ Անահատայ եւ առասպելաբանէին մասն Արտաւաղդայ՝ որդուոյ Արտաշեսիս»)<sup>143</sup>,

Առասպելաբանեմ բառի ակներև իմաստը պարզ է՝ նշանակում է պատմել: Հասկացությունն այդպես էլ զիտվել է մեր բանագիտության մեջ Բայց Կիրակոս վարդապետի Հայսմավուրբը մեղ Հուշեմ է այլ իմաստ՝ ծիսական գործողություն: Այդ իմաստն այնքան էլ նոր չէ: Հայկազյան բառարանն էլ նման մի հիշեցում ունի. «Բիօսել, գրել, յօդել, նուագելք»<sup>144</sup>, Արենյանն էլ է ակնարկում այս մասին: Կիրակոսը մեղ ավելի հնառու է տանում: Վերաբառնանք Վարդանի «Հարցմոններին», «ընդէ՞ր ոմանք ի նոցանէ երգս և եղանակս մերգիկ»: Ալիշանը ևս բերել է այս անուղղակի վկայությունը<sup>145</sup>, բայց նրա ուսումնասիրության կոնտեքստն էլ չի մղում մեր խնդրին: Նպատակի Հարց է: Նայած որ ուսումնասիրողն ինչ է փնտրում: Չեսոք շտանք, գուցե, Խորենացու «Երգիչքն Գողթան առասպելաբաննեն» խոսքին, քանի որ առասպելի այս տարրերակը առանձնապես հիմքը չի տալիս երգիշ և առասպել բառերի տակ այլ բան փնտրելու: Բայց Խորենացու այլարանուրիին և առասպելաբանուրիին բառերի ակներև իմաստից և լնելը նույնպես սխալ է: Խալաթյանցը «առասպել դիմօք» անվանումը (և լամբեցու տարրերակից) թարգմանել է ուժ առաջականությունը, առասպելաբանուրին բառերի ակներև թերեւ պրիւթին, այստեղ

142 Նայեն անդում, էջ 75:

143 Նայեն անդում:

144 Խոր բառագիրք Հայկազեան լեզուի, գ. 4., էջ 292:

145 Աթաղթավելք, 1894, էջ 436:

146 Շ. Խօստեռնակ, եղան. աշխա., մասն 2, էջ 22:

գեր է կատարել Խորենացու այլաբանութիւն քառորդ Տար-  
օրինակ է՝ եթե ելնենք տերմինի նորագույն իմաս-  
տից: Եվ տարօրինակ չէ, եթե Խալաթյանցը նկա-  
տի է ունեցել բառի պատմական իմաստը նմանաբանու-  
թիւն— Անտառու (միմեսիս)<sup>147</sup>, ենքաղատութիւն— Ոռհպետու (Հի-  
պոկրիզիս): Վերջինս նշանակում է «Հետևողութիւն» բանի  
և ժամկի բուն խօսողացու<sup>148</sup>:

Հաւութեանցի ոռուերեն թարգմանության հետադարձ  
անրբաւործումով կարգալ Խորենացու վկայությունը այն-  
քան ու Հարմար է: Էմաստների ետևառաջությամբ Հնարա-  
վոր է ի մերջո լեռտական իրավի Հակներից զուրս բերել մի-  
ենթագրելի առարկայական վիճակ, Հանգել միջնադարյան  
ու ելիդմի<sup>149</sup>: Բայց առասպելի ավանդման վերը բերլած  
վկայությունները, որքան էլ ուշ ժամանակների պատկանեն,  
ստեղծում են մի կոնտեքստ, որի հետ ինչ-որ կերպ պետք է  
հաշվի նստել:

Անտարակուսելի է, որ առասպելի ծիսական ավանդու-  
մը չէր կարող իր լիարժեք տեսքով Հասնի XIII—XV դարեր,  
առավել և՛ չէր կարող ստեղծվել այդ ժամանակներում։  
Վկայուղներից ոչ մեկի խոսքերում չի երևում կենդանի ա-  
ռարկանու Նրանք ասում են «քուրմք», «կախարդք», և վկա-  
յարերում զատարկ սալը բախսելու սովորությունը, որ Հասնի  
է անգամ նոր ժամանակներու Միսային ինչ երևույթի կամ ինչ  
թատերակարգի մասին է խոսքը, ուութն է որքան մեզ, նոյն-  
քան էլ միջնադարյան Հեղինակների Համարու Նրանք ծանոթ  
են թերեւս մի հին աղբյուրի կամ բանավոր ավանդության։

147 Նոր բառզիրք Հայկագեան լեզուի, Հ. 1. էջ 83, 658։

148 Նույն տեղում, Հ. 2, էջ 431։

149 Թիսնեսիսու Թրակացու «Քերականության» թարգմանիչներն ու  
մեկնելչները երբեմն օգտվել են Հունական թատերական տերմիններից, ողոնք  
անցել են Հայ թերականական զրականություն և այդ ուղիով՝ Նոր Հայ-  
կացյան բառարան։ Դա ունի իր պատմական պատճառները՝ կապված է  
միջնադարյան զարգացական բժմասացության հետ։ Թրամայի պատմության և  
տեսության առումով շատ հետաքրքիր երևույթ է աս, որը կողմնակիրքնեւ  
է առնչվում մեր այս խնդրին։ Դրան անդրագարձել եմ ուրիշ առումներով  
(տե՛ս Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 46—104, Թատրոն-  
Հին և նոր արժեքներ, էջ 77—80)։

որը չի երեսում իրենցից հարյուրամյակներ առաջ ապրած եղորենացու խոսքերովմ: Նրանց վկայություններում չի երեկում անգամ եղորենացին, որն ավելի շատ բան պետք է իմանար և լուս է: «Առասպել տօնը», թվում է, եղորենացուն էլ չի հասել: Նրա պատմածն, իհարկե, ավելի հարուստ է, բայց չի տալիս մեր փնտրած երեսովթի պատկերը: Գուցի եղորենացին իր եղանակով է վերաբտադրում «առասպել տօնը», տեսարանը վերածում է վիպականության: Այս իրավիճակում նրա բերած երդային-տրամախոսական հայտնի հատվածը («մինչ դու գնացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար...», «յորժամ հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս...») բացառիկ արժեք է ստանում, թիւինտ այնքան էլ խոհեմ բան չէ դա որպես գրամատիւական տեսարան ներկայացնելը: Այդ մտքին կարող է մղել նաև սցուժեի գրաֆիկական մեջ-նությունը, որ արված է XIX դարում, գրքային նկարչության ռումանութեական ռեալիզմ (նկ. 3):

Նավասարդյան խորհուրդի հիշողության մի փոքր հատված էլ «ի գոհ Շիփիս ավանդեալ»՝ թերևս Հին ժողովրդական երգի ձևով հասել է Գրիգոր Մագիստրոսին: Արտաշեսը մահվան անկողնում, ոչ թե անդրաշխահից, ինչպես ևսորենացու տարբերակում, «բազձայր մղոյ մրրկեալ ծխոյ շամանդղեալ մակաւասար շենից և քաղաքաց».

Ո տայր, ասէր, զծուիս ծխանի  
Եւ զառաւօտն նաւասարդի  
Զգագեն եղանց և զվագեն եղչերուաց.  
Մեք փող հարուաթ և թմրկի հարկանեաթ,  
Որպէս օրէն էր թագաւորացը<sup>150</sup>:

Նկարիչ Ռոտտերը (որին կարելի է Գորեի շարքային հետեւրդներից մեկը համարել) այս պահին է միացըրել Արտավագդի հարցը՝ «ևս աւերակացս ո՞ւմ թագաւորեմ» և Արտաշեսի անհծքը: Թվում է, նա համատեղել է եղորենացու և Գրիգոր Մագիստրոսի վկայությունները, XIX դարի ռումանութեական թատրոնի անուղղակի տպավորությամբ, թատերային լուսաստվերի ակնարկով և զլիսավոր «գործող անձի»՝

150 Գրիգոր Մագիստրոսի թզթերը, էջ 87: Տողատումը Հ. Աճառյանի:

Արտավազդի ղասական-ցուցադրական կեցվածքով ու ժեստով: Նկարիչն զգացել է խոսքի թատերայնությունը, բայց նրա պատկերացումը նորամետ է, ոչ մի առնչություն չունի մեր փնտրած թատրոնի հետ:

Մեր փնտրածը խորհրդապաշտական ծես է, ուր զժվարէ պատկերացնել «գործող անձի» գերն ու վիճակը: Այդ ժեստի հիշողությունը զարբինների կոնահարությունն է: Մեր կողմնորոշիչը միայն խորհրդանիշերը պետք է լինեն՝ մուրճ, շղթա, քար թվում է, զեկն կամ վիշապին շղթայիլու ակնարկ պետք է լիներ հեթանոսական այս միստերիայում: Դրա հիշողությունը տեսնում ենք ողովրդական մի կցկտոր ավանդության մեջ, ուր խոսվում է շղթայված քարերի մասին: Նման քարեր, ըստ ավանդության, եղել են Գեղամա լեռներում: «ըստեղ շորսը խատ վիշապի քար կա, զնշներ վրեն քցուկ»<sup>151</sup>: Ծղթայված քարը պետք է որ կուռք եղած լիներ, մերժվող զաղափարի խորհրդանիշ, իսկ շղթայվածը գիտենք ով է: Թիերևս շատ հեռում չգնանք ենթադրություններով, բայց սա միակ խորհրդանիշն է, որ ի վիճակի ենք ոգեկոչել Հայ նախարիստոննեական խորհրդապաշտական դրամայի ավելի քան երկու հազարամյա փոշու մնջ թաղված դամբարանից: Թէատրոն բառը շախաղանց նոր է և մեզ չի կարող տանել Հունաբանության շրջանից (V—VI դ.): այն կողմէ իսկ «առասպել տօնը» հին է և անպայման խորհրդապաշտական: Ծղթայվածի հեթանոսական միստերիան մնում է զարերի խավարում: Վերականգնման փորձեր պետք չեն: Երևակայությունը շատ-շատ կարող է մողեռնացնել ու խեղաթյուրել այն, ինչը մեզ համար տեղեկություն է ու գաղափար: Հին Հունական դրամայի ուսումնասիրողներից ոչ մեկին Հայտնի չէ, թէ ինչպիսին է եղել շղթայվածի առասպելի ծիսական անցյալը: Ակնհայտ են միայն «Ծղթայված Պրոմեթեսը» ողբերգության մի քանի տողերում մնացած բառայիշանիշերը: Զգիռթենք, ուրեմն, առասպելը և միստերիան՝ միքոսը և օպսիսը, վիպական ավանդման խիստ որշակի նշանները ծիսացին ավանդման անուղղակի արձագանքների հետ:

151 Ա. Գևառականական, Անշանգարպատճեամ, էջ 88.

Հին հունական առասպելները, որ դասական և հելլենիստական շրջաններում ծնունդ են տվել հարյուրավոր դրամաների, անհետացել են: Եթե նկատի շառնենք Հեսիոդոսի ու Հոմերոսի վկայած հետքերն ու տվյալները, հունական առասպելները վերապատմված են մի զգալի մասով՝ դրամատիկական ավանդումների հիմքերի վրա: Մենք գտնվում ենք Հակառակ վիճակում՝ փորձում ենք վիպական-զրուցային անդրադառներից դուրս բերել նախնական ծիսային-դրամատիկական ավանդման նշանները: Մեր գրական նյութը վիպական-երգային է, հունականը՝ զգալի մասով՝ դրամատիկական: Բայց Հին հունարին էլ լավ հայտնի չի եղել իրենց դրամաների նախնական-ծիսային վիճակը: Մեզ հասած դրամաների ունալիստական պատկերները շատ բան չեն հաղորդում: Հայ հեթանոսական խորհրդապաշտական արարողությունները չեն ամբակացվել դրականության մեջ: Ուստի հետամուս ենք անհայտ մի մշակույթի և շանում ենք ըմբռոնել իմաստը ինչ-ինչ նշանների, որ բանավոր, ապա գրական ճանապարհով ընկել են միջնադար:

Փորձենք հստակել իրավիճակը:

Հայունի է «Եղթայված Պրոմեթեսը» ողբերգությունը, որի միջոցով վերակառուցվել է Պրոմեթեսի առասպելի պատկերը: Մեզ հայտնի է Արաավագդ-Եփարի առասպելը, որի օգնությամբ խոսում ենք «առասպել տոն» ծիսական-դրամատիկական երեսութիւն մասին: Հին հունական գրականությունից հայտնի է Պրոմեթեյա կոչված ծիսական տոնը, որը, ըստ որոշակի տվյալների, կապված պետք է լիներ կրակի ու կանխատեսման գաղափարների հետ: Իրանական միջավայրում տեսանք կրակապաշտության տոն Մեծրգանը: Անվան մեջ պարզ բնթերցվում է Միհր աստծո անունը: Հայոց հոգում տեսանք հեթանոս սրբավայրի հիշողությունը՝ Արտավագդական անունով: Որքան որ այս տվյալներն են ակնարկում մեր առասպելի նախնական ծիսային վիճակը, այնքան էլ «Եղթայված Պրոմեթեսը» ողբերգության որոշ կետեր՝ բառային հետքեր ակնարկում են նրա նախնական, ծիսային անցյալը:

Ինչպես ցույց են տալիս Զ. Ֆրեզերի, Բ. Յունգի, Է. Թեյ-

լորի, Ռւ. Ռորեթասոն-Մմիտի, Զ. Մյորբեյի, Զ. Թոմսոնի,  
Հոգերանական, առասպելագիտական ու բանագիտական ու-  
սումնասիրությունները, Զ. Թիգդիի և է. Զեմքերսի՝ զրա-  
մայիր ծագմանն ու վաղ պատմությանը վերաբերող աշխա-  
տությունները, մարքսիստ գրականագիտներ Ե. Մելետնինս-  
կու, Ռ. Վայցմանի և այլոց ուսումնասիրությունները, առաս-  
պելարանական հայեցողությունը նախորդում է ժիսային գոր-  
ծողությանը<sup>152</sup>; Անցյալ և ժամանակակից բանագիտության  
մեջ տիրապետող այս տեսակետը համերաշխ է մեր նյութի  
տրամարանությանը, և ստեղծված «սարքավորումն» էլ  
նպաստում է մեր կուանումներին, թեպետ առանձին դետալ-  
ներ (զրանցով զրագիլու անհրաժեշտություն շռնենք) կա-  
րող են անօգտակար լինել: Ծեսը, բստ այսմ, գործնականն  
է, առասպելը՝ նրա «տեսական» հայեցումով ստեղծված այ-  
լարանական զրուց: Ռորեթ Վայցմանի միտքը, թե ծեսի և  
առասպելի միջև նման հարաբերություն տեսնելը «կարող է  
սկզբունքորեն մատերիալիստական լինել»<sup>153</sup>, կարիք ունի  
որոշ մշակման: Գործնականի ու տեսականի առնչությունն  
այդքան էլ անմիջական չէ, ինչպես պատկերացնում է մարք-  
սիզմի ամենապարզունակ սկզբունքներից օգտվող գրականա-  
գետը: Ծեսը կարող է ծնունդ շտալ որևէ առասպելի, և ա-  
ռասպելն էլ՝ շենթագրել ծիսական ավանդման կերպ: Իսկ եթե  
առասպելում, կամ նրա գրական վկայության մեջ հիշատակ-  
ված է որեւէ ծես (այդպիսին է մեր առասպելի Հայսմալուր-  
քի տարրերակը), ապա այդ ծեսը պետք է համարել ավելի  
նախնական, քան առասպելի սյուժեն «Վասն որոյ կարգեցին  
կախարդն առասպել զիմօր և թէատրոնօք» միշնադարյան  
պարզունակ մեկնություն է, որտեղ պատճառն ու հետեանքը  
ետ ու առաջ են բնկել: Եթե առասպելը բնության ուժերի  
պայցմանակերպումն է (մողիֆիկացիա)<sup>154</sup> նրանց մարդկային-  
հասարակական հատկանիշներ վերագրելը (իսկ դա հայտպես  
է), ապա ծեսը բնական ու հասարակական ուժերին ուղղու-  
թյուն թելադրելու պայմանակերպ գործողություն: Քը որտեղ

<sup>152</sup> Հմտմ. Р. Вейман, История литературы и мифологии, пер.  
с нем., М., 1975, с. 279—285.

<sup>153</sup> Նոյն տեղում, էջ 281.

Նրեակայլվող օրյեկտը (աստվածություն, ոգի, շարք) և նրա դիման (երկաթ, քար, կրակ), ընկալվում են որպես նույնություն: Ծեսիր պրակտիկա է, զգիտակցված կերպով պայմանական պրակտիկա՝ դառտնարան (էղոթերիկ) գործողությունների ինչ-որ շաբաթ, որտեղ արտացոլումներն ու խորհրդանիշները համարվում են նույնքան իրական, որքան նրանց թիկունքում ենթադրվող երևույթներն ու առարկաները: Գեմման նյութեղեն է, բայց նրա նյութեղենությանը վերագրվում է ոգի, և այս ոգու վրա ներգործում են ոչ միայն հմայական խոսքով ու աղոթքով, այլև նյութեղեն գործիքով, օրինակ՝ երկաթի մուրճով. զարբինը մուրճը զարկում է դատարկ սալին, երկաթը զնուրւմ ու կայծ է արձակում, կայծը մարում է հողին ընկնելով, և Շիդարի երկաթե կապանքը որտեղից որտեղ «գարձեալ հաստատի և ամրանայ»:

Նախապաշարմունքն էլ ունենում է պարզ և բարդ, նախական ու հետագա ձևեր: Ոգու վրա ներգործելու ֆիզիկական եղանակը երևում է շատ ավելի հին, քան հմայական ազգաթքը, ի՞ր զը, մանավանդ պատրումը: Ոչ թե մուրճն է զարկվում վասն առասպելի, այլ առասպելն է հորինվում վասն կոփելոյ զերկարի: Առասպելի հորինումը կամ վերաբարդությունը ծիսական գործողության ավելի բարդ եղանակ է, բայց ֆիզիկական գործողության և առասպելի միջև չկա ուղիղ, անմիջական առնչություն, թիգետ այս մեկը, ըստ Վայմանի զիտողության, տեսության ու պրակտիկայի յուրահատուկ կապ է: Ծեսիր մինչև գրականություն ճանապարհը շատ երկար, ոլորուն ու խորդուրդը է, այնքան միջնորդված ու ընդմիջված, որ ճանապարհի սկիզբը չի երևում:

Ծեսիր և զրամայի կապը համեմատարար բարենիլի է, և թատրոնի պատմաբանները (Զեմքերս, Թիդդի, Վ. Շմիդտ, Ա. Մառ և ուրիշներ) այդ կապը կասկածի տակ չեն առել: Քոլոր՝ կարգի պաշտամունքային արարողություններում զրամատիկական ու թատերային տարրերն ակնհայտ են: Առասպելի և դրամայի կապը պարզ երևում է հին հունական դրամայի օրինակով: Նրանց ավելի հին առնշությունները մեզ անհայտ են: Բայց ահա Խլաթեցու ասած «առասպել դիմոք» և «առասպել տօն» անվանումներն ավելի պերճախառ...սին, քան տեսությունները: Առասպելի և ծեսիր առնշությունների

ամենապարզ վկայություններն են սրանք: Անվանումը բռվանդակում է երևույթի կառուցվածքը կամ կաղմքը: Դա մեզ թերյարում է հայտնի դրամատուրգիական փաստն անգամ՝ «Եղիշալիքած Պրոմեթեսը» ընթերցել ուրիշ հայացքով, հետամուտ լինել ծիսական շերտին, որը թվում է կորած ու հեռու:

Շիդարի խորհրդապաշտական դրամայից միջնադար է հասել ֆիդիկական գործողությունը՝ դարրինների կիրակնօրյա կամ տոնօրյա կոնահարությունը և սյուժեն, կարև էպիկական ձևով: Միսական-դրամատիկական ինչ գործողությունն է հնթագրվում սրանց արանքում դժվար է որոշել: Բայց ընդհանուր մի պատկեր երևակայել հնարավոր է, եթե ենթադր հեթանոսական ծիսակատարությունների բնույթից: Այդ բնույթն արտահայտված է հին հունական ողբերգություններում ու թատրոնների շենքերի կառուցվածքում, աղոնների և ստրոֆե-անտիստրոֆե-ստասիմների գասավորություններում, դրամաշտական Արդմիսուրա-Անահիտին նվիրված դրամատիկական հիմների (ուշ շրջանի բնագրեր) կառուցվածքում<sup>154</sup> և, իհարկե, քրիստոնեական պատարագում, որ իր ծիսական տիպը մշակել է, ունենալով նման նախնական օրինակները Վերոհիշյալ երեք կողմնորոշիչները քիչ շեն: Դրանք բնագի հեռու շեն միջավայրից, և ընդհանուր գծեր կարող ենք ենթադրել: Շիդարի թէաթրոնը կամ նավասարդյան խորհուրդը նույնպես պետք է ունենար, հիմներ, աղոթքներ, երգեր, պարերգակներ, «ստրոֆե-անտիստրոֆե, («գուլպար»— «թարս պար») և, հավանաբար, ինչպես բառերն են վկայում, երկաթը շրջապատող դարրինների խումբ տաճարի հրապարակում: Այս ամբողջ պրոցեսը գլխավորելու էր քուրմը, թերեւ Արտավագդ (հրապաշտոն, հրամեծար) անունով, եթե հիշենք Խալաթյանցի հիշատակած Ասսավազդոքամին Անահիտի տաճարում: Ինչպես է, ուրեմն, առասպելը դեմքերով ներկայացվել: Դժվար է ենթադրել, թե քանի դերակատար է եղել՝ քուրմը և խումբը, գուցե մի երրորդ երգող կամ խոսող... Դժվար է ասել, Շիդարի մասին պատ-

<sup>154</sup> Литература древнего Востока. Тексты, изд. МГУ, М., 1984, с. 13—33, 34—40 (վերջինս պարունակում է միհրական խորացին որշերգությունների հատվածներ):

մըվել է միայն, թե հայտնվել է նրա պայմանական պատեհութեական ինչ-որ դիմակով կամ առանց դիմակի Հավանարար, դարբինները կոնահարել են աղոթքի ու երգի ուղեկցությամբ ինչ-որ մի որոշակի սիթմով, և արարողության սկզբում կամ միջում պատմվել է պոասպելլու Ենթադրություններ և միայն Անթագորություններ: Արարողության պատկերը մեզ համար ինչ-որ կերպ տեսանելի կղաղոհան, երբ բննության առնենք հնագույն դրամայի ծիսային պայմանաձևը՝ հաջորդ գլխում: Առաջմմ կարելի է որոշակի իրորեն հաստատել, որ արարողությունը եղել է պարերգական՝ խմբային ու անհատական հատվածների (երգային կամ խոսքային) պարզ հերթագություն: Սա բոլոր տեսակի պաշտամունքային արարողությունների ընդհանուր տիպն է, որ տեսնում ենք հին հունական դրամայում, որպես իրադրության ընդհանրական մի պայմանաձև, և քրիստոնեական պատարագում, որպես ծիսային, ավանդական ու հաստատուն պայմանականություն: Ո՞չ հունական դրամայի խորային բնույթը, ո՞չ էլ քրիստոնեական պատարագի և անտիկ խոր: սի համաձեռնությունը անկախ չեն հիթանոսական ծիսակարգերից. միենույն է, թե ինչ միջավայրում են նրանք ստեղծվել<sup>155</sup>: Ծիդարի թէատրոնը գուցե կարելի է անվանել պարերգական մոգություն (խորային մագիա): Ի տարրերություն կամ ի նմանություն (գա չենք կարող որոշել) միմական մագիայի, որի հետքերը ջորջ Թումոնը նկատում է հին հունական դրամայում<sup>156</sup>:

Ծիդարի թէատրոնում անհասկանալի է երևում դարբինների տեսլարանային գերը: Հայլանարար դրանք կազմել են պարերգի (խորոսի) ինչ-որ մասը կամ գուցե և պարերգն ամբողջությամբ: Տպավորությունն այնպիսին է, որ դրանք հրապաշտության քրմեր են, կամ քրմի շուրջը հավաքված պաշտամունքային սպասավորներ: Դարձյալ ստիպված ենք անդրադառնալ «Ծղթայված Պրոմեթեսի» առաջին տեսարանին: Գործողությունն սկսվում է Հեփեստոսի մուրճի հարվածներով, իսկ գլխավոր գործող անձը՝ շղթայվող Արկաք

155 ՀԺՀ. 2. Առվեանիսիսյան, նշվ. աշխ., էջ 259—260:

156 Ծկ՝ Բ. Յենան, նշվ. աշխ., էջ 259:

ժամանակ լուր է: Եթե նկատի ունենանք վաղ դասական շրջանի, այսպես կոչված, երկու գերասանի օրենքը, պետք է եղակացնենք, որ շղթայվողի ներկայությունը պայմանական է այստեղ. նա հրապարակում (օրինաստրա) չէ, և քուրմը կոնահարում է երկաթե սալը, կամ այդ կոնահարությունն էլ չի եղել, ներկայացվել է խոսքով: Սա ավելի հավանական է, քանի որ հին Հունական ներկայացումը առարկաներ ու առարկայական վիճակներ չի նախատեսել: Ծրդիթայելու գործողությունը, ենենլով մեղ հայտնի տեքստից, չինք տեսնում: Դա նույնիսկ գդվար է գործողություն անվանել: Թերևս հարմար է ասել զրամատիկական պատում: Այնուամենայնիվ, «Շղթայված Պրոմեթեսը» ողբերգության առաջին տեսարանում ակների են նախնական ծիսականության հետքերը: Երկրորդ տեղում կարդում ենք անձրուսուն չորդաց: Հայերեն թարգմանվել է «ամայի անապատ»<sup>157</sup>, «անմերձենալի անապատ»<sup>158</sup>, ոռուսերեն՝ «в безлюдном скоплеском далеком краю»<sup>159</sup>. Բայց աշխատող բառը, եթի գանք Հոմերոսյան ժամանակից, ծիսական խորհուրդ է թաքցնում. նշանակում է անման, սրբազն, աստվածային և միայն չորրորդ՝ ավելի ուշ նշանակությամբ՝ ամայի<sup>160</sup>: Կարող ենք կարդալ նաև «սրբազն անապատ», որ թերևս այսօրվա ընթերցողի կամ բեմադրողի համար իմաստազորկ է: Սա արդյո՞ք ծիսականության հին դրոշմ չէ, որ առասպելի ռեալիստական մեկնություններում խամրել է ու չեղոքացել: Հայ առասպելի մեղ հետաքրքրող տարբերակները ճանապարհ են բացում դեպի արարողության «սրբազն անապատը», տեսանելի դարձնում ողբերգության հնագույն միստերիալ արմատները և ծիսային կառուցվածքը՝ սկզբում մուրճի հարվածներ, վերջում՝ որոտ ու կայծակ, աստվածային պատիժ:

<sup>157</sup> Հույն ողբերգակներ (ժող.), թարգմ. Հ. Համբարձումյանի, Երևան, 1952, էջ 5.


<sup>158</sup> Վ. Միլլեր, Լոռների վրա բնելոված Հակաների մասին կովկասյան առասպեկները, «Հանգես ամսօրյա», 1892, էջ 75.

<sup>159</sup> Էշկալ. Տրագедին, թր. С. Апта, թր. «Искусство», М., 1978, с. 137.

<sup>160</sup> Древнегреческо-русский словарь, т. I, с. 15.



Նկ. 3. Արտաշեա և Արտավազի, բայ մեռակնի:



બીજી છ. કાળજીનાંદાર, ગુરુત્વ પ્રાપ્ત

સ્થળ

Գործում է դատ ու դատաստանի գաղափարը՝ մեղքի միստերիալ պատիժը։ Կրակատարի շղթայումը պարզ պատիժ չէ, այլ հնագարյան ծես։ Ողբերգությունը բերում է հին հոնական ռառասպել տօնի» վերջուշը, Պրոմեթեայի գեղարվեստորեն վերիմաւ ռավորված պատկերը։ Հոնական ռառասպելից մեղ է հասել որոշարկիված զրամա՞ հոգերանական շեշտերով, տառապատից հողոցներով («նայեցեր, ավաղ, նայեցեք դժբախտ, շղթայված աստծուն», «ևս շեմ փոխարինի վշտերն իմ անհուն՝ ստրկուն ծառայնելուն»)<sup>161</sup>։ Հայ ռառասպելից մնացել են երգային-վիպական-զրուցային հետքեր և գարբնոցի դատարկ սալը բախսելու սովորությունը։ Բայց այն, ինչ հունական ողբերգությունում կոչվում է «սրբազան անապատ», թիվում է, կա նաև հայ ավանդություններում։ Պատմվել է, թե Բարդուղիմեսս առաքյալը եկել է «յաշխաբն» Անձեւացհաց ի համրաւ քարի միոց, քանդի դեր բազում բնակեալ էին և պատրին զմարդիկ տեղույն, տուեալ յայնմ տեղուցէ դեղս ախտականս առ ի կատարել զպղծութիւնս ախտից, կոանաձայնս դարբնաց ահաւոր հրաշչիք աենակաս զործէին, յորս մարդիկ աշխարհին սովորեալք, անո առ բայինն զեգերէին <...> և անուանէին զանուն տեղոյ այնորիկ Դարբնաց ժար։ Հասել սուրբ Առաքեալն նախածեաց զդարրինսն զգործունեայսն շարին, և ոկուոսն փշրեաց որ յանուն Անահտայ էր։ Եւ է տեղին այն յորում դեւո էին, լեռնամեջ միմաց ի վերայ զետոյն մեծի որ կոչի Տիգրիս, հուապ ի բերդն ամուր որ Կանգուար, և միւսոյն Ազուաւոց ժար, ուստի ջուրք բազումը հոսին ի լերանց»<sup>162</sup>։ Հոսապաշտության օրմերին ու կախարդներին հալածելու ևս մի վկայություն է սա, որ նախորդում է Շիգարի «ռառասպել տօնի» արգելմանը։ Սա համախոս է Հայումավորքի վկայությանը. պակասում է միայն Շիգարի առասպելի հիշատակումը։

Տեսնենք, թե միջնադարում ուրիշ որտեղ կան հուապաշտության սպասավորներ։ Թատրոնամերժ ճառերից

161 Ի. Տրանսկի, Անտիկ գրականության պատմություն, մասն 1, Երևան, 1949, էջ 204—205։

162 Մոլոսսի Խորենացոյ Մատենագրութիւնը, Վենետիկ, 1843, էջ 294։

մեկում (մոտ. VII—VIII դդ.) գտնում ենք մի անորոշ ակնարկ; Խոսվում է ամսագլխի (կալենդ) տոների, գուսանների, կաթաղիչների, զվարճամոլների, պարախմբի և ինչ-որ դիվական «մրմունչի» մասին: Բոլորն էլ հասկանալի են որպես միջնադարյան թատերական բանահյուսության նշաններ: Բայց կա մի համեմատություն. Հեթանոսությամբ մոլորդած հոգին շրջապատված է դեմի սպասավոր ուռնավորներով. «Ասացից եւ այլ ահագինս ինչ. զի մինչ շն զկատադեալս շարժէ դեմ զգուսանսն, յուշկապարիկ ձայնս ածէ, զպոռնկականն զախտս շարժե, զեգեռնն զոտս աքսոտէ. շար դեմ ծաղը ածէ եւ խնու զլսելիս, եւ զրանն աստուծոյ շտա[յ] լսել, եւ հա[յ] հո[յ] կական դեմ ի վերա[յ] սըրտին նստի մրմնչել տա[յ]. Եւ իշխանն դիւացն առ սրտին կա[յ], եւ առնէ որպէս սալ դարբնաց անդարձ ի պատուիրանն աստուծոյ, եւ որպէս սպանողն է յափշտակողն առ այն ձեռին զեգերին եւ ալպային դեմ շրջապատել զգլխովն զանեն որպէս ուռանահարս դարբնաց<sup>163</sup> (ընդգծումները մերն են—Հ. Հ.): Օղում սավառնող զենքը մրճահար զարդինների նման զարկում են մոլորդալի գլխին: Առարկայական և խորհրդանշային-այլարանական իմաստներն այստեղ, իհարկե, խառն են: Բայց էականը զարբնի ծիսական խորհրդանիշն է: Հեթանոս ժամանակներից եկող միջնորդված մի պատկեր կա այստեղ, որի իմաստն անորոշ էր քանզի ներկայանում է միջնադարյան թատերական բանահյուսության կոնտեքստում: Լինելով հեթանոսական ժառանգություն, միջնադարյան թատրոնը բնականաբար պահպանել էր պաշտամունքային հին խորհրդանիշեր, թերեւ իմաստափոխված ձեռիր, առարկաներ ու վիճակներ: Ուռնահարի հիշատակումը, հավանաբար, հեթանոս մոգության հետքերից է:

163 Սիմեոնի Աղձնաց եապիեկոպոսի ասացեալ վասն գինո խմողաց որ արբենան եւ վասն զուսանաց եւ վասն պոռնիկ կանանց և կաթաւաց, վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. 633, էջ 36ա: Ծառի մեքենագիր պատճենն (32ա-38ը էջեր) ստացել եմ Հ. Սահակ մեքենամխիթարտատպված խիստ ուշադիր, ուղղագրական շենդումների ու բացթողումների ընդգծումով: Բերում եմ նույնությամբ, բառավերչելը և կիսաձայնի հավելումով: և մեկ-երկու ստորակետ զենքով:

Ծիդարի թէատրոնում թերես անկարեռը չեն մյուս խորհրդանիշները՝ երկաթե շղթան և «երկու շունք մին սպիտակ և մին սեաւ»։ Ջրուցի ուշ միջնադարյան տարբերակներում դյուրությամբ կուաճվում է շղթայի իմաստը։ Դա տարվա, որպես ժամանակի ներփակ միավորի, պարզ սիմվոլացումն է՝ տարեկապը օղակի ձևով, որը մաշվում է տարվա հետ և «ի տարելիցն ի մազն գայ», որ թէ կտրի, նա (Ծիդարը—Հ. Հ.) եւանէ և զաշխարհս անցուցանէ։ Կապանքն օղակ է և կազմված է օղակներից, իսկ օղակը բատ հնագույն նախապաշարումների, հոգու կաշկանդման խորհրդանիշներ<sup>164</sup>, Կարելի է թերես այսպիսի համեմատություն անել. տարին, որպես վերջավոր ժամանակի ներփակություն, օղակները՝ տարվա վերջավոր օրերը։ Ծղթան լիզող երկու շները, Վանական վարդապետի մեկնությամբ, հարաւելուհին («յար լեզուն զշղթայսն»), բայց այս բառը, բատ Գ. Ղափանցյանի, ստեղծվել է ժողովրդական ստուգաբանությամբ և կապ շունի արալեզ բառի իմական իմաստի հետ, որ նշանակուի է հարուցանող, կենդանացնող<sup>165</sup>։ Շունը, որպես նախապաշարմունքի օբյեկտ, ունի ամենատարբեր, ամենահակասական բացատրություններ. մի տեղ մաճվան ուղեկիցն է և մեռյալների պահապանը<sup>166</sup>, մի տեղ սուրբ Սարգսի ուղեկիցն ու ավետարերը<sup>167</sup>, մի ուղիշ տեղ կապվում է ցորենի պաշտամունքի հետ<sup>168</sup> և այլն, և այլն։ Ղափանցյանի ուսումնասիրությունը համոզում է, որ ամենահինը հայերի նախապաշարումն է արալեզ բառով։ Ծիդարի շրդիան լիզող շների կապը ժամանակի պարբերականության հետ կաքծես ակնհայտ է, և բոլոր հայտնի մեկնություններին անըրազառնալու կարիք չկա։ Բայց մի նուրբ լրացում անհրաժեշտ է։ Քննելով Ծիդարի առասպելի՝ Վանական վարդապետի տարբերակը, կեսն Խաչիկյանը նկատել է, որ

164 Հմմա. Ջյ. Փրեզեր, նշվ. աշխ., էջ 272—277։

165 Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 30։

166 Б. Литвинский, А. Седов, Культы и ритуалы Кушанской Бактерии, М., 1984, с. 162—165.

167 Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 63—65։

168 Ջյ. Փրեզեր, նշվ. աշխ., էջ 496—497։

և և սպիտակ գույները «կարող են ցերեկվա և գիշերվար գարնան և ձմռան, կյանքի և մահվան հակադիր ուժերի առասպելական պատկերացումները լինել»<sup>169</sup>: Այս, եթե տարբեկափի շղթան «ի մազն գայ, որ թէ կտրի» սպառվում է ժամանակը, նշանակում է, շղթան իսկապես ժամանակի խորհրդանիշն է, ժամանակը մաշում են՝ զիշերն ու ցերեկը: XIX դարի նկարիչ Ռոստենը, թվում է, ավելի շուտ Վանականի տարրերակն է ունեցել (նկ. 4), քան Խորենացու, քանի որ վերջինս սկի ու սպիտակի մասին ակնարկ չունի: Այս մեկնությունը Շիդարին մերձեցնում է մեռնող ու հառնող աստվածություններին, մի բան, որ նկատված է Գ. Ղափանցյանի «Արա Գեղեցկի պաշտամունքը» աշխատությունում<sup>170</sup>: Զինք կարող վճռել, թե այս երկուսից որն է ամենի համապատասխանք, կամ իսկապե՞ս նույն պաշտամունքի տարրեր աստիճաններն են սրանք: Բայց որոշակի է, որ Շիդարը ներկայանում է որպես հառնող աստվածության հակոտնյան: Մեկին կաշկանդել են և ամբացնում են կապանքը, մյուսին կոչում են ի լույս: Տրամաբանական է: Հայ հին թատրոնի ակունքներում փնտրվել է Արայի տոնը<sup>171</sup>, թեպետ միջնադարյան աղբյուրներում հայտնի չէ որևէ ակնարկ, և Գիսանն անունն էլ կապ չունի Արայի հետ: Այդ կապը ստեղծում ու անհերքելի է ներկայացնում հայ հին թատրոնի երեակայական պատկերը հորինողը: Արա և Գիսանն անունների համատեղումը սոսկ կամայական հորինվածք է: Հայոց բոլոր աստվածությունները կարող են ունենալ իրենց «առասպել տոնը», բայց վկայված է միայն Շիդարի «թէատրոնը», եղատել կարող ենք միայն վկայվածի մասին: Գ. Ղափանցյանը ամենահամոզիչ կերպով ցույց է տալիս, որ փրկող աստվածության բրիտաննեական դրսնորումներից մեկը սուրբ Սարգիսն է: Սա բավական է ենթադրելու համար, որ հեթանոս ժամանակներում հույսի գաղափարն էլ կարող էր

<sup>169</sup> Մատենադարան—Գիտական նյութերի ժողովածու, 1, Երևան, 1941, էջ 153.

<sup>170</sup> Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 55:

<sup>171</sup> Դ. Գօնի, նշվ. աշխ., հ. 1, էջ 304—305:

ներկայացվել «դիմօք և թէատրոնօք», էականը մեզ համար խորհրդապաշտական դրամայի ցիկլային բնույթին է, կյանքի շավերժականության ծիսական դետերմինանութը:

Նավասարդյան միստերիան, որի մի մասն է կաղմել Շիգարի «թէատրոնը», հատկանշում է հին հայերի տիեզերաբանական հայացքը՝ ժամանակի վերջավորության ու անվերջանալիության, աղետի ու լույսի, կործանման ու փըրկագործման այլարանական-խորհրդանշային կերպավորումներով։ Եթե անգամ «գեմքերի» փոխարեն ասենք «ալեգորիաներ» (հետեւելով Խալաթյանցին), դարձյալ «առասպել տօնը» կապատկերացնենք որպես ներկայացում՝ ցերեկվա ու գիշերվա այլարանական զրոյց շղթայվածի, որպես ժամանակի առասպեկտանշանի, շուրջը, շրջանաձև պարով, աղոթքներով, խմբերգային ռեֆրեններով և երկաթը կոփելու, հուր արձակելու մոգական գործողությամբ։

Երևակայությունը երևակայություն, բայց փորձում ենք ի մի բերել կրոնական ենթազրկող ու մեզ հայտնի արարողությունների պատկերը՝ «առասպել դիմօք» և «առասպել տօն» բառերի աղոտ լույսի տակ։ Ուրիշ «թէատրոն» գժվար է պատկերացնել։

Առասպեկտիտական հին ու նոր ուսումնասիրություններում ցույց է տրված, որ գրամատիկական խաղի հիմքում, որպես ծիսային ունիվերսալ պայմանաձև, դրված է պտույտի ու պարբերականության գաղափարը<sup>172</sup>, հոգու օղակումը, պարի շրջանագիծը կուռքի կամ կենաց ծառի շուրջը։ Դրամատիկական խաղի հնագույն տիան այս է, և նրա վերապրուիները հասել են մեզ։ Դա նաև դրամայի բովանդակային էությունն է, ինչպես նկատել է ամերիկյան տեսաբան Թոմմաս Պորտերը<sup>173</sup>: Իսկ լույսի և այրման գաղափարները, եթե նայենք դրամայի սիմվոլիստական տեսություններին (Հերբերտ Վայգինգեր), գործում են բոլոր ժամանակների գրամաններում սիմվոլացված՝ «տառապանքի կբակ»<sup>174</sup>: Կրակը, որպես բնության հավերժական մի ուժ,

172 А. Козлов, Мифологическое направление в литературоведении США, М., 1984, с. 67—72.

173 Հմմտ. նույն տեղում, էջ 72—73:

նույնպես դառնում է պարբերականության՝ մեռնելու և հառնելու խորհրդանիշ: Բոլոր միստերիալ խորհրդանիշերը ի վերջո հանգում են կրակի պատկերին:

Շղթայվածի առասպելն իր բոլոր նշաններով համերաշխ է հնագույն դրամայի միստերիալ հիմքերին, այն է՝ ժամանակը և ճակատազիրը որպես կեցության գետերինանտներ, «Համբերությունն անարդարության հանդեպ (սոցիալական կամք—Հ. Հ.) որպես մարդկային գոյության պայման»<sup>175</sup>: Առասպելն այդ է ասում: Արծիվը հողոտում է Պրոմեթեսի լարզը, առավել՝ Մհերի «պլոճիկը»<sup>176</sup>, որ հների հայացքով, կայունության, կեղեքվելու և դիմանալու խորհրդանիշն է: Իսկ շղթայվածությունը բնության ուժերի սիմվոլացված պոտենցիալ վիճակն է՝ պրկված ուժը իրկրի բանտում, ցերեկ ու գիշեր, ժամանակի մաշվող ու շնորհող շղթան ոտքերին<sup>177</sup>: Եվ անվերջանալի սպասումը դրամատիկական բոլոր վիճակներից ամենատարողունակն է:

### ԵՐԲ Է ԱՏԵՂԾՎԵԼ ՇԻԳԱՐԻ ՕԱՌԱՌՈՅԵԼ ՏԾՆԸ»

Առասպելի հայսմավուրբային աարբերակում (Ճեռագիր և տպագիր) ասված է. «Եւ ի նոյն աւուր ի նաւասարդի մեկն, որ տօնէին Հայր այնմ բագնացն, որ անդ էին և պղծոյն Արամազդաց...» Խոսքն առջասարակ հեթանոսական մեհյանների մասին է, և գուցե պետք է կարծել, թե հին Հայաստանի բոլոր սրբավայրերում նաևսարդուան խորհուրդը կատարվել է Շիդարի առասպելով կամ նրա հիշատակումով: Վերապառնանը Գր. Խալաթյանցի՝ մեր վկայաբերած ենթադրությանը. Եփրատ-Արածանի, նպատ լեռ,

174 Նույն տեղում, էջ 70:

175 Հմմտ, Ա. Լյուկաչ, Պուտի ՅՈՐՈՎ. Մ., Մ., 1984, ս. 185.

176 «Սամանա ծռել», 1979, էջ 79:

177 «Ժամանակն իր շավից գորս է սայթաքել, շրան է պոկել»: Համեմտի մենախոսության այս տողին ավելացված վերջին երկու բառերը, թվում է, պատահական չեին վաճրամ Փափազյանի խոսքում: Թեմայի խորհրդապաշտական ակունքների զիտակցումը կամ զգացումը գալիս է, հավանաբար, դերասանի կարդացած և մեզ անհայտ առասպելազիտական գրականությունից:

Անահիտի տաճար, քուրմ Ասսավագդո-Արտավազդ, քրմի և աստվածության անունների նույնացում: Սա Բագրեանդանց դավառի Բագավանի տաճարն է՝ հայ հին պաշտամունքացին կենտրոններից մեկը, զուցե և քրմական ամենախոշոր կազմակերպությունը:

Տեսնենք, թե Խորենացին ինչ է ասում այս մասին:

Նա կարդացել է ասորի պատմագիր Բարդածան Եղեսացու (154—222) մեջնական պատմությունը և հիմնվում է այդ ազբյուրի վրա: Բարդածանը III դարի սկզբներին եղել է Հայաստանում, հաստատվել Հայ մեջնական պատմությանը, թարգմանել ասորերն ու հունարեն, միջամուխ եղել վաղ բրիտոնեական ժամանակի կրոնագաղափարական և աղանդավորական խմբումներին, եղել է աշխարհիկ մարդ, ազատախոս, հետազոտող, եռանդուն ու փայլուն մտքի տեր անձ<sup>173</sup>, Եվ նա, ըստ Խորենացու վկայության, «պատմէ ի մեջնիցն աղաշտամանց, վերցին Տիգրանայ» (Տիգրան Գ, 20—8 թ.—Հ. Հ.) արքայի Հայոց պատուեալ զգերեզմանն եղբորն իւրոյ Մաժանայ քրթապետի ի բազնացն աւանի, որ ի Բագրեանդ գաւառի, բագին ի վերայ գերեզմանին շինեալ՝ զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն, և ընդունիցներն հեւրք երեկօնիւր Յորում և զինի Վաղարշ տօնաշխարհախումբ կարգեաց ի սկզբան ամի նորոյ, ի մուտն նաւասարդին<sup>174</sup>:

Չունենալով այլ վկայություն, Բագավանի տաճարի հիմնումը պետք է (թերեւս պայմանաբար) վերագրենք մեր թվականությանը անմիջականորեն նախորդող տարիներին: Բայց դիմենք տրամաբանությանը: Տիգրանի եղբայր Մաժան քրթապետը չէր կարող թաղվել պատահական մի տեղում, ինչպես ասում են՝ անսուրբ հողում: Հնագույն սրբության մի հիշատակ պետք է լիներ այդտեղ: Տրամաբանական կլիխնի հնթաղբել, որ Տիգրան երրորդը ոչ թե հիմնել այլ շենացրել է հին սրբավայրը Ահա այս սրբավայրում էր

173 Հ. Մելիքնեան, Հայ-ասորական հարաբերությունների պատմություններ, Երևան, 1970, էջ 150—157:

174 Խորենացի, Էջմ. Հրատ., էջ 202:

Վաղարշը «տօն . աշխարհախումբ կարգեաց»։ Ո՞ր է աղարքին նկատի ունեն թարգածանը և Խորենացին։ Հավանաբար (զա երևում է Խորենացու կոնտեքստից)՝ Վաղարշապատի Հիմնադիր Վաղարշ առաջինին, որ թագավորել է 117—140 թվականներին։ Բայց կարո՞ղ ենք արդյոք նավասարդի տոնի ավանդությունն սկսել մեր թվականության II դարից։ Գրականության մեջ այդպիս է ընդունված<sup>180</sup>։ Ի՞նչ է ասում այդ դեպքում նաւասարդ բառը, որ անհամեմատ հին է, փոխառված է պենդերինից (pava-nոր, sarad-տարի) ու սանսկրիտից (pava-նոր, sarad-աշուն, տարի)<sup>181</sup>։ Տօնը, կասկած լինել չի կարող, այնքան հին է, որքան բառը նավասարդի տանին տեղի են ունեցել խաղեր, մըսություններ, այլևայլ հանդիսներ, զոհեր են մատուցվել։ Անահիտին ու Արամազդին, Վահագնին և զուցի հայոց բոլոր աստվածություններին։ Տոմարագիտական բոլոր հաշմառմանը նավասարդի 1-ը անշարժ տոմարի օգոստոսի 11-ին է<sup>182</sup>, ենթադրվում է, Խորենացու որոշ ակնարկների հիման վրա, որ հայրց անշարժ տոմարը հաստատվել է Սրբաշնա առաջինի (189—190) ժամանակից։ Բայց այս չէ խնդիրը Խորենացին այն է, որ տարեկիցի կամ տարեկապի դադարիարը (այս բառերը շեշտվում են Շիդարի զրույցում) միանդամայն ակնհայտորեն կապվում է շղթայի ու շղթայվածի խորհրդանիշերին։ Շիդարը ո՞չ Անահիտ է, ո՞չ էլ Արամազդի իր աստվածության արժեքով, և նրան զուցի ոչ մի զո՞ց էլ չի մատուցվել, բայց մեր առջև ժամանակի միթուուպիական դետերմինանտն է։ Պետք էր նախ և առաջ ժամանակի շրթուուպիական ամբացնել, որ զուրս չգա «իր շավզից» հետո զոհեր մատուցանել աստվածներին։ Աստվածության ոչ մի հիշողություն չի մնացել Շիդարից, նրա զիվացյալ հայացքը խամրել է ժամանակի մեջ։ Բայց շղթայվածի խորհրդանիշը անբաժան է եղել նավասարդյան միստերիայի բովանդակության մեջ։

<sup>180</sup> Վ. Թզայան, Հայ ազգագրություն, Համառոտ ուրվապիծ, Երևան, 1974, էջ 231—232։

<sup>181</sup> Հ. Անայան, Հայերեն արմատական բառարան, Հ. Յ., էջ 435—436, Ե. Եարոյ, նշվ. աշխ., էջ 65, 72։

<sup>182</sup> Հ. Թադայան, Օրացուցի պատմություն, Երևան, 1970, էջ 50։

Ցուցանից: Մաշվար շղթան խորհրդանշել է սպառվող ժամանակը, ամբացվող շթան՝ նորոգվող ժամանակը, և զուցեամայական գործողությունն էլ կոչվել է շիդարել (ժողովրդական ոճով) կամ սիդերո (Հռոմանքն), Տարեկիրջը խորհրդանշող առասպելին բնականորեն հաջորդել են տարին սկսող հմայական գործողություններ՝ հավանաբար, ուրիշ, մեզ անհայտ մի առասպելով: Հեթանոս տոնների ու աստվածությունների ինչ-ինչ խամրած հիշողություններ հասել են միջնադար: Շիդարի զյույցից ու ծեսից մնացել է միայն Զատկին նախորդող շարավի երեկոյան մուրճը դատարկ սաւմին դարձելու սպառությունը:

Նավասարդյան խորհուրդն անշուշտ ավելի հին է, քան Մաման քրմապետի գիրեզմանը և Բագավանի տաճարը Գուցեավելի հին սրբավայրեր են եղել Արդականում (Արտավազդական) ու Բյուրականում (Արտավազիկ): Տեսություններին, անդամ շատ զիտական տեսություններին նայելով դժվար է ասել, իսկապէս ձե՞ս է ավելի հիշ, թէ՞ առասպելը «Առասպել տօնի» ինչ-որ հնագք, ինչ-որ ակնհայտ նշան պետք է հասած լիներ վաղ միջնադար, բայց Խորհնացու ակնարկը թույլ է: Հայսմագուրքի վկայությամբ, Գրիգոր Լուսավորիչը մի «թէատրոն» է խափանել Բագավանում: Բայց այդպէ՞ս է կոչվել «առասպել տօնը» Լուսավորչի ժամանակ: Չգիտենք այդ, և զուցեակամ է ական է երեկոյթի անվանումը: Գուցե և Լուսավորիչը, լինելով հունական կրթության մարդ, այդպես է անվանել հայ հեթանոսական միստերիան, կամ սիդերո-սիդարուշիդար-շիդար անվանումն այստեղից է ծագում: Խափանված միստերիան նման պետք է լիներ հին հռոմանական շրջանակենտրոն քէատրոն-դիկաստերինին (ատյան-հանդիսաբան), որպեսզի այդ անունով ավանդվեր ու հիշատակվեր «Յայսմաւուրք» ծիսական գրքում: Երեկոյթի անվան և ժամանակի միջև ինչ-որ կապ, թվում է, պետք է տեսնել:

Թուր դեպքերում դժվար է Շիդարի «առասպել տօնը» վաղարշ առաջինի ժամանակից սկսել: Թեմայի ու խորհրդանշերի հնությունը, նաև առեղծվածքը, մտածել են տալիս, որ այս Բատերական երեկոյթը հայոց մեջ սկզբնավորվել է ավելի վաղ, քան Տիգրան երկրորդը հելլենիստական տիպի

թատրոն կկառուցեր, Արտակազդ երկրորդը հունարեն «ճառսեր ու ողբերգություններ» կշարագրեր, կամ Յասոն Տրալիանոսն իր «սինոդոսով» Արտաշատ կհասներ՝ պալատում Եվրիպիդեսի ողբերգություններն արտասանելու (53 թ.մ. թ. ա.): Հաստատել որևէ կոնկրետ տարեթիվ մեր թվականությանց առաջ և հորելիյանական տարի որոշել մեր թվականության, երկրորդ հազարամյակում... «ընդ որո՞ւ վարդապետութեան», կասեր Գրիգոր Մագիստրոսուր Վազարչ առաջինը գահակալել է մեր թվականության 114—117 թվականներից մինչև 140 թ., և եթե ինքը չի հորինել, ապա թերեւ մի բան արել է՝ նորոգել է ծիսական կարգը, դարձրել «աշխարհախոսումբ տօն» կամ «համաշխարհական տօն», ինչպես ասում են միջնադարյան հեղինակները: Հնարավոր է նաև, որ Վաղարշ երկրորդի ժամանակ է եղել այս՝ 140 թվին: Խորենացին, թվում է, նկատի ունի Վաղարշ առաջինին: Այս կետը մեզ համար մնում է անորոշ: Գիտենք սակայն, որ թագավորը գերագույն քուրք էր, կարող էր ծես հիմնել կամ վերտեղծել, նաև իր անվան ու ժամանակի հետ կապել հին ծեսը: Կարող էր և թէատրոն անունը Վաղարշի ժամանակ տրվեր «առասպել տօնին», եթե իհարկե Վաղարշը հելենասեր լիներ իր նախորդների Տիգրանի ու Արտավազդի նման: Այս էլ չգիտենք: Պատմության մեջ դրա նշանները չեն երևում: Դժվար է նաև վճռել, թե «առասպել տօնը» ինչ չափով էր նման հելենիզմի դարաշանի թատրոնի, որի նյութական հետքերը Մերձավոր Արևելքում կառուցված հունահռոմեական տիպի թատրոններն են: Խորիրը մուֆն է, ենթադրական վճիռներն առաջժամկեց:

Հայսմավուրբի վկայության վերջին կետը թերեւ ամենանվիճելին է. արգելելով «Շայսպիսի առասպել տօնն», կուսավորիչը «կարգեաց ի նաւասարդի ի մեկն տօնել սուրբ Կարապետին և Մկրտչին Քրիստոսի Յովհաննու»: Եթե Հայստանում քրիստոնեության պաշտոնականացումը եղել է 301-ին, ապա այս թիվն էլ պետք է համարել «առասպել տօնի» վերջը: Խոկ եթե Գրիգոր Լուսավորչի կալանքը Խորվիրապում տեսել է, ըստ Ագաթանգեղոսի ինչ-ինչ ընթեր-

ցումների, ոչ թե «ամս երեքտասան», այլ «ամիսս երեքտասան», ինչպես համոզված էր Նիկողայոս Աղոնցը<sup>183</sup>, ապա տոնի արգելման տարեթիվը տասներեք պտույտով ետ է գնում՝ 288 թ.: Աղոնցն այն մտքին էր, և գուցե շեր սխալվում, որ ձեռագրական մի վրիփումով կամ տարբնթերցումով հայոց քրիստոնեական հեղափոխությունը տասներեք տարով հետաձգվել է՝ 288-ը դարձել է 301: Հաբյը, որ եղել է վիճելի՝ առաջադրվել են տարբեք տարեթվեր, կարող է մի օր նորբերլու, բայց մեր պատմագիտական գրականության մեջ առայժմ հաստատված է 301 թիվը<sup>184</sup>: Դա պայմանական վերջակետն է հայոց պատմության նախաքրիստոնեական շրջանի: Մոտավոր համարենք այս սահմանը, թե ստուգի, մինույն է. դրանով քիչ բան է փոխվում մեր առարկայի ուսումնասիրության մեջ:

Թերեւս հարկ Ալիներ ծանրանալ այս կետում, եթե «առասպել տօնի» արգելւով սկիզբ չդրվեր մի նոր թատերակարգի՝ սուացին պաշտոնական միստերիային համաշխարհայն եկեղեցական լիատրոնի պատմության մեջ: Լրսում էր «անապատում կանչողի ձայնը» (Ղուկ., Գ. 4), գաղտն էր մարդարեն՝ Հովհաննես Մկրտիչը: Կերպափոխվում ու իմաստափոխում էին և առասպելը, և ծեսը: Լուսավորիչը հիմնում էր Հովհաննես Մկրտչի «համաշխարհական տօնը»:


Հայ Եկեղեցու հիմնադիրը Տրդատին, նրա ընտանիքը, շրախումբն ու զորախումբը հանդիսավոր կերպով տանում է «ի քաղաքագեօնն Բագաւան», «զոր յառաջնագոյն իսկ ի նմին տեղուց պաշտէին յուրախութեան նաւասարդ աւուր»<sup>185</sup>, տանում է «ի մկրտութիւն անդր, ի շուրսն Եփրատ գետոյն»<sup>186</sup>: Հայտնի է այս ամենը, բայց իմաստավորված է պոտ որպես քաղաքական պատմության փաստ: Դա այդպես էլ է: Բայց մեղ համար բացահիկ է նաև մշակութային պատմության փաստը: Ավարտվում է հայ մշակույթի պատմության մի մեծ շոշափուլ, իշնում է հեթանոսական միստերիայի վերջին վարագույրը, և սկսվում է Լուսավորչի պատարագը:

183 Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 381:

184 Հայ Ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1984, էջ 633:

185 Ազարանգեղոս, Խշվ. Քրատ., էջ 426, 433, 435:

Բագավանի հեթանոսական տաճարի տեղում Գրիգորը  
պահ է տալիս Հովհաննես Մկրտչի և Աթանագինես եպիս-  
կոպոսի մասունքների մի մասը, հիմնում ուսուր Հովհան-  
նես» եկեղեցին և Տրդատին մկրտում Հովհաննես անունով՝  
Հայտնի չէ, նա քանդո՞ւմ է Բագավանի տաճարը, թե՞ շրջ-



Նկ. 5 Բագավանի տաճարը և քաղցեական արձանագրություն  
թայվածի կուռքն է խորտակում։ Նման կուռք չկար էլ այն-  
տեղ, դա սոսկ գաղափար էր։ Լուսավորիչը խորտակում է  
Անահիտի կուռքը, խաչ դնում կրակարանի վրա կառուց-  
103

ված Տիբոզ սեղանին և կանգնում Արտավազդ քրժապետի  
տեղում Նա հիմնում է առաջին խոշոր պաշտամունքային  
կենտրոններից մեկը վաղ քրիստոնեական Հայաստանում: Հե-  
տագայում՝ 631—639 թթ. Եզր կաթողիկոսը շենացնում է  
սրբավայրը՝ կառուցել տալիս Բագավանի նշանավոր բազի-  
լիկան (նկ. 5), որի թերեւս հատակագիծն է միայն նախնա-  
կան<sup>185</sup>, XVIII դարում նորոգված եկեղեցու պատերի մեջ  
մնացել են քարեր քաղդեական արձանագրություններով,  
կարծես ի հիշատակ հին աստվածությունների:

Ի՞նչ են պատմում այդ արձանագրությունները, չգիտենք:

Արածանին հոսում է նախսկին ափերով, իր տեղում է  
միակ վկան՝ Նազատ լեռը, բայց կրում է ուրիշ մի անուն՝  
«Թափա շեյդ», որը նոր պարսկերենում նշանակում է...  
իսկնթի գլուխ:

<sup>185</sup> Խ. Ա. Օրբելի, Ինքնական տրամադրություններ, Երևան, 1963, ս. 455—456:  
Օրբելու աշխատությունում զհտողված են Բագավանի երեց Լու-  
սանկար՝ լուղանուր տեսքը, արևմտան և Հարավային Հակատ-  
ները: Լուսանկարները բավական ազոտ են:

ՄԻՍԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱՁԵՎԸ ԵՎ. ՆՐԱ. ՄԻԶԱՆԱԴԱՐՅԱՆ  
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

Տրամախոսությունը, որպես դրամատիկական ձևի ակներեն նշան, առկա է բանահյուսության տարրեր տեսակներում և դրամայի միակ որոշիչ հատկանիշը չէ: Վիճակների հակադրությունը դրսենորվում է ոչ միայն խոսքով, այլև ինքնին՝ տեսանելի ֆիզիկական իրավիճակում և տեսարանային կարգում: Ո՞վքես դրամայի կառուցվածքային-տիպարանական հիմքը, ծիսային պայմանաձեռւմ փնտրում ենք Արփատուելի նշանը հատկանիշներից երկուսը՝ զործողությունը, առանց որի դրամա լինել չի կարող<sup>1</sup>, և տեսարանային կարգը ( չՓԱԾ ), որ գրականությունից գուրս է՝ «փոքրագույն» հատուկ է բանաստեղծությանը<sup>2</sup>: Խաղերն ու ծեսերը դրամայի ինքնուրույն լեզվի ոլորտում են, որը գուրս է խոսքի, որպես տիրապետող ուժի, իշխանությունից:

Դիմելով դրական աղբյուրներով վկայված, ինչպես և դիտված դրամատիկական ծեսերին, նկատում ենք, որ հնագույն տեսարանային կարգը՝ շրջանակենտրոն փոխհարաբերությունը ընդհանրական հատկանիշ է: Այստեղ փնտրում ենք տեսանելի կամ երեակացելի աշխարհի թատերական դետերմինանտը՝ տիպարանորեն կայում այն սխեման, ուր առկա են հին դրամայի կառուցվածքային հիմնական տարրերը՝ անհատ և խոսմբ ( γορός ), անհատական

1 Аристотель, Сочинения, т. IV, изд. «Мысль», М., с. 652.

2 նույն անգում, էջ 653:

կամքի և օրյեկտիվ ուժի բախում և գործողության ներփակ  
հրապարակության մի դեպքում ունի առարկայական ակ-  
ներեւ տեսք, այլ դեպքում ենթադրական է: Շրջանաձև հրա-  
պարակի գաղափարը միշտ կա, անկախ գործողության ար-  
տարին տեսքից:

Դրամատիկական ամենապարզ և նախնական ձեսը  
դատն է, իրական կամ պայմանական, որ ստեղծում է հան-  
դես ու շրջանակենտրոն գործողություն:

## CARMINA TRIMPHALIA

Դատի գաղափարը գրված է ամեն մի հասարակական  
միության հիմքում: Դրա գործնական գիտակցումը եղել է  
քաղաքակրթության բոլոր աստիճաններում, բոլոր հին ու  
նոր ժողովուրդների մեջ: Նախնադարյան տոհմային հասա-  
րակարգում, երբ մարդու կյանքը չի պատկերացվել համայն-  
քի շրջանակից գուրս, գատաքննական հաստատությունը  
գործել է անխափան օրենքներով ու կայուն տեսքով, և հրա-  
պարակային պարսավանքը եղել է այդ շրջանակը պահպա-  
նող զերեղ ուժի նման աստիճանի է հասել անհատական ազա-  
տության գիտակցումը տոհմային միության մեջ, աստծուն  
է հայտնի, բայց որ անհատի կյանքը համայնքից դուրս հա-  
վասար է եղել մահվան, և մարդու վարքագիծը ինքնին  
հարմարվել է ընդհանրության շահքն ու բարոյակարգին,  
հասկանալի և տրամարանական է: Հոգեկան մենակություն  
մարդու կարող էր կրել թերեւս ամեն պահ, և դրանից նրա  
հասարակական վիճակը չէր փոխվելու, բայց ֆիզիկական  
մենակությունը, որին կարող էր ենթարկվել պատահաբար  
կամ դատապարտվել համայնքի վճռով, նշանակում էր բոլո-  
րովին այլ բան: Անօգնականությունը բնության հանդեպ  
մարդուն ենթարկել էր համայնավարական օրենքին, և անհատու-  
թի վիճակի չէր դուրս նայել համայնական օջախը շրջապա-  
տող ցեղակից-արյունակիցների ներփակ օդակից: Ո՞ւր էր  
դնալու օրինադանցն ու խենթը, գաղանների երախն էր ընկ-  
նելու, պատուհասվելու էր շարքից, ջրամույն լինելու ու եթ-

առեալ» Շիդարի նման կամ բռնվելու և ծաղր ու պատիժ էր կրելու ուժինչ չներող ամրոխով շրջապատված։ Շղթայվածի տռաստելում, հավանաբար, առկա է նաև սոցիալ-պատմական այս շերտը, որ գալիս է նախադասակարգային ժամանակներից։

Տեսակնու կա, թե հասարակական կարծիքը քաղաքակիրթ աշխարհում այն ուժը չունի, ինչ ունեցել է «բարբարոս» ցեղերի մեջ, ամենավաղ ժամանակներում, երբ հրապարակային ծաղր ու ծանակը, որպես դատաքննության ձև, եղանակ, մարդում դնում էր անհամեմատ ծանր վիճակի մեջ, բան ամոթի սովորական զգացումը<sup>1</sup>։ Դատաքննությունը և ծաղրը տարրանչատված (դիֆերենցված) վիճակներ ու հասկացություններ չեն, ուստի՝ ծաղրը սպառնում էր մարդու ոչ միայն բարոյական, այլև սոցիալական վիճակին։ «Մաղրպելու սարսափը, — գրում է ամերիկան հետազոտող Պոլ Ռեյֆինը, — էական դրական գործոն էր նախադարյան ժողովուրդների կյանքում։ Այդ գործոնը, հսկելով իրերի հաստատուն կարգը, ներգործում և աշարեկում էր ավելի, բան սահմանափակող ու հարկադրական բնույթի ցանկացած որոշումը<sup>2</sup>։ Հետազոտողները տվիլ են դրա նաև սոցիալ-պատմական ու հոգեբանական հիմնավորումները. ամոթիածությունը որպես գիտակցության պարզունակ մակարդակի արդյունք (Ռ. Էլիոտ), կամ՝ ինքնասպանության արդարացումը տոհմատիրական համայնքում, երբ մարդը փախչում է ծաղրվելու ամոթից (Է.-Ս. Ռետրի)<sup>3</sup>։

Հրապարակային սպասավանքը, ինչպես տեսնում ենք, նախնադարյան հասարակության կյանքում կատարել է անհատի ու համայնքի հարաբերությունները կարգավորող դեր, ամրապնդել է մարդու որպես հասարակական անհատի վիճակը։ Բայց սա իրական ծաղրն է և ունի դատի պարզ ֆունկցիա, որ նշանակում է, թե չի օտարված, չեր վերածված պայմանականության ու խաղի։ Ուսումնասիրողներից Ռետ-

<sup>1</sup> Հմմա. Բ. Ձեմածօք, О комическом, пер. с польск., М., 1971, с. 156.

<sup>2</sup> Նույն տեղում։

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 157։

րին ուշագրություն է Հրավիրում 1922 թ. Արևմտյան Աֆրիկայում դիտված մի ծեսի վրա, ուր ծաղրը ոչ թե զատաքննություն է ու պատիճ, այլ խսկապես խաղ։ Արարողության բոլոր մասնակիցներն անպատճի ու անհնառեանք ծաղրում են միմյանց, տալով ծայրաշեղ որակումներ՝ երգով, ազադակով ու աղքուկով։ Եվ ամենից ավելի ծաղրվում են ցեղապետն ու քրմապետը։ Վերջինս (Ռետրին տալիս է նրան անունը՝ *Sik* Կոսա) բացատրում է զարժացած օտարերկրացուն, որ ծաղրի այդ արարողությունը միջոց է՝ մարդու հոգուց հանելու նախանձի, ատելության ու հակակրանքի զգացումները, և առանց այդ ծեսի «հոգին կարող է հիվանդանալ»։ Իշխանությանը պատորնն ծաղրողը գառնում է ավելի հանգիստ, խաղաղ ու հնազանդ, և դրանով ոչ միայն իր հոգին է մնում առողջ, այլև ամրապնդվում է ցեղապետի ու քրմապետի իշխանությունը (թվում է, հակառակն էր լինելու), ծաղրողը շի դառնում ապստամբ<sup>4</sup>։

Ուրեմն, քաղաքակրթությունից հեռու մի ցեղի քրմապետ տալիս է դատական խաղի ու կատակերգական քավության (կատարսիս) հոգերանական-հասարակական դերի ամենանուրբ ու խոր բացատրությունը։ Հոգերանական քավության գիտակցումն իշարեկ հին է։ Եվ մեզ էլ արդին հայտնի են այդ հասկացության ծիսական-բանահյուսական ակունքները։ Դատական խաղի հնագույն ձևեր են ենթադրում ցուլի զոհաբերությունը Զեսի տաճարում և հանցանքի սուրբների՝ դանակի «պատիժը»<sup>5</sup>, հին հրեաների քավության նոխազի զոհաբերումը, ըստ Աստվածաշնչի Պետացոց գրքի<sup>6</sup>, և վերջապես հին ատտիկյան կոմուսը (առևոն)<sup>7</sup> հունական կատակերգության բանահյուսական նախատիպը։ Բայց ահա, Ռետրիի ցույց տված արևմտաափրիկյան ծիսակատարությունն ունի ավելի անմիջական, մեր խնդրի տեսակետից ավելի բնութագրական զուգահեռներ։

Carmina trium (խոսք կամ երգ հաղթանշանի)։

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 158։

<sup>5</sup> Օթատրոնը միջնագարյան Հայաստանում», էջ 171—179։

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 178։

<sup>7</sup> Աստուածաշնչ մատեան Հին և Նոր կատարանաց, Ղետ., Ժ. 2—11, Կ. Պոլիս, 1895, էջ 124։

այսպես են կոչվել հին Հռոմում հաղթող զորավարների պատվին երգվող փառաբանության ծաղրախառն երգերը։ Հաղթակամարի տակից անցնող զորավարի մարտակառքի առջևից գնացող զինվորները կրում են հաղթանշանները, իսկ ուղեկիցները երկու խմբի բաժանված («պարուք դէմ ընդ դէմ հարկանելով» կամ զիխորեա) երգում են ծաղրական երգեր, ծաղրելով իրենց իսկ զորապետին<sup>8</sup>, Այս կարգի երգերի մեջ, որոնց մի մասը պահպանված է Սվետոնիուսի մոտ, կան և բացահայտ գոեհկարանություններ, հաղթանակած զորապետի բարոյական ու Փիզիկական արատներն ակնարկող խոսքեր։

Հռոմի քաղաքացիներ, աշքներդ պահեք  
Զեր կանանց վրա.  
Բերում ենք մեզ հետ  
Ծաղատ անառակին,  
Որը Գալլիայում ծախսել է իր ոսկին,  
Պալիս է պարագ անելու հիմա...<sup>9</sup>

Այս ծաղրի իմաստը ո՞չ բարոյական բավության, ո՞չ Էլ «Հոգու առողջության» հետ կապ ունի։ Սա յուրահատուկ հմայական գործողություն է՝ մագիա, կեղծ անհեծք՝ հաղթողին զերծ պահելու հաղթվողի աստծու զայրութից, կանխելու «շար աշքի» ուժը։ Թվում է, ամենից ավելի այս հին նախապաշարմունքը պետք է փնտրել դատական խաղերում և պայմանական ծաղր ու ծանակում։ Հետաքրքիր է, որ պարտվողներն էլ զրվել են նման վիճակի մեջ, դառնալով հաղթահանդեսի գերված մասնակիցներ, իրենց վիճակը կրկնող «գերակատարներ»։ Երկակի ու երկդիմի վերաբերմունքը այստեղ էլ ակնհայտ է։

Պլուտարքոսի «Կենսագործությունների» «Մարկոս Կրասոս» գլխի 32-րդ հատվածում հանդիպում ենք նման շքերթի նկարագրության «Սուրենը Կրասոսի զլուխն ու ձեռքն ուղարկեց Հայաստան, Որոդեսին, իսկ ինքը սուրհանդակ-

<sup>8</sup> Всеобщая история литературы, под ред. В. Корша, т. II, ч. СПб., 1881, с. 1340.

<sup>9</sup> М. Покровский. История римской литературы. М., 1942, с. 26.

ների միջոցով լուս ուղարկեց Սելևկիա, թե այնտեղ է տանում կենդանի Կրասոսին և կազմակերպեց խեղկատակային երթի նման մի բան, ծաղրանքով անվանելով այդ տրիումֆ: Առաջմագերիներից մեկը՝ Գայոս Պակիանոսը, շատ նման Կրասոսին, հագած պարթևական կանացի զգեստ և վարժեցված, որ նշան տա Կրասոս անվանն ու կայսր տիտղոսին, զնում էր հեծյալ, առչելից ընթանում էին ուղտերին բազմած փողջարներ ու գավազանակիրներ, որոնց գավազաններից կամված էին քսակներ (ակնարկվում է Կրասոսի ընշաբաղցությունը—Հ. Հ.), իսկ տապարների վրա՝ հոռմեացիների նոր կտրած գլուխներ. ետևից գալիս էին սելևկիացի հետերա վարձակները, խեղկատակային երգերով ծանակելով Կրասոսի անզորությունն ու փոքրոգությունը: Իսկ ժողովուրդը նայում էր նրան»<sup>10</sup>:

Այս ամենը կարծես նման է հին հունական կոմոսին, բայց դաժան ու վայրենի տեսք ունի: Նմանությունը գործողության ու տեսարանային կարգի մեջ է. պարերգակ վարձակների խումբ, ծաղրվողը (կամ պատճվողը)<sup>11</sup>՝ կանացի զգեստով՝ Կրասոսի լեռացող քնարլորությունը ներկայացնող բռնադատված դերակատարի<sup>12</sup>: Մեր առջև հասարակական պարսավանիքի հնավանդ եղանակն է, կատարյալ դատական խազ, կոմեդիայի հնագույն տիտղը՝ պարերգակների ու մենակատարի՝ ցուցքի փոխարարերությամբ: Այս փաստը վկայում է, որ կատակային ծաղրական երթը, որպես դատաքննության ու պատժի եղանակ, նաև առաջավորասիական երկույթ է, որ այս միջավայրում նույնական առկա էն ժողովրդական դրամայի նախնական ձևերը:

Կրասոսի արյունոտ դրամայի երկրորդ գործողությունը տեղի է ունենում Արտաշատի պալատական խնջույքի

10 Платон, Сравнительные жизнеописания, изд. подгот. М. Грабарь-Пассек и С. Маркиш, М., 1963, с. 262—263.

11 Հ. Եղիս Թոմանեանի թարգմանության մեջ՝ «...պկնի զալին բոզք Սելևկիացիք վարձակք, և իցուց նուազաց իւրեանց շատ ինչ բարբառեին զկծեծուցիչ» և ծիծաղելիս զինամարդի և զանարի վատասրտութեանն Կրասոսիք (Պատարցեայ Քերավնացոյ Զուգակշիոր, հ. Գ., Վենետիկ, Ս. Դավար, 1835, էջ 136):

սրահում, Արտավազդ երկրորդի (55—34 մ. թ. ա.) և պար-  
թևների թագավոր Որոդիս երկրորդի (58—39 մ. թ. ա.)  
Նախաձեռնությամբ ու ներկայությամբ Սա 53 թ. Եվրիափի-  
դեսի «Բաքոսուէիների» պալատական ներկայացումն է  
Խառնանի ճակատամարտում պարթևական բանակի՝ հռոմեա-  
կան լեգիոնների ղեմ տարած հաղթանակի առթիվ, որ նկա-  
րագրութիւնը կ Պլուտարքոսը «Կենսագրությունների» նույն գլխի  
33-րդ հատվածում և որի մասին բավական գրպել է<sup>12</sup>,  
Ուշադրություն դարձնենք Պլուտարքոսի նկարագրության  
հետեւյալ հատվածի վեա: «Այն պահին, երբ Կրասոսի գլու-  
խը հասցրին պալատ, սեղաններն ( տքչութեա ) արդեն հա-  
վաքված էին, և ողբերգակ ղերասան ( թռչագծեան ծէ նուչերտնէ )  
Յասոն Տրալլիանոսն արտասանում էր Եվրիափիդեսի «Բա-  
քոսուէիներից» Ազալիքի հատվածը: Երբ նրան ծափա-  
հարում էին, ներս մտավ Սիլլակեսը ( պարթև սատրապ—  
Հ. Հ. ) և ծունկի գալով թագավորի առջև դահլիճի կենտրոն  
նետեց Կրասոսի գլուխը: Պարթևներն ազմուկով ողջունեցին  
նրան և թագավորի հրաժանով հրավիրեցին բազմել, իսկ  
Յասոնը Պենթևսի գլուխը ( յանուուշակառա թատերական ար-  
սեսուար—Հ. Հ. ) հանձնելով պարերգակներից ( շօթաւան )  
մեկին, վերցրեց Կրասոսի գլուխը և բաքոսյան ներշնչմամբ  
արտասանեց հետեւյալ տողերը.

Փիրօնան բէ ծրած  
Էլուռ Կածոցոն էու մէկնմք  
Րառը առ Թէրան.

Վերադառնալով լեռներից,  
Բերում ենք նոր կտրած բաղեղն իր բնուլ՝  
Բարեհաջող մի որս

Բոլորը հիացած էին, իսկ երբ Յասոնը երգում էր պա-  
րավորների հետ զուգորդվող տողերը. (Ա. Ո՞վ սպանեց:

<sup>12</sup> Գ. Անոնյան, Թատրոնը Հին Հայաստանում, Երևան, 1941, էջ 19—  
20, Գ. Գայն, Աշվ. աշխ., հ. 1, էջ 123—134, Հայ ժողովրդի պատմու-  
թյուն, հ. 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 916—917, Հ. Հովհաննիս-  
յան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978, էջ 25, 27—28:

թ. Իմն է պատիվը), Պոմաքսաթրեսը (Կրասոսին գլխատող զինվորը—Հ. Հ.), որ ներկա էր խնջույքին, հղավ տեղից, խլեց գլուխը, որպես թէ՝ իրեն ավելի, քան դերասանին է վայել արտասանել այդ խոսքերը<sup>13</sup>։

Ներկայացման բնույթն ակնհայտ է, ըստ այս նկարագրության, որ Պլուտարքոսը կարդացել է իրեն հասած ձեռագրերում։ Սա շարունակությունն է Սելևկիայում խաղացված ամրոխային դատական խաղի։ Այնտեղ հետերաների պարերգն է ուղեկցում Կրասոսի ակամա դերակատարին։ Դայոս Պակիիանոսին, այստեղ հույն խորհսմաներն են պտտվում ներկայացման անկենդան մասնակցի՝ Կրասոսի գլխի շուրջը։

Իմանալով, որ Արտաշատի պալատում ելույթ էր ունենում փոքրասիական հունական քաղաքներից եկած թափառող դերասանների - մի խումբ, որ ատտիկյան պարերգական ողբերգությունը պատկանում էր հեռավոր անցյալին, և թատերական հրապարակները՝ օրինատրաները՝ ծառայում էին միմական ներկայացումների ու գլանիատորական խաղերի<sup>14</sup>, տեսնում ենք, որ այստեղ էլ դասական ողբերգակի պիեսի ներկայացումը առիթ է պարտված նվաճողի դատը մեկ անգամ ևս կրկնելու, քանի որ ամեն մի հաղթանակ պետք է պսակվեր շրահանդեսային, թատերական դատում։ Հին հունական դրաման պայմանական ու խորհրդապաշտական դատ էր, և դասական ժամանակների օրինատրայում բացառված էին ոչ միայն արյունալի տեսարանները, այլև սպանովթյունն ու մահվան թեկուզ պայմանական տեսարանները (մահը ենթագրվում էր, որ տեղի է ունենում սքենեում՝ խորանում, և այդ մասին հայտնում էր բանքերը)։ Արտաշատի ներկայացման մեջ տեսնում ենք գլանիատորական խաղերի ինչ-որ մի արձագանք։ Այդ է ասում կյանքի արյունալի փաստը խաղահրապարակի վրա<sup>15</sup>։ Գիտենք, որ 53 թ. հայ-պարթևական դաշինքը նշանա-

<sup>11</sup> *P utarchi, Vitae, Cr eee et lati: e, Parisius 1847, t. 673 - 674.*

<sup>14</sup> Հմտ. Г. Лукомский, Старинные театры, СПб., 1913, с. 270.

մորվել է ոչ միայն «Բարոսուհիների» ներկայացումով, որ Արտաշատի պալատական խնջույքներում լսվել են ( ձևադրատան ) «Հունարեն շատ ( : օ : ա ) ներկայացումների<sup>15</sup>, և Պլուտարքոսն էլ Արտավազդի մասին խոսում է որպես «ողբերգական քերթվածների» ( τραχιφδίας ἐποίε ) Հեղինակի: Այս չեւ սակայն մեր խնդիրը: Պլուտարքոսի միջնորդվածվկայությունից (նա ականատես չէ, այլ ուսումնասիրող պէս տմիչ) երեսում է, որ «Բարոսուհիները» ներկայացվել է բրդիս հաղթահանդես ու դատ՝ դիմավորելու համար Խառնանից եկող ավետարեններին և շարունակելու Սելեկիայում տեղի ունեցած carinina triumphalia-ն:

Հանդեսն ու դատը հին աշխարհում, այս դեպքում հունահոմեական և առաջավորասիրական միջավայրում, սպասում էր ամեն մի հաղթողի ու հաղթվողի Եվ ահա, դրամայի երրորդ գործողությունը տեղի է ունենում տասնինը տարի հետո՝ 34 թվականի աշնան՝ Ալեքսանդրիայում: Այս անգամ արգեն հաղթահանդեսի շքերթի մեջ քայլում է շրջաված Արտավազդը:

Անտոնիոսի արեւելյան արշավանքի (35 թ.) բարձրակետը Հայաստան մտնելն էր և Արտավազդի գերեվարումը: Խարեւոթյամբ պատուհանված, կարծես իսկապես քաջքերից կալնված («կալցին զքեզ քաջը, տարցին...») Արտավազդը, որպես թանկ մի ավար, Անտոնիոսի հետ Հայաստանի ամրոցից ամրոց ու քաղաքից քաղաք անցնելուց հետո 34 թ. տարվում է Ալեքսանդրիայի հրապարակ՝ պարտվողի «գերը» ներկայացնելու կամ տանջանքների ենթարկվելու հանդիսավոր, թատերացին պայմաններում: Անտոնիոսը, ինչպես Դիոն

15 Հմմտ. Զ. Հովհաննիսյան, Թատրոն. Հին ու նոր արժեքներ, Երևան, 1986, էջ 9:

16 Պլուտարք, նշվ. աշխա., Հ. 2, էջ 672: Պլուտարքոսի օգտագործածքանից թերեւ պետք է կռահել, որ Հույն դերասանները Արտաշատ էին բերել ողբերգություններ ներկայացնելու հին ատտիկյան եղանակով Ըստարդ եղանակի, ողբերգությունը նախատեսվում էր ոչ այնքան դիտելու, որքան լսելու համար: Դա համապատասխանում է Արիստոտելի «Պենտիկայի» հետեւալ դրութիւն: «մեացած տարբերից հինգերորդը երաժշտությունը (բելութ) կազմում է ամենազլիսավորը» (Արիստոտել, նշվ. աշխա., էջ 653):

Աւասիոսն է պատմում, «քաղաք մտավ մարտակառքի վրա. և բացի այդ ամենից, որ շնորհեց Կլեոպատրային, նրան քերեց ընտանյոթ հանդիրձ Արմենին, որը ոսկե կապանք-ների մեջ էր: Խոկ (Կլեոպատրան) նստած էր բազմության մեջտեղ, արծաթապատ բեմում, ոսկեզօծ գահավորակի վրա: Սակայն բարբարոսները (Հայերը—Հ. Հ.) ոչ աղերսեցին նրան, ոչ խոկ երկրպագեցին, թեակետ նրանց շատ էին ստի-պում և շատ էին հուսագրում ազտություն խոստանալով. ու որովհետև նրան (Կլեոպատրային—Հ. Հ.) իր անունով կոչեցին, նրանք վեհամիտ մարդկանց համբավ շահեցին, բայց և նույն այդ պատճառով ենթարկվեցին խիստ շարշա-րանքների»<sup>17</sup>:

Դիոն Կատոսը նկարագրում է խոկակես հանդիսավոր ու թատերային մի դատ, ուր պարտվածն ու դատվողը ներ-կայանում է ոչ իրեն պարտազրված «զերով»: Թվում է, ստեղծված է նույնիսկ դրամատիկական իրավիճակի պատ-կեր, որ հարծես նման է զոհաբերության, հանդիսավոր պա-տարագի: Ուշագրություն է գրավում անգամ տեսաշրանա-յին կոնտրաստը. դատապարտվողը կրում է ոսկե շղթա-ներ, որոնք, թվում է, ընդգծում են ստորացվողի բարձրու-թյունը:

Մեր պատմության մեջ Արտավազդի ձեռքերը կաշ-կանգող ոսկե շղթան ստացել է շքանշանի իմաստ ու ար-ժեք, քանզի այս ողբերգության հերոսը հանդիսավայր է ներկայացել հաղթողի կեցվածքով՝ հակառակ իմաստ է տվել իր վիճակին: Բայց Անտոնիոսի և Կլեոպատրայի հա-մար ունի շոնչան միայն պատվի նշան չեր: Հին հույների ու հռոմեացիների համար սիդարը (երկաթը), ինչպես արդեն գիտենք, շարիթի ու գժրախտության խորհրդանիշ էր: Եր-կաթը չեր կարելի սրբավայր տանել, տաճար մտցնել, կուռ-քերին մոտեցնել: Արբավայրում գտնվողը շպետք է երկաթ ունենար իր հանդերձանքի վրա<sup>18</sup>: Արտավազդի համար երկաթը թերես սարսափելի չեր լինելու. հեթանոս հայերն

17 Հըն հունական աղբյուրներ, Ա, Հովհեալոս Փլավիոս, Դիոն Կատոս, Թարգմ., առաջարանը և ժանովագր. Ս. Կրկուալարյանի, Երևան, 1976, էջ 188:

18 Հայեր. Ալեք. Երես. Երես. Երես. Երես. Էջ 255:

ունեին. Երկաթի պաշտամունք, որ կապված էր չըի ու կայծակի աստվածների հետ: Երկաթը համարվում էր դիվահալած ուժ և միաժամանակ ամպրոպից պաշտպանվելու միջոց<sup>20</sup>: Սա շանթարգելն է՝ պաշտամունքի ուստիլիտար գրսնորումը: Արտավազդը հելենասեր էր, այսինքն՝ կրթությամբ հույն, և, ոժվար է ասել, Երկաթի նկատմամբ որևէ նախապաշարմունք ուներ, թե ոչ: Ժողովրդական հավատալիքներին նա կարող էր անձանոթ լինել: Համենայն դեպս, Երկաթի կամ ոսկե շղթացով նրա վիճակը չէր փոխվում: Աբավազդին բերել էին զոհարան, կեղծ աստվածության ոտքերի մոտ, և առարարողության մեջ կլեռպատրան, որ իսկապես իրեն համարում էր աստվածուհի, հանդես էր գալիս թեոկրատիայի անունից, Երկրապատկերի էր պահանջում, զատի հրապարակին տալով սրբավայրի և արարողությանը՝ միստերիայի իմաստ: Արտավազդ Արմենի համար այդ «աստվածուհին» կարող էր ամենաշատը մի հետերայի հմայք ունենալ, բայց նա կանգնած էր այդ «աստվածուհու» առջև ոչ որպես ֆերեռու (Երկաթի, հանդուզն, անհողողող)<sup>21</sup>, այլ զոհ և իրավունք չուներ Երկաթ կրելու, շղթա լիներ այդ, թե սուր. չէր կարելի կանգնել աստվածության առջև ոչ Երկաթապատ, ոչ Երկաթակապաթանդի Երկաթ շղթայի զնոցոցն իսկ, եթե նախապաշարմանը նայենք, շարագուշակ էր հոռմեացի Անտոնիոսի համար Ռուբեն, ոսկե շղթացով ոչ թե զոհին էր պաշտոն մատուցվում, այլ կուռքին:

Դիոն Կասիոսի «Պատմությամբ» վկայված պատկերը, բայց արտաքին տրամաբանության, հնագույն դատական խաղի շքեղացված մի կրկնություն է: Պատմիչի նկարագրության մեջ չի տրված, բայց ենթատեքստում ընթերցվում է և այն Երկխոսությունը, որ տեղի է ունեցել այդ ներկայացման կոլիզիայում (collisio-հանդիպում)՝<sup>22</sup> հանդեսի Երկու գլխավոր գործող անձանց՝ շղթացվածի ու «աստվածուհու» և carmina triumphalia կազմող «պարերգակ» ամբոխից միջև:

20 Մ. Արելյան, Հ. Է., էջ 74—76.

21 Ի. Ձեօրեցկան, Լատինско-ռուսский словарь, М., 1976, с. 423.

22 Խոյն տեղում, էջ 204:

Հայտնի է, որ Անտոնիոսի տրիումֆալիայից հետո շըղթայվածը տարվել է բանտ, ուր Հանվել են նրա ոսկե կապանքները և փոխարինվել երկաթով։ Արտավազդ Արմենք դարձել է սիլեռու և այդ վիճակում, գուցե և այդ անոնով ապրել է չորս տարի ու մահապատճի ենթարկվել ժողովրդական հիշողությունը (գուցե և ինչ-որ մի գրավոր աղբյուր)։ Ապահպանել է շղթայված արքայի գաղափարը։ Իսկ «վեհամիտ մարդու» կեցվածքը և տնարգանքի խոսքը, որով նա վիրավորել է իրեն պատուհասող «շարքի»՝ Անտոնիոսի աստվածությանը, Արտավազդի կյանքի այս գրավոր լուսավորել է առասպելավիպական, նաև Հակասական գույներով։ Նայած ինչ միջակայրում է Հորինվել, ինչ տարաբեկումներ է ունեցել ավանդությունը։ Զգիտենք՝ Արտավազդի գեմման (Հմայական քարը) է իրեն ձգել երկաթածին (սիլարեյոս)<sup>23</sup> Շիգարի արխանտիպը, թե՛ նրա շղթայվածության գաղափարն ու սիլեռու անունն են վերահմաստավորել իր կիսաառասպելական նախորդի գեմքը։ Համենայն գեպս, Տիգրանի բանաստեղծ ու մատենագիր որդու կերպարը պատել է Հնագույն մի նախապաշարումի կարծր ժանգով։ Մենք ականատես եղանք նրա պատմականորեն վկայված դատին, որը և ծես էր, և խաղ, և զոհաբերություն, և պատիմ կրկնում էր հեթանոսական միստերիաների ծիսային պայմանաձեր։ Թվում է, ոչ միայն այս դատը, այլև Արտավազդ քրմական անունը կատարել են իրենց գերբը շղթայվածի առասպելի հոլովման մէջ։ Գերենվարման և դատի իրական պատմությունը ժողովրդական ավանդության մէջ չէր կարող ամրակայիվել ուրիշ կերպ։ պետք է ենթարկվեր ծիսական ու միթոլոգիական պայմանաձեր։

Արտավազդ Բ-ի վախճանը նման է քրիստոնեական նահատակության։ Եթե դա պատահած լիներ ներոնի ժամանակներում, շղթայվածը կմտներ Հավատի Համար զոհված հերոսների շարքը, և մենք կունենայինք մի «սուրբ Արտավազդ»։ Նրա պարանոցին կփաթաթվեր քրիստոնեական վարք-վկայարանությունների պայմանաձեր։ Շղթայվածի «առասպել տօնի» փոխարինումը Հովհաննես Մկրտչի

<sup>23</sup> Տե՛ս Դревнегреческо-русский словарь, т. 2, с. 1472.

տոնով պատահականություն չէ։ Մարտիրոսացող վկաների դատաստանի հանդիսավայրը ստեղծվում էր հին միստերիաների օրինակով։ Հռոմեական թատրոնները դառնում էին դատաստանի հանդիսավայրեր, և անլուր շարշարանքների պատկերը՝ misterium magnum—«խորհուրդ մեծ»։ Ավետարանի տված մեկ օրինակը՝ Թրիստոսի դատն ու խաչելությունը կրկնում էին բոլոր վկաները որպես ցույց, օրինակ և տեսիլ «ի հանդիսի շարշարանաց», «ի թէատրոն անդր»։

## ԱՅՅԱՆ-ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ԵՎ MISTERIUM MAGNUM

— Մի լար ի վերայ իմ, զի առանց հանդիսի և շարշարանաց ոչ արդարանայ առաջին Աստուծոյ ամենայն մարդ...<sup>24</sup>

Այս խոսքերը կարդում ենք հայ վարքագրության դասական օրինակից՝ Շուշանիկի վկայարանությունից։ Մարտիրոսացող հերոսուհին ոչ պատահարար արտասանում է հանդիս բառը, որ հայերենում ունի մի քանի համախոս ու համանշանակ իմաստներ՝ ատեան, դատ, ցոյց, տեսարան, ասպարեզ, նախատակութիւն, տօնախմբութիւն, հրապարակ, նառ պատմական և նարտասանական<sup>25</sup>։

Արտաքին տպագրությամբ, այս իմաստներում կարծես նույնիսկ հակասություն կա. օրինակ՝ դատ և տօնախմբութիւն։ Իրավիճակն ավելի տարօրինակ է երեսում, երբ նոր հայկապյան բառարանում կարդում ենք հանդէս բառի հունարեն ու լատիներեն համարժեները։ Յէր, spes-taculություն։ Համանշանակությունը միայն պատմական կոնտեքստում է գիտակցվում։ Բայտ Շուշանիկի վկայարանության, հանդէսը ատյան է, դատ, փորձություն՝ մարդկաբին

<sup>24</sup> «Եղուկերք հայկականք», թ., Վենետիկ, 1859, էջ 52։

<sup>25</sup> Նոր բառզիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 42—43։

<sup>26</sup> Նույն տեղում։

արժեքի ներկայացումը՝ աստծո պռաջ։ Իսկ դրա օրինակը՝ տալիս է ինքը՝ Աստծո որդին։

Այսպես, Հիսուսը կանգնած է Պիղատոսի առջև որպես հանցագարտ։ Պիղատոսը գիտե, որ պետք է պատժել այս մարդուն, բայց չգիտե նրա հանցանքը։

Այս մարդու մասին ի՞նչ ամբաստանություն եք ներկայացնում։ Նրան պատասխանեցին և ասացին.

Եթե այս մարդը շարագործ չէինք, ապա նրան քո ձեռքը չէինք մասնել։

Պիղատոսը նրանց ասաց։

Դուք վերըք նրան և ձեր օրէնքի համաձայն նրան զատեցիք։ Հրեաները նրան ասացին։

Մեզ համար որևէ մեկն սպանել օրինավոր չէ <...>։

Պիղատոսը դարձյալ ապաբանիք մտավ, կանչեց Հիսուսին և ասաց նրան։

Թո՞ւ ես հրեաների թագավոր։

Հիսուսը պատասխանեց։

Դուք քեզանից ես այդ ասում, թե ուրիշներ իմ մասին քեզ ասացին։ Պիղատոսը պատասխանեց։

Մի՞թե ես էլ հրեա ևմ, քո ազգը և քահանայափետերը մատնեցին քեզ իմ ձեռքը, զու ի՞նչ ես արել։

Հիսուսը պատասխանեց։

Իմ թագավորությունն այս աշխարհից չէ. Եթե իմ թագավորությունն այս աշխարհից լիներ, իմ սպասավորները կմարտնչեին արդեն, որպեսզի հրեաների ձեռքը չմատնվեմ. Բայց, արդ, իմ թագավորությունն այսուղից չէ։

Պիղատոսը նրան ասաց։

Թե որ այդպես է, ուրիմն զու թագավո՞ր ես։

Հիսուս նրան պատասխանեց։

Դու ես ասում, որ թագավոր եմ, բայց ես դրա համար իսկ ծննիք ևմ և զրա համար իսկ էկել ևմ աշխարհ, որպեսզի ճշմարտությունն համար վկայեմ։ Ամենայն մարդ, որ ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է։

Պիղատոսը նրան ասաց։

Ի՞նչ է ճշմարտությունը<sup>27</sup>։

Լոռություն։ Սա ողբերգական իրազրության բարձրակետն է։ Սոկրատի ժամանակներից կրկնվող այս հարցը դրված է դրամատիկորեն բացառիկ մի կոնտեքստում։

27 Հովհ., ԺԸ, 30—38 (հատվածը բերվում է քառ նոր կտակարանի արհելագայքին նոր թարգմանության. Մայր աթոռ ս. Էդիսձին, 1981, էջ 307)։

Այն ժամանակ Պիդատոսը հրամայեց Հիսուսին զանակոծել: Իսկ զին-պողները փշե պսակ շինելով՝ դրեցին նրա զլիխն ու նրան ծիրանի զգնուածացքին: Եվ զալիս էին նրա մոտ ու ասում՝ ողջուն հրեաների արքա: Եվ նրան ապտակում էին: Պիդատոսը դարձյալ դուրս ելավ ու ասաց նրանց:

— Ահա նրան դուրս, ձեզ մոտ եմ բերում, որպեսզի իմանաք, թե ևս նրա մեջ որին հանցանք չեմ գտնում:

Հիսուս դուրս ելավ. և փշե պսակ ուներ և ծիրանի զգնուու եվ [Պիդատոսը] նրանց ասաց.

— Ահա մարդը ձեզ:

Եվ քահանայապետերն ու սպասավորները նրան տեսան, աղաղակ ժարձրացրին և ասացին:

— Եալ հանիր, խալը հանիր նրան:

Պիդատոսը նրանց ասաց.

— Դուք առնեք նրան ձեր մեջ և ինքներու խաչը հանեցեք, քանի որ ձս դրա մեջ որին հանցանք չեմ գտնում:

Հրեաները նրան պատասխանեցին:

— Մենք օրինք ունենք, բայց մեր օրինքի պէտք է նա մնանի, որովհետեւ իրեն Աստծո որդի դարձրեց<sup>28</sup>:

Իրագրությունը տեսանելի դարձնելու նպատակով տրամախոսությունը ներկայացրեցինք տողատված ու մանրամասն: Սոսկ Հիսուսի դատը շէ այս, այլ իրագրության այն կերպը, որ տեքստացին բազմազան տարրերակներով կրկնվում է վարք-վկայաբանություններում: Սա իսկապես հանդիս է, բառի կատարելապես հին ու միջնադարյան իմաստով: Իրագրությունն իրագրություն, և դրամատիզմը դրամատիզմ: Իսկ կա՞ արդյոք այստեղ հին խորհրդապատշտական դրամայի հետք, կամ կարիք կա՞ դրամատիկական ձևով իմաստավորել Հովհաննու ավետարանի այս երկու հատվածները: Դրա առիթը տալիս է կիլիկյան «Ութ մանրանկարիչների ավետարանը» (1320 թ., ձեռ. 7651): Մատքեսուի ավետարանի համապատասխան հատվածում գործածված մի բառ՝ կատակելին առիթ է տվել մանրանկարչին Հորինելու մի պատեհը, որը կամ ունի հիմք ունի նկարչի ապրած միջավայրում կամ վերաբռնագրում է մի միջնորդված տեղեկություն: Երկու դեպքերն էլ մեր վերոհիշյալ դիտողության օգտին են: Քրիստոսի ժանակումը Մատթեոսի ավետարա-

28 Հովհաննես, ԺԹ, 1—7 (հույն տեղը, էջ 308):

նում նկարագրվում է այսպես. «...մերկացին զնա եւ արկին զնովաւ քղամիդ կարմիր. և բոլորեալ պսակ ի փշոց՝ երդին ի գոտիս նորա. եւ թթեալ ի նա՝ առնուին զեղեգն եւ ծհծէին զգուիս նորա. ի ծունը իշեալ առաջինն նորա՝ կատակէին և ասէին. «Ողջ եր, թագաւոր Հրեից»<sup>29</sup>:

Կատակէին բառն ինքնին գրեթե ոչինչ չի հուշում մեզ: Բայց նկարին այս հասկացությունն առարկայացրել է միջնադարյան կատակների (կոմեղիանտների) խաղային տեսարարությունը (նկ. 7): Կոմպոզիցիայի կենտրոնում Քրիստոսըն է կարմիր քղամիդով, նրա ձախ կողմում կատակներից մեկը ծնծղա է զարկում, մյուսը փող է փշում, երրորդը, որ կիսամերկ կին է ակնարկում, «կամուրջ» է կազմել «ի շորք անկեալ յոտս», մեջքի վրա<sup>30</sup>: Այս պատկերն ակնհայտորեն ներկայացնում է միջնադարյան հրապարակացին թատրոնի մի դրվագ, բայց Քրիստոսի կերպարանքը, թվում է, առնչություն չպետք է ունենա գրա հետ: Չունենք որևէ վկայություն, թե կատակները փողոցում, հրապարակում կամ այլուր Քրիստոսին ներկայացրել են: Բայց հայտնի է XIII դարի ֆրանսիաց՝ խաչակիր մի ասպետի՝ Ժուանվիլի տեղեկությունը, թե Երուսաղեմ ուխտ դնացող հայ կատակները (որոնց հանդիպել է պատահաբար) մեջքի վրա դառնալուց առաջ խաչակներում էին: Ժուանվիլի կարծիքով այդ արվել է վտանգից ապահով լինելու համար<sup>31</sup>: Թվում է, այլ պատճառ պետք է տեսնել կրկնացին խաղի ժամանակ խաչակներու փաստի մեջ: Այս կատակները Երուսաղեմ են դնացել մղղով (արաբ. մոկղասի) դառնալու, իսկ խաչակըն-

29 Մատթ., իէ, 28—30 («Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց», Կ. Պոլիս, 1895, էջ 193):

30 Պատկերը ձեռագրի էջից կտրված վիճակով հրապարակված է է. Պետրոսյանի «Թատերական գծերը հայ միջնադարյան մանրանկարներում» աշխատությունում (Երևան, 1975, աղ. 4, նկ. 4), բայց իմաստը չի ըմբռունված: Հրապարակողը համարել է այդ ավետարանի «Դիվահամարի բժշկումը» զրովազի թատերական վերաբարպարթյունը Պատկերը, ձեռագրի տեքստային հատվածի հետ միասին, նիշտ է ներկայացված ու բացատրված ։ Ղազարյանի «Սյունեհատային մանրանկարը Կիլիկիայում» աշխատառթյան մեջ (Երևան, 1984, էջ 27—28, նկ. 29):

31 «Թագմանին», 1862, էջ 16: Նաև՝ Հ. Հովհաննիսյան, հ2վ. աշխ., էջ 243—244:

քեւը թողության խնդրանք է իրնոց և նախնյաց մեղքերի համար: Այս ակնարկը չկա՞ արդյոք նարեկացու հայտնի խոսքերում:

Մինչ զի առ թատերս տեսարանաց

Եւ առ կոյտս խառնիճազանչ բազմութեանց

Եւ կամ առ կաբաւս կայթից անախորժականաց կամաց հզարիդ՝  
Ունս մոռացեալ<sup>32</sup>:

Աստծո կամ Աստծո որդու պատկերը իսկառիս կոնկ-  
րետ առնչություն չի կարող ունենալ միջնադարյան հրա-  
պարակային թատրոնի հետ: Մանրանկարիչը Մատթեոսի  
ավետարանի «Զինվորների ծաղրը և նախատինքը» դրվագը  
կարծես առարկայորեն վերարտադրելու նապատակով մի-  
մյանց կողքի է դրել ըստ էության անհամատեղելի ու հա-  
կոտնյա գաղափարներ՝ վեհը և ստորը՝ «Քրիստոս և Առե-  
կին»<sup>33</sup>: Այս անտինոմիան, ինչպես տեսանք, կա նաև  
ավետարանում: «Հիսուսը Պիդատոսի առաջ»՝ վեհ ու ող-  
բերգական, հատկապես, երբ լուսիթյամբ է պատասխանում  
կուսակալի հարցերին («Ի՞նչ է ճշմարտությունը»), և նրան  
ծաղրող ամբոխը՝ գոհհիկ, աղմկոտ («...փրկիր քեզ, եթե  
Աստծո որդի ես, իշիր այդ խաչից»—Մատթ., իլ., 40), ապ-  
տակող ու թքող, Քրիստոնյա նկարիչը չէր կարող ընտրել  
գոհհիկությունը պատկերող այլ նշան կամ այլ համեմա-  
տական, եթե ոչ փողոցային կոմեդիաների պատկերը:  
«Կատակեին բառը բավական էր,— զրում է Վ. Ղաղարյա-  
նը,— որպեսզի բորբոքվեր նկարչի երկակույթյունը»<sup>34</sup>:

Այսպիսով, առարկայական աշխարհը կարծես թա-  
փանցում է ավետարանի էջերը: Քրիստոսի ծանակման պատ-  
կերը «Ութ մանրանկարիչների ավետարանում» միանդա-  
մայն համախոս է միջնադարյան հրապարակային թատ-  
րոնի մինչ մինչ այժմ ունեցած պատկերացումներին: Պատ-  
կերը կոնկրետ ու առարկայական է: Բայց ավետարանի այս

32 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխ. Պ. Խաչատրյա-  
նի և Ա. Ղաղինյանի, Երևան, 1985, էջ 371 (լին. 3):

33 Այսպես է վերնագրված Գ. Կրիժեցիկու աշխատությունը (Լենինգրադ, 1924), որ վերաբերում է միջնադարյան թատրոնի և եկեղեցու հակամար-  
տության հարցերին:

34 Վ. Ղաղարյան, նշվ. աշխ., էջ 28:

դրվագի նման ընթերցումը դժվար թե կարելի լինի բացատրել միայն նկարչի երևակայությամբ։ Կատակեմ բառը թիւ է կատակախաղի պատկեր հարուցանելու համար։ Նկարիչն, ամենայն հավանականությամբ, կողմնորոշվել է նաև Հին կատակարանի մի խոսքով. «Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց, ծաղր և այսն կատականաց» (Սաղ., ԽԴ, 14): Նկարչին թերեւս գոյանակերպ բառ էր պետք առարկայական պատկերի հանգիւու համար, և այդ բառը կար բրիստոննեության պաշտոնական գրքում։ Մյուս կողմից այս պատկերը ննթագրում է պատմական ուսալ հիմք, և այդ հիմքը պետք է փնտրել ոչ անպայման նկարչի ապրած միջավայրում կամ ժամանակում, թեպես կատակների ներկայացման այս տեսարանը կարող է ժամանակակից լինել։ Իհարկե զժվար է վստահել միայն արտաքին տպավորություններին և իրականության անմիջական արտացոլում փնտրել միջնադարյան մանրանկարներում, որտեղ հաճախի ի մի են լուծված կյանքից ու գրքից եկող տպավորությունները, կոնկրետ առարկաներն ու անառարկա գաղափարները, անմիջական ու միջնորդված պատկերները<sup>35</sup>:

Ո՞րն է, ուրեմն, ավետարանի վերոհիշյալ հատվածի գեղանկարչական նման ընթերցման պատմական հիմքը։ Պատասխանելով այս հարցին, գուցե և պարզենք տյն առեղծվածը, թե ինչու և ինչպիս աշխարհիկ թատերախաղի ու բնմատարածքի գաղափարները թափանցել են ալետարանների էջերը, թատրոն և կոմեդիանատ ակնարկող տարրեր պատկերներով։

Եվրոպական միջնադարյան թատրոնի ուսումնասիրություններում ակնարկներ կան (ոչ միշտ փաստարկված կամ բացատրված), որ հնում և վաղ միջնադարում թափառող դերասանները իրենց ներկայացումներում ծաղրել են քրիստոնեական ծեսները<sup>36</sup>։ Հայտնի է նաև, որ քրիստոնեության անլեզակ շրջանում թատերահրապարակները վերածվել են

35 Հ. Հովհաննիսյան, Աշխ., էջ 81.

36 С. Ֆակուլտատ, История западноевропейского театра, ч. 1. Խ., 1936, с. 127—128.

պատժավայրերի, ուր ամենաղաժան ստորացումների ու տանջանքների են Ենթարկվել քրիստոնյաները: Ավելին, թատրոններում ցուցադրվել են իրական մահապատիճներ ու խաչելություններ<sup>37</sup>: Եթե լավ թերթենք Հայսմավուրբն ու վարք-վկայաբանությունները, կգտնենք Հանդիսավոր, թատրոնական մահապատիճների մեր խնդրի տեսակետից բնութագրական օրինակներ: Եվ իսկապես, Հայսմավուրբը տալիս է սպասածից ավելի հետաքրքիր և պերճախոս փաստեր: Գտնում ենք երկու վկայաբանություն, որոնց հերոսները Հռոմեական շրջանի կումեդիանտներ են և քրիստոնեական օրացույցում Հանդես են գալիս որպես սրբեր: Դրանցից մեկը սուրբ Պորֆիյուրոսն է՝ «յազգեն ասիանու ծնեալ և սնեալ յեփեսոս քաղաքի, և էր ճարտար գուսան ի դիւական թատերս»<sup>38</sup>: Մյուսը սուրբ Արդաղիոնն է, ըստ Հայսմավուրբի վկայաբանության, Մաքսիմիանոս կայսեր (286—305) ժամանակ նահատակված Հռոմեացի կատակերգակ գերասան: Այս վկայաբանությունները կամ զաղափարականորեն ծրագրված զրուցներ են՝ մեղագործների դարձի օրինակով ընթերցողին կամ ունկնդրին քրիստոնեական զաստիաբակություն ուալու, կամ՝ պատմական Հիշողություններ իսկապես քրիստոնեական նահատակության ենթարկված Հռոմանական միմերի մասին: Արդաղիոնի նահատակության պատմությունը, եթե իսկապես ավանդված է Մաքսիմիանոս կայսեր ժամանակներից, պատմականորեն ճիշտ տեղում է: Իրական լինեն այս զրուցները, թե Հորինված, միևնույն է: Մեզ հետաքրքրողը Հեթանոս կոմեդիանտի և քրիստոնեության Հիմնական զրքի Հարաբերությունն է և այն, թե Քրիստոսի զատը ինչ առնչություն ունի կատակների, թատրոնի և մանավանդ զրամացի Հնագույն ձևեր հետ:

Կարդանք «Վկայաբանութիւն Արդալոնի կատակողին» Հայսմավուրբային զրուցը:

«Մարտիրոսն Քրիստոսի Արդալոն կատակողն յիմար առաջի Մաքսիմիանոսի ամբարիշտ արքային և մեծամե-

<sup>37</sup> Г. Лукомский, Старинные театры, с. 270.

<sup>38</sup> Մատենադարան, ձեռ. 4883, էջ 140 ա:

ծաց նորին: Եւ էր յոյժ սիրելի ամենեցուն՝ կատակելովն. զի ի մեծ խրախութեան պահէր զնոսա: Տեսանէր զսուրբ վկայսն ի շարչարանսն, եւ ի միտ առնոյր զպատասխանիս նոցաց<sup>39</sup>:

Արդազիոնը, ինչպես նկատում ենք, այն կատակերգականիրից է, որոնք ծաղրում էին աներկյուզ ու հնագանդ խաչ քարձրացող քրիստոնյաներին: Այս ծաղրը, ինչպես երկում է Հայութակուրբի վկայարանությունից, հռոմեական միմերի թեմաներից մեկն էր: Կամավոր մահվան գնացող քրիստոնյաները հեթանոսների աշխում անհեթեթ ու ծիծաղելի մարդկեր էին, և ազնվականներն էլ զվարճանում էին տեսարանամոլ ամբոխի հետ իրական ու խաղային հանդեսներում: Ահա ինչ որ մի իշխան պատվիրում է կատակերգակին ներկայացնել քրիստոնյայի շարչարանքի տեսարան:

«Եւ ի միում աւուր,— կարգում ենք զրույցում,— նստաւ իշխանն ի թէատրոնն և բազում ամբոխ ընդ նմա ի հրապարակին: Եւ մտեալ Արդարուն ի մեջ նոցա. նստոյց զմի ընկերաց իւրոց յաթոռն որպէս դատաւոր. Եւ ինքն եղեւ որպէս քրիստոնեայց: Եւ այնպէս ծաղր առնէին և այլպանէին զքրիստոնյայսն: Եւ ասէր դատաւորն կատակելով.

— Զո՞վ պաշտեմ:

Ասաց Արդարն.

— Հմբառու Քրիստոս զորդին աստուծոյ:

Ասաց դատաւորն.

— Ուրացիր զՔրիստոս և զոհեա կռոց մերոց, և բազում բարեաց հանդիպիսաւ:

Ասաց Արդարուն:

— Ես բրիւտոնեաւ եմ և կռոց ոչ զոհեմ, զի զեք են:

Եւ յօգուտ ժամս ծիծաղելով վիճէին ընդ միմեանու Մերկացուցին զնա. և պրտով ծիծէին թեթև: Կախեցին զիփայտէ և որպէս թէ երկաթի ճանկոր քերէին զմարմինն. և հրապարակն ամեն ծիծաղէին խրախանօքաց<sup>40</sup>:

Տեղի է ունենում կատակային-պայմանական դատ և պեղծ պատիժ: Արդազիոնը խաղում է պատժապարտ քրիստոնյայի դեր և խեղկատակային պատկերի է վերածում իր

39 Գիրք որ կոչի Այսմաւուրք, 4. Պոլիս, 1730, էջ ԵթժԴ:

40 Նույն աեղում, էջ ԵթժԴ:

տեսած սուրբ վկաների շարչարանքները: Նրան ծեծում են թեթև և քերում են մարմինը «որպէս թէ»: Բայց կրոնական արարողության մեջ ամեն մի «որպէս թէ»<sup>41</sup>, այն է՝ պայմանական կամ խորհրդանշային գործողություն ունի իրականության արժեք կամ կատարում է իրականի փունկցիա<sup>42</sup>: Քրիստոնեական պատարագում, օրինակ, չկա ոչ մի առարկայական վիճակ, ենթադրվող աշխարհի ոչ մի տեսանելի պատկեր, ամեն ինչ այստեղ վերածված է պայմանական նշանների, առարկայացված է այլարանական սիմվոլներով (պատարագիչի ոսկեզարդ և աղամանզակութ թագը կատարում է փշե պսակի գերը), բայց միևնույն է՝ այստեղ տեղի է ունենում զոհաբերության խորհուրդը՝ զոհվում է Քրիստոս<sup>43</sup>, և ո՞ր ճշմարիտ քրիստոնյան չի հավատում դրան:

Եվ ահա Քրիստոսի շարչարանքների ու զոհաբերության խորհուրդը ոչ այլարանորեն, այլ առարկայորեն ներկայացված է Արդաղիոնի վկայարանության մեջ: Հասկանալի և տրամադրանական է: Զրուցը վերաբերում է քրիստոնեության անլեզակ շրջանին, երբ չկար ոչ եկեղեցական կազմակերպություն, ոչ պատարագային կարգ: Զրուցը մշակողն այդ գիտե և ներկայացնում է զոհաբերության իրական պատկերը Գիտենք, որ Հայումավուրբը Հեղեղված է նման պատկերներով, և ամեն մի սուրբ վկա և մարտիրոս կրկնում է Աստծո որդու ճակատագիրը: Բայց Արդաղիոնն է, որ դա վերարտադրում է թատրոնի պրոսքնիումի առջև: Եվ կատակերգակի խաղը դառնում է պատարագ: Աստված տեսնում է Քրիստոսի շարչարանքները պատկերը (իրական է այդ, թե խաղ, նշանակություն չունի) և լույս է իշեցնում, ասել է, թե սուրբ հոգուն ուղարկում է երկիր: Խեղկատակի հոգում ծնվում է Քրիստոս:

41 Հետաքրքիր և բնութագրական մի զուգադիպություն: Կ. Ստանիսլավսկու թատերական տերմինաբանության մեջ կա ՀԸԸԼԻ ԾԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, որը կեն Քալանթարն առաջարկել է թարգմանել իցէ թէ:

42 Վաղ միջնադարյան թատրոնամերժ ճառիրում տարբերություն չի դրվում խաղի և իրականության մեջ, ամեն մի տեսանելի արարք համարվում է իրական կամ եղծված իրականություն:

43 Հմմտ. Հ. Մարտինոս Կոլսեմ, Մեկնություն ս. Պատարագի, Բարգմ. Հ. Քերովիք Հովնանյանի, Պլովդիվ, 1934, էջ 27—28:

ո՛Սագեաց լոյս մարդասիրութեան ի սիրտս նորա: Եւ  
ասաց ժողովրդեանն.

— Հոհե՞ւ:

Եւ նորա լուսցին՝ կարծելով թէ նոր խաղ ինչ կամի առնել: Եւ նա ասայ  
րնդ իշխանն ու մեծաւ բարքառով.

— Գիտասչիք ամենէքնամ՝ որ ես ճշմարիտ քրիստոնեայ եղէ: Այսու-  
հետեւ ոչ խարանօք և կամ ընդ խաղս խօսիմ ընդ ձեզ, զի շնորհըն քրիս-  
տոսի ծագեաց ի սրտի իմում: Այսուհետեւ ճշմարիտ անարդեմ և թքանեմ  
ի կուռան ձեր և այսպանմ զերկրպագուս և զպաշտոնեայս. զի ստորգ դի-  
ւապաշտ եր գուրե:

Եւ երբեւալ ի տաճար կոսցին անպատութիւն արար նոցա և նախա-  
տանօք այսպանեաց բամենն կուռան մի բար միոցէ: Եւ զարձեալ եկն ի  
հրապարակն և ասաց նոցա.

— Արդ զնացնալ պատուցի զշառաւածան ձեր՝ այլ զինչ հրամա-  
ցէք զի արարից ձեզ:

Եւ ելեալ ոմն ի քրմացն պատմեաց իշխանին՝ և հրա-  
պարակին զոր արար Արդալոն: Եւ նորա յոյժ տրտմեցան՝  
բայց կոչեցին զերգալոն և ողոքանօք խոսեցան ընդ նմա: Եւ  
բազում պարգևս խոստացան ի բաց կալ ի քրիստոսէ: Եւ նա  
ամենենին ոչ հաւանեցաւ. այլ դարձաւ յարենես և աղօթեաց  
առ աստուած»<sup>44</sup>:

Խաղային տարերի մեջ երեսակայորեն կրելով սուրբ  
վկաների շարչարանքները, Արդալոն կատակերգակը դառ-  
նում է իսկապես քրիստոնյա և պատրաստվում իրական  
շարչարանքների: Թերես այստեղ կա հոգեկան վերակա-  
ռուցման պահ, ինչպես նկատում է «Յասմաւուրք» ժողովա-  
ծուների ուսումնասիրողը<sup>45</sup>: Խաղի հոգեբանության տեսա-  
կետից իհարկե արտառոց չէ, որ երբեմն կարող են վերա-  
նալ պայմանականի ու իրականի սահմանները, իրականու-  
թյան փաստը կարող է մտնել բեմ (ինչպես Կրասոսի գլու-  
խը բերվեց խաղահրապարակ), կամ՝ բեմական իրավիճակը  
շարունակիել իրականության մեջ: Արդալոնի խաղում տե-  
ղի է ունենում այս՝ խեղկատակային կեղծիքը վերաճում է  
ողբերգական իրականության. վերարտադրող սուրյեկտը  
նույնանում է վերարտադրության հնթագրելի օբյեկտի հետ, և

44 Պիրք որ կոչի Այսմաւուրք, էջ եթժդ:

45 Մ. Ավդալեզյան, «Յասմաւուրք» ժողովածուները, Երևան, 1982,

խաղը դառնում կյանքի դաժան իրականություն։ Միմոսրդ որ ծիծաղեցնում էր ամբոխին, նույն այդ ամբոխի աշքի առջև խարույկ է բարձրանում որպես նահատակ և սուրբ «Արկին զնա ի բորբոքիալ հուր և այնպէս կատարեցավ յօրինուս»<sup>46</sup>, — կարդում ենք վկայաբանության վերջին տողը։

Զրույցի ձեռագիր տարբերակներից մեկում Արշաղիոնի դարձ ներկայացված է այլ կերպ։ Արդաղիոնն այստեղ ոչ թե թողնում է խաղաճրապարակը, զնում, անարգում կուռչերը և հետ վերադառնում, թե «գնացեալ պատուեցր զշաստուածն ձեր», այլ անսպասելիորեն փոխում է ծաղըր ուսուցւթյունը։ Կարծում ենք, սա ավելի հին տարբերակ էր Թվում է, կատակերգական վերջաբանը հետագայում խրմցագրվել է, և կատակերգակի արարքին տրվել է հերոսական մելնարանություն («դարձաւ յարեւելս և աղօթեաց առատուած»)։ Համաձայն, մեր կարծիքով, հին տարբերակիր Արքադեռնի խաղը վերջում դառնում է տրագիֆարմ՝ ցաւագէն և գոեհկաբան։

«Եւ յորժամ իշուոին ի փայտեն...

— Այսուհետեւ նշարքտ անարդեմ և թքանեմ ի կուռսն ձեր. և այսանեմ շերկրպագուս և զպաշտոնեայս. որ սոոյզ զիսապաշտ եք։ Տեսէք, թէ որպէս պատուեմ զամաստուածն ձեր. — Եւ խոնարհեցուցեաւ զձես իւր յերկիր՝ հկասու հանել ի փորոյն փուրս մեծաձայն և միոյ միոյ ասէր.

— Այս քեզ Ապողոս, այս քեզ Յնիքնուուու:

Եւ որշափ հանէր, բաշխէր կողոն»<sup>47</sup>.

Եկեղեցական ընթերցանության համար նախատեսված գրքում իհարկե շեր կարելիր պահել այս հատվածը, որը, եթե հին չէ (ինչպես ուզում ենք տեսնել), ապա թերեւս արդյունք է բանահյուսական ճանապարհ անցած խմբագրության<sup>48</sup>,

45 Գիրք որ կոչի Այսմաւորք, էջ ԵՃԺԴ:

46 Մատենագրաբան, ձեռ. 1339. Զեռագրի 79 ա-ր էջերից արտագրված հատվածն ինձ ցույց է տվել բանասեր Մայիս Ազգալբեկյանը (1980 թ.):

48 «Առավել հետաքրքրականը, — կարում ենք Մ. Ավալաբեգյանի նրանքամասությունում, — Հայսմավուրբներում ընթերցմունքային տարբերակներն են» Այս տարբերակները ստեղծված են կամ մեկը մյուսի աղջեցությամբ՝ թերեւս գրական ճանապարհով, բայց մնած տոկում են կազմում նաև բանահյուսական ճանապարհ անցած խմբագրությունները» (էջ 131):

կամ դրսնորում է, այսպիս կոչվող, ժողովրդական կրոնա-սիրության<sup>49</sup>:

Մեզ ամենից ավելի հետաքրքրում է այս հատվածում՝ արտացոլված (թեկուզ անուղղակի ճանապարհով) պատմական ճշմարտությունը: Այստեղ եթե ոչ արտացոլում, տպանատարակուսելիորեն մի միջնորդված հիշողություն կա հոռմեական կայսերական շրջանի թատրոնից. Երևում է դրամայի անկրան շրջանի միմական թատրոնի գեմքը (իհարկեմիակողմանի) և ժամանակի գուհիկ, ամբոխային ճաշակը: Երևում է, թե ինչու ուշ հելենիզմի շրջանում սկիզբ էր առել թատրոնի ժխտման միտումը և ինչու էլիաս Սրբատիկեսը (129—189) ճառում էր, թե «կոմեդիաներ շպետք է խաղաղ պրոսթենիումում»<sup>50</sup>: Պարզ երևում է, թե որ տեսակի թատրոնն էին զատապարտում Տերտուլիանոսն ու Կիպրիանոսը<sup>51</sup>, և թե ինչու թատրոնի մերժման գիծը միջնադարում ճյուղավորվում է ու մի ժայրով հասնում մեզ (Հովհան Մանգակունու և Սիմեոն Աղձնյաց եպիսկոպոսի անուններով ավանդված ճառերը): Գուցե և զրույցում հեռավոր արտացոլում է գտել այն պատմական իրողությունը, որ հոռմեական, հետագայում բյուզանդական միմուներից ու հիստրիոներից շատերը ի վերջո ընդունել են քրիստոնեություն, կամ, ով գիտե, դարձել հավատի սպասավորներ: Եթե նրանց մեջ գտնվել են նահատակվողներ...

Ավանդության մեջ կարելի է տարբեր շերտեր փնտրել: Բայց մեր խնդիրն այլ է:

Պատմական բուն իրողությունն այն է, որ քրիստոնեության հալածանքի շրջանում թատրոնները, ուր շատ վաղուց արդեն չէին ներկայացվում դասական ողբերգություններ ու կատակերգություններ և դատարկվել էին «Դիոնիսոսի

<sup>49</sup> Միջնադարագիտության մեջ ծովովրական կրօնաիրուրյուն (Народная религиозность) հասկացությանը չական նշանակություն է տալիք. Գորեկը (տե՛ս «Из истории культуры средних веков и Возрождения», изд. «Наука», М., 1976, с. 65—91).

<sup>50</sup> «Памятники позднего античного эпистолярного искусства», М., 1964, с. 32—38.

<sup>51</sup>Տե՛ս Հ. Կրօյշուկով, Խշկ. աշխ., էջ 16—38,

«արհեստավորներից», վերածվել էին պատժավայրերի<sup>52</sup>, Պասական շրջանից պահպանված և հատկապես ուշ հեղենիզմի շրջանում կառուցված (մինչև մ.թ. 3-րդ դ. ներառյալ) թատրոնների օրինստրաններում, ավելի շատ պրոսպենիումների վրա ներկայացվում էին միմական պատկերներ, խեղկատակային ինտերմեդիաններ, էրոտիկ տեսարաններ հունական դիցարանության թեմաներով, իսկ որոշ նոր կառուցված շենքեր, ինչպես, օրինակ, Օրիկոսի և Զերելի թատրոնները, սկզբից իսկ նախատեսվել են նման ներկայացվումների համար<sup>53</sup>:

Հին աշխարհի վերջը և նոր աշխարհի սկիզբը նշանավորվում է արյունալի ներկայացվումներով: Թատրոններում ծաղրվում են քրիստոնեական ծեսերն ու սուրբ վկաների շարշարանքները, խոշտանգվում են բազում հավատացյալներ ու քարոզիչներ, խարույկ ու խաչ են բարձրանում մահվամբ փրկելու հույսով վառված, «այս աշխարհի թագավորությունից» երես դարձրած, առաքյալի կամ օծյալի քղամիդ հագած մարդիկ, նոր վարդապետության դիտնական քարոզիչներ, Արդաղլունի նման ի Քրիստոս խենթացյալ կատակերպակներ, որոնց անըմբոնելի կամավոր մահը ճանապարհ էր հարթում Փրկչի հոգեսոր գալստյան համար: Առա-

52 Պատմական ավանդությունը, ելեկով թերեա եվսերիոս Կեսարացուց, Ներոնի ժամանակին (54–68), է վերագրում քրիստոնյաների մահապատճեները թատրոնում: Հանրահայտ է այդ ավանդության արձագանքը զեղարվեստական գրականության մեջ (Հ. Սենեկիշի «Յու երթաս» վեպը): Բայց պարզված է, որ քրիստոնյաներին հետապնդելու առաջին և մասնակի փաստերը (բայց Գլինիոս Կրտսերի նամակների) վերտընթաց են Տրայանոսի ժամանակին (98–117), իսկ առաջարական մահապատճեները սկիզբ են տաել III դ. կեսից, որոնց զուհ են զնացել առաջին դիտնական առավագանքը՝ Մոդինեսը (254) և Կիպրիանոսը (257): Հակաբրիստոննեական ուայքարը կազմակերպված ընույթ է ստացել Դիոկետիանոսի և Մաքրիմիանոսի դոմինատում վերջին շրջանում, երբ Հրապառակմել է առաջին զդիկաը քրիստոնեաների դիմ՝ 303 թվականին: Արդարիոնի վկայացանությունը Հայոմավորքը վերագրում է ճիշտ այս շրջանին:

53 Մ. Կոբյալինա, «Театр в Орике», сб. «История и культура античного мира», М., 1977, с. 62–68. Ա. Ա. Գրումինինա, «Հին ու նոր Սբիքա, թարգմ. ոռուց. Ձ. Ղազարյան, Երևան, 1981, էջ 27–29.

քյալներն ու վկաները գալիս էին Աստծո որդուց առաջ: Դա կարծես ակնարկված է ավետարանում Հովհաննես նախակարապետի (Մկրտչի) կերպարով ու Եսայի մարգարեի խոսքով. «Անապատում կանչողի ձայնն է, պատրաստեցեք Տիրոջ ճանապարհը և հարթեցեք նրա շավիղները» (Մատք., 7. 3—4): Հովհաննես Մկրտչի պլատումն էլ խաղի հետ է կապված. Հերովդինի զուստրը՝ Սալոմեն պարում է և խնդրում Հովհաննու զլուխը: Սա հիշողություն չէ՝ արդյոք նույն երեւույթի: Քրիստոսի կերպարը, որ ուներ իր ունալ նախատիպերն անտիկ աշխարհում, գեռ շարունակում էր ստեղծըլել: Մոտ մեկ ու կես դար հոյովվող գաղափարը իրականանում էր թատրոնի պրոսφենիումի վրա: Այստեղ, ուրէսրինսի ու Սոֆոկլեսի ժամանակներում տեղի էր ունեցել մեռնող ու հարություն առնող աստծո՝ Դիոնիսոսի սիմվոլիկ զոհարեւությունը և նոխազի արյուն էր թափվել, այժմ մարդկային արյուն էր թափվում. բավության նոխազ էին դառնում մեռնող ու հարություն առնող աստծո նոր գաղափարի կրողները:

Ինչո՞ւ էր այդ բանը տեղի ունենում թատրոնում: Մահապատճի այլ ձև չկա՞ր ինչո՞ւ էին զվարճության ու տոնախմբության վայրերը արյունով հեղեղվում: Դա ծա՞ղը էր միայն, թե ուրիշ մի խորհուրդ էլ կար այդտեղ: Այդ ի՞նչ միստերիա էր խաղում պատմությունը: Բոլոր խոռվյալների, այլախոհների ու օտարվածների դատը, որ անտիկ ողբերգությունն էր, եկել հանգել էր մի մեծ դատաստանի: Ողջակեցի գաղափարն ամբողջացել էր մեկ կերպարում: Ամեն մի խոշտանգվող ու նահասակվող հավատացյալի հետ շարշարվում ու խաշվում էր Քրիստոս:

Եվ ինչո՞ւ, այնուամենայնիվ, թատրոնում:

Հոռմի թատերական ճաշակն, իհարկե, այլասերվել էր գլագիտորական խաղերով: Դրա անուղղակի նշաններից մեկը տեսանք նույնիսկ Արտաշատում: Բայց այս դեպքում բացատրությունն ուրիշ է: Սկսած զեռս Ներոնի անմիջական նախորդների (Օգոստոս, Տիբերիոս, Կալիգուլա, Կլավդիոս) ժամանակից աստվածները դարձել էին հյուծախտավոր հիվանդներ, և հոռմեական կայսրերը ջանում էին ար-

մատավորել սեփական «Հանճարի» պաշտամունքը։ Վերականգնվում էր միապետաստծո գաղափարը, որ գալիս էր Արևելքից, և կայսրը հոչակվում էր ոչ միայն գերազույն քուրմ, այլև աստվածություն։ Տրայանոսի ժամանակ (98—117) միայն քրիստոնյաները հրաժարվեցին զոհեր մատուցել կայսեր «Հանճարին», քանի որ ոնքին իրենց նոր աստվածը։ Դիոկլետիանոսի և Մաքսիմիանոսի շրջանում քրիստոնյա համայնքն արդեն մեծ էր, և այս վերաբերմունքը՝ բացահայտ ու սուր։ Զոհ շմատուցեցին և իրենք դարձան զոհ։ Նրանց առջև բացվեցին Դիոկլիսոսի ու Յուպիտերի զոհարանները, որ հիմա պատկանում էին կենդանի «աստվածներին»։

Վիճարկե՞նք մեր այս ենթադրությունը։

Թատրոնի գրված պատմությունից հայտնի է, որ Հելլենիզմի դարաշրջանում դրաման խզել էր կապերը ծիսային արմատների հետ, և Հոռոմն էլ Հունական դրաման յուրացրել էր ոչ որպես ծիսային երեսություն։ Հոռոմեական պրոսքենիումը, թվում է, այլևս կապ չուներ Հունական միստերիալ դրամայի հետ։ Թվում է, եվ թատրոնի պատմության առեղջվածներից է այս։ Պրեսքենիումը խորան չէր, ինչպես Հունական սքենեն, բայց ահա դառնում էր խորան։ Հոռոմում կարծեն վերականգնվում էր մի ավելի հին ու բարբարոս երեսություն՝ մարդկային զոհի գաղափարը, և զոհի ու պատժի գաղափարները նույնանում էին։ Ոչ այնքան վերականգնվում, որքան պաշտօնականացվում էր ուրիշ մեղքը անմեղի՝ բավության նոխազի վրա զնելու և անմեղին զոհելու նախապաշարմունքը, որ դեռ կար Հունագոռոմեական միջավայրում<sup>54</sup>։ Տարբերությունն այն էր, որ այս նոր «աստվածների» խորանում մարդիկ զոհաբերվում էին խմբերով, ոչ թե՝ տարին մեկ մարդ, ինչպես հին նախապաշարմունքն էր թելադրում<sup>55</sup>։ Պրան ավելանում էր խաչը, որ

54 Ջ. Փրեզեր, նշվ. աշխ., էջ 642—643։

55 Եթ դեպ և բաղաբակիրթ Հունաստանում, — զրում է Ֆրեզերը, — այդ առվորությունը երբեմն ընդունում էր առավել քան մոռալ ձևեր, քան անմեղ մի ծես, և զա զեկավարում էր բարյացակամ ու ազնվախոն։ Պատմաբռնչա (նշվ. աշխ., էջ 643)։

նույնպես զոհաբերության ու պատժի հին խորհրդանիշ էր, և՝ զատկական խաչելությունը, որ տեսանք Ավետարանում: Խաչը հին հավատալիքներում անբաժանելի էր շրջանից<sup>56</sup>, մարդու և տիեզերքի համատեղման խորհրդանիշն էր, բայց դեռ այն խորհուրդը չուներ, որ ունեցավ այս պատմական միտերիալ գատով: Քրիստոնյաներին զոհաբերում էին կայսեր «Հանճարին», իսկ քրիստոնյաները զոհաբերվում էին իրենց աստծուն:

Արդազիոնի վկայաբանության մեջ ասված է, թե կատակերգակին մտրակում էին ոչ թե գետնի վրա, այլ գետնից վեր՝ փայտին կապած: Սա էլ պատժի հին ձև է. «Թեոդորոնիայի 522-րդ տողում ասվում է, որ Պրոտեթևսը շղթայվել է մի սյան վրա, որպեսզի կախված մնա երկնքի ու երկրի միջև՝ Սա անարգանքի սյունն է, խաչի նախատիպը՝ «փայտ պատուհասի», որ Հոռոմում եղել է հոաթե (Γ), «ուր դեռէկին կախէին զմահապարտում»<sup>58</sup>: Եթե մի սուրբ վկա կամ առարյալ կամ անմեղ դս և ապարայալ բնեովում էր խաչին և զի՞ւռմ, և խաչը թատրոնի պրոսքնիումի վրա էր կամ հրապարակի կենտրոնում, պատժի գործիքը դառնում էր սուրբ<sup>59</sup>, իսկ թատրոնը՝ վկայաբան: Կարծես վերականգնիում էր հին հունական խորան-սցինեի իմաստը, բայց արդեն ոչ Դիոնիսոսի, այլ ուրիշ աստծո համար: Թատրոնի հոռմետեկան շենքերը, որ չկար սրբության ոչ մի խորհուրդ, չկար միստիկացի ոչ մի հետք կամ նշան, զվարճավայրից վերածվում էին պատժաբանի ու զոհաբանի:

Թատրոնը հիմնավորապես մերժող քրիստոնեական եկեղեցին ինչպես է ընդունում թատերական շենքի, որպես վկայաբանի, դադապիաբը: Դա ընդունվում է, բայց չի ա-

56 Բատ Ֆենքերի ուսումնախրությունների, Վերին Բավարիայի գյուղերում եղել է սպատկական մարդուն այրելուն մի ծես. մարդու պաճումապատճեն այրել են խաչի վրա, շուրջը շրջանաձև պար բռնել և վերշում եռակի շրջան գծել հանգած կրակի շուրջը (նշվ. աշխ., էջ 684):

57 Յ. ՄԱԼԵՐ, նշվ. աշխ., էջ 101:

58 Նոր բաղիքը հայկագեան լեզուի, հ. 2, էջ 922:

59 «...և հայոպիսի նախատիպական մահ կրծաց վասն մեր անպարտական դառն աւատուց, և յայնմ հետէ խաչն եղել պարժանը քրիստոնեից» (նույն տեղը):

վանդպում։ Դա ընդունվում է նույն տրամարանությամբ։ Ինչպես պատճի գործիքի՝ խաչի սրբացումը, Տիրոջ արյան մեջ թաթախված գեղարդի սրբացումը։ Թատերաշենքի որպես վկայարան շավանդվելը կամ մոռացվելը չի փոխում մեր տեսակետը։ Թատրոն-վկայարանի հետքերը մնացել են։ Միդի թատրոնի օրինաստրայի ուղիղ կենտրոնում կառուցված է եկեղեցի<sup>60</sup>, իսկ Ալեքսանդրիայի թատրոնի պատճի մի քանի մարմարե ելուստների վրա քանդակված են խաչեր<sup>61</sup>։ Ենքը փոքրացվել է, ինչպես հաստատում է Կաղիմեծ Միխայլովսկին, և թեատրոնի կիսաշրջանը ծածկվել է առաստաղով ու գմբեթով, որ փլվել է մոտավորապես V—VII դարերում<sup>62</sup>:

Թատրոնների շենքերը, և դասական, և հելենիստական, և հռոմեական շրջաններում կառուցվածները, միջնադարում մնացել են լքված ու ամայի, մեծ մասն ավերված ու հողածածկի։ Թատրոնը որպես զոհարան կամ վկայարան չի ավանդվել, բայց, որ զարմանալի ու հետաքրքիր է, չի էլ մոռացվել։ Հիշողությունը հասել է միջնադար, որ նշանակում է, թե քրիստոնեության արշալուսին տեղի ունեցած միտերիան եղել է միջազգային գաղափարական հեղափոխության սկիզբը։

Հայ միջնադարյան պատմիչի՝ Հովհաննես Գրասանակերտցու (IX—X) երկում կարդում ենք Բյուրական ամրոցի գրավման մասին։ Արար ոստիկան նըստրի զինվորներն ամրոցի բնակիչների հետ դատաստան են տեսնում «ի թէատրոն անդր»։ Հովհաննես կաթողիկոսը քէատրոն է անվանում քրիստոնյայի նահատակությունը՝ զոհվելը անհավատի սրով։ «Հաննեալ զիւրաքանչիւր զնոսա ի թէատրոն անդր. ճարակ անողորմ հրոյ տային»<sup>63</sup>։ Դժվար է առարկայական իմաստ փնտրել քէատրոն բառի այս վկայության

<sup>60</sup> D. Claude, Die byzantinische stadt im 6. Jahrhundert, 1969, p. 74—75.

<sup>61</sup> К. Михайловский, Александрия, Варшава, 1970, с. 16, № 53, 58, 62, 66, 79 (տե՛ս այս գրքի № 6 լուսանկարը)։

<sup>62</sup> Նույն տեղում։

<sup>63</sup> Յավիաննու կաթողիկոսի Պատմութիւն, Երուսաղեմ, 1867, էջ 441։

մէկչ<sup>64</sup>: Բառը գործածվում է կարծես պայմանականորեն, եթե նկատի չունենանք «աշխարհաժամկետով բազմութեան», հրապարակ շրջափակ» իմաստը<sup>65</sup>, բայց այս պայմանականության թիկունքում կա պատմական մի ծանր հիշողություն: Մի խոլ ձայն հունահոռմեական թատրոնների փլատակներից, թե այստեղ են եղել Փրկչի խաչելությունները, հասել է միշնադար: Այդ ձայնի հեռավոր արձագանքը չե՞ն արդյոք ուշ անտիկ ոճի պրոսթենիումների, որպես հարտարապետական միջավայրի, գրքային վերարտազրությունները բյուզանդական ու հայկական ձեռագիր ավետարաններում<sup>66</sup>, Քրիստոսի ծանակման պատկերը միշնադարյան հրապարակախաղի տեսրով «Ութ մանրանկարիչների ավետարանում» (նկ. 7), նաև այլ ավետարանների խորանագրերում տեղ գտած

64 Այս վկայությունը բերված է Հեղինակիս «Թատրոնը միշնադարյան Հայուստանում» աշխատությունում, բայց երկդիմի և մակերեսային բացատրությամբ: «Եթե բարե այսուհետ շրջածէր է ոչ փոխարեաբար, պետք է կարծէ, որ նախարարական աշբաջներն ունեցել են թատրոններ» (էջ 276):

65 Նոր բառիքը հայկացեան լիզուի, հ. 1, էջ 810: Հեն հայերենի միշնադարյան և նոր բառարաններում թվարոն բառին արված բացատրություններից ոչ մեկը չի մտանաւմ սուրբ վկայարակի խմառին: Կարծում ենք, միշնադարյան թամարտի հանդեկ եղանակ մերժուական վերաբերմունքը դրականության մէջ լուացընէ է վեհայատ անի գալախիար»: Անդեմ նրա սորո հնացէր մնացել են:

66 Անեմիկ պրոսեենիումի առկայության վրա («Հյուզանգական որոշ մանրանկարներում») ուշագրություն է դարձնում Վ. Բամիմը Space in Medieval Painting and the Fourteenth Century of Persia in the աշխատությունում (New York, 1940): Այս փաստի վրա իմ ուշագրությամբ հրամից արվեստից արվեստարան վիզեն Պալարյանը, որի «Մյուսէսային մանրանկարը Կիլիկիայում» աշխատության մէջ այս խնդիրը մանրամասնորեն շռափէած է: Պահարյանը ելնելով Բունիմի տհատկետից, գուցե և մասամբ իմ բանակոր զգուշացումներից շայն ժամանակ հիմնավորված, այսօր նզոր) բնմատարածքը զաղափարը չի կապում թատրոնի ուղղակի ազգեւթյան հետ (էջ 97, 173), թեահատ երաժաշերենը՝ նզորում է նկարչի ստեղծած ճարտարապետական միջավայրի ուշ անտիկ ոճը (էջ 109—111): Անդապէի պազցեության մասին, իհարկե, խոսք լինել չի կարող, բանի որ միշնադարյան չի ենթադրվում անտիկ պրոսեենիում: Այստեղ պետք է տհանել թատրոնի հեռագոր ու միշնորդված՝ զրբով ավանդված, բայց կոնկրետ հետո:

կատակների պատկերները (նկ. 8), հայ, բյուզանդական և արևմտահնվրոպական գրանկարչության մեջ, կարծում ենք, պետք է ընդունել որպես այդ հիշողության հեռավոր ու անուզդակի արձագանք<sup>67</sup>: Կատակները մի դեպքում թիրես խորհրդանշում են Քրիստոսին ծանակությամբ նահատակողներին (Ավետարանում՝ զինվորներ), այլ դեպքում (պետք է տարբերակել դրանք)՝ ի Քրիստոս նահատակվածների Այսպես, Մատենադարանի 6420-րդ ձեռագրի (Խիզանի ավետարան, 1604 թ.) մանրանկարում (էջ 43ա) կատակներից մեկի ճակատին դրված է մալթիական խաչ՝ նման Ալեքսանդրիայի թատրոնի խոյակների վրա քանդակված խաչերին (նկ. 6): Այս փաստը նաև համերաշխ է ժուռանվիլ ասպետի նկարագրածին («...երկուքը զլուխնին դեպի կռնակըն ծոած կը դառնային, նույնպես անդրանիկն ալ. և երբ որ գլուխը դեպի առջև դարձնել կուտային անոր, կը խաչակնքեր երեսը»)<sup>68</sup>: Վերջապես, մեր հիշատակած ձեռագրից Հայոցավուրբներից մեկում պատկերված է սուրբ Պորփյուրոսը հայ միջնադարյան գուսանի տեսքով:

Մանրանկարներում, ինչպես հայ, այնպես էլ բյուզանդական ու արևմտահնվրոպական, մեծ թիվ են կազմում Մալոմեհ պարն ալենարկող պատկերները: Այս՝ ալենարկող, որովհետեւ ժոնգլորեսսա-պարուհին այս պատկերներում ներկայացված է մի դեպքում հոսմեական «բալկտային», այլ դեպքերում (դրանք ավելի շատ են) միջնադարյան զգնուտավորումով, նայած ինչ պատէ երացումներով է զեկատիարիկի գրանկարիչ՝ միջնորդվածո, թէ՞ անմիջական, գրքայի՞ն, թէ՞ իրական, ժամանակակից: Այս պատկերների խմաստն ակընհայտ է առանց մեկնությունների. դա կապվում է Հովհան-

67 Գրանք մեծ ժամանմբ հրապարակված ու ներարարված են (տե՛ս մասնավորապես Ա. Մեացականյան, Հայկական դարդորթինուտ, Երևան, 1955, էմ. Պետրոսյան, Թատերային տարրերը միջնադարյան մանրանկարներում, «Հայկական արվեստ», 1, Երևան, 1974, էջ 158—165):

68 «Բաղմավինք», 1862, էջ 16:

հետ՝ ԵՐԿՐՈՑՀԻ ՊԼԱՍՏԱՄԱՆ ավելացանական ավանդության հետ<sup>69</sup>:

Այսպիսով, միջնադարյան կերպարվեստում թատերախաղի ու բնմատարածքի գաղափարները օտար չեն քրիստոնեական գաղափարախոսությանը, ունեն գաղափարապատմական լուրջ հիմքեր։ Կատակերգակը սրբի ու նահատակի մհատամորֆողներից մեկն է։ Այս նշանն ունի երկակի, մեր հայացքով հակասական, բայց իրականում պատճառաբանված ու հասկանալի իմաստ։ Կատակերգակը մի զեպքում հանդիս է գալիս որպես Հովհաննես Մկրտչին ու Քրիստոսին նահատակող՝ պատժի գործիք (*Սալոմեն իր պարով*), ինչպես փշեպսակը, խաչն ու զեղարզը, որ Տիրոջ խոշտանգված մարմնին քավելով, նրա արյամք հազորդվելով դարձել են սուրբ։ Դա տեսանք զինվորների ծաղրի ու նախատինքի մանրանկարչական-սիմվոլիկ մեկնաբանության մեջ։ Այսու զեպքում կատակերգակը հանդիս է գալիս որպես ի Տիր խննթացյալ մի նահատակ, որը տեսանք Արդարիոնի վկայարանությունում։ Խենթանալով աստվածությանը նվիրվելու գաղափարը, և՛ու խենթությունը սգին մարմնից ազատագրելու եղանակ է, անպայման հեթանոսական վերապրուկ է<sup>70</sup>։ Թվում է, այսուհետ մի զենքս կա «զիվահարի բժշկումը» թեմայի հետ։ Նահատակի կատակերգակը կարծես դիմահարի հակոտնչան է (անտիպոդ)։ Դիմահարը գեից կամ հեթանոս աստվածությունից պատուհանվածն է, ինչպես Շիդարը, և նրան պիտք է զուրս բերել մոլորության այրից։ Խոկ սուրբ դարձած կա-

69 Եվրոպական միջնադարյան թատրոնի ուսումնասիրություններում կարծիք կա, թե ժոնզլյորների խաղերում ներկայացվելիս է եղել Հովհաննես Մկրտչի զվարացման պատմությունը, և ժոնզլյորներուները կերպարվել են Սալոմենին (С. Թոկуլյանի, նշվ. աշխ., ը. 93)։ Բրավիճակի շրջանակարգությունից է այս Իրականում թատրոնի դիմ ճառող քարոզիչներին և վարձակների պարը համեմատել Սալոմեի պարի հետ, քանի որ նրանք ամեն ինչի մասին խստում են, դիմելով ու դրցի պատճեններին նման ակնարկ մեզ հայտնի է Սիմեոն Աղձնյաց հափսկոպոսի ճարեց (Վենետիկի Մխիթարյան մատենագրարան, ձեռ. 633, էջ 35ա)։

70 Թուսական միջնադարից ավանդվել է յօրօնական կողման կողման կերպ համացյալի ափաք (Ա. Պանченко. Յօրօնու ու յօրօնական ափաք մատակարարան, ձեռ. 633, էջ 35ա)։

տակերգակն արդեն ազատագրված է. նա ընտրյալն ու նիվերյալն է Աստծո որդու Միջնադարյան կոմեղիանտների հայապաշտումները մեզ հայտնի չեն: Բայց փրկագործման գաղափարը նրանց անպայման հայտնի է եղել: Եթե հայտնի չիներ, հայ դուսանները ուխտ չեին գնա երուսաղեմ և այն էլ՝ ճանապարհին պարելով, զլուխկոնքի տալով ու խաշակնքելով՝ նրանք, հավանաբար, զգում էին իրենց Աստծո որդու դատի մասնակիցներ և պատրաստվում էին դատվելու, ապաշխարելու, կրկնելու խաշելության գաղափարը եվ, ի՞շարէն, լսել էին ավետարանի խոսքը. «Իրանի հոգով աղքատներին, նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. Ե. 3):

### ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄԻՍՏԵՐԻԱՆ

Եթե Խուսավորչի կալանքը Խորվիրապում առասպել վիներ (գա հնարավոր է), ապա հազիվ ձգվեր տասներեք ամիս, որ գարձաւ առասպեկտական է: Տասներեք ամիսնը աներեկայիշի ժամանակամիջոց է այդ ցամաք շրջորում<sup>71</sup>, գմնդակ, չարաշունչ զառնութեան տեղոյն»<sup>72</sup> կենդանի մնալու համար: Միթուոգիտական տրամաբանություն է գործում այստեղ: Ազգոնցն ուշադրություն է հրավիրում թվային սիմվոլիկայի մքար: Նա գրում է. «Ազատանզեղութ մի անդամ ասում է տամնհինգ տարի, մեկ ուրիշ անդամ՝ տասներեք տարի, ըստ մի քանի ձեռագրի՝ այդ եղել է տասներեք ամիս: Մենք ընդունում ենք այս վերջին քննիրցումը որովհետ վավերական և կարծում, որ զա ցույց է տալիս հայկական հին տոմարի տասներեք ամիսները: Ժողովրդական երևակայությունը Հայաստանի առաքյալին զրել է նույն պայմանների մեջ, որոնցում գտնվել է մեռնող ու հարություն առնող հին աստվածությունը:

71 Ակրապ նշանակում է ցամաք շրջոր Շնոր բառիրը հայկակեան լեզուի, հ. 2, էջ 825):

72 Ազարանզեղութ, նշվ. հրատ., էջ 23:

73 Ն. Ազգոնց, նշվ. աշխ., էջ 381:

Եթե նկատիր առնենք շղթալվածի առասպելի հայտնի տարրերակները, ակներև են առանց նոր մեկնությունների: Եվ ամենից ավելի ակներև է առասպելի հորինման միջավայրը: Քրիստոնեական Հակման խորհուրդը տեղի է ունենում: Մասյաց ստորատին՝ Շիդարի կալանավայրի մոտ կամ հենց այն տեղում: Այս զուգահեռ զիտված է անգամ հայոց նոր պատմության ինչ-ինչ կետերի մեկնություններում:

Կանգնում ենք Երասմիի հասպարյան անջուր հատակին, Մամիսի դիմաց, և մեզ թվում է, թե Խորվիրապի բլուրը բնական մակետն է բիբլիական լեռան: Առասպելը Եկեղի, թառել է այնտեղ և արժատաներն ընձյուղել «ի վեր ի Մամիս», դարձել ժողովրդական էսխատոլոգիա<sup>74</sup>, Խորվիրապը պատմականորեն չի առնչվում մեռնող ու հառնող նոր աստվածության գաղափարին: Լուսավորչի վեպն է սրբացրել այդ բլուրը, որն իր ուրվագծով մի փոքր Արարատ է՝ բիբլիական լեռան դեպի մեզ նայող կապտագույն խորապատկերի վրա: Նրա պարսպապատ հատվածը, ըստ Ագաթանգեղոսի, «վասն չարագործաց իսկ էր շինեալ զայն տեղի և ի՝ սպանումն մահապարտացն ամենայն Հայոց»<sup>75</sup>:

Թվում է, այնուամենայնիվ, որ շրացատրված մի խորհուրդ կա այս բլրին ու նրա վրա կառուցված լուսավորչի վկայարանում (նկ. 9):

Եթե գեղարվեստական պատկերներով ու սիմվոլներով մտածենք, Խորվիրապը Շիդարի կալանավայրն է որ կա: Մեր բոլոր տեղեկությունները միջնադարյան հեղինակներից են, որոնք հեթանոս ավանդությունների պայմանաձևերն ու խորհրդանիշերը չեն մեկնում: Կարծես մտածված կերպով մութի են թողնում հին հավատալիքների նշանները: Քրիս-

74 Ինչպես նկատել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, առասպելը նոր մամանակեներում կապվել է «Մասի գլուխը բարձրացող տարօրինակ մարդու» (Արովյանի—Հ. Հ.) անհետացման անցքի հետո: Պատմաբանը վկայաբերում է Ստեփան Ռոկանի լսածը, որմանը կկարծեն, թե խոր վիրապի մը մեջ կպահվիր (Ա. Հովհաննիսյան, Արովյան, Երևան, 1933, էջ 65—66): Հեղինակը հիշեցնում է նաև նոր նախշեանի հայ գյուղացիների մեջ տարածված զրոյցը՝ «թե նալբանդյանը մեռած էր, այլ մի օր զարու է որպես հայ թագավոր» (նույն տեղում, էջ 66—68):

75 Աղարքանելոս, Եղի. Հրատ., էջ 73:

տոնյա պատմագիրը կուսավորչի վեպը վերածել է վկայաբանության, ստեղծել շարշարանքների այն պատկերը, որ կրկնվում է հայսմավուրբային զրուցներում: Վկայաբանության տակ, ինչպես նկատում է Աղոնցը, ճգմվել է ավանդությունը<sup>76</sup>: Ավելացնենք՝ վկայաբանության տակ մի մությունորատ կա, ուր կաթվածահար ընկած է այլախոհ արքայազնը կրկնակի շղթայված:

Եթե Ագաթանգեղոսին ընկալենք ըստ արտաքին պատկերների և առօրյա տրամաբանությամբ, նա կդառնա պարզունակ մի զրուցագիր: Բայց այդպիս չէ ու չի կարող լինել: Քրիստոնեական գրականությունը որպիս կյանքի արտացըլում պարզունակ է, քանզի արտացըլման խնդիր չունի: Կյանքի հետքերը, որ երբեմն երևում են, թվացյալ են կամ պատահական: Քրանք չնախատեսված արդյունքն են հեղինակների խոսելակերպի և ավելի հաճախ՝ էղոթերիկ ձևեր: Այդպիս է գրված Ավետարանը: Խոկ Ագաթանգեղոսն էլ ի վերջո ազգային մի ավետարան է և դրանով էլ բացառիկ դործ վաղմիջնադարի գրականության մեջ: Առարկայական վիճակները, երբեմն շատ շոշափելի, հին բանահյուսության քրիստոնեացված կամ պատահականորեն մերկ թողնված կետեր են և կարող են շփոթեցնել ընթերցողին: Քրիստոնյա հեղինակն ունի գաղափարական պարզ ծրագիր և ըստ այդմ էլ խուսափում է մեկնել հին հավասի պայմանաձեւերն ու խորհրդանիշերը: Մեր մեկնությունները կարող են անկատար ու պակասավոր լինել, բայց միենույն է՝ շենք կարող կանգ առնել ընթերցվող նյութի առարկայական շերտում:

Գրեգոր Լուսավորչի կալանավորման ավանդությունը գաղտնիք է, և խորհրդավոր 22ուկ է հասնում մեր ականջին խորվիրապի խավարից: Ծիսականության մի շող է թափանցում այնտեղ, և դա նման է մարած աստղի լույսին: Ծիսականություն է առկայժում նաև Արտաշատի դղյակում այրի կնոջ աղոտ գեմքին: Կինը նայում է Լուսավորչի բանտին և հաց թխում՝ «աւուրս նկանակ մի» առաքյալի համար: Մեռնող ու հանող աստվածության ամենապարզ խորհրդանիշը

76 Ա. Աղոնց, Պատմագիտական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 271.

Հայն է «Թըս խաց թխուկի ի», — ասում է Փոքր Մհերին հոր ուրվականը և ուղարկում նրան Ագռավու քարւ կուսավորչի վկայարանի (XIII դ.) կողքին թոնիր կա: Դա գուցենոր է (XIII կամ XVII դգ.), բայց նրա տեղն ու գաղափարը անպայման հին են, ինչպես վկայարանինը: Ծենքն իր պարզ արտաքինով՝ երկթեր տանիք, քանդակագարդ մուտք, նեղ մի լուսանցուցը (նկ. 9), անկասկած կրկնում է նախկին վկայարանի տիպը՝ հնագանդ ու տարածված, և, ո՞վ գիտե, ո՞վ կասի, գուցե բերում է իր հետ նաև հեթանոսական մեհանի հուշը:

Լուսավորչի վեպում կրկնվում է փականքի տակ տառապող աստվածության պատկերը: Գրական վկայությունը՝ «Ագաթանգեղայ պատմութիւնը», պարզ է, ավելի հին է, քան Խորենացին, «Յայսմաւուրբն» ու «Սասնա ծոերը», բայց առասպելի կերպափոխությունն է նոր: Գերազույն իշխանության կամ աստվածության գեմ ըմբռոտացած ուժը բանագրված է ու շղթայված. «կապեալ ոտիւք և կապեալ ձեռոք և կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱլբաւ բատ զաւառ և տալ զնա ի զգեակ բերդին Արտաշատ քաղաքի, և իշուցանել ի վիրապն ներդին, որ անհնարին էր խորութեամբ, մինչեւ անդէն մեսցիս<sup>77</sup>: Բայց Գրիգորը շմեռավ, որովհետեւ... անունը Գրիգոր էր (Տուն. ԴՊԿօրչօ, արթուն, զգոն, Հսկող<sup>78</sup>): Վարքը Հորինողը պատահական անուն շիրնարել հայոց առարյալի համար, կամ գուցե ինքը՝ պարթեանակի որդին այդ սիմվոլիկ անունով էր եկել Հայաստան, Գրիգորի կալանքը, թղում է, նույնիսկ պատիժ չէ, այլ հըսկում, և առարյալը պետք է դրանով սկսներ իր գործը, որպեսզի նորից աշխարհ մտներ որպես անթեղված կրակի բոց, լուսավորող հուր, քրիստոնեացված և ազատագրված Պրոմեթես՝ լուսավորից:

Ծիսակատարություն է այս ամբողջը:

Խորվիրապի բանտը Հսկումի վայր է, և հսկման միջոցը տասներեք ժամանակային միավոր է՝ ամիս, շաբաթ կամ օր, հավանաբար՝ օր: Դա համապատասխանում է հայկական

77 Ազարանգեղան, նշվ. Հրատ., էջ 70:

78 Древнегреческо-русский словарь, т. I, с. 334.

Հին առօտարի ամիսների թվին եթե պատկերավոր արտահայտվենք՝ Ծիդարի շղթան տասներեք օդակ է ունեցել: Այս ժեսը չեր կարող հորինվել, պետք է ունենար իր հեթանոսական նախատիպը, և չեր կարող հորինվել անխորհուրդ մի վայրում, պետք է լիներ Հայումավուրբի ասած տեղում՝ «ի Սեաւ գեառն, որ է ավագ Մասիս»: Խորվիրաապը լիռան «Ճակեատի» վրա է (նկ. 1): Խորհրդանիշերը հորինվում են, ճիշտ է, բայց դիտվում են նաև բնության մեջ: Ագոթանգեղոսը միստերիա է պատմում վկայական հորինվածքով կար խոռոշում է հեթանոսական միստերիայի փոխակերպված մոտիվներով:

Գրիգոր Լուսավորչի Խորվիրաապում լինելու ավանդությունը, ինչպես ուսումնասիրողներն են նկատել, զուգահեռներ ունի ոչ միայն առասպելաբանական, այլև քրիստոնեական վկայաբանական գրականության մեջ: Աղոնցը նկատել է, որ այս անունը կազմում է «Հին և նոր կրոնական հակացությանց կենտրոն»<sup>79</sup>, և Հին առասպելը կամ վեպը խեղոված է վկայաբանության շերտի տակ: «Նրան (Գրիգորին—Հ. Հ.) վերագրած տասներկու շարչաբանքների մեջ միակը, գրում է Աղոնցը,— որ տեղական կերպարանք ունի և կապված է նույնիսկ աշխարհագրապես երկրի հետ, այդ վիրապի պատմությունն է»<sup>80</sup>: «Արտառոց շարչաբանքներից հյուսված լուսապատճի մեջ,— շարունակում է Աղոնցը,— վիրապի դեպքն է, որ փայլում է կեղծ քարերի մեջ իրը իսկական զոհար հնության խորհրդավոր փայլով»<sup>81</sup>:

Աղոնցի դիտողությունը շատ թանկ է մեր հարցադրուման համար, քանի որ Խորվիրաապի ավանդությունը շարունակում է շղթայվածի թեման, և, եթե մարմնավորում է տասներեք ամիսների խորհուրդը, աղերսվում է հեթանոսական «առասպել տօնին»: Աղոնցը Գրիգորի վարքն ուզում է մաքրել վկայաբանական ստվար շերտից, փնտրում է Հին ավանդաբանական արմատ և կանգ առնում Արեսի առասպելի

79 Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 271:

80 Նույն տեղում, էջ 270:

81 Նույն տեղում, էջ 271:

վրաւ ու Արեսը պահպատ է թռնրի մեջ ուղեղ տասներեք ամիս։ Արեսի և Լուսավորչի թվերի մեջ նկատելի է զուգագիպություն, մանավանդ, որ Ազաթանգեղոսի ձեռագիրները տալիս են երեմն տասներեք ամիս ընթերցումը<sup>82</sup>։

Այս ամենը հետաքրքիր է և մտածելու առիթ է տախաւ Բայց նույնը ան հետաքրքիր է այրի կնոջ երևոյթը՝ Լուսավորչի Հոկտեմբերի վայրի կողքին։ «Կին ուն այրի, որ էր ի բիբուդին յայնմիկ, հրաման առեալ յարհաւրաց՝ զի աւտրն նկանակ մի արարեալ պատրաստական ընկենուկ ի ներս ի խորմիքապնա<sup>83</sup>։ Այստեղ էլ Հին ու նոր շերտեր կան։ Կինը գործում է ինչ-որ ներշնչումով, տեսիլքի հրամանով, և զրա Հետքը կամ Հիշատակը թոնիրն է՝ Լուսավորչի փոսի վրա կառուցված վկայարանի կողքին։ Գուցե այստեղ Հին մոխիր է եղել թաղված<sup>84</sup>։ Եթե դատենք առասպեկտի ու վկայարանության թելաղրանքով, Դրիգորն իր Հոկտեմբերի փոսում հաղորդություն է ընդունել։ Բայց ո՞ւմ ձեռքից կարող էր նա վերցնել Հաղորդության հացը։ Հեթանոս այրական անտվածությունները նրա համար գոյություն չունեին, և իր Հիմնելիք եկեղեցու առաջին սպասավորն ինքն էր լինելու Հռենական աստվածների պանթեոնում մի մայր կար, Հոգի աստվածոււհի Գայան, որ Ազաթանգեղոսի պատմությունում դարձակ Գայանն՝ նահատակվող կույսերի մայրը, որի գերեզմանի վրա Դրիգորը վկայարան կառուցել տվեց։ Թվում է, Արտաշատի գոյակի այրին նրա ովին է։ Հավանական, գուցե ինքնակամ համարենք այս մեկնությունը։ Համենայն դեպք, առասպեկտի ու վկայարանության տեսակետից սա ավելի տրամաբանական է, քան բանտում ինչ-որ մի կնոջ ձեռքով։

82 Նույն տեղում, էջ 272։

83 Ազաթանգեղոս, էջվ. հրատ., էջ 72։

84 Հին կտակարանի Վետացոց զրքում թոնիրը ներկայացվում է որպես սրբազն կրակարան (թ. 4), էջմիածնի Մայր տաճարի խօրանի տակ գտնվող կրակարանը թոնրածն է։ Ճարտարապետ Վահագն Գրիգորյանից տեղեկացել եմ, որ դա եղակի փաստ չէ։ Թոնիրներ կան քասազի և Թանահատի վաղ միջնադարյան (V դ.) խորանների տակ։ Ոչ մի տարակույս, որ դրանք կրակապաշտության հետքեր են և բրիստոններական ծիսակարգում կապ պետք է ունենան հաղորդության հացի հետ։ Բայց մոխիրը եկեղեցու հիմքում թաղելու սովորությունը առաջմ զժվար. է բարարել։

հաց ստանալու պարզունակ, կենցաղային պատմությունը։ Իսկ Տրդատն այդ ժամանակ խողացյալ վիճակում էր՝ «կնճթակերպ երեսօրն, լեալ ի նմանութեան չորքատանոյ, ընթացեալ յեղեգնաբնակ երամէ գաղանացն»<sup>85</sup>։ Հեթանոս մռությամբ Հիվանդ արքայի այլարանական պատկերն այնքան առարկայական է նկարագրված, որ անփորձ ընթերցողին կարող է թվալ ծաղր ու անարգանք, մանականդ, որ վկայաբանական շերտում նման ընդգծում կա։ Հիշենք՝ ինչպիս է Խորենացին պարսավում պատմական Արտավազգին. «եղեգնապուրակաց թափառեալ շրջէր... զիսոց արածելով»։

Մենք տեսանք խննթ արքայազնին վայրի խոզ հալածելիս, երկրորդ Արտավազգը, որին Խորենացին մկրտել է առասպելի յուղով, խոզ է արածեցնում։ Ազաթանգեղոսը Տրդատին ուղարկում է նույն եղեգնութեարք։ «Որքան էլ տարօրինակ թվա այս պատկերը, — գրում է Ազոնցը, — այն բացատրելի կդառնա, եթե հիշենք Արեսին վարազ դարձած այն ժամանակ, երբ ուղում էր սպանել իր ախոյցան Ազոնիսին և կամ Ատափսին... Միգուցե Արեսը հայ Դիորփիոսին սպանելու պահին նույնպես վարազի կերպարանք էր ստացել»<sup>86</sup>։

Ավելի մոտիկ տեղում փնտրենք այս վարազին։

Փավստոս Բուղանդի «Պատմությունեց» գիտենք, որ պարսից Շապուհ արքայի կնիքը մատանի էր վարազի պատկերով։ Ազոնցն էլ հիշեցնում է. «Հայ իշխանները վարազի պատկերով մատանի էին կրում, որ միևնույն ժամանակ կնիքի տեղ է ծառայում»<sup>87</sup>։ Այո՛, այդ կնիք-մատանին է զործում վիպակեան-ավանդաբանական շերտում, որը քրիստոնեան վկայաբանության մեջ ծաղր ու ծանակի է վերածվել։ Մատանին, ըստ Հին Հավատալիքների, Հոգու կաշկանդման խորհրդանիշն էր<sup>88</sup> (Հիշենք նաև «զոսկեօղ, շիկափոր պարանն»), և եթե Տրդատը կաշկանդված էր, ապա ոչ մաշկի Հիվանդությամբ, ինչպես թվացել է Ազաթանգեղոսի ոհարիստ մեկնաբաններին, այլ իր պետական հին գաղափարա-

85 Ազաթանգեղոս, նշվ. Հրատ., էջ 380։

86 Ն. Ազնանց, Հայաստանի պատմություն, էջ 381։

87 Ն. Ազնանց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 274։

88 Հմտութեամբ, Դ. Փրեզեր, նշվ. աշխ., 276—277։

խոսությամբ ու թագավորական կնիքով։ Սա հայ վերջին հեմանոս և առաջին քրիստոնյա թագավորի գաղափարական երկվոթյան էլետն է, պարթևական տոտեմից ու զինանշանից ազատվելու պահը, նախնիներից հրաժարվելու, Գրիգորին օգնության կանչելու տագնապր։ «Վարազը, Տրդատի նկատմամբ, մարած արևի հետին մի շողք է, որ կանգ է առել նրա սեղ ճակատին»<sup>89</sup>։

Տրդատն իր կնճացյալ տեսքով կանգնում է դարձի եկող տմրոխի ճեղ՝ լսելու Գրիգորի քարոզը Բացարձակորեն միստերիալ պատկեր է, այս որ խորիմաստ է իր և ավանդաբանական, և վկայաբանական շերտերում։ Տրդատը դարձի է դալիս, ինչպես Հեթանոս աստվածության քուրմը, դառնում նոր հագատի լծակից կամ սպասավոր, թեկուզ և ժամանակավորապես հին տոտեմական էմբումով, որից ազատապրիկու համար դեռ ապաշխարանք է քաշելու՝ հսկայական քարեր է վայր բերելու Մասսի գագաթից և ապա գնացու է Բագավան՝ մկրտվելու Հովհաննես անունով, նույնանալու «Համաշխարհական տօնի» հերոսի հետ Կյանքն ու միւտերիան խառնված են իրար, և դժվար է իմանալ՝ որտեղ է ավաբարվում իրականությունը, որտեղ է սկսվում սիմվոլիկան։

Այս ըև ուր հասավ խնդիր արքայազնը վայրի խոզ հալածելով, կուսավորչի վեպում եղեգնուտն անգամ շի մոռացված։ Դարձյալ հիշում ենք ամպրոպային աստվածության՝ Վահագնի ծնունդի խորհրդանիշը, և այդ էլ մեր երեւլաւալության մեջ զառնում է Տրդատի կնճապատկեր մատանու զարեր։ Հիշենք նաև Դյումենդիլի անուղղակի ակնարեր, ամպրոպը էջմիեածնի դաշտերում և իշնող աստվածության ոտքերի տակ փռվող զորգը<sup>90</sup>։ Բայց առասպելի կովկասյան գույները խամրում են Այրարատյան աշխարհի արեից Այրվազ երկաթի րոցը՝ Շիդարը խորասուղվում է Երասխի ջրերում, որ հայտնի վաղարշապատի հրապարակում, Տրդատա զռան մոտ, և հայոց առաքյալը զուրս գա Արտաշատի դղյակի բանտից՝ տեսնելու աստվածային լույսը ու

89 Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 274։

90 Հմմատ. Ջ. Դյոմեզիլ, նշվ. աշխ., էջ 60։

Երկնային դարբնին «զուռնն ոսկի ի ձեռին իւրում»<sup>91</sup>, Սա-  
արդեն երկրորդ misterium magnum-ն է՝ «խորհուրդ մեծ և  
սքանչելի»...»:

Դժանը կուսավորչի թագի ամենահին, ամենաթանկ դար-  
դը՝ Հրեշտակի մուրճը երկնային լույսով ոսկեզօծված:

Փոխվում են խորհրդանիշերի տեղերն ու գույները, և  
կուսամորչի վեպը բերում է շղթայվածի ազատազրման գա-  
ղափարը: Այստեղ գործում է և պարբերաշրջանի, և այն  
և բայց անող ահաղաճնիքի խորհրդանիշը: Շղթայվածն արձակ-  
մում է 288 կամ 701 թվի սկզբին, նախորդ՝ Ավելյաց կոշկող  
հնօրյա ամսի վերջում՝ օգոստոսի 10—11-ին: Տրվում է  
նոր ժամանակի ահաղաճնիքը, որ «Ազաթանգեղայ պատմու-  
թիւնը» վկայում է երկու խորհրդանիշով: Առաջինը, որ թվում  
է՝ վկայարանական շերտից է, հեթանոսական ժամանակնե-  
րի շղթան խզող սիմվոլիկ մի զեմք է՝ ուն օտա նախարար  
(Հուն. ὥστε - այնօամ)<sup>92</sup>), որ մոտենում է հսկման փոսին ու  
ձայն տալիս: «Գրիգորիոս, եթէ կայցես ուրեք՝ եկ ի զորս.  
զի տէր Աստուածն քո, որը պաշտէիրն զու՝ նա Հրամացիաց  
հանել զրեզ այտի»<sup>93</sup>: Երկրորդ խորհրդանիշը ոսկե մուրճն է,  
որ զգրդացնում է Վաղարշապատի զաշտը, երկիրն ու սան-  
դարամետի անդունդները:

Միջնադարի գրականության մեջ, ներառյալ Դանտեն ու  
Վերածնության գարաշրջանը, չկա ավելի վեճաշունչ պահ,  
ավելի ուժգին պատերը, քան ուսնավորի հայտնվելը կուսա-  
վորչի տեսիլքում: «Եւ մի ահաւոր տեսիլ մարդոյ քարձը ու  
աշեղ, որ զառաշն ունէր և զմէցսն ի վերուստ մինչեւ ի խո-  
նարհ առաջապահ յառաջեալ, և ի ձեռինն իւրում ուռն մի-  
մէծ ոսկի. և այն ամենայն զհետ խաղացեալ գայր: Եւ ինքն  
սլացեալ խոյացեալ գայր ըստ նմանութեան արագաթե արծ-  
ուց: և եկն էց եհաս մինչեւ մոտ ի յատակս երկրիս, ի շինա-  
մէջ քաղաքին, և բաղսիաց զթանձրութիւն լայնատարած  
գետնոյն»...»<sup>94</sup>: Այս ահեղատեսիլ այրը, որ առաջնորդում է

91 Ազաթանգեղայ, նշվ. Հրատ., էջ 387.

92 Древнегреческо-русский словарь, т. 2, с. 1202.

93 Ազաթանգեղայ, նշվ. Հրատ., էջ 300:

94 Նույն տեղում, էջ 387:

Արկնային հրեշտակների զորքը տասներրորդ երկնքից մինչև երկիր, ըստ Հայ ժողովրդական ավանդության (Լուսավորչի վեպի ավանդաբանական շերտ), Հիսուս Քրիստոսն է: Պատկերն անհարիր է կարծիս Փրկչի խոնարհ կեցվածքին: Դյուցազնական Քրիստոս չկա ոչ մի եկեղեցական-պաշտոնական գրքում և գուցե ոչ մի միջնադարյան նկարում, եթե բացառենք Միքելանջելոյի «Անեղ դատաստանը» Սիբատինյան կապելլայում: Իսկ մըճահար Քրիստոսի պատկերն առհասարակ խորթ է ավետարանական ավանդությանը: Ո՞վ է, ուրեմն այս երկնային պատգամարերը:

Ավանդությունը գիտական տեսակետ չէ, որ վեճի դրվի:

Ազաթանգեղոսի մեզ Հասած բնագրում ոչ մի խոսք չկա Քրիստոսի իշնելու մասին: Պարզ ասված է, թե ով է ուռնավորը, ույս տեսչութիւն Աստուծոյ է, որ Հայի յերկիր, և տայ զողալ. մերձի ի լերինս, և ծխին»<sup>95</sup>: Սաղմոսներից (Ճ. 32) բերված այս խոսքն էլ պերճախոս է: Այս պատկերի մեկնությունը կուսալվորիչն ստանում է տեսիլքում երկնային իշխանությունից, որին կոչում է Տէր, և որը Քրիստոսի մասին խոսում է երրորդ գեմքով, իսկ ուռնավորին անվանում է «տեսչութիւն Աստուծոյ»: Ազաթանգեղոսի աշխարհաբար թարգմանությունում այս բառի տեղում զրված է՝ նախախնամուրին<sup>96</sup>: Ազաթանգեղոսի հունարեն բնագրում այս պատկերն անհարիր է, քան մեզ Հասած Հայերն ձեռագրերը, կարդում ենք ... Դ Յուստուդի ուշ Յ ԵՇ <sup>97</sup>: Էպիչուռու բառի առաջին նշանակությունն է այցելուրյուն<sup>98</sup>, բայց Հայտնի են նաև դիտում, հայեցում նշանակությունները<sup>99</sup>: Թվում է, ավանդությունն սկիզբ է առնում այցելուրյունից: Զեռագրերից մեկի լուսանցքում, ինչպես նշում են բնագիրը քննողները (Գ. Տեր-Մկրտչյան, Ստ. Կանայանց), զրիշ Հակոբ սար-

<sup>95</sup> Նույն տեղում, էջ 387:

<sup>96</sup> Ազաթանգեղոս, Պատմություն Հայոց, թարգմ. Ա. Տեր-Ղեռնդյան, Երևան, 1977, էջ 110:

<sup>97</sup> La version grecque ancienne du livre arménien d'Agathange, Lauvain-la-Neuve, 1973, էջ 282,

<sup>98</sup> Древнегреческо-русский словарь, т. 1. с. 634.

<sup>99</sup> Նույն տեղում:

կավագն (Բաղեշ, 1569 թ.) ավելացրել է՝ «որ է նոյն ինքն տէրն մեր Յիսոս Քրիստոս»<sup>100</sup>; Բայց աստծո այցելությունը չի նշանակում անձնական այցելություն:

Ընդմիջարկությունը, որ Առինակում է, դուրս է կոնտեսափառ արամարանությունից և քննական բնագիր չի ներմուծվել: Այս պարագայի վրա ուշադրություն է զարձրել անդերեն թարգմանության հեղինակ Ռոբերտ Թոմասոնը, իմանալու!, որ ուսնավորի գաղափարը «Հայոց ուշ ավանդություն մեջ է նույնանում Քրիստոսի Հետ»<sup>101</sup>: Դա խկապես այցելես է: Էւայ ճողովրդական ավանդության, Քրիստոսն է իշեւ Վաղարշառ ատի Հերապետակում<sup>102</sup>: Եվ կա զբավոր ավանդություն էլ XV դարի մի Ճապոնակիրում՝ «Տեսիլ մեծ և ժառանորեալ զաւրավայրեն Գեր (և) ոգայ վկային», որտեղ, ինչպես նկատել է Բարսեղ Սարգսյանը, կրկնվում է նույն տեսիլը, և իշնողն է ոչ թե Քրիստոս, այլ երկնային սերովրես: Ինչ է այդ, եթե ոչ «մեկնութիւն տեսլեան, որ կուսաւորշայն կը մատնանշէ, բաելով «եւ առժամայն եկն առ իս մի ի սերովրէիցն կոչեաց զանուն իմ և ատէ. Գրիգորիէ, կամիս ուսանել զոր տեսեր, եկի ես յայտնել քեզ զայն»<sup>103</sup>: Սերովրեսի գաղափարը, որ սիմվոլացնում է երկնային կրակն ու լույսը (երբ. Տերամություն)<sup>104</sup>, գրականության մեջ ուղեկցում է մարգարենության թեմային<sup>105</sup> և մեր խնդրի տեսակետից էական է:

Հրապաշտոն ուսնավորի գեմքը թերեւ այսքան չզրադեցներ մեզ, եթե լիներ շղթայվածության գաղափարից ան-

100 Ազարանվելոս, Խշվ. թէն. բնագիրը, էջ 387:

101 Agathangelos, History of the Armenians, New York, 1976, p. 478, 480.

102 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, էջ 223:

103 Հ. Բ. Սարգսյան, Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց մատնագարանին Մխիթարեանց, Վենետիկ, 1924 (Ժեռ. 1447), էջ 360:

104 Հ. Անայան, Հայերէն արմատական բառարան, հ. IV, էջ 284:

105 Ա. Պուշկին «Մարգարե» բանաստեղծության մեջ սերովրեն սրով մահկանացուի կուրծքը, սիրտը հանում, տեղը դնում Հրաշեկ ածում («уголь, пылающий огнем») և ասում. «Глаголом жги сердца людей» (Ա. Պուշկին Սочинения в 3-х томах, Մ., 1985, с. 385): Երկնվում է պրոմեթեայն սիմվոլիկան՝ կրակը լույսի և իմաստության խորհրդանիշ:

բաժան և ավելի հին, քան կուսավորչի տեսիլքը, եթե կուսավորչի վարդում չկրկնվեր նույն միթոլոգիմը և Շիդարի «առասպել տօնի» վայրում չհիմնվեր քրիստոնեական մարգարեսթյան տոնը:

Նավասարդյան խորհուրդը գոտանք նպատ լեռան ստորոտին, բայց կանգնած ենք հիւմա Մասյաց ստորոտին և Խորվիրապի բլրին ենք տեսնում նույն խորհրդի նշանները՝ Հրամեծար դարրինների աստվածության ստվերը կամ հին Պրոմեթեայի գաղափարը անուզգակիորեն ի հայտ է եկել կուսավորչի տեսիլքում, և դրա առարկայական հետքը Արտաշատի դղյակում է՝ կուսավորիչն իր միստերիան ստեղծում է Բագավանում, բայց մինչև այստեղ հասնելը ստեղծում է իր վարքը ըստ շղթայվածի միթոլոգիմի, ուռնավորին հասցնում է Վաղարշապատ: Այս խորհուրդը շալակած նազնում է Բագավանի տաճարի հրամարակում պատմելու Հովհաննես Մկրտչի վարքը՝ «դիմօր և թէատրոնօք»: Կուսավորչի վարքը, իր ոչ վկայաբանական, այլ ավանդաբանական շերտով մեզ համար դառնում է այն հայելին, որտեղ ազոտ կերպով ցոլանում է Բագավանի «առասպել տօնր»: Հնարավոր է, որ հսկման փոսի գաղափարը հիթանուսական է և Շիդարի թէատրոնի տիսլարանային բազագրատարրերից մեկը՝ Մեր երեակացությունն ուզում է ստեղծել խննի արքայազնի պատկերը՝ պարեգով, կուռքը շղթայելով, փոսն իջեցնելով և դարբինների ծիսական մրճաշարությամբ:

Լուսավորչի միստերիայի օպսիսը կամ տեսարանային կարգը կարելի է պատկերացնել մոտավորապես, ելնելով հին իրանական ծիսային տեստերից և «Պատարագամատուցի» սկզբում դրված տրամախոսական հաստվածներից: Կորած մի մաս վերագրվում է Լուսավորչին և այդպես էլ կոչվում է՝ «Լուսավորչի պատարագ»<sup>106</sup>, ննթաղրվում է որոշակի բանագործական (դրամատուրգիական)<sup>107</sup> սկզբունք,

106 Սրբագան պատարագամատուցը Հայոց, քննութեամբք Հ. Յովս. Գալթրձեան, Վիեննա, 1897, էջ 70—73:

107 Ըստ նոր հայկագյան բառարանի, բանագործակին բառի հունարեն համարժեքն է Նորմացաւորչուն և նշանակում է ոճացուցանել դրանն իրրե ի հանդիսի» (Հ. Ի. էջ 433):

այն է՝ պարերգական (խորային) տրամախոսություն : պատարագիչ քահանայի, սարկավագի և խորեսիսերի (պարերգակներ) միջև առանց արտաքին գործողության նշանների: Սա դրամա է ըստ արտաքին կերպի և բէատրոն չէ այնքանով, որ չի նախատեսում տեսանելի աշխարհ: Այստեղ, ինչպես կտևսնենք, փոխակերպված տեսքով գործել է հին հռունական ողբերգության օպսիսոր Փոխակերպումը տեղի էր ունեցել ասորական եկեղեցական միջավայրում: Հստ ավանդության, Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից էր բերել պատարագի խորհրդատետը: Բերել էր, թե ինքն էր հորինել, հռունական էր դա, թե ասորական, հայտնի չէ: Բայց որոշակի է, որ Լուսավորիչը քաջատեղյակ պետք է լիներ ոչ միայն հռունական ու ասորական ծիսակարգերին, այլև անտիկ դրամային, որով կատարելագործում էին իրենց լեզուն քրիստոնեական եկեղեցու առաջին գործիչները: Կար նաև թատրոն-վկայարանի (Յէտքուն-ու առունուն) գաղափարը, և հռոմեական սցենայում նահատակվածների հիշատակը դեռ թարմ էր: Այսպիսով, հին դրամայի օպսիսում էր տեղավորվում դատվող ու մեռնող աստվածության գաղափարը:

### ՄԻՍՏԻԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Խորանը հին պայմանաձեռ է: Գժվար է անմիջական կապ տեսնել անտիկ պրոսքենիումի, եկեղեցու խորանի և գրանկարչական խորանների միջև<sup>108</sup>: Կա թերեւ մի առնչություն, որ մեզ անհայտ է: Զենք կարող անտիկ սբեննեն համարել ավետարանական խորանների նախատիպը, ոչ էլ ուղղակիորեն կապել եկեղեցու խորանի հետ: Խորանը հեթանոս ծեսերից բերելու փորձ եղել է, և այստեղ հավանական մի կապ ենթադրվում է<sup>109</sup>: Բայց ո՞ւր փնտրենք հեթանոսական մեհյանի տիպը, եթե ոչ հին վկայարանների պարզունակ հորինվածքում: Մեհյանները հիմնահատակ կործանվելով իսկ (դա

108 Հմատ. Վ. Պազարյան, նշվ. աշխ., էջ 109—110.

109 Հմատ. Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 453:

անհավանական է<sup>110</sup>), թողել են իրենց հիշատակը: Իսկ եթե շայոց սրբերն ու վկաներն էլ նահատակվել են հին հավատի վայրերում... Հայտնի չէ: Սրկթեք տանիքով տաճարատիպ շինությունները, որ դրվել են նրանց գերեզմանների վրա ու վերածվել զոհարանների, հիշեցնում են հիշանոս ավանդությունը: Եթե մի քրմապետի գերեզման կարող էր դառնալ զոհարերության ու «առասպել տօնի» հանդիսարան, ապա տրամաբանական է երկում այդ ավանդության վերաբիմառտավորումը քրիստոնեական դարերում: Հավատի բովանդակությունը փոխվում է, խորհուրդը նույնական, բայց ծիսակարգի արտաքին ձևից հեռանալին այնքան էլ հիշտ չէ: Կուռքին փոխարինում է խաչը: Ուստի, իւաշելության գաղափարը և քրիստոնեական նահատակությունների հուշը մղում է նոր միստերիայի գաղափարին<sup>111</sup>, որն իրականացվում է եկեղեցու խորանում:

Խորան, առաղաւար և շահուարի իշմանայիշ կողմանը<sup>112</sup> պատահականություն չէ: Գրքային ճանապարհով բառուեր ստեղծվում են իհարկե (ոչ թե առարկայից նշան, այլ նշանից նշան), բայց այս առնչության պատճական հիմքը կարծես թե շոշափեցինք: Լեզվական փաստերը բացարձակութեական դատարկ տեղում շեն ստեղծվում, թեպետ կարող են մղել անձիշտ մեկնությունների: Կարծիք կա, թե ավետարանական խորանները ներկայացնում են միջնադարյան թատերաբեմի շրջանակը, կամ խորաններում ու նրանց շուրջը պատկերված են միստերիալ դրամաների տեսարաններ<sup>113</sup>: Հնարավոր է, որ հայելակամար (պորտալային) բեմի դա-

110 Հմբատ, Ա. Մանուչարյան, Քննություն 4—9-րդ դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1976, էջ 14—15:

111 Առ միջնադարյան (XIV—XV դդ.) արևմտանվրոպական միստերիաներին մասնակցել են նաև ծողովրդական կոմեգիանետներ: Դա պետք է բացարկել ոչ թե Հոգենոր դրամայի աշխարհիկացման միտուններով, ինչպես ընդունված է, այլ պատճական ձին ավանդությամբ, որ սկիզբ է առնում հոռմեսական սցենայից և քրիստոնի ծանակման դաղափարի վկայաբանական տվյալներից ու մեկնություններից:

112 Նոր բառզիք հայկագեան լեզուի, գ. 1, էջ 972, գ. 2, էջ 840:

113 Ա. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 453, 169—190, կմ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 187—189:

զափարը գիտակցված լիներ թատրոնից միանգամայն անկախ: Հարցը նուրբ է և պահանջում է առանձին, այս աշխատության խնդրից դուրս քննություն:

Իսկ եկեղեցո՞ւ խորանը...

Ինչ միամտություն՝ կանգնել եկեղեցու աղօթասրահում և բեմը դիտել որպես խաղավայր: Բայց դժվար չէ նկատել նրանց խորհրդապաշտական-ֆունկցիոնալ կապը: ատյան և գոճարան, զատապարտվածություն, զոճարերում, օրհներգություն և աղոթք: Այստեղ տեղի է ունենում Աստվածորդու դատի շարունակությունը, որպես սրբացում ու անմահացում, բայց այլ իրականության հայեցումով, ժամանակի ու տարածության ուրիշ շափումներում:

Եկեղեցու բեմը կյանքի հայելի կամ տեսանելի գործողության վայր չէ: Միսական ֆունկցիայի առումով զա նվիրապետական աստիճան է, որտեղ կանգնողը՝ պատարագիչ քահանան միջնորդ է երկրի ու երկնքի միջն: Իսկ դրաման տեղի է ունենում առարկայական աշխարհից վեր, անդրանցումային ոլորտում: Բեմը զառնում է բազմիմաստ մի խորհրդանշ՝ վերջին ընթրիքի սեղանը, Գողգոթան, Զիթենյաց յեռ՝ սրբազն զոճարերության վայր և անմահության դադափարի պատվանդանը, իսկ խորանը՝ երկնքի դուռ: Հռոմեական սցենայում տեղի ունեցած արյունալի ողբերգությանն այստեղ տրվում է լավատեսական խորհուրդի «Հանդիսատեսը» հավաքվում է մասնակցելու միստիկական ողբերգությանը, այն է՝ հաղորդակցվելու մենառ ու հառնող աստվածությանը: Սա կրոնական, ոչ թե էսթետիկական քավություն (կատարսիս) է, թեպետ էսթետիկական զգացմունք և գեղարվեստական վայելքի պահեր կան պատարագում: Բայց գեղարվեստականը, որբան էլ ակնհայտ լինի, նպատակ չէ, այլ միջոց՝ կրոնական ներշնչման տանող ուղի:

Պատարագը որոշակիորեն աղերսվում է անտիկ դրամային, թեպետ չունի նրա «տեսանելի աշխարհը»՝ մարդկային կրքերի հորձանոր: Եթե բոլոր ողբերգությունները հանգել էին մեկ խորհրդի, գարձել ուստի մագնում, և ընտրվել էր «մի մեծ կամավոր զոճ» (էնդելս)<sup>114</sup>, այլև հնա-

114. К. Маркс и Ф. Энгельс, Соч., 2-ое изд., т. 22, с. 477.

ցրավոր շէր վերաբռտադրել ո՞ւ բնավորություն ու բարք . (Էֆէ),  
ո՞ւ էլ դրությունների պատճառա-հետեւանքային ընթացք  
(Խնջուշ - iabula): Պիտք էր գրամատիկական այլ համակարգ,  
որ ստեղծեց Բարսեղ Կեսարացին (մոտ. 330—379)<sup>1</sup> մեծ  
առավածարանը և հույն զասական գրականության, մասնա-  
վորապես դրամայի գիտակը: Ի խորին տարրերություն իր  
ավագ ժամանակակցի՝ Ալուլինար Լառդիկեցու (մոտ. 310—  
290), որը փորձում էր քրիստոնեական գաղափարները տե-  
տեղավորել զասական ողբերգության շրջանակում, Կեսարա-  
ցին ստեղծում է ոչ թե դրամա, այլ ծխակարգ: Նա պահ-  
պանում է անտիկ դրամայի արտաքին տարրերը՝ մենախո-  
սություններ, տրամախոսություններ, խմբերգեր, ուսպիկներ,  
բայց հանում է դրամայի ողնաշարը՝ սյուժեն, գործողու-  
թյունն ու բնավորությունը: Անհատականության սկզբունքը  
պատրագում շի գործում, այլ մարդկայինը հանգեցվում է  
անդրանցումային (տրանսցենդենտ) գաղափարի: Կյանքը և  
մարդկային հույզերը՝ սեր, վրիժառություն, կարոտ, նա-  
խանձ, կնոջ և աժուտնու, հոր և որդու պայքար, անհատի  
իրավունք... ի՞նչ կարող էին արժենալ այս ամենը այն միակ  
զոհի առջև, որ խաչվել էր ի քավություն մարդկության շգի-  
տակցված մեղքի: Անհնար էր այդ գաղափարին տալ մարդ-  
կային կերպավորում, նրանից ստեղծել դիմակ կամ բնա-  
վորություն: Անհնար էր այդ, քանզի նոր ողբերգության հե-  
րոսը մարդ-անհատը չէր, այլ գաղափարը Մարդկային են-  
թագրվող զիմանկան այստեղ շատ պայմանական մի բան էր  
և անտեսանելի՝ խաչվածի տրանսցենդուսն արտահայտելու  
համար: Թիվստոսի ճշմարիտ պատկերը դառնում էր հաղոր-  
դությունը: Դա իրականացվում էր խորանակերտ կամարա-  
կապ մի տարածության մեջ, որ եկեղեցին է՝ տիեզերքի տա-  
րածաշափական դետերմինանոր, Բարսեղ Կեսարացու խոս-  
քերով ասած՝ «խորանարդ գմբեթաձև»: Ժամանակի ու պատ-  
մության պարբերականության (շրջանաձև՝ կրկնելիության)  
գաղափարը գուրս է բերվում անտիկ օրինաստրայի շրջանա-  
կենտրոն տարածությունից, դրվում երկնահայաց գմբեթի  
տակ՝ Տիրամոր պատկերի առջև, և եկեղեցին դառնում է  
գեղի Բարձրյալի աթոռը սավառնող տիեզերանավ:

Կարդանք «Առաքելոց սահմանադրութեան» (Առևտո ռենական) շրջագիրը «Յորժամ ժողովեցիս» (Նպիսկու պոսդ) զեկեղեցին Աստուծոյ. իրեւ մեծի իրիք նատո՛ բաղում իմաստութեամբ Հրաման տացես ժողովոցն, ազդ առնելով սարկաւագացն իրեւ նաւալքարաց՝ սահմանի տեղին եղբարցն իրեւ նաւամտից՝ բազում Հոգաբարձութեամբ եւ պարկիշտութեամբ: Եւ նախ, տաճարն լիցի երկայնածեւ ընդ արեւելս, եւ ունիցի յերկուց կողմանց՝ կահուց տանս կամ սրսկապանա՞ թնդ արեւելս, եւ նաւու նման իցէ: Կացցէ ի միջի աթոռ եպիսկոպոսին, եւ յաջմէ եւ ահեկէ նստցի քահանացութիւն եւ սարկաւագուոր առընթեր կացցեն զգաստը եւ թեթեւ զգեցեալը զի նմանին նաւազաց եւ որոց թիավարեն»<sup>115</sup>.

Նավի խորհրդանիշն ավելի հին է, քան անտիկ դրամայի օպսիսը: Երկուսն էլ, սակայն, ենթազրվում են պատարագում առանց ակնհայտ նշանային գրանորման: Տիեզերքի շըրշանակենտրոն պատկերը (ըստ անարսագոր-սլլա-ոռնյան կոնցեպտի) և ժամանակի ու պատմության կրկնելիության գաղափարը չեն կարող մեկնություն ստանալ եկեղեցական պաշտոնական կանոնում, ինչպես և նավը չէր կարող տեսանելի պատկերի վերածվել ծիսակարգում: Բայց երկուսն էլ, մեկը որպես ծիսական, մյուսը միթոլոգիական պայմանագիր, գործում են: Պատարագը համատեղում է տիեզերքի երկու մոդելները՝ պարբերականությունը (չնչ օչ. օւշան) և ուղղագիծ, երկնահայաց, անկրկնելի, անվերադառնալի ճանապարհը, ըստ օրիգին-ավգուստինյան կոնցեպտի: Մի պայմանագիր է Ողիսևսի ծովային ճանապարհը, որ վերադառնում է ելման կետին՝ կյանքի վերսկսման գաղափարին՝ խորհրդանշված մայր աստվածու՞ու անդրադարձումով՝ Պենելոպեի գիմակով, մեկ այլ պայմանագիր է Գիլգամեշի նավարկությունը «մահվան զրերով» դեպի վախճանի անխուսափելիություն: Իսկ նոյնի տապանը հաղթահարում է տիեզերական

115 ՕՍՐԱՊԱՆ պատարագամատոյցք Հայոց, աշխ. Հ. Յով. Գաթըր-ճեան, Վիեննա, 1897, էջ 44: «Մահմանադրութիւնը» գրվել է IV դարում և հայերեն թարգմանվել, ըստ Գաթըրճյանի, VI դարում:

դայրութիւն շրջեղեղը և հանգրվանում մարդկային ցեղի նորոգման կետում։ Այս վճիռը ևս աղերս ունի հին արևելյան դրականության խորհրդանիշերի հետ։

Ճանապարհները բաց են,

Եվ ուղեկիցը մայր աստվածութիւն՝

Լյանքի ստեղծողը<sup>116</sup>։

Քրիստոնեական կրոնը մահվան գաղափարին տվել է զոհաբերության իմաստ և իր նավն ուղղում է երկինք, ժամանակի ու տարածության անսահմանությամբ սիմվոլացնելով կյանքի հավերժականությունը։ Այս գաղափարն անցնում է ամբողջ միջնադարյան գրականության միջով։ Մաշտոցին վերաբրվող շարականը՝ «Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ» նույն գաղափարն է արծարծում։ Նավն ու նավարեկալը պատահական իրացին պատկերներ չեն նարեկացու «Ողբերգութեան մատեանում» (Բան ին, թ. 23—44, դ. Դ. 62—63), թեական առարկայական աշխարհ որոնող ընթերցողին նրանք կարող են բվալ երկրացին իրականության վերաբառադրություն։ Բայց նարեկացին ինքը տալիս է դրամեկնությունը։

Վասն զի թէ զբարի նաւապետն երկնաւորաւին զաւրաւք յաշխարհիս ծովու

Առ ի շխորտակեալս տապան իմ իմանտիի դոյցութեանս

Առց աշխարել բանիս յարմարութիւն... (Բան ին, թ. 50—53)։

Պատարագում ուղեկից կամ ուղեցույց աստղը Տիրամոր պատկերին է, և այդունդից անդրադարձված ու պատարագի ներքին պայմանաձևով է կողմնորոշված դանտեական տեսութիւր—«պատարագը»։ Միստիկական հերոսը հայտնվում է «անդո՞հալի զիշերում», Փարոնի նավակով մտնում «մահվան ջրերը», անցնում անդրաշխարհային տարերքի օվկիանոսը, հասնում քավության ափին, մաքրվում Լեթայի մոռացովթյան ջրերով... Զիրականացված կյանքի գաղափարը՝ պոետի մեռած սերը, որ աստվածածին կույսի բանաս-

<sup>116</sup> «Я открою тебе сокровенное слово»—Литература Вавилонии и Ассирии, пер. с аккадского, М., 1981, с. 200.

տեղծական անդրադարձն է, դառնում է տիեզերքում ճամփորդող հոգու ուղեկից աստղը ու տանում նրան լույսի օվկիանոսով դեպի Հավերժական հոգեւոր գոյություն։ Պատահական չէ երեք կանտիկաներն ավարտող վերջին բարդութեական աստղը, որը Դանտեի սեալիստ մեկնիշներին երևում է անհասկանալի։

Նավը հույսի ու փրկության խորհրդանիշ է մարդկային գիտակցության մէջ, երազում, բանահյուսական կոնտերուտերում<sup>117</sup> և արվեստում առհասարակ։ Այլվագովուկու ալեկոծ տիեզերքում այդ սիմվոլը գործում է խորտակված տապանի և արեգակի թույլ շողքի պատկերներով։

Բարսեղ Կեսարացու «Պատարագը» Վ դարում թարգմանվել է Հայերեն, ազգային երաժշտությամբ դրվել ազգային հողի վրա, դարձել ազգային մշակույթի փաստ։ Այսօրվա պատարագը (Հետագա մշակումների համահավաք) ընկալվում է որպես յուրահատուկ երաժշտական դրամա։ Թէրես այդպես է, եթե իրավիճակն ընդունում ենք կրոնական նպատակից դուրս։ Մթնոլորտն իսկապես օպերային է և զուգորդվում է եվրոպական նոր թատրոնի պատկերացմանը։ Իուանդացի ճանապարհորդ Հենրի Լինչը 1893 թ. էցմիածնում ներկա է եղել երեկոյան ժամերգության և այն համարել է թատրոն, թեպետ այնտեղ շկա կյանքի բնմական արտացոլման որևէ հետքը «Հայ պատարագը,— գրել է եվրոպացի մի հեղինակ,— մի ամբողջ ողբերգություն է։ Պատարագի քահանան բաց գլխով (՝) և բորիկ ոտքերով, փայլուն զգեստի տակից պարզած ծեռքերով (՝) կանգնում է ոսկով և ծաղիկներով զարդարված լուսավոր զոհասեղանի առաջ և ծունկի եկած աղոթող ամբոխի աշբերում ներկայացնում տանջվող

117 Նավը, որպես օտարպատճների ապաստան, գործում է ուստական ժողովրդական «նավակ» դրամայում, որ պարերգական է, ակնարկում է նավակրություն «Вниз по матушке по Волге» և նավակի պատկերը չի առարկայացնում որևէ պարմանանիշով (տես «Русский фольклор», Тексты, М., 1987, с. 348—354).

մարդկության ձգտումը դեպի ճշմարտության և գեղեցկի աղքակության<sup>118</sup>,

Օտար ու զարմացած մարդու երևակայությունն ինչ-որ բան հորինում է: Բայց դրանում կա օրյեկտիվ պատճառ: Պատարագը շունի թեմական պատկեր, բայց տեսլիք է ստեղծում ունկնդրի կրոնագեղարվեստական երևակայության մեջ:

Ի՞նչ պատկեր է այդ:

Շուրս գանք տաճարից և թերթենք «Բարսեղեան պատարագը»:

Դիմքով դեպի ավագ խորանը կանգնած քահանան կարդում է՝ «ողջույնի աղոթքը».

Քահանայն. Տեր տասուած արարիչ մեր, որ արարեր զամենան յոշնչէ, և ամեր զմեղ յայս կենզանութիւն, և ցուցեր զմեղ ճանապարհ կենաց եւ փրկութեան և արամեաւուրս արարեր զմեղ յայտնութեան երկնաւոր և ահաւոր խորհրդոյս <...> արժանի արարեր զմեղ մերձենալ առ սուրբ սեղան քո, և մատուցեալ պատարագ աւճրնութեան զկենդանի եւ զբանաւոր պաշտանն մեր:

Ի ձայն—եւ առարեա ի մեկ զշնորհս բարերար սուրբ Հոգոյն... այժմ եւ միշտ եւ յարիտեան յարիտենից:

Փողովուրդն — Ամէխն:

Սարկաւագն. Ողջոյն տուք միմենաց ի համբոյք սրբութեան<sup>119</sup>:

Սկզբում իսկ պարզ տեսնում ենք Սոֆոկլեսի «Երեք դերասանի» օրենքը: Քահանան կորիֆայոսն (պարագլուխ) է և պրոտագոնիստը (նախամրցորդ), Զայնը դեֆտերացոնիստը (երկրորդ հիպոկրիտես), Սարկավագը արիտացոնիստը (երրորդ հիպոկրիտես): Իսկ ժողովուրդը խորեստիսների խումբն է: Հունարեն բնագրի շօրծ բառը թարգմանվել է ժողովուրդն:

Օրջնիբությունը շարունակվում է անտիկ դրամայի արտաքին պարերգական ձևով: Երեք հիպոկրիտեսների և խորոսի միջև որամատիկական փոխհարաբերություն շի ստեղծվում: Նրանք շարունակում են մեկը մյուսին և միասնականանում խմբի համանվագում: Բեմ է բարձրանում

118 Կ. Անդրանիկ, Թատրոնը հին Հայուստանում, Երևան, 1941, էջ 111:

119 Սրբազն պատարագամատոյցք Հայոց, էջ 120—124 (Երվում է կրթատումներով):

սկզբում քահանան, հետո սարկավագը (կամ սարկավագները): Զայնը մնում է ներքսում, խորևիսների խմբում և շարունակում է կորիֆայոսի դերը: Դերի և «դերասանի» միասնության խնդիր այստեղ չկա, և դա նույնպես անտիկ թատրոնի սկզբառունքներից է: Անհատ պերսոնաժի գաղափարը չի գործում: տեքստային հատվածները բաժանված են ոչ բայց դեմքերի: Եթե կա «դեր», ապա դա անցնում է մեկից մյուսին, ինչպես անտիկ թատրոնում, և դերը չի ներկայանում որպես գործող անձ, բանի որ անձ գոյություն չունի: Տեղի է ունենում ընդհանուր հաղորդություն, որտեղ անմասնակից դիտողներն ավելորդ են: Ուստի, սարկավագը «ի համբոյր սրբութեան» խոսքերից հետո ասում է. «որք ոչ էք կարող հաղորդել, առդուրս ելէք եւ աղօթեցէք»: Հաղորդությունն ու օրհնությունը շարունակվում են նույն եռյակ փոխհարաբերությամբ՝ խոսքնդ խոսք, ձայն ընդ ձայն:

Սարկավագն. Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք... եւ նայեցարուք զգությութեամբ:

Ժողովուրդն. Առ ըեզ Աստուած:

(Սարկավագն. Պատարագ Քրիստոսի մատլի զան Աստուածոյ):

Ժողովուրդն. Ուղործութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

Քահանայն. (Ծնորհ, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւն Հօրեւորութիւն արդույն սրբոյ եղիցի ընդ ձեզ ամենենեանդ

Ժողովուրդն. Եւ ընդ հոգուց քում:

Քահանայն. Ի վեր ընծայեացուք դսիրտս ձեր (աստուածային երկիւղիւ):

Ժողովուրդն. Ունիմք առ շեղ, Տէր ամենակայ!

Քահանայն. Եւ զոհացարուք զՏէառնէ (բոլորով սրտի):

Ժողովուրդն. Արժան եւ իբաւ:

Քահանայն. Ցարժանի եւ յիրամի վայելէ զոհութիւն եւ երկրագութիւն մեծավայելլութեանդ քո <...> Սուրբ, սուրբ, սուրբ ես արդարիւ, Տէր Աստուած մէր, եւ չիք չափ մեծավայելլութեան ւրբունեանդ քո...<sup>120</sup>

Պատարագիւը հանդես է գալիս և՛ զոհաբերությունն իրականացնող ու աստծո առջև միջնորդ կարգված քրմի, և՛ զոհարերվող աստվածության դիրքերից: Գործում է դարձյալ անտիկ թատրոնի սկզբունքը՝ երկու դեր միաժամանակ և

երկու դերում էլ՝ բրմական զգեստով: Պատարագիչի թագը  
և արարողապետի տարբերանշանն է, և Քրիստոսի գլխին  
դրված փշե պսակի խորհրդանիշը<sup>121</sup>: Զոհվող աստվածու-  
թյան փառքը փշե պսակն է, իսկ թագի վրայի ոսկին ու  
աղամանդր՝ այդ փառքի գովերդումը: Խնկի ծուխը երկինք  
համրապնող ողջակեղն է («մատուցեալ եղեալ ի հուր թախ-  
ծութեան անձին տուորման զպտուզ զղձից ճենճերոյ սասա-  
նեալ...»)<sup>122</sup>, Հայոն ու գինին՝ աստծո մարմինն ու արյունը՝  
երկրի ուժը, եթե նկատի առնենք դիմեարեական ու դիտի-  
սոյան միստերիաները: Բնմը «Վերջին ընթրիքի» սեղանն  
է կամ Գողգոթան<sup>123</sup>, և ինչքան էլ նայես այնտեղ ու սպա-  
սես, թե ինչ է կատայլելու, իգուր է, բեմը ո՞չ կյանքի հա-  
յելի է, ո՞չ էլ տեսլարանն Ենթազրվող գրաման տեղի է ունե-  
նում, այո՛, այստեղ, բայց չի հայտնվում ոչ մի տոպրկա-  
յական նշանով, «զի ոչ տեսանելի է ահաւորութիւն սուրբ  
Խորհրդոյն, — ասում է Հովհանն Մանդակումին, — այլ իմա-  
նալի՝ զօրութիւնն. քանզի ոչ ինչ տեսանելի աւանդեաց մեզ  
Քրիստոս ի խորհուրդն և ի մկրտութիւնն, այլ իմանալի»<sup>124</sup>:  
Քահանան երեմն զառնում է զեպի ժողովուրդը և խաչա-  
կնքում ազոթողներին: Բնմն այստեղ զառնում է նվիրա-  
պետական սահման, որով միջնորդը մի աստիճան վեր է զաս-  
վում ազոթող բազմությունից: Իսկ երբ վարագույքը փակ-  
վում է, և քահանան աղոթքը շարունակում է փակ վարա-  
գույքի հանում, նա բարձրանում է ևս մի աստիճան զեպի  
երկինք, գծվում է նվիրապետական երկրորդ սահմանը: Այս-  
տեղ տեսնում ենք անտիկ թատրոնի ևս մի զուգահեռ: Ող-  
րեգության հերոսը զոհվում է ոչ թե հասարակության աշքի  
առջև (դա անհավանական ու անբնական պատկեր կարող է  
ստեղծել), այլ մտնում է խորանը (շահու): Տրիտագոնիստ  
հիպոկրիտեսը հայտնում է տեսլարանից դուրս տեղի ունե-  
ցածը, իսկ հաջորդ տեսարանում պրոտագոնիստը (հերոսի

121 Հմմատ. Հ. Մարտինոս Կոխիսմ. Մեկնություն ս. Պատարագի, թարգմ.

Հ. Քերովէ Հովհանյանի, Պլովդիվ, 1934, էջ 27—28:

122 Գրիգոր Նարեկացի, նշվ. Հրատ., էջ 246:

123 Հմմատ. Հ. Մարտինոս Կոխիսմ. նշվ. աշխա., էջ 27—28:

124 Սրբազն պատուագամատոյցք Հայոց, էջ 68:

դերակատարը) գուրս է գալիս խորանից՝ կաղղաշու տեքստային նոր հատվածներ այլ գործող անձի՝ անունից Այս իրավիճակը անտիկ դրամայում ծիսական է, Պատարագում տեսնում ենք այդ հին ծիսական հետքը, բայց ոչ անտիկ իմաստով:

Այնուամենայնիվ, որտեղ է չեղոքացված ֆարուայի հետքը: Փահանայի խոսքում կա «Հավատո հանգանակի» վերաշարադրված մի հատված, որ համառոտ պատմում է Քրիստոսի ծնունդի, սքանչելագործությունների ու զոհվելու մասին: Այստեղ էականը հարության գաղափարն է և այդ է ամենից ավելի ընդգծված ու պոետականացված: Անտիկ դրամայի ողբերգական բավությունը հանգում է պարզ բացատրության, որն ավելի բարոյագիտական է, քան էսթետիկական: Դրան հետեւում է կյանքի հավերժականության դաշտավայրը:

Փահանայն. <...> եւ վերացաւ իրկինս, եղեւ պտուղ ննջեցելոց եւ անդրանիկ ի մեռելոց, զի եղիցի յամենայնի ինքն առաջացեալ. նրանու էնդ աշմէ մհծութեանդ ի բարձունք, որ զայ եւ հատացանէ իրաքանչիւր ըստ գործոց իրոց, եւ եթող մեղ յիշատակ փրկութեան զշարշարանացն իրոց զայս՝ զր եղեալ է առաջի<sup>125</sup>:

Այստեղ միստիկական վճռի հանգույցն է: Հնչում է Հառնող Քրիստոսի ձայնը, և այն, որ խոսողը չի երևում, իրավիճակին հաղորդում է իսկապես հուզական-էսթետիկական լիցը:

Ի ձայն. Առեք կերայք ի սմանէ ամենքիան, այսէ իմ մարդին՝ որ վասն ձեր եւ բազմաց բնեալ բաշխի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Պայլուն. Ամէն:

Փահանայն. Սոյնպէս եւ զբաժակն յետ բնթրեաց ի ծննդենէ որթոյ առեալ խառնեաց, աւշբնեաց, զոհացաւ, ետ իրոց բնտեեալ աշակերտացն եւ առաքելոց ասելով:

Ի ձայն. Առեք արբէք ի սմանէ ամենքիան. Այս է արին իմ նորոյ ուխտի՝ որ վասն ձեր եւ բազմաց հեղու ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց<sup>126</sup>:

Խորհութիւնների երգից հետո արտասահնվում է ամենաբանաստեղծական խոսքը:

125 Նույն տեղում, էջ 136:

126 Նույն տեղում, էջ 138:

Ա. ձայն. Այս է իմ մարմին եւ արին, զայս արարէք առ իմոյ յիշաւ-  
տակի, քանիցս անգամ թէ ուտիցէք դհացս զայս եւ զբաժակս ըմպիցէք,  
զմա՞ն իմ պատմեցէք մինևե եկից ես<sup>127</sup>,

Սա արվելի զորեղ պատվիրան է, քան այն, ինչ լսում ենք  
Շեքսպիրի «Համլետի» վերջին տեսարանում, որտեղ դարձ-  
յալ թեածում է տիկեղբրական զոհի գաղափարը:

Համլետ. Հորացիոս, մեռա, բայց դու ապրում ես  
Պատմիք իմ զատը և զլխս անցըք անտեղյակներին:  
<...>

Եթե սրտից մեջ մի տեղ ունիմ ես՝  
Զրկիր քեզ առայժմ երանությունից,  
Եվ շեշիր դեռևս այս ժաման աշխարհում,  
Իր իմ պատմությունն ամենքին պատմես<sup>128</sup>:

Այս համեմատությանը դիմում ենք ոչ հուզական մզում-  
ներով: Շեքսպիրի ողբերգության մի շարք կետերում կան-  
խորհրդապաշտության հետքեր, որ գալիս են թերևս հեղի-  
նակի քրիստոնեական աշխարհայացքից, գուցե և պատարա-  
գից: Բայց խորհրդապաշտությունն ու ոնեալիզմն, այնու-  
ամենայնիվ, բաժանվում են Քրիստոսը խոստանում է գալ՝  
«պատմեցեք իմ մահը մինչև ես կգամ»: Համլետը մեռնում  
է, թողնելով իր պատվիրակին: Միստիկական ողբերգության  
հերոսը խոստանում է գալ, չի գալիս և «Հառաշանաց հեծու-  
թեան»<sup>129</sup> է մատնում Նարեկա վանքի մեծ ճգնավորին, իսկ  
ֆլորենտացի Գանտեին հորինել է տալիս իր անդրաշխար-  
հային դատաստանը:

Միշնադրյան պատարագը, որի մշակված ու կատարե-  
լագործված ձևի ականատեսն ենք, ընկալվում է սոսկ որպես  
պաշտամունքային արարողություն: Բայց դա նաև առաջին  
ողբերգությունն է, որ ստեղծվել է անտիկ ողբերգության ան-  
կումից հետո, ամբողջացնելով կատարսիսի գաղափարը, նաև  
յուրացնելով ու փոխակերպման ենթարկելով անտիկ դրա-  
մայի տիպաբանությունը:

Նկատենք ևս մի տիպաբանական հատկանիշ: Անտիկ

127 Նույն տեղում, էջ 139:

128 Վ. Շեքսպիր, Ընտիք երկեր, հ. 1, էջ 111:

129 Գրիգոր Նարեկացի, նշվ. Հրատ., էջ 246:

ողբերգությունը ներկայացվում էր շրջանաձև հրապարակում («Ի՞ն հետագայում դարձավ կիսաշրջան»), մեռնող ու հառնող հին աստվածության՝ Դիոնիսոսի խորանի առջեւ ու խորանից դուրս բերված կուրքի շուրջը, տրամախոսական ու խորային հատվածներով ու երգերով։ Պատարագի օրհներգությունները և ձևական տրամախոսությունները տեղի են ունենում։ զոհասեղանի առջեւ, ստասիմների (անշարժ խմբերգ) ձեռվ, բայց շրջանակենտրոն գործողության գաղափարը կա այստեղ։ Բոլորը սեհոված են մեկ կետի՝ խաչելության կամ Տիրամոր պատկերին։ Դա անտիկ զոհասեղանի կամ քամելիի (Յուքենի) վոխակերպումն է։ Զոհասեղանի՝ կենտրոնում լինելու և նրա շուրջը ձախից աջ պտտվելու դադարարը նույնպես կա պատարագում։ Պատարագող խումբը արարողության պահերից մեկում թեմից իջնում է և հանդիսավոր, բուրվառը (կրակարանի հիշատակը) ճռճելով և քշոցները զնդզնդացնելով անցնում է խսկապես ձախից աջ՝ տաճարի կենտրոնի հարաբերությամբ։ Այս անցումը հիշատակն է անտիկ խորոսի պարող (նախերգ) և Ենոսի (վնարչերգ) կոչված անցումների։ Տրամաբանական այս ընդհանության մեջ ևս ոչ մի զարժանալի բան չկա, քանի որ ծիսային նախատիպը ընդհանուր է, ըստ տրամաբանության էջմանների Մայր տաճարում ավագ խորանից բացի կա երկրորդ կենտրոն՝ Իջման սեղանը, որը ոչ միայն ուկե մուրճի առասպելական հարվածի կետն է, այլև հիշատակը արարողական հին պայմանաձևի։ Տրգատի ու Լուսավորչի ժամանակ արդյոք Իջման սեղանը չի եղել արարողության կենտրոնը։ Լուսավորչի տեսիլքն այդ է հուշում։ Իջման սեղանը, հավանաբար, հատկանշում է հին և նոր ծիսային պայմանաձևերի կապը։

Պատարագում գործում է հին գրամմայի ունիվերսալ մուգելը։ Բայց խուսափում ենք քնարարոն անվանել այդ, նկատի ունենալով հետևյալը։ Միջնադարի ոչ մի հեղինակ պատարագը չի կոչում այս անունով, քանի որ թէատրոնը բացասական մակդիր էր և իրականում հատկանշում էր անտիկ թատրոնի՝ ուշ հելլենիզմի դարաշրջանում անկման հասած,

խեղաթյուրված տիպը՝ ծայրահեղորեն աշխարհիկ, գոհհկության աստիճանի առարկայական «տեսիլք»։ Պատարագում արիստոտելյան միրուր գործում է ոչ որպես ֆարուկա՝ պատճառահետևանքային կապակցում, այլ՝ թեմա, որը շի վերածվում ներկայացման սյուժեի, իսկ բնավորությունը (էքսո) լուծվում է կրոնական իդեալում, շատ թույլ է մոտենում գեղարվեստական իգեալի, այն է՝ շեղոքանում է որպես կերպար, դառնում է տրանսցենզուս։ Վերջապես, պատարագում բացառվում է խաղային տարերքը՝ թատրոնի բուն էությունը, և ամեն ինչ ենթարկվում է ծիսային պայմանավորվածության։

Պատարագն ունի բանաստեղծական թեմա (ոչ սյուժե)։ Կ երաժշտական սյուժե։ Այս շերտում ահա տեսնում ենք դրամատիկական ընթացք կամ ներքին գործողություն։ Արարողությունն սկսվում է տիպուր, էլեգիական տրամադրությամբ, աստիճանաբար անցնում ողբերգական տոնայնության, թափվում ջրվեժի պես, խաղաղվում ու ցոլացնում երկինքը, դառնուց պայծառ ու տոնական, կարծես հրեշտակներ են իշխում երկնքից։ Կյանքի միջնադարյան ըմբռնմանամենագեղարվեստական վերարտագրությունն է այս՝ տառապանք և ինքնազնաբերում, փրկության հույս ու երկնայինարքյության երազ։ Նարեկացու «Ողբերգությունն» էլ ունի թեմատիկ նման կառուցվածք, «երաժշտաբանաստեղծական» սյուժե, որ հույզի հետևողական հասունացումն է։ Մարդու հոգեկան կյանքի այս ըմբռնումով է հորինված նաև Դանտեի անդրաշխարհային ուղղերությունը, որ սկսվում է «մի անտառում մթագին»<sup>130</sup> և ավարտվում տասներորդ երկնքում։ Եթե ուշադիր լինենք, կնկատենք, որ այդպես է կառուցված կուսավորչի վկայաբանությունը։ Սուրբը տառապում է մութխորխատում, ապա մտնում աշխարհ, տեսիլքներ պատմում, հրաշքներ գործում և հեռանում լեռները, որպեսզի այնտեղից բարձրանալ աստծո մոտ։

Պատարագը դրամայի ծիսային պայմանաձևն է, հնագույն միստերիաների նորոգումը, ընդհանրացումն ու ամբող-

130 Գանձեւ Ալիքիերի, Աստվածային կատակերգություն, թարգմ. Ա. Տայանի, Երևան, 1969, էջ 71.

շացումը։ Գա ծիսական մի ունիվերսում է, որի օգնությամբ կարող ենք նայել դեպի ետ և դեպի առաջ՝ տեսնել Հնագույն խորհրդապատշաճական դրամայի հիշատակը, անտիկ դրական (վաղ դասական ձևում) և վերածնության դարաշրջանի դրամայի հեռանկարը՝ իտալական ողբերգությունից, պատուրալից ու լառութից (Հոգման դրամա) առաջացած օպերան՝ թատրոնի ամենաազնիվ ծնունդը։ Ահա այս պատմատիպարանական կոնտեքստում է, որ մեզ համար գեղարվեստական իմաստը ու արժեքը է ստանում վաղ միջնադարում ազգային յուրացման ենթարկված քրիստոնեական խորհրդապաշտական ողբերգությունը։

Տիեզերքի ու մարդկային կյանքի միջնադարյան ըմբռանումը ծիսային պայմանաձևերում ենթադրում է ոչ միայն երկնայինը։ Գա նպատակն է՝ վերինն ու վերջինը։ Բայց կա հակուսնյա իրականություն՝ երկրայինը, որ նույնպես թելադրում է ծիսային պայմանաձևեր, թերևս նույն տրամաբանությամբ, բայց ուրիշ գույնով։

### ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ ՄԻՒՍԵՐԻԿԱ

Մի դատիք, զի մի դատիցիք, զի  
որով դատաստանաւ դատից՝ դատելուց  
լր։

Մասր., է. 1

Անցյալ դարի 90-ական թվականների վերջին ազգագրագետ Վահան վարդապետ *Skev-Մինասյանը* Երուսաղեմի «Արքոց Հակոբեանց» վանքում դիտել ու գրանել է «Արեղաթողի հանդես» ծիսախաղը<sup>181</sup>։ *Skev-Մինասյանի* հրապարակումը կարծես ամբողջական չէ որպես բնագրային արժեք, բայց խաղի նկարագրությունը շատ առումներով լիկատար է և որպես Բարեկենդանի ծես տիպաբանորեն հիշեցնում է նույն շրջանում դիտված ժողովրդական դատական խաղերը։ Փաս-

181 Վ. *Skev-Մինասյան*, Անգեր գպրություն և Հիւ սովորություններ, Հ. 1, Ա. Պոլիս, 1904, էջ 63—70.

որ ուսումնասիրված է, որոշ կողմերով մեկնաբանված<sup>132</sup> ենորից հրապարակված<sup>133:</sup> Բայտ ամենայնի տրամադրում է նաև ազգագրագետ ուսումնասիրողների հնիքագրությունը, որ «Արեգաթողբ» հեթանոս Բարեկենդանի կրկնությունն էր մանական շրջանակներում՝<sup>134:</sup> Տեր-Մինասյանի նկարագրությունից բացի այս ծիսախաղը հիշատակված է Պերճ Պոռցյանի «Հայրի խնդիր» վեպում, որտեղ նոր երանդներ չկան: Հետաքրքրիր է Պոռշյանի բիբած մեկ տվյալը. խաղը տեղի է ունենում էջմիածնում՝<sup>135:</sup>

«Արեգաթողի հանդեսի» մասին նոր տվյալներ լուսենք են հին տվյալներն եւ, որ բավական ազոտ են, վկայաբերում ենք ըստ եղած ուսումնասիրությունների: Այս երեսութքը մեզ հնատաքրքրում է որպես զուտ թատերական երևոյթ, ավելի ճիշտ՝ որպես հին դրամայի և թատերակարգի հիշողություն: Հնադույն ժամանակների ֆրատրիալ նստվածքների հետքը, նոր ժամանակների սոցիալ-քարոյական հարաբերությունների արտացոլումները, որոնք արդեն դիտված են այսուհետ, մեր խնդրի տեսակենտրից պակաս էական են: Հետաքրքրիրը դրամայի համակարգն է քր խորային տիպով և միստերիալ բնույթով, հետաքրքրը պատարագային հորինվածքն է և ամենին ոչ պատարագային բովանդակությունը:

Որքանո՞վ է հին «Արեգաթողը»:

Վաղ միջնադարյան մատենագրության մեջ այս բառը մի համապատ և հին հայերենի բառարաններում էլ չկա: Ազգագրագետ Վարդ Բդոյանը շեշտում է այս հանգամանքը և միաժամանակ փորձում գտնել նրա, որպես ծիսախաղային երեսութիւն, հետքը վաղ միջնադարում վկայաբերվում է Սահակ Պարթևի «Կանոնագիրքը»: «Եւ տօն բարեկենդանի և ողողոմեանն մէծ, որ թարգմանի բարեբանեալ օր և թէ այլ տօն ոք կատարեսցէ յանուն առաքելոց և մարգարէին, հասա-

132 Ա. Արշարունի, Խշվ. աշխ., էջ 43—55:

133 Վ. Բղոյան, Հայ ժողովրդական խաղեր, Հ. 1, Երևան, 1963, էջ 59—62, 134—139:

134 Հայեկական սովետական հանրագիտարան, Հ. 1, Երևան, 1974, էջ 22:

135 Պ. Պոռշյան, Երկերի ժողովածու, Հ. 1, Երևան, 1953, էջ 341:

բակ եղիցի, զի յայտնապէս աներկեան և տուանց հակառակութեան պաշտօնէից կացցեն դասր, գիտելով որում շնորհը արժանաւորք եղեն, զի պարկեցտութեամբ և ուսումնասիրութեամբ վարեսցին և մի եղիցին բանակոխի, այլ սիրովք, արժունք յամենայնի, զի բաւական լինիցին խրատել զատահակս և ծովացեալս ածել ի կարգ հաւատոյ, բանզի այդ գործ է վարդապետի և հոգեոր հովութի<sup>136</sup>:

Խոսրը վերաբերում է իսկապես առաջալներին ու մարդարեներին նոյնիված մի տոնի, բայց ի՞նչ բանակոփախներին և ստահակներին խրատելու կամ «ի կարգ հաւատոյ» դնելու մասին է ակնարկը։ Այս կանոնը, ինչպես իրավացիորեն նկատում է Բղոյանը, «պարզաբան մատնում է «արեղաթող» ծիսախաղի գոյությունը Սահմակ հայրապետի օրոք, թերևս ոչ «արեղաթող» հորջորջմամբ»<sup>137</sup>, Բառը, ամենայն հավանականությամբ, հին չէ, բայց ծիսախաղը հին է<sup>138</sup>:

Բառի առաջին դրական վկայությունը պարզէլ է Ներսես Ակինյանը և նրա հրապարակած փաստը ուշադրության է առել Արշալույս Արշարունին։ Ակինյանը բերում է Մինաս դալիր Թոխաթյցու 1563 թ. դրած մի տաղում:

Բանք բարեկենդանն մատենաւ,  
Մորթէթոնըն անհետ եղաւ,  
Ուրախութեան ժամբն հասաւ,  
Աբեղաթողն բարձւաւ<sup>139</sup>։

Անձանոթ է մնում մորթէրորով բառը նաև Ակինյանի համար, իսկ թե ինչու է Արեղաթողը բարձլում Բարեկենդանի մոտենալու հետ, անհասկանալի է և՛ Ակինյանի, և՛ մեզ համար ի դեպ, Արշարունին «բարձրւաւ» բառը հակառակ իմաստով է հասկանում<sup>140</sup>։

136 Կանոնագիրք Հայոց, կազմ. Ա. Ղլուճան, Թիֆլիս, 1914, էջ 38։

137 Վ. Թույան, նշվ. աշխ., հ. 1, էջ 61։

138 Հ. Աճառյանը նոր բառ է համարում արեղաթողը (Արմատական բառանք, հ. 1, էջ 74):

139 Ն. Ալինյան, Հինգ պահուիստ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 104։

140 Ա. Արշարունին, նշվ. աշխ., էջ 46։ Նման սխալների առատությունը և նյութի անսիստեմ օգտագործումը այս զիրքը դարձնում են զրեթե անգամանելի։

Այսպիսով, «Արեգաթողբ» երեք վկայություն ունի՝ մեկը՝ մյուսից բավական հեռու (V դ., XVI դ., XIX դ.): Բայց էականը գրական վկայությունների ժամանակը չէ, այլ երեսութիւ տիպարանությունը: Թերևս պետք է համաձայնել Վ. Բգույնի հետ, որ այս ծիսախաղում կան «նախնադարյան դուալիզմի հետքեր», «աղանդավորական շարժումների դեմ միջնադարում ծավալված պայքարի ձևեր»<sup>141</sup>: Բողոքանք նկատի ունի «մասնավորապես բորբոքիտների և մզօնեականների ազանդութեան նկատմամբ եկեղեցու ձեռք առած միջոցները»<sup>142</sup>: Այս և նման կոազումները մեր խնդրին գեթե շեն առնշնչում, բայց չուշում են, որ երեսությը պետք է հին համարել, չկապի բառի հետ:

Բարեկենդանը մեռնող ու հառնող աստվածության տոներից է, «որ սեփականնեալ է աւորց յառաջելոց քան զերեմելի շարաթապահ», մանաւանդ քան զմեծ պահս»<sup>143</sup>: Բաեն կենդան բառը համազրին է բարոսականի հետ<sup>144</sup>: Ել աճաշին տոնացույցի այս հեշտ տակը գոնում ենք վանական միջավայրում: Բացեկենդանի վերցին օրը դառնում է աշխարհիկ օր Հռոմեորականների համար: Մոռացվում են վանական կյանքի բոլոր պատշաճությունները, նույնիսկ պաշտոններն ու աստիճանները, մի կողմ են ձգվում խաչն ու Սվետարանը, վանք են գալիք գուսաններ, և երկնայինն ու երկրայինը պար են բռնում: Կազմվում է ազգմալից մի թափոր, բոլոր՝ վանականներ, սարկավագներ, արեգաներ, եպիսկոպոսներ, հավասար իրավունքով ու դիրքով, սարկավագներից մեկն ընտրվում է թափորապետ՝ քվեարկության բաց և դիմոկրատական սկզբունքով: Վանքի գալիքը լուսավորվում է շահերով ու մոմերով, կենտրոնում դրվում է գաճավորակ՝ զարդարված շորս լուսավոր կանթեղներով, ցնցուիներից կարված ամպհովանիսով: Թափորապետի ուսերին է զցվում թղթե շորքը վրան խոշոր տառերով գրված վանքի բոլոր միաբանների անունները, գլխին է դրվում թղթե շաթալ-թաղը և

141 Վ. Բղոյան, Եզդ. աշխ., հ. I, էջ 60:

142 Նույն տեղում:

143 Նոր բառզիրք Հայկագեան լեզուի, հ. I, էջ 450:

144 Նույն տեղում:

ձեռքն է տրվում խոտերից հյուսված գայիսոնը: Թափորապետը ծափահարությունների, հոհողոցների ու սուլոցների աղմուկի տակ հանդիսավորությամբ բարձրանում է «գահ»: Խորհստիսների վայրենացած խումբը մի պահ լուսում է, և թափորապետին է մատուցվում գինու տիկը: Պատարապում էլ գինի կար, բայց ոչ գինու տիկը: Սրանք տարբեր խորհրդանիշներ են: Հովհան Մանդակունի կաթողիկոսն ասում է: «Եւ մի իբրև զգինի համարիցին եւ տեսանիցնս, զի ոչ տեսանելի է ահաւորութիւն սուրբ Խորհրդոյն»<sup>145</sup>: Գինին «Արեգաթողի հանդեսում» ի՞նչ է... Զխուսափենք մեկնությունից Դիոնիսոսն է հանդիս մտել: Եվ գահակալ-թափորապետը միանգամայն ազատ է զլուխը քաշելու որթատունիի արևախինդ կարմիրը Դե՛, խմիր, թշվառ տիրացու և հիշիր «այլք է իմ արխին, քանիցս անգամ թէ զբաժակս ըմպիցիք...» Եվ ահա ասպարեզ է մտնում խորհստիսների երկրորդ խումբը, որ չի աղմկում ու ծիծաղում: Սրանք գուսաններն են և բըգում են հոգենոր երգ.

Առարք, սուրբ, Տէր զօրաթեանց,  
Ի էն Երկինք և Երկիր փառօք թով,  
Օրհնութիւն ի բարձունս...<sup>146</sup>

Ուրիմն, աստված չի մոռացվել. Դիոնիսոսի խորհրդանիշը գործում է իր իմաստով, բայց որ դա նաև Քրիստոսի խորհրդանիշն է, հիշեցվում է. դե՛, տիրացու, շիմանաս, թե դարձել ես բարոսյան քրոմապետ ու տիկը զլուխդ քաշես: Բայց վանքի ներսից երգող խորհստիսների երրորդ խումբը հիշեցնում է, որ սա Քրիստոսի պատարազը չէ: Երգում են (ըստ Վ. Տեր-Մինասյանի գրաման) նազաշ Հովհաթանի երգը.

Թառերն չինի,  
Եւարմըրիկ զինի,  
Զեզ անուշ լինի:  
Չոր մաշեն համեղ,  
Գինին է զորեղ,

145 Սրբազան պատարագամատոյց Հայոց, էջ 68:

146 Բերգում է ըստ Վ. Բղոյանի աշխատության, էջ 135:

Դուք անուշ արե՞ց,  
Տաղերն կանչեց,  
Աաղերն ածե՞ց...<sup>147</sup>

Հասկանալի է, որ վայ միջնադարում երգել են դարձյալ աշխարհիկ երգեր՝ ժողովրդական տաղեր, որ մեզ չեն հասել, եւամ դուցե հայրեններն են պահում նրանց հուշը:

«Երեղաթողի հանդեսին» մասնակցում են խորեախոների շարս խումբ՝ աշխարհական միաբանների, մոնթերի (փոքրավորներ), սարկավագների և վարդապետների, որոնց երգերը մեկ հոգեոր, մեկ աշխարհիկ բովանդակությամբ հաշորդում են մեկը մյուսին, ստեղծելով յուրահատուկ խորացին դիալոգ: Այս փոխհարաբերությունն, ըստ երեսութիւն, ձևական չի եղել. հոգեոր և աշխարհիկ երգերի փոխհաշորդականությամբ վեճի մեջ են մտել երկինք ու երկիր:

— Օր հետո, Տէր, — ձայն է տոլիս սարկավագներից մեկը: Նրան են միանում ել եջ ւարկավագ, և շարս հոգով ուսերին են յարձբացնում թափորապետի պահը: Թափորապետը տիկը ձեռքին, զուցե և մի քիչ հարրած, պահանում է.

— Այս է այն տիկը, որմէ խմեց նոյ նահապետ. խմեց ու զինուցավ. ան ըրավ առաջին արեղաթողը, մերկացավ:

Բարձրանում է ծիծաղ, և աղջուկին են միանում դարձյալ երկնային փառագանության խոսքեր.

— Փառք ի բարձունս աստուծոյ:

Ջվարի փառաբանությանը հաջորդում է զվարթ հաղորդություններ: Գինու տիկն անցնում է ձեռքից ձեռք, բոլորը խմում են փառաբանության ու օրհնության խոսքեր ասելով, ապա միանում, կազմում մի ամբողջական խոսմբ և «զքոյս ի քոյցս քնզ մատուցանեմ». միահամուռ երգում են հաղորդությանը հաջորդող շարականը՝ այնպես, ինչպես պատարագում:

Ժողովարդն. Յամենայի աւճըսեալ ես, Տէր:

Աւճիմք զքեղ,  
Գովիմք զքեզ,  
Գոհանամք զքէն,

147 մ. Բգոյանը նկատել է, որ մ. Տէր-Մինասյանն այս երգը սխալ մամբ վերադրել է Մկրտիչ Նաղաշին (նշալ. աշխա. հ. 1, էջ 135):

Աղաւեմք զբեզ,  
Տէր Աստուած մհր<sup>148</sup>,

Սարկավագները «գաղն» ուսերին շարժվում են դեպի արևելք, և երթը նորից ուղեկցվում է գուսանների երգով.

Բողեր են ավետարան,  
Առեր են թամապուրան...<sup>149</sup>

Այստեղ մի պահ իրադրությունը սրվում է: Ծագում է պայմանական միջնաբանություն վանականների ու գուսանների միջև: Վանականները պահանջում են չխանգարել պատարագի օրհնելը գուսանները՝ համառում են: Ակավում է բանակոփվ, որ վերածվում է կռիքամարտի, բակըսվում է տուրուղմիոց: Սովորական հանդիմանություններն ու աշխարհիկ խոսքերը չեն աղջում, դրանք ավելի են սրում բախումք: Քաշքացն ու տուրուղմիոցը շարունակվում է այնքան, մինչեւ միջամտի թափորապետը.

— Խաղաղութիւն ամենեցուն:

Տիրում է անոպասհիք չորթյուն:

— Խմեցեց տիրկն, — սիրալիք շարունակում է թափորապետ, — Նոյնաշաղկա այդին դինին էր, զոր խմեց Թրիստոն:

Սարկավագները փոխում են երթի ուղղությունը, դնում են դեպի արևմուտք, ապա՝ հարավ և հետո՝ հյուսիս նորից երգում են գուսանները, այս անգամ բաժանված երկու խմբի՝ հարց ու պատասխանի ձևով.

- Կատուննը մըստաւեն՝ տեսեթ էն որն է.
- Կատուննը մըստաւեն՝ վարդապետներն են:
- Կաբզբներ երդկըսալեն՝ տեսեթ էն որն է.
- Կաբզբներ երդկըսալեն՝ երիցներն էն:
- Ճնճղուկներ ճըլվըստալեն՝ տեսեթ էն որն է.
- Ճնճղուկներ ճըլվըստալեն՝ սարկավելներն են:

Կատակն աստիճանաբար վերանում է ծաղրի, մեջ են դալիս մուկ, ցախավել, մեծավորի մորուք.

148 Սրէ աղան սահատարագամատուցք Հայոց, էջ 140:

149 Վ. Յղալան, նշվ. աշխ., հ. 1, էջ 135:

- Մորուք փետատած, աշքեր շլցած, տեսեք էն որն է-
- Մորուք փետատած, աշեր շլցած, էն մեծավորն է,
- Վանքին հաստ գերանն է, մեծ փորն է<sup>150</sup>,

Վանականները նորից զայրույթ են խաղում, հարձակ-վում գուսանների խմբի վրա, սկսվում է ըմբշամարտ: Այս ընթացքում ծեր վանականները նստած են տանիքում որպես հանդիսականներ. նայում են, գինի են խմում, տապակած կարավ են ուտում: Նրանց համար էլ ուրիշ գուսան է եր-գում.

Նոտեալ կայր և լայր կարառուկն  
Ի չերայ ժարին, այ հավեր,  
Ու գա՞ղատ կանեց ձաղերուն,  
Թշչունքը, այ հավեր  
Ի բարձր լերունը եւա,  
Ի կանաչ մարդեր նայեցա, այ հավեր,  
Իշի, ի ձորակն ընկառ  
Տայս իմ զոյնզգուն փետուր,  
Մեկն ի սար տարին, մեկն ի ձոր...<sup>151</sup>

Վահան վարդապետը «Արեգաթողի հանդեսի» երկու գրառում ունի, որոնցից առաջինը (1893) երկրորդի՝ վերը ներկայացվածի շարունակությունն է: Այստեղ կան նաև որոշ լրացնող մանրամասներ: Դրանցից մեկը թափորի սկիզբն է կամ, ինչպես նկատվում է, հանդեսի երկրորդ գործողության սկիզբը: Դահավորակը վերցրած շորս տիրացուները դուրս են գալիս եկեղեցու գավթից, շրջապատված վանականների խմբով, բոլորի ձեռքին մոմեր ու ջահեր: Արդեն երեկո է, տվնշյան լուսատուն մայր է մտել, և առաջացող աղջամուղջի մեջ չահակիր վանականների «կոմոսը» (ուրախ երթ) երգում է Սաղկաղարդի շարականը՝ «կանոն Սաղկաղարդի կիւրա-կէին գալստեան Տեառն յերուսաղէմ».

Որ վերօրհնիս յաթոս քերովենից,  
Ի վերայ նստիլ յաւանակի հաճեցար.  
Բարերանեալ որ եկիրդ ի կեցուցանելի  
Ռաստի և մեք զյաղթական օրհնութեանցն

150 Նույն տեղում, էջ 136:

151 Նույն տեղում:

Զձայն մատուցանեմք քեզ թագաւոր փառաց  
Ընդ աղայսն օրհնաբանելով...<sup>152</sup>

Այստեղ արդեն գուսանների խոսմբ չկա, բայց երկրաշինի ու երկնայինի անտինոժիան գործում է: Սարկավագները ուսամբարձ տանում են «գահին» բաղմած ծաղրածուակերպ մեկին ու երգում է շարական՝ ի հիշատակ Փրիստոսի էշով երսաւաղեմ մտնելու: Ո՞ւմ է ներկայացնում կամ ծաղրում տեսաբանի գլխավոր գործող անձը՝ շամալ-թագով տիրացուն, պրտապոնիստր: Ուղղակի ակնարկներ չկան, դրանց կարիքն էլ չկա, բայց տեսաբանը ենթադրում է թատերային կոնտրաստ ու խաղային տարերը, որ անուղղակիորեն հաստատում է երկնայինի ու երկրայինի հակադրամիասնությունը. միստիկան ու կատակերգությունը քայլում են կողք կողքի: Թափորը կանգ է առնում, շրջվում դեպի արևմուտք, երգում՝ «ամեն, ալելուիա...»: Այստեղ սպասվում է մի խոսք, որպեսզի աստիճանաբար փոխվի գործողության ընթացքն ու լարվածությունը: Խումբն ավարտում է իր «ալելուիան», և սարկավագներից մեկը հարց է տալիս թափորապետին, թե ինչ նպատակով է կատարվում հանդեսը: Թափորապետը շարունակում է այն խոսքը («այս է այն տիկն, որմէ խմբեց նոյն նահապետ»), որ սկսել էր գավթում.

Թափորապետ. Օրհնեսցի և պահպանեցի կարաս վանքիս, վասնզի Առաքած օրհնեց նոյր, առաջին անգամ արեգաթող ան ընկուն համար. և զայթակղեցավ Քամ, երբ տեսավ, որ իր գինով հայրը մերկ կը ննչեմ:<sup>153</sup>

Վահան վարդապետի գրառումն այստեղից սկսած կարելի է ընթերցել որպես գրված կատակերգության մի հատված: Մի ուրիշ սարկավագ թափորապետին տալիս է երկրորդ հարցը, և դրանով ընդգծում է թափորապետի գրության առավելությունը. թափորապետը դառնում է գատառոր, սկսում է մեկ առ մեկ մերկացնել իրեն շրջապատող վանականներին:

Սարկավագ. Նոյն ի՞նչ պատիժ առավ Քամ, ծաղրելուն համար յուր

152 Շարական հոգեւոր երգոց, Կ. Պոլիս, 1853, էջ 260:

153 Վ. Բդյան, նշվ. աշխ., Հ. 1, էջ 137: Թափորը տեսանելի դարձելու համար արտադրում եմ պիհավ տիւսով:

հայրը իւսիւրապետ. <...> ին պես (անունը չի տրվում տեքստում) սկզբանից:

Բոլըրը նայում են խայտառակված վանականի կողմը և բարձրաձայն ծիծաղում: Թափորը շրջվում է և բայլում հակառակ ուղղությամբ՝ դեպի արևելք: Թափորապետն օրջնում ու խաչակներում է թափորը.

Թափորապետ. Օրջնեսցի և պահպանեսցի աղամանն վանքին այս նշանով սույր խաչիս և շնորհիվ խաղբախայտակ արևղաթող ավուրս:

Հայտնի է, որ ազն են օրջնում, ոչ թե աղամանը: Թափորապետն աղը ցանել է, աղամանն է օրջնում և խաղի ու խայտառակը (Հիշենք այս բառի 2րդված կազմությանը՝ ակնառու խաղ)<sup>154</sup>: Թափորապետի օրջնությանը ձայնակցում է միաբանների խումբը.

Խոսմբը. Անուամբ<sup>155</sup> Հոր և որդուց և հոգույն սրբոյ աժմմ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամեն: Ալելուիա...

Սարկավագ. Մտո՞ւգ է ժողովածույնն զրվածը, թէ նեռը, այսինքն սույր Քրիստոսը, Պովտի աղի արձան հղած կնիքն պիտի ծնի:

Թափորապետ. Ո՞չ (աալիս է միաբաններից մեկի անունը) <...> և պետի ծնի:

Խոսմբը. Ամեն: Ալելուիա...

(Թափորապետ խմբի նետ միասին դառնում է դեպի նկատի):

Թափորապետ. Օրջնեսցի և պահպանեսցի ցորենոյ շտեմարան վանքին այս նշանով...

Սարկավագ. Ո՞վ էր ան, որ աստուծս օրջնած Հացը՝ մանանան փորձեց պահպան ուրիշ օրերու համար, և որդուստեցավ:

Թափորապետ. <...> և (աալիս է միաբաններից մեկի անունը) էրու

Խոսմբը. Ամեն: Ալելուիա...

(Թափորապետ խմբի նետ միասին դառնում է դեպի նարավ):

Թափորապետ. Օրջնեսցի և պահպանեսցի աղբիր և առու վանքին այս նշանով...

Սարկավագ. Ո՞վ Հորդանանու ջուրն իրը դեղ բժշկության ժամկետուն համար բորստեցավ:

154 Հմմատ. Հ. Ճովիաննիսյան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 265—266:

155 Որոշ դեպքերում հետեւում հմ ոչ թե աղօթքների ու օրջնությունների բնագրերին, այլ Տեր-Մինասյանի զրառմանը. անհրաժեշտության դեպքում՝ հիմ զրառման մեջ համառոտումներ կան, զիմում եմ բնագրերին:

Թափարապետ. <...> և (տալիս է միարաններից մեկի առունը) էր՝  
Խոսմբը (Երգաւ է).

Ուրախ լեր սուրբ եկեղեցի  
Ի զալստեան սուրբ միածնին.  
Ուրախ լեր և ցնծա  
Հանդերձ ամենայն սրբովք:  
Խնդա յոյժ դուստր Միովնի.  
Ահա թագաւոր ոռ զայ  
Նստեալ ի յաւանակի նորոյ...<sup>156</sup>

Սարկավագ. Օր Հնեա Տէր:

Թափարապետ. Հրամանակ է քեզ ի Տեառնէ խոսիլ<sup>157</sup>:

Այս խոսքը նշան է, որ Հարցումներ անող սարկավագը  
պետք է փոխի զրուցի թեման, և իրավիճակը, որ զնալով  
լարվում է, պետք է վերջապես լուծվի՝ գործողությունը պետք  
է այլ ուղղությամբ ընթանա: Դրամայի կնճիռը (կոլիզիան)  
սրվել է, և մոտենում է բախման պահը: Սարկավագը տալիս  
է մի Հարց ևս, որի պատճանանը, եթե թափորապետը չխու-  
սափի ու չերկարացնի խոսքը, շրջելու է զրուցյունը. թա-  
փորապետը դատողի վիճակից ընկնելու է դատվողի վիճա-  
կի մեջ: Ուրեմն, թափորապետն ու սարկավագը խաղային  
տարիքը մեջ չպետք է մոռանա Ավետարանի խոսքը. «Մի  
դատիք՝ զի մի դատիցիք. զի որով դատաստանաւ դատիք  
դատելոց էք» (Մատք., է. 1)<sup>158</sup>: Եվ ահա տրվում է այդ դա-  
վագիր Հարցը:

Սարկավագ. Երբ այս վանքին Հիմերը զրվեցան և պարիսպները շին-  
վեցան, ո՞ւր էիր զուն:

Թափորապետ. Գեղութին մէջ:

Սարկավագ. Վա՞յ, ուրեմն զուն զունքնն փախած ու հոս եկած...  
Ուրեմն՝ պատժու արժանի<sup>159</sup>:

Սարկավագի այս խոսքի վրա բարձրանում է աղմուկ  
ու աղաղակ: Բոլորը հարձակվում են թափորապետի վրա:

156 Շարական Հոգենոր երգոց, էջ 263:

157 Վ. Թղուան, նշվ. աշխ., հ. 1, էջ 137:

158 Նոր կտակարան, Կ. Պոլիս, 1895, էջ 6:

159 Վ. Թղուան, նշվ. աշխ., հ. 1, էջ 137:

վայր իշեցնում, սարի տակ զցում, դաճը չարդ ու փշուր են անում:

Ո՞ւմ են վերջապես կալմեց արել սուրբ Հայրերը, ո՞վ կարող է լինել գծոխրից փախածը՝ «սանդարձմետականին խղեալ կապահաց»<sup>160</sup>: Տեր-Մինասյանի գրառումը ոչինչ չի ասում. միակ ակնարկը «գծոխրեն փախածն» է: Ո՞ր գծոխրում փնտքենք այս գաջընկնց դատավորին: Քրիստոնեական գծոխրում սատանաների հիերարխիան առանձնապես մեծ չէ. շարբացին սատանաներ՝ «Հակառակորդ, մատնիչ, չարախոս, դիմակաց, դիմախոս»<sup>161</sup>, մի Սագայել՝ «գլուխ գիւաց»<sup>162</sup>, և մի Շահապետ օ՛չ վիշտապի կերպարանու կամ ի նհանդի իմնա»<sup>163</sup>, որի հաստիքն անորոշ է «զիւաց գլխի» առկայության գեպօրում: Վանականների այս միստերիայում գծոխրից փախածը պիտք է պատկերացվեր որպես մի «շարախոս, դիմակաց»: Բայց եթե ընդունենք, որ Արեկաթողի Հանդեմներն «ավելի հին անցյալ ունեն, քան նկեղեցական որոշ արարողություններ, որ օգտագործում են թատրոնի պատմաբանները»<sup>164</sup> (Հակիմած եմ այս տեսակետին), պիտք է նկատի առնենք նաև Հեթանոսական անգրաշխարհի հիերարխիան. «Համբարուկը, եւ յուշկապարիկը, եւ ծովացուքը, եւ յարաւեղը, եւ պայքը, եւ բազք, եւ խիպիլիկը, եւ պարիկը, եւ Հաղուն, եւ շիդարք, եւ այլ ինչ սոսկ անուանք: <...> եւ դեւք ապատամբեալք միշտ շարք են առ ի մոլորեցուցանել զմարդիկ. եւ անուամբ կերպս ի կերպս լինելով զի որսացեն զմեզ ի կորուստ»<sup>165</sup>: Քաջին և շիդարքի գաղափարը հին է, Գրիգոր Մագիստրոսը, ինչպես մեզ արդեն հայտնի է, սանդարձմետի կապանքները խղող զերից շիդարներին համարում է ծաղրող ոգիներ («շոհանան ի վերայ մեր»)<sup>166</sup>: Ալիշանը մի բացատրություն ունի, որը կարծես զալիս է

160 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, թ. իթ, էջ 67:

161 Նոր բառզերք Հայկակեան լեզուի, հ. 2, էջ 698:

162 Նոյն տեղում, էջ 683:

163 Եզեկիայ Կողացյու եղծ ազանգոց, Թիֆլիս, 1914 (1. ին), էջ 74:

164 Վ. Բրյոյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 134:

165 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմ. Ն. հազ. Պարևան, հ. 4, Երևանցէմ, 1969, էջ 629 (Ընդգծումներն իմն են—Հ. Հ.):

166 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, թ. իթ, էջ 67:

Գրիգոր Մագիստրոսից. «Այսոնք ու աշաց, այլ մտաց կուրացուցիչ դեք էին, այսինքն խելագարող, խենթացնող, ինչպես հիշեցինք Արտավազզա համար. սույն անվամբ խելագարն ալ Եփար կկոչվի. ինչպես կսե Վանական վարդապետ»<sup>167</sup>; Բացատրությունները թերևս կարիք չկա անմիջականորեն կապել «Արեղաթողի» այս տեսարանի հետ, բայց պետք է նկատի ունենալ: Շաղրող ու ծաղրվող սարկավագի կերպարը զուգահեռներ շատ կարող է դանել միջնադարյան աշխարհիկ թատրոնում, ժողովրդական բանավոր երգիծանքի ձեերում: Եվ, այսուամենայնիվ, «Արեղաթողի» վերջին տեսարանի սիմվոլիկան չե կարող բացատրվել միայն քրիստոնեական պատկերացումների հիման վրա: Բոլոր դեպքերում ողմոխքեն փախածըք հակարբիտոնեական տարր է, հեթանոսության հիշողություն, կամ զուցե իսկապես ազանգավորությունը ներկայացնող կերպար:

Ինչեւ, ավարտենք միստերիայի ներկայացումը:

Աղմուկի և իրարանցման մեջ թափորապետը գետին է տառպալվում և «վախճանվում»: Նրան վերցնում են և թաղման շարականով տանում վանքի գերեզմանոցը, իշեցնում նախապես փորված փոսը: Այստեղ խմբից առանձնանում է վանահայրը, մոտենում է փոսին և ազաղակում.

— Պազարե՞, արի՞, ել արտաքս՝<sup>168</sup>:

Վանահայրը խոսում է Քրիստոսի խոսքերով, ուրեմն նա էլ Քրիստոսի գերակատարն է: Եվ իրազրությունն էլ մեզ ծանոթ է. Օտան էլ Խորմիրապից զուրս հրավիրեց կուսավորչին՝ «եկ ի զուրս»: Պարզ երեսում է ծխային հին պայմանաձեւը: Բայց իրավիճակը դարձյալ մի քանի շերտ ունի: Սաղրովում է Պազարոսի հարությունը, այսինքն Քրիստոսի հրաշագործություններից ամենահրաշալին: Բայց երբ վանահոր խոսքի վրա գերեզմանից զուրս է թռչում թափորապետը մերկացած, ծաղրվում է քրիստոնեական հավատի ամենախորին խորհուրդը: Սա ի՞նչ բան է՝ աղանդավորություն, հեթանոսություն, թե՞ քրիստոնեական ծիսերը ծաղրելու վազ միջնադարյան միմական ավանդություն:

167 «Բաղմազեով», 1894, 4. ՄԲ, էջ 486:

168 Վ. Բոյան, նշվ. աշխ., 4. 1, էջ 133:

Ղազարոսը դուրս է թոշում գերեզմանից (Ավետարանում այդպիս չէ), վանականների խումբը ցրիվ է գալիս ու դիմում փախուստի: Սարկալագ-դատավորը որպես դժոխքից նկած խելագար, վայրենի աղաղակով հալածում է միաբաններին մինչև վանքի դուռը:

Կատակերգական միստերիան այստեղ էլ ավարտվում է: Հաջորդ առավոտը բացվում է պահը ու աղոթքով, շարունակվում է վանական կյանքի խստակնցաղ առօրյան: Ակավում է մեծ պասը: Ամեն ինչ մոռացվում է մինչև հա-

\* \* \*

Առեղծվածային շատ բան կա «Արեգաթողի հանդեպում»: Գրառված փաստերը պերճախոս են և, այնուամենայնիվ, քիչ են: Շատ բան է մոռացվել հարյուրամյակների ընթացքում՝ Սահակ Պարթեի ժամանակից մինչև Մինաս Թոփիաթեցի և մինչև Վահան Տեր-Մինասյան: Շատ նշաններ են շեղոքացն կամ խնդարվութելի Բայց ակներեւ հատկանիշներ կան, որ երևութը գրում են դեպի վաղ միջնադար: Ամեն ինչ այստեղ կառուցված է պատարագային արարողության տրամարանությամբ, նույն ծիսացին մողելով: Այդպիս է, եթե Տեր-Մինասյանի զրառումն ընթեցենք պատարագի ժույսով: Իսկ պատարագն արդեն տեղավորել ենք անտիկ զրամացի՝ օպախում: «Արեգաթողի» տեսարանային կարգը և՛ նժան է, և՛ տարրեր ընդհանուր սկզբունքի տեսակետից սա, իջարկե, պարերգական (խորոյին) զրամա է, շրջանակին տրուցում գործողությամբ, շրջանաձև խաղաճրապարակի ներքին պատկերացումով: Խմբերգերում պարզ երևում է սարոֆի-անտիստրոֆի-ստամիմ (պտույտ-հակապտույտ-անշարժ խմբերգ) հարարերությունը: Սա կարծես տիպարանաշարժ խմբերգը: Հարարերությունը է: Բայց այստեղ գործում են մի քանի խմբեր, և դրանք կազմում են խորային յուրահատուկ հիերարխիա՝ վարդապետներ, սարկավագներ, մոնթեր, որոնք միանում են, բաժանվում կազմում են մի դեպքում ընդհանուր ամրոխ, մյուս դեպքում ստեղծում թեմատիկ հակադրություններ: Պարերգական գործողությունը դառնում է ավելի

դրամատիկ, երբ խաղի մեջ է մտնում գուսանների խռովությունը դիմորհան (Երկպար) զանում է արքիմորթեա (Նուպար): Սա արդեն բոլորովին այլ ժամարանություն է՝ ենթադրում է, թատերական այլ ժամակարգ, որ անտիկ դրամայի օպսիսում չի տեղափոխում: Տիպարանական երկրարդ և ավելի էականատարք երկությունը գործողության շրջանակնենտրոն տրամարանության և խմբի խաչաձև՝ արևելք-արևմուտք-Հյուսիս-Հարավ շարժման համագրումն է: Տիեզերաբանական այս դեպարտմենտուր, որ դրված է նաև եկեղեցու կենտրոնագմբեթականացածն հառակի գծի Հիմքում, անտիկ դրամայի տեսաբանություն կարդում չի կրեւու:

Գանձր «Արեղաթուց» հանդեսից, որտես դրամատիկական-թատերային ժամակարգի, բովանդակային հիմքին՝ Ինչպես նկատեցինք, սա ծեսի և խաղի ժամագրություն է՝ խաղը ծիսակարում, և ծեսը՝ խաղային տարերում: Վիճակների հակագրամբանություն, անսպասելի վճիռներ, տարսմեան դրություններ և վերջու ։ Հանգույցի կրկնակի լուծում՝ երկշարժականի խայտառակություն<sup>169</sup>: Այս կատակերգության տրամաբանությունը շատ ինքնատիպ է, սկսվում է մոտիվների բախումով (աշխարհիկ և զոգիոր), ապա անձնավորություններ են մերկացվում՝ երկմուտիվ ակնարկներով, և բանք համում է դրությունների շրջման, որ ամենառանիվերսալ կատակերգական վճիռն է: Սա աշխարհիկ կյանքի միջնադարյան խմաստավորում է և, որպես սյուժեատային տրամաբանություն, զործում է միջնադարյան լատինական նույներում: «Արեղաթողում» տեսնում ենք սյուժեի կառուցման խաղային նղանակը, որ նովելի ամբողջականություն չունի և դրանով վազ միջնադարյան է՝ ժողովրդական-ծիսային, առանց գրական հիմքի և անտիկ կատակերգության փորձից զուրաց: Փաստորեն ծեսի շուրջն ստեղծված է պար-

<sup>169</sup> Հանգույցի կրկնակի լուծման ամենաբնինատիպ և զառական օրինակը տեսնում ենք Գուոլի «Ռեկողով» ավարտակետում: Խայտառակության առաջին աստիճանը Խելատակովի նամակի ընթերցումն է, որով արմատապես շրջվում է իրավիճակը՝ բոլորին մերկացնող «զատագորբանույնական» մնականում է, բայց աշքից չեռու Երկրորդ աստիճանը ուստիկանական առաջին, առանց գրական հիմքի և անտիկ կատակերգության փորձից զուրաց:

պունակ ստեղծարանական մթնոլորտ, բայց պարզունակ չէ կենսահայեցողությունը։ Այս ամենը ներծծված է մի կողմից Հեթանոսությամբ, մյուս կողմից քրիստոնեառվայրաց, որով և պայմանավորված է կյանքի ու աշխարհի միջնադարյան երկեսու պատկերացումը։ Մարդը կամ փառքի ու լուսի մեջ է կամ դատաստանի ու խայտառակության, կամ տերեւ ու դատավոր կամ զրկված ու թշվառ, կամ պերճանքի ու վայելքի մեջ կամ զրկանքի և աղքատության, թագավոր կամ մուրացիկ։ «Արեգաթողի Հանդեսում» երկու պարզ խորհրդանիշ կա՞ դա՞ և գերեզման։ Տիտարանական ամենակարևոր գիծը խաղի դատական եղանակն է՝ անհատի ու ամբոխի հարաբերությունը։ Սա հիշեցնում է և՛ Հնագույն դատական խաղը, և՛ Հոռմեական օգոստական թիմփալիան։ Իմաստն ու նպատակը մեկն է՝ մարդուն հասկացնել աշխարհի բանը, «որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ»։

«Արեգաթողի Հանդեսը» հայ միջնադարյան թատրոնի թիւ շւտ ամրողական պահպանված երեւյթներից է։ Եկեղեցին դատապարտել է թատրոնը և, այնուամենայնիվ, նրա ամրողական մի նմուշ պահպանել իր պատերի ներսում։ Եվ պահպանել է իմաստուն խմբագրումով, մեղքն ու վարձքը շոկելով, ծիսային ու խաղային գծերը զուգադրելով, կյանքի հոգերը ու աշխարհիկ ծայրերը մոտեցնելով ու հեռացնելով, երկինքն ու երկիրը հաշտեցնելով։ «Արեգաթողի Հանդեսն» իսկապես հին դրամայի մի ճառագայթն է, նրա ուշ միջնադարյան անդրադարձումը։ Եվ սա կարծես մեր ճանապարհի մի հանգուցակետն է, որտեղ ուզում ենք լապտեր գնել՝ տեսնելու համար մոտիկն ու հեռուն, գտնելու դրամայի պատմության կորած օղակները։

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ ԵՎ ԽԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱՁԵՎԵՐԸ

Հին և միջնադարյան թատրոնը հիմնականում ուսումնասիրվել է որպես անհնատացած երևոյթ: Իրավիճակն սկզբունքուրեն այդպիս է: Հեթանոսական ժամանակներից միջնադար հասած աշխարհիկ մշակույթի այս դրսենորումը ջանացել ենք ըմբռնել լեզվական փաստերի և մատենագրական նեղատիվ վկայությունների միջոցով: Բայց թատրոնը նաև կենդանի ավանդություն է, իր հետքերը թողնում է ժողովրդական կենցաղում և տալիս արձագանքներ, խամրող արձագանքներ, որոնք կարող են ընկալվել: Հասարակական շվիման ձևերի փոփոխությունը ընականորեն դուրս է վանում հին ծեսերն ու խաղերը, և դրա հետ միաժամանակ խամրում ու չեղոքանում են ժողովրդական դրամայի հետքերը: Այնուամենայնիվ, կան դիտված փաստեր, որոնք լույս են սփռում միջնադարյան դրավոր վկայությունների վրա, սահմանական վերընթեռնել կարծես թե հայտնի ու վերծանված փաստերը, գտնել անտեսանելի առնչություններ: Պարզվում է (այդպիս էլ պետք է լինի), որ հին թատրոնի ամենակենսունակ գիծը ժողովրդականն է, և այն, ինչ տեսնում ենք ծիսացին պայմանաձևերում, բանահյուսական հիմքեր ունի, արտահայտվում է նաև որպիս խաղացին պայմանաձև:

Նոր ժամանակները շատ բան են փոխել ժողովրդական խաղերում՝ թեմաներ, ձևեր, մոտիվներ, խոսքեր: Բայց էականում տիպաբանությունն է, սիմվոլիկան, խաղացին համակարգը՝ բաներ, որ իսկապես հին են և չեին կարող հորինվել նոր ժամանակներում: Կա ժողովրդական խաղերի մի տեսակ, որ կրում

է պարերգական գրաւայի տիպարանությունը, և դա մեզ ստիպում է էական նշանակություն տալ առաջին հայացքից երկրորդական թվացող մոտիվների ու խորհրդանիշերից դրանք անուղղակի հիշեցումներ են, նշաններ, որ մղում են հետադարձ անդրադարձումներից:

ԱՀԱ այդ «հիշեցումներից»՝<sup>1</sup> մեկը՝

### «ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈԽԱՋ»

Բարեկենդանի տոնին երգվող աշխարհիկ և ժողովրդական երգերի շարբում իմ ուշադրությունը գրավեց վ. ՏերՄինայանի գրառած Խաղունկարի ժողովրդական մի երգ.

Գեշ չպահի մեր էծուն,  
Մեռիմ ևս քը մեր էծուն.  
Աւ մի ունի ճրապըտուն,  
Գրկեմ տանիմ մամի տուն,  
Մատաղ անիմ աստծուն,  
Բա՛ ու բրիւս վերի տուն,  
Կաշ գավագան իմ գլխուն!:

Թվում է, շատ միամիտ ու պարզունակ երգ է, ինչպես և Բարեկենդանի խրախնճանքներում տնից տուն շրջող այծամարդու պատկերը (նկ. 10): Բայց արդեն համոզվել ենք, որ բանահայտության մեջ պատահական նշաններ չկան: Այժի թեման և այժամարդը հին խորհրդանիշեր են և ամենասերտ առնչություններ ունեն հին դրամայի հետ: Այժի խորհրդանիշը շրջանառվում է համաշխարհային բանահայտության մեջ: Եթե շխուսափենք հապճապ եղրակացություններից, պիտք է ասենք, որ մեր առջև խամբած մի հիշողություն է հին «նոխաջերգությունից»: Այս բառին դիմում ենք պայմանաբար առայժմ որոշ զուգորդումների մղելու նպատակով, թեպետ խնդիրն այդքան էլ պարզ չէ: Գրականությունից հայտնի է նոխաջան դոհարերության կապը հին հունական դրամայի հետ: Բայց շշտապենք ամեն ինչ բխեցնել հայտնի իրավիճակներից, շփնարենք ուղիղ կապեր: Նոխաջը, որպես պաշ-

1 Վ. Թղոյան, Հայ ժողովրդական խաղեր, հ. 1, էջ 136:

առամունքային խորհրդանիշ, Հայոց զին հավատալիքներում  
անորոշ է և լավ չի ուսումնասիրված: Ալիշանը այս խորհր-  
դանիշին ոչ մի նշանակություն չի տալիս, թեպետ հիմքեր  
կան նշանակություն տալու Ստիպված ենք որոշ շափով դուրս



Նկ. 10 Ալիշանը մողովրդական խաղերում բառ Հ. Թացակյանի:



Նկ. 11 Ալիշանը «Ղեյնորա» խաղում Հատ Վ. Խոշարեղյանի:

գալ Հայ բանահյուսության ու բանագիտության կոնտեքստից<sup>2</sup>:

Հին Հունական դրամայի պատմության շարադրանքներում մոռավոր կերպով նկարազրված է ատտիկյան ողբերգության ծիսային նոխերգանքը՝ խորհրդաների երգով և նոխազի զոհաբերությամբ: Դա մենաող ու հարություն առնող Հին թրակիական աստվածության՝ Դիոնիսոսի (Բաքոս) պատարագն է: Տաճարից հրապարակ է բերվում կուռքը, մորթվում է նոխազը, զոհի արյունը հղղվում է կուռքին, Հանգիստականների մի մասը ցողվում է այդ արյունով, այսինքն Հաղորդվում է, և սկսվում է նոխազերգությունը: Դրամայի ծիսային հիմքերի հետազոտումը Նիկոլայ Եվրեինովին բերել է այն մտքին, թե այժմակերպ ոգու պաշտամունքը Բաւկանյան թերակղզի է մտել Հրեաների թիրիական նախահայրենիքը՝ Պաղեստինից: Վկայակղզվում են Հրեական բանահյուսության հնագույն ժամաները Թալմուդից և Հին Կտակարանից<sup>3</sup>: Եվրեինովի պնդումը, որ նոխազյան զոհաբերությունն սկիզբ է առնում անպայման Հրեական աշխարհից, խնդրի պակաս է ական կողմն է: Բայց նա ճշտում է երկու հասկացություն՝ բավուրյուն և քոհարերվող և ազատ արձակվող նոխազ: մեկը տրվում է Եհովային, մյուսը անապատի ոգուն՝ Ազագելին: Դրանով Հատկանը շփում է ոչ միայն Հին Հրեաների կրոնական գիտակցության երկվությունը, այլև նոխազի, որպես ծիսական խորհրդանիշի, Հակասականությունը: Այս երկվության հետքերը երկում են Հին կտակարանի Աւեական դրագում և Եփրեմ Ասորում ենությունում<sup>4</sup>: Եվրեինովի պարզում է նաև իր հիմնական խնդրից դուրս, բայց մեզ Համար է ական մի կետ՝ նոխողի զոհաբերության անմիջական կամը Հին դրամայի հետ: Դրան կանդրագառնանք իր տեղում: Առաջգոյն պետք է նկատենք, որ «բավության նոխազի» արագետը բավական

2 Այս խնդրին մանրամատնորեն անդրադարձել եմ «Թատրոնը միշտակարգացնելու մասին» (Եջ 144—181), բայց կատարյան Հայաստանում աշխատությունում (Եջ 144—181), բայց կարիք է զգայության վերանայել որոշ կետեր և հարցը կանկրետացնել:

3 Ի. Եօրընօծ, Ազալ և Դիոնիս, Խ. Ա. Ակադեմիա, 1924.

4 Ա. Եփրեմի Մատենագրութիւնը, Հ. 1, Վենետիկ, 1836, Եջ 222—223:

մութն է, խճճված է միջագետյան ու փոքրասիական ժողովուրդների ծեսերի ու հավատալիքների լարիրինթոսում<sup>5</sup> և մինչև Բալկաններ հասնելը անցնում է Հայկական բարձրավանդակով:

Այժի ոճավորված պատկերը հայտնի է Գեղամա լեռների վաղ բրոնզեդարյան ժայռապատկերներից, ուրարտական մշակույթի փաստերից: Ինչպես նկատել է Աղոնցը, ուրարտական որոշ արձանագրություններում շեշտված է այժի զոհաբերության փաստը խաղցան տաճարներում՝ զինով զոհաբերության կողքին: Ի դեպ, խաղողի խորհրդանիշն էլ մերձ է Մուսասիրի տաճարին: Այս էլ միանգամմայն տրամադրանական է: Մուսասիրի տաճարը հեռու չէր նոյն հահապետի այդիներից: Եվ կա մի բառ՝ ուրսիւս, որ նշանակում է «այծեր զոհաբերել»<sup>6</sup>: Մեզ ավելի մոտ ու հասկանալի է Աղաթանգեղոսի վեյայությունը, այն է՝ Հայաստանի ութ մեհյաններում մատուցվող սրբաւան զոհերից մեկը եղել է սպիտակ նոխազը<sup>7</sup>: Քրիստոնեական շրջանում հեթանոսական բոլոր զոհերը մոռացվել են, ավելի ճիշտ՝ մերժվել, և մնացել է մեհեւ խոյը, որպես նոր աստվածության միակ կենդանակերպ խորհրդանիշ: Բայց հայտնի չէ, թե ինչ պատահականությամբ աստծո որդու տան մոտակայքում հայտնվել է նաև նոխազը՝ հեթանոսական պաշտամունքային խորհրդանիշերից գուցե ամենաշինը: Քրիստոնեական պաշտոնական ծիսակարդում նոխազը ոչ մի դեր չունի, և գուցն այդ պատճառով էլ Հայ բանագիտության մեջ այս խորհրդանիշին չնշին նշանակություն է արվում: Նոխազի զոհաբերությունը, թվում է, քրիստոնեական իմաստ է ստացել անպաշտուն ճանապարհով, գուցե մի հին ավանդության ուժով, որպես ժողովրդական կրօնասիրության դրսենորում:

Հայ ժողովրդական հավատալիքներում այժը երկիմաստ հակասական էակ է: Անանիա Շիրակցու՝ կենդանակերպերի մեկնությունում կարդում ենք, թե Այծեղջյուրի տակ

5 Հմմտ. Դ. Բեծոր, Լեգենդы и мифы древнего Двуречия, изд. «Наука», М., 1965, с. 103—104.

6 Կ. Աղոնց, Հայաստանի պատմություն, էջ 229:

7 Աղարանգեղոս, նշվ. Հրատ., էջ 18:

Ժնվորդը «իսոհեմ, զոռող և դաւաճան լինիս»<sup>8</sup>: Ժողովրդական ավանդությունն ասում է, որ այժին ստեղծել է սատանան, բայց նրան հոգի է տվել աստված, և այժը սատանային չի հնթարկելում, հնթարկվում է աստծուն<sup>9</sup>: Այժը նույնանում է երրեմն ձախության ու հակառակվելու գաղափարին: Դադար Փարպեցու «Պատմությունում» այսպիսի տողեր կան. «այլք ընդ դասակս այծեաց ձախակողմեան հազորեալք՝ դնային անդարձութեամբ չի խաւարն արտաքին»<sup>10</sup>: Բոլոր տվյալներով այժը հակասական ու երկիմաստ խորհրդանիշ է՝ կրում է բարին ու շարը, աստծուն և սատանային, խոհեմությունն ու դավաճանությունը: Սակավակյաց կենդանու մորթին, որով «պճնվել» է միջնադարյան անապատականների մի խավը, նշանակել է Հեղնանք և ինքնապրկում, և այսակ է ամամա թե ակամա ընթերցվում է գիտնիոսոյան արարողության այծաղղեաս պարավորների՝ սատիրների կամ սատիրական խորի մետամորֆոզը: Այս բոլոր գեպքերում այծակերպությունը հանգես է զալիս որպես լրիկու, զավաճանելու, հակառակվելու նշան: Անապատականը հնուավոր մի ազերս ունի Դիտնիսոսի շքախմբի Պան աստծո հետ, որ ծնվել էր այժի ուռերով ու եղջուրներով և հնուացել էր Օլիմպոսից, զնայել անտառներն ու լեռները՝ նվազելու իր սրինգը ընտթյան ազատ էակների համար: Սա նույն Սատիրն է, Ֆավնը, Սիլվանուսը, որին հին հայերն անվանել են Պայուն<sup>11</sup>, Սա նույնպես հակասական խորհրդանիշ է: Ժողովրդական հավատալիքներում հոգեառ հրեշտակը ներկայանում է նոխազուն ու նոխազագեմ: Բայց այդ նույն կերպարանքը հերիաթներում երևում է այլ նշանակությամբ: Այժը հայկական հերիաթում մարդկանցից թարնված բարության ոգին է, որ կերպարում է անտառում թողնված մանուկներին, որոնք հետո դառնում են հերոսներ կամ արդար թագավորներ: Իսկ առակներում այժը քմահաճության ու հակառակու-

8 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տումար, Երևան, 1949,  
 էջ 20:

9 Հմատ. Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 125:

10 Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1908, էջ 230:

11 Ազնիկ Կողբացի, նշվ. Հրատ., էջ 69: Նաև՝ Ա. Ալիշան, Հին հայության մասունքների պատմության մասնակներին, 1910, էջ 201—202:

թյան ոգին է: Գետակի նեղլիկ կամրջի վրա դեմ դիմաց հանդիպող երկու այժերի հինավորց առակը խորիմաստ է: Դրամատիկական իրազրության ամենապարզ ու ճշգրիտ պայմանաձևն է սա: Հայտնի են «այժերը բերել» (բարեկացնել), «այժերը քշել» (բարեկությունը մեղմել), «այժերով մարդ» (քմահաճ մարդ) արտահայտությունները, որոնք նաև համաելլոպական տարածում ունեն:

Թվում է, այնուամենայինիվ, որ այժի, որպես հակառակության ոգու, խորհրդանիշն ամենից ավելի տարածված է հայ բանահյուսության մեջ: Փակտոս Բուզանդի «Պատմության» մեջ բերված է մի գրուց (գուցեն պատմական փաստ), որտեղ կրկնվում է վերը հիշված տառակի իրազրությունը: «Ապա եղն գեալ օր մի յաւուց, եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զասպաստանաւ միով զարացին Պարսից. իսկ ախոռապեսն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպաստանին: Իրքն տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց զնա, և ոչ ինչ շուրս զնէր նմա. այլ և անարգանս ևս զնէր թշնամանաց, առելով ի պարսկերէն լեզու՝ թէ «Այժից Հայոց արքայ, եկ նիստ ի խրձան խոտոյ ի վերայց: Զոր բանս իրքն լուր սպարապեսն զօրավարեն Հայոց Մեծաց, որում վասակն կոչէր ի Մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ և բազում սրտմատութեամբ բարկանայր. ի վեր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղուցն զախոռապեսն արքային Պարսից գլխատէր ի ներքս յասպաստանի անդ»<sup>12</sup>: Ենթազրություն կա, որ այստեղ ակնարկվում է Հայերի այծապաշտությունը<sup>13</sup>: Բայց ավանդությունն ուրիշ շերտ էլ ունի Ախոռապետը այժի անուն տալով, ըստ ժողովրդական հայֆատալիքի, կանչել է Հակառակության ոգուն՝ բացահայտել Արշակի սիրքը Շապուհի պալատում: Եվ բախումը, որ պետք է տեղի ունենար Շապուհի պալատում: Եվ բախումը, որ պետք է նույն տրամաբանությամբ մեկնենք զրուցի շարունակությունում:

12 Փակտոս Բուզանդ, Հայոց պատմոթիւն, Երևան, 1957 (4. ԺԶ), էջ 196:

13 Վ. Թղոյան, Հայ ազդագրություն, Երևան, 1974, էջ:

թյունը, կտեսնենք, որ Շապուհը հասկանում է «պատարագի» իմաստը և, պարզեատրելով վասակին, ոչ այնքան նրա սիրասիրությունն է գովում, որքան հասկացնում է Արշակին, թէ իրենց հակառակությունը լուծված է: Ախոռապետը դարձել էր իսկապես քավության նոխազ:

Վիպական այս հատվածը հուզում է, որ վաղ միջնադարի կենցաղի ու բանահյուսության մեջ այծի խորհրդանիշը պահպանել էր իմաստը: Բայց ի՞նչ գործ ուներ այծը և կեղեցու գոների մոտ: Դրա պատասխանը տայիս է Լուսավորչի տեսիլքը. «Եւ տեսի հօտս անթիւս այծեաց ի գոյն սեութեան, որք անցեալը ընդ ջուրն՝ յօդիս դարձան. և զգոյնս իրեանց ի կերպարանս սպիտակութեան շրջեցին, և լուսակիզին ասքն փայլէր առ հասարակ, մինչև ճառագայթ: Հատանէին ի նոցանէն»<sup>14</sup>: Բացատրվում է նաև այս կերպարանափոխության իմաստը. «Եղինացէ աղքիւր մկրտութեան. ի թողութիւն քաւութեան բազում մեղաւորաց»<sup>15</sup>: Ամեն ինչ պարզ է. նոխազը Քրիստոսի կենդանակերպ խորհրդանիշի գառան նախատիպն է, որ նշանակում է, թէ գառը մըկըրտված նոխազ է: Հասկանալի է, թէ որտաղից կարող էր ծագել «այծից ուատարագ» հասկացությունը<sup>16</sup>: Իսկ Հովհաննես Դրասիանակերտոց երկում կարդում ենք նոխազ զոհարերողի աղոթքը. «Յիսուս Քրիստոս, յոյս իմ, ուխտաւոր գուլով իմ յայսմիկ տօնի մեծի նահատակին Գէորգայ՝ նոխազ պատարագ և մասն անուան քո»<sup>17</sup>: Աղոթքի շարունակությունը սովորական ու ծանոթ է, նոր երանգ չի ավելացնում մեր պատկերացմանը: Բայց ոչ մի կասկած, որ սուրբ Գևորգի թիկունքին կանգնած է հեթանոսական բարձրակարգ մի աստվածություն: Ենթազրվում է, որ դա վիշապարազ վահագն է: Գուցե պատահական չէ արևի ճառագայթները հատող լուսակեղ գեղմի պատկերը լուսավորչի տեսիլքում: Այստեղ, եթե ուշադիր կարգանք տեսիլքի մեկնությունը.

14 Ազգարանգեղոս, նշվ. Հրատ., էջ 385:

15 Կույն տեղում, էջ 391:

16 Գրիգորի Արշարունոյ քորեալիսկոպոսի Մեկնութիւն քններցուածոց, Վեհետքի, 1864, էջ:

17 Տավեաննու կաթողիկոսի Պատմութիւն, Երուսաղեմ, 1867, էջ 157:

կարծես թույլ մի ակնարկ կա, ավելի ճիշտ ենթատեքստում՝ ընթերցվող մի գաղափար՝ Հեթանոս աստվածության փոխակերպումը բրիստոնեական սրբի։ Այժերի փոխակերպումը լուսագեղմ ոչխարների դարձի սիմվոլիկան է, լուսակեզ զեզմը փրկության նշանը։ Ապոլոն Հոռդոսացու «Արգոնավտիկայից» հայտնի է ոսկե գեղմը, որպես Հերմես աստծո շնորհը և փրկության խորհրդանիշ։

Ինչպիս տեսնում ենք, սիմվոլիկան զուտ քրիստոնեական չէ, արմատները հին Հն: Տորեմն, Տրդատի զոհարերած սպիտակ նոխազը, որ ակնարկում է Ագաթանգեզոսը, Հեռուն է տանում և կարող է մոտենալ արևի ու կայծակի պաշտամունքին։ Հնարավոր է, որ այստեղ ուրիշ գաղափար էլ լինի<sup>18</sup>: Մինչև օրս էլ ժողովրդի մեջ պահպանվել է ննջեցյալի առաջին «սուրբ Խաչին» նրա ընտանիքին ձերմակ ու նվիրելու սովորությունը։ Ուզը նվիրվում է զոհարերության համար, և այդ ժեսն ստացել է ուղղ կամ ուղնոց անունը<sup>19</sup>: Մորթում են սպիտակ ուղը ու եփում թոնրում։ Զոհարերության այս ձևն էլ ասում է, որ այստեղ մի մոռացված աստվածություն կա, մի շատ հին գաղափար։ Թոնրի խորհրդանիշը, որին մասամբ ծանոթ ենք, հեռուն է տանում, մոտեցնում թերևս այն ժամանակներին, երբ վրիժառության, պատժի ու զոհարերության գաղափարները տարանջատված չեին։ Մեզ արգեն ծանոթ են շղթայվածի այրը, Լուսավորչի բանուը, նաև... թափորապեսի գերեզմանը։ Բայց կարգանք ժողովրդական մի այլ ավանդություն։

«Կոպապաշտ թագավոր Բելը մեծ զորքով կոհվ է, եկել Հայոց թագավորի վրա։ Սա սպանել է Բելին, հանել Նեմորութ սարի գագաթը և այնտեղ թոնրի շինելով մեջը կախել։ Վառել է։ Աստծու հրամանով կրակը շուր է դարձել, մոխիրը

18 Տեսակետ կա, որ նոխազը զոհարերվել է անդրերկբայրի աստվածությանը (Վ. Բգոյան, Սրբ. կիսեցյան)։ Այս տեսակետը՝ որ իր տրամադրանությունն ունի, փորձել եմ Հիմնավորել («Թատրոնը միջնադարյան Հայաստանում», էջ 162—166)։ Նոր ենթադրությամբ կամ հիմնավորումով նախկինը չի բացառվում, քանի որ նույն կենդանին կարող եր զոհարեվել մի քանի աստվածությունների։

19 Ա. Բգոյան, Հայ ազգագրություն, էջ 177։

իշեցրել հողի տակը, որ քամին փոշին շտանի<sup>20</sup>: Դիցարանական պատկերացումների մի բարդ կապակցություն կտայատեղ: Երեք հազար տարվա մոխիր է նստած այս թոնրի հատակին: Բնիլը, որ միջագետյան հնագույն աստվածություններից մեկի՝ օդի աստծո՝ էնլիլի (ըստ Շումերական վերսիայի, համաշխարհային ջրհեղեղի հեղինակի) մետամորֆոզն է և բարեկացիների համար դարձել է երկրի ընդուրքի տառվածք<sup>21</sup>, այստեղ, որպես չար ուժ, այրվում է քավության փոսի մեջ, այնպես, որ միախառնվի իր երկրային տարերքին (կրակ, հող, ջուր), որպեսզի բնության շորրորդ տարրը՝ օդը նրան նորից ծնունդ շտա: Այստեղ միատեղ են հանդու դալիս վրիմառության, պատճի, զոհարերության ու բալության զաղափարները: Պատճվազը չի ոշնչացվում, այլ միախառնվում է իր մայր ընդերքին, հեռացվում իրեն ծնունդ ուղղ Հորից՝ օդից: Պատճը զանում է քավություն, որ արտահայտված է կրակը ջրի փոխարկվելու խորհրդապատկերով: Լուսավորչի վարդապետության մեջ կա նման մի պատկեր. «առեալ զկենդանի հուր պատարազացն տարեալ քահանացիցն արէ ին ի ջրհորն, և հուրն ի ջուր դարձաւ. և յստ ամացն հօթանասնից ի գարձին երթեալ առին զջուրն և բերին արկին զողջակիզօջն, իբրև շինեցաւ տաճարն՝ և ջուրն դարձաւ ի բնութիւն Հրոցը<sup>22</sup>: Այս խորհրդապատկերը ժողովրդական արմատ ունի: Հայտնի է կեզք գյուղի սրբազն թոնրի ալանդությունը. մեղքից ամոթահար իրիցկինն ընկնում է թոնիրը, թոնրի կրակը փոխարկվում է ջրի, իսկ կինը դառնում է ձուկ<sup>23</sup>: Թողության գաղափարն է զործում: Պատճի հնոցի և մկրտության ավագանի գաղափարները մերձենում են նաև Գանտեհի «Դժոխրի» ութերորդ պարունակում: Այն կրակի փոսերը, ուր զիմիվայր այրվում են մեղավորները. Գանտեհն համեմատում է (անհիմն չի կարող լինել այս հա-

20 Ա. Պահարանյան, նշվ. աշխ., էջ 73:

21 Դ. Բեներ, նշվ. աշխ., էջ 15, 17, 98, 118:

22 Ա. արանգելսան, նշվ. հրատ. (544), էջ 273:

23 Կր. Պափանցյան, Արա Գեղեցիկ պաշտամունքը, էջ 14—15: Նահ:

Ա. Պահարանյան, նշվ. աշխ., էջ 95:

մեմատությունը) «Սուրբ Հովհաննես» եկեղեցու մկրտության ավաղանների հետ<sup>24</sup>:

Մեր ավանդության մեջ թուրքի խորհրդանիշը համատեղվում է լեռան գագաթի հետ. Մատենո՞ւմ ենք շզթայլածի առասպեկին, դժվար է ասել: Բայց լեռան գագաթը այն խորհրդավոր վայրն է, ևսիկիսի ասած «սրբազն անապատը», ուր պատիճ կամ քավություն են կրում բմբոստացած ուժերը, «քավության նոխազները»: Մենք արդեն ծանոթ ենք նրանց: Հին հրեաների տուսապելախառն պատմության մեջ էլ լեռան գագաթը սրբազն քավության վայր է: «Առ զու զորդի քո սիրելի զոր սիրեցիք՝ զիսահակ, — ասում է Աստված Սրբահամին, — եւ զնա զու յերկիր բարձր, եւ հանցես զզա անդ յողջակեղ ի վերաց միոյ լեռանց...» (Յնունդի, Եթ, 2)<sup>25</sup>, Զեհի և քավության այս պատկերացումը կրկնվում է Նոր կտակարանում՝ Քրիստոսի Գողգոթա բարձրանալով («Հեռներ ի տեղին որ անուննեալ էր Պատաթան, եւ կոչէր հրացեցիրէն Դոդութա»— Յովն., ԺԹ, 17): Այս խորհրդանիշի հին տարրերակներից մեկն է նրուսազեմից տասներկու մզոն հեռու գտնվող Յոկ լեռան գագաթը, որտեղից հին հրեաները անդունդն են նետել անապատի ոգուն՝ Ապագելին զոհաբերվող նոխազը<sup>26</sup>:

Լեռան բարձումքի և երկրի խորբում կրակի չրի փոխարկվելու խորհրդապատկերում միատեղվում են պատճի ու քավության գաղափարները: Դրանք երբեմն երկում են մեկը մյուսի շարունակություն, թեպես անցումը բարդ ու երկար է: Բարոյական գիտակցությունը մութ ու մոլոր ուղիներ էր անցնելու, նախքան կհանդիր արդար զոհի գաղափարին: Այսպիսով, «քավության նոխազի» գաղափարը հանգում է հունա-

24 Գևան և Ալիզիերի, Աստվածային կատակերգություն, Եշվ. Հրատ., էջ 102—103:

25 Գիրք Ճննդոց, քննական բնագիր, աշխա. Ա. Զելյունյանի, Երևան, 1985, էջ 238:

26 Ի. Եպրեմյան, Եշվ. աշխա., էջ 46:

կան նոխաղերգությանը (Դքշված՝ 27): Հունական ողբերգության բոլոր հերոսները «մեր առջև հանդես են գալիս որպես պուտականացված - իդեալականացված » «քավության նոխաղեր»<sup>27</sup>: Այս է Եվրեփիովի ամենաճշգրիտ հղակացությունը, որին Հրեական բանահյուսությունը գրեթե նյութ չի տվել. եթի նկատի չառնենք Արրահամի զոհաբերությունը Հին կտակարանից, որ էպիկական ավանդություն է: Ելնելով քավության գաղափարի ծիսային ակունքներից, Եվրեփիովի տեսանելին նոր զոյն է տալիս Օ. Արանովսկայան: «Ժամանակին, — ըրում է նա, — Հունական ողբերգությունն ընդունված էր անվանել ճակատազրի ողբերգություն: Մենք դա կանվանեինք ամենի շուս զատի ողբերգություն»<sup>28</sup>: Նորք և խոր զիտողություն է այս: Վերջնականապես համոզվում ենք, որ զրամացի ամենասատույգ պայմանաձեր զատն է, իր ծիսային և ժողովրդական-խաղային դրսերումներով, և դրամատիկական դրացմունքի զյուլեն (ատոմը) պետք է որոնել բուն զոհաբերության, ավելի ճիշտ՝ արյունահեղության, որպես անխօնության ու պատժի թեկող իմաստափոխված վերապրուելեածում: Որպեսզի զոհաբերությունը դրամատիկական իմաստ ստանա, պետք է հանցանքի, պատասխանատրվության ու պատժի իրավիճակ լինի: Զոհաբերության հնադույն ձեւերում դա եղել է Հունաստանում Ձևսի տաճարում ցուլ զոհաբերելու արարողությունը ներկայացրել է զատ՝ երեք սյուժենային փուլերով: Յուլին զոհասեղանի վրա մորթողը արարողության մասնակիցների ներկայությամբ նիթարկվել է պայմանատիան զատի, և ի վերջո «Հանցանքի սուրյակո» ճանաշված դրաները նիթարկվել է ոլոտժի՝ ժայռի բարձունքից

27 Նոխազերգությունը բառը վկայված է 5-րդ զարդից՝ Ռիոնիսիոս Թրակացու «Քրտականության» թարգմանությունում և անի զուտ գրչային ժաղացում. Հունարեն որշակու և բարի իմաստային-կտառուցվածքային պատճեններն է շմամտ, «Թատրոնը միջնադարյան Հայաստանում», էջ 52—53):

28 Հ. Եզրոս, նշվ. աշխա., էջ 92:

29 Օ. Арановская, О фольклорных истоках понятия «катареис», сб. «Фольклор и этнография», изд. «Наука», М., 1975, с. 65. Հեղինակը չի նշում իր եղակացության աղբյուր՝ Եվրեփիովի աշխատությունը:

նետվել է ծովը<sup>30</sup>: Ծատ նման է նոխաղի հին հրեական գո-  
հաբերությանը:

«Քաղության նոխաղի» գաղափարն այնքան հին է Հա-  
յաստանում, որ հիմքեր ունենք դա համարելու շատ ծեսերի  
ու դրամատիկական խաղերի աշխարհայցքային ակունքը՝  
Ամեն մի զոհաբերություն ինքնին դրամատիկական պահ է՝  
կրում է երկյուղի ու կարեկցության գաղափարը: Զոհարե-  
բության փաստում ամենաակներեք սարսափի խորհրդանիշներ  
է կենդանի արյունը, որի հեղումով մարդիկ կանոնել են  
աստվածների զայրութը և քաղել իրենց երկյուղը անխոսա-  
փելիի՝ մահվան հանդեպ: Այս արարողության և՝ առարկա-  
յական տպավորությունը, և խորհրդապաշտական իմաստը  
կազմում են կատարսիս հասկացության բարդ կոմպլեքսը,  
իր ծիսական-բանահյուսական ավանդների բաղմաշերու  
նստվածքուլ:

Հեթանոսական Հայաստանի մեջաններում անխորհորդ  
արյուն չէր հեղփում: Եղել են աղոթքներ ու երգեր, որ մեզ չեն  
հասել: Բայց զրանց խամրած հիշողությունը կա: Դրանով  
սկսեցինք: Նոխաղի զոհարերությունը հեռավոր մի աղերս  
ունի Վահագնի պաշտամունքի հետ: Իսկ ի՞նչ կենդանի էր  
զոհաբերվում Շիդարի «առասպել տօնում», եթե այդտեղ  
կար (և չէր կարող չինել) դատաքննական պահ: Դժվար է  
անմիջապես պատասխանել այս հարցին: Բայց Շիդարը  
«քայլության նոխաղի» բոլոր գծերն ունի: Մենք էլ հիմքեր  
ունենք մողովրդական դրամայի հիմքում տհոնելու նախ և  
առաջ դատի գաղափարը:

### ՊԱՐԵՐԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Պարերդական դրամայի առաջին ակներեւ հիշատակումը  
հայոց լեզվով գտնում ենք Հակոբ Մծրնացու անունով ա-  
վանդած «Զգոն» կոչվող գրքում, որի հեղինակն է ասորի  
Աֆրահատը: Ակնարկվում է եղիպտական կամ միջագետցան

<sup>30</sup> նույն տեղում, էջ 62:

Հնագույն մի ծես՝ շրջանակենտրոն պար երինջի զլուխ պատկերող կուռքի շուրջը՝ «մեծախումբ ժողովոք խաղացին, վերտեցին և շահս արարին առաջի որթազլիսոյն»<sup>31:</sup> Նկարազրվող երեսյն օտար աշխարհից է, բայց մեզ հետաքրքրում է լեզվական պատկերը: «Զգոնը» ձեռքից չեռք, գրվից գրիշ անցած գրական հուշարձան է, առեղջվածներով լի, ինչպես բոլոր վաղ քրիստոնեական գրքերը: Համենայն զեպս, գրված է IV դարում, թարգմանված է հայերեն V դարում: Անզլիացի ասորացիոն վ. Ռայտը պարզել է շատ հանգամանքները<sup>32:</sup> Երիանդ: Տեր-Միհանյանը վերշնականապես ճշտել է իրավիճակը<sup>33:</sup> Եղվական համարժեները ստուգված են<sup>34:</sup> և կարող ենք դատել մեզ հետաքրքրող առարկացի շուրջ:

Հայտնի է, որ հայոց Հին թարգմանություններում միշտ չէ, որ բառերը վերարտապրվել են բայց կառուցվածքի. ոչ սակավ գտնվել են նրանց տեղական առարկայական արժեիները: Աստվածաշնչի թարգմանության մեջ դա ակներև է: Եվ այսուղ էլ, քանի որ գործ ունենք Հին թարգմանության հետ, բառերի տակ փնտրում ենք բնաշխարհիկ երեսյները: Եգիպտական «որթազլումը» երինջագլուխ կուռքը կարող է մեջ չհետաքրքրել, բայց «խաղացին, վերտեցին» բառերում պարզ երեսում է շրջանակենտրոն գործողությունը: Խաղալ բառի հին հայերեն իմաստը, որ նույնն է և ժողովրդական բառապաշտարում, հայտնի է, նշանակում է երդել և պարել: Ճետաքրքրիրը վերտ բառն է, որ նշանակում է «ոլորեալ, նիւաեալ, չարամանեալ, շըլայազործ»<sup>35:</sup> Հազվագյուտ բառերի սիրահար Գրիգոր Մագիստրոսը մեզ հետաքրքրող առարկան աղ-

31 Գրքը որ կոչի Զգոն, արարեալ Ս. Յակոբայ Երիցս երանեալ հայրապետին Մծրին քաղաքի, Կ. Պոլիս, 1824, էջ 241:

32 В. Райт, Краткий очерк сирийской литературы, СПб., 1902.

33 Ե. Տեր-Միհանյան, Պատմա-բանակրական հետազոտությունները, Երևան, 1977, էջ 411-424:

34 Հ. Անոյան, Հայերեն արմատական բառարան, Հ. Յ., էջ 482, Հ. Գ., էջ 332-333:

35 Նոր բառզիրք հայկազեան լեզուի, Հ. 2, էջ 817: Աւազրությունները պարձենենք ուսուերեն վերետո և վերտել բառերին. նմանությունը սոսկ արտաբնի չէ, իմաստն է նոյնից:

գային հողի վրա է դնում. «Ոի շոնչան խելապատակին վերստառեալ զեղեւսցին այսր անդր ոտնառութեամբ<sup>36</sup>: Հին վկայության այս մեկնությունը մեզ մոտեցնում է անորական հաեւա-ին և հունական շրջին՝ ին<sup>37</sup>: Առավել հետաքրքիր է «շահ» արարինք դարձվածը, որ նշանակում է խաղ ներկայացնել, առն կատարել<sup>38</sup>: Ծան բառը (պարսկերենում՝ շալս) նշանակում է խաղ, շարժում: Աւրեմն, հին հնդկական շատուանկայի պարսկերեն անվանումը՝ շախմատ կարող է նշանակել ոչ միայն մահ արքային, այլև՝ խաղ և մահ, խաղով մահ: Կարծես անհավանական է երկում այս բացատրությունը, բայց ները սիրել են խորհրդապոր բառերը, գաղտնաբանություններ ու երկիմաստովեցունները: Ծան բառին մենք հանդիպելու ենք շրջանում դիտված ժողովրդական պատական խաղերում: Բառի հին վկայությունն ասում է, որ խոսքը կարող էր լինել ոչ միայն պարսից արքայի մասին, և դուցք հնում շրջանակնենտրոն խաղի բովանդակությունն այլ է եղել Հավանաբար, հետադայում է «շահ» առնեմ» պարձվածը հանդիպել պարսից շահի ժողովրդական-կատակերգական դիմակին, և «Շահ-շահի» կոչվող խաղը կարող է այլ բացատրություն ես ունենալ:

Այսպիսով, պարերգական դրամայի հնագույն հետքերը երեսում են, և հիմքիր ունենք հին աշխարհում որոնելու ժողովրդական դրաման, որի ծիսային պայմանաձևերին արդեն ծանոթ ենք այս գրքի նախորդ գլուխց:

Հայեական վաղ միջնադարյան պարերգական դրամայի մասին գրմել է եռորդնացու հիշատակած «երգը ցցոց և պարուց» բանահյուսական երկույթի մեկնաբանության հիման վրա<sup>39</sup>: Սա ևս ժողովրդական դրամայի հիշատակում է: Բայց առնչություններ կան, որ ժամանակին չենք նկատել, և լեզվական ու մատենագրական վեյցություններ, որ հարցստացնում են մեր առարկայի պատկերը: Դիսնիսիոս Թրակացու հատկապես վաղ մեկնություններում ժողովրդական

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 117—119:

<sup>38</sup> Հ. Անայան, Հայերեն արմատական բառաբան, հ. 4, էջ 333:

<sup>39</sup> Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 106—143:

դրամայի պատկերն առավել տեսանկի է: Վաղ միջնադարյան  
 գրական տեսակների սահմանումներում կամ բնութագրում-  
 ներում երկու շերտ կա: Դրանք են դպրոցական ճարտասա-  
 նական նյութի բացատրությունը և, որ մեզ համար այս դեպ-  
 րում ավելի կարենոր է, համեմատության օբյեկտը: Դա քըն-  
 նել ենք, չնկատելով սակայն չին պարերգական դրամայի  
 բուն նկարագրությունը: Այսպես, վաղ մեկնիշներից Մովսես  
 Քերոզյը, դիմելով նազներգութիւն (Հուն. Խ.Փ. ծ: ա) բառի  
 բացատրությանը, համեմատության օբյեկտ է ընտրում վաղ  
 միջնադար հասած ժողովրդական դրաման, «զոր երաժշտա-  
 կանաւու նուազեին ի տաղս պարանցիկ երգոցն ըստ համ և  
 դիրալուր բանիցն, զորս ձայնիւր (և կողմնաւորաւր) իրա-  
 քանչիրոցն սովորեալ էին մեծաջանապէս յարմարել ձայնս  
 իրը փողարական դոչմամբ առ լսելեացն հեշտութիւն<sup>40</sup>: Տաղ  
 ըառը, ինչպես նկատել ենք, համապատասխանում է հունա-  
 րին չ-πος -ρին<sup>41</sup>: Սա միջնադարյան տաղը չէ, որ նշանակում  
 է երդ, քնարական-էպիկական բանաստեղծություն: Թվում  
 է, խոսքը շափածո վիպասանության մասին է և ավանդման  
 պարերգական եղանակի՝ վեպ խորացին երգերով: Ուշագրու-  
 թյուն դարձնենք Աղոնցի ավելացրած կողմնաւորք բառի  
 վրա, որ գալիս է տարբնթերցումներից և մեզ համար այս  
 դեպքում շատ թանկ է: Այսուհեղ ակնհայտ է պարերգական  
 տրամախոսությունը՝ դիխորեան, դիմախոսության մեջ մըտ-  
 նող հանդիպակաց կողմերը, որոնք պատմում են երգելով,  
 փոխնիփոխ, շարունակելով մեկը մյուսին, հարմարեցնելով  
 ձայներն ու հանգերը՝ «առ լսելեացն հեշտութիւն»: Այս դի-  
 խորեայի ներդաշնակությունը տեսնում ենք պատրագում,  
 հակագրությունը՝ «Արեգաթողում»: Պարերգական գործողու-  
 թյան այս եղանակը հիշատակվում է նաև ուշ շրջանի մեկ-  
 նություններում: Հովհաննես Երզնկացի-Մործորեցին (XIII—  
 XIV դդ.) մեկնելով Մովսես Քերոզյի սահմանումը, կրկնում  
 է «ի տաղս պարանցիկ երգոցն» բառերը, բայց նրա երկի-

<sup>40</sup> Н. Адонц, Дионийский фракийский и армянские толкователи, Птг., 1915, с. 16.

<sup>41</sup> Բատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 115, 137, 142:

ուշ շրջանի ձեռագրական մի տարրերակում (1635) կարդում էնք «նուագիկն խաղս պարանցիկ երգոցն»<sup>42</sup>: Պատահական վրիպում չէ սա: XVII դարում տաղը այլ բան էր նշանակում, և կար պարանցիկ երգերի խաղ՝ ժողովրդական պարերգական դրամա: Մենք էտեսնենք դա: Ինչպես հայտնի է, թրակացու հայ մեկնություններում հազներգորիխն և կատակերգորիխն հասկացությունները նույնացված են, մի հանգամանք, որ հույն-ուշուղանդական մեկնություններում<sup>43</sup> չենք նկատում: Նույն երգնկացու մեկնության մեջ տրված է կատակերգության բնութագրում՝ «Երկակի դիմօք արաեալ՝ բարի կենաց յաւմարութիւն և վատուց յանդիմանութիւն»<sup>44</sup>: Մեզ հայտնի էր «առասապիլ դիմօք» բառակապակցությունը երգնկացու ժամանակից ոչ շատ հետո գրական փաստաթղթում: Զգայթակղվելով այս նմանությամբ (որ գուցն պատահական չէ), նկատենք, որ այստեղ բացահայտվում է «կրզմանատրք» հասկացության իմաստը: Տրամախոսության մասին է խոսքը, և «Երկակի դիմօք արարեալ» դարձվածը կարող ենք թարգմանել՝ «Երկու դեմքերով հորինված»: Հետևելով Թրակացու բոլոր հայտնի մեկնիշներին (Դավիթ, Անանուն, Մովսես, Համամ Արենելցի, Ստեփանոս Սյունեցի, Գրիգոր Մադիստըրոս, Երգնկացիներ, Ամարգան, Արենելցի, Առաքել Սյունեցի, Եսայի Նշեցի, Դավիթ Զեյթունցի): V—XVII դր., բախվում ենք ժողովրդական դրամայի տարրեր և նման, զրային՝ նախորդներից արտագրված և դիտված պատկերներին: Մեզ հետաքրքրում են Հնից եկող տիխարանական հատկանիշները, որոնցից ամենաեականը պարերդական բնույթն է և այդ համակարգում դրսեորդող դատական բովանդակությունը: Վերջինս պարզ երևում է Դավիթի մեկնությունում՝ «ումանց յան-

<sup>42</sup> Մատենադարան, ձեռ. 2380, էջ 258ա:

<sup>43</sup> A. Hilgard, Scholia in Dionysii Tracis artem grammaticam, Lipsiae, 1931.

<sup>44</sup> Մատենադարան, ձեռ. 2380, էջ 33թ (ընդգծումն իմն է—Հ. Հ.) Ձեռագրի այս հատվածն ընդունել եմ որպես Հովհաննես Երգնկացի-Պլուզի մեկնություն (Թատրոնը միշնադարյան Հայաւտանում, էջ 84), բայց իրականում դա Մործորեցունն է (Յովիաննես Մործորեցի, Համառու տեսութիւն բքրականի, աշխ. և. Խաչերյանի, լու Անճիկն, 1934, էջ 140):

դիմանութիւն և [ոմանց] յաւժարութիւն»<sup>45</sup>: Նույն է ասում Դրիգոր Մազիստրոսը՝ «ոմանց յանդիմանութիւն վատ կենցաղավարութեան և ոմանց յաւժարութիւն ի բարի կենցաղավարութեան»<sup>46</sup>: Երգնկացի-Պլուդի ասածն էլ նույն է՝ «զշարսն եպիրէին և զբարին գովէին»<sup>47</sup>: Այս ամբողջը ժողովը կանչ է՝ մի կողմից «զնախնեաց պատմութիւն»<sup>48</sup>, մյուս կողմից «զկտականաց նուազել խաւս և զհեգնական ասացեալ ճառս ըստ ումիկ աշխարհականացն ձայնիվ ձևացուցանել, որպէս նոցայն սովոր են առնել»<sup>49</sup>:

Ի հայտ են գալիս ժողովրդական դրամայի երկու տեսակ՝ պատմական-ավանդաբարանական և ժամանակակից-կենցաղին: Խազաշին համակարգը կամ օպսիսը կարծես թե պարզ է՝ պատմություն պարանցիի երգերով, երկողմանի խոսք, բնագիրը Հին զրամայի այս պատկերն ունենալով մեր աշքի առշն, կարող ենք բացել Խորենացու «Հայոց պատմության» առաջին մասի Զ(VI) գլուխը, ուր բերվում է ավանդական պատմության համառոտ շնչարակի ազգերի ու տեղանունների առաջացման մասին, ըստ Ոլիմպիոդորոսի հազրոդաժանդիր զրուցների և իր լամած ժողովրդական ավանդությունների Խորենացին բերում է հետշրջնզեղյան ավանդությունների խիստ համառոտ ուրվագիծը և ձայնը տալիս ժողովրդական-պարերդական դրամայի ավանդապահներին: «Բայց առաւել յաճախագոյն հինքն Արամազնեաց ի նուազս փանդուան և յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակաւ»<sup>50</sup>: Մեր ընդգծած բառերում ունենք հնագույն բանահյուսական մի երեւյթի անվանական վկայությունը, առանց կոնկրետ օրինակի: Նորություն հատնած չենք լինի, եթե մեկ առ մեկ շարադրենք այդ վկայության մեկնությունները՝ սկսած Մշըրտիլ էմինից ու Գաթրճյանից մինչև Ալեքսանդր Վեսելովսկի, Նիկողայոս Մատ և Արեգյան, նաև տողերիս հեղինակի մոտ:

45 Դան: Կը մատենազարանի, Յ, Երևան, 1956, էջ 243:

46 Ի. Ճօհուկ, նշվ. աշխ., էջ 229:

47 Մատենազարան, ձեռ, 1100, էջ 206բ:

48 Խույն տեղում:

49 Ցովհաննես Սործուեցի, նշվ. աշխ., էջ 143:

50 Խորենացի, նշվ. քրամ., էջ 27:

քառասուն էջ կազմող պատմա-Համեմատական ակնարկը, ուր բերված են զրեթե բոլոր հնիագրություններն ու վճիռները: Բոլոր մեկնություններում «երգը ցցոց և պարուց» կոչվածը պատկերացվում է դրամատիկական խաղի տեսքով: Վերջին և նախորդ բացասարությունների տարրերությունը նախ բառերի ստուգաբանության մեջ է, ապա՝ հնագույն դրամատիկական համակարգի պատկերացման, որին մոտեցել է (իհարևէ շխաբանալով) էմինը պար և շրջան բառերի համանշանակությունը վկայարերելով և հետացել է «պարուց երգը» համարելով վիպական շաբաթ:<sup>51</sup> Իմ ուշադրությունից վրա պահպատճեցի է մի մեկնություն՝ տրված Գողթան երգերի առիթով. «Գողթան երգեր բավաձներն ինչ են, բայց եթե ժողովրդական պարերգը, զոր յոյնք շօքը կը կոչեին և կերպեին ի պատիվ զիցազանց»<sup>52</sup>: Այս այս շօքն մից է բացվում հանգույցը: Վաղ միջնադարյան բնագրերում, թարգմանական, թե ինքնուրույն, Հունարան, թե Հայկարան, պար բառը ստուգապիս համապատասխանում է շունչ և շունչ բառերին: Լաւագույն օրինազը Առավածաշունչն է. որտեղ չկա տարակուանքի առիթ ամող դիմու: Պար և շօքը բառերը համապատասխունամատ են երրութերին իհեթ և ասորերին իսել բառերին, որոնց նշանակությունն է խումբ, երամ, շարք, պարան: Այս չորս բառերը Հանգում են շրջան, շարք, խումբ, ամբոխ նշանակություններին: Այս կանֆեղուրացիան հման է այն քառանիստ բցուրեղին, որի հայելիները միմյանց նկատմամբ նույն թերությունն տնեն և նույն պատկերն են արտացոլում:

Ժողովրդական կամ ծիսական-պաշտամունքային պարերը, անհային նրանից, հանգել է պարերգական դրամայի, թե ոչ (մեկ հայտնի է Հունականը, որպես ավարաված ձև), դրամատիկական խաղի գիմքն է և աղղացին առանձնահատուկ արվեստ շէ: Նրա շրջագոտին բավական լայն է. Սգիպտոս, առաջավորասիական երկրներ, Բալկաններ (Հունաստան, Թրակիա), արեկցան Ելլոպա, Բուսաստան: Ամենահրապուրիշն այստեղ շրջանակինտրոն աշխարհի կամ տիե-

51 Ս. Էմին, Վէստ Հնոյն Հայաստանի, Առակվա, 1850, էջ 96—97:

52 Միքանացի, Թատրոն, «Բազմավիզ», 1897, փետրվար, էջ 86:

զերքի (ուսանը նույնն են հնադարի պատկերացումներում) գաղափարն է, միշտագետյան քաղաքակրթությունից եկող պարզունակ ժողովրդապետության (պրիմիտիվ դեմոկրատիա) փիլիսոփայությունը<sup>53</sup>, որ դրված է պլատոնյան կոսմոսի, այն է՝ տիեզերական կարգի ու հասարակական կամքի ներդաշնակության հիմքում<sup>54</sup>: Խորենացին պատահարար լի դիմում ազգերի ու տեղանունների առաջացման մասին Ոլիմպիոդորոսի բերած զրոյցների ցիկլին, որը մի, այսպես կոչված, իմաննենտ կոսմոս է՝ ոլորտային (սփերիկ) ներփակ ավարտվածությունը<sup>55</sup>: Անցյալն ու ներկան այստեղ իմաստավորվում են որպես պատումների ներկապակցված, ամբողջական շղթա՝ պարունակությունը, որը Մ. Էմինի ասած կիկլոս էպիկոսն է: Պարը, ինչպես տեսնում ենք, նշանակում է ոչ թե կաքաւ (շարժում, մենապար) կամ կայր (թոշկոտում), այլ նախ և առաջ խմբվածություն, խմբերգ, շրջան: Այստեղից է՝ պար աստեղաց, պար երշտակաց, պար բանայից, վերջապես՝ լեռնաշղթա՝ Հայկական պար:

Պարի շրջանաձևությունը և նրանով պայմանավորված շրջանաձև խաղահրապարակակը, որը հին Հունաստանում հանդեց օրինասրային (հին հայերենում՝ կաքաւարան) և թատերական օրինասրբիկ-շրջանակենտրոն համակարգին, ունի կոսմոլոգիական հիմք, և այդ հիմքը միշտագետյան ու առաջավորասիրական աշխահում է: Պարունակությունը իր ցիկլային ընույթով և արտաքին տեսքով տիեզերքի ու պատմության դիտերմինանտն է, և շրջանաձև խաղահրապարակը, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները (Շմիդտ, Զեմբերս, Ա. Մառ), պայմանավորվում է հին պարերգական գրամայի ունիելիսալ մողելով: Անցյալը, ներկան ու ապագան պատկերացվում են որպես շավարտվող, շրջանաձև ընթացքի կետեր փոխանցվող ու կրկնվող, ինչպես տիեզերական լուսատուների

<sup>53</sup> Հմմտ. Г. Франкфорт, Г. А. Франкфорт, Дж. Уилсон, Т. Якобсон. В преддверии философии, изд. «Наука», М., 1984, с. 125.

<sup>54</sup> Հմմտ. Платон. Сочинения, т. 3, ч. 2, изд. «Мысль», М., 1972, с. 116—120.

<sup>55</sup> Հմմտ. С. Асргянцев. Поэтика: грекоизогреческой литературы, изд. «Наука», М., 1977, с. 84—90. О. Фрейденберг, Мин и литература древности, М., 1978, с. 81.

շարժումը, օղակների փոխեապակցվող շղթա, կրկնվող տարիներ: Հիշենք նավասարդյան խորհուրդը և Շիզարի շղթան: Կյանքի ու տիեզերքի այս համապարփակ կարգավորվածության մեջ անհատական կամքը հանդես է գալիս որպես օրյեկտիվ կամ աստվածային (հին ու միջնադարյան հայացքով աստվածայինը անհրաժեշտությունն ու օրինաչափությունն է) կամքին հակադրված ուժ և բերում է իր հետ մեղքի, պատժի ու գոհաբերության զաղափարները: Պարերգական արարողության կենտրոնում են պաշտվող կամ մերժվող զաղափարներն իրենց նյութական ու կենդանակերպ խորհրդանիշերով՝ կրակ, երկաթ, կենաց ծառ, նոխազ, ցուկորիթագլուխ, խոյը քրիստոնեությունը հաստատում է տիեզերքի ու պատժության այլ պատկերացում. կտրում է շրջանագիծը և մարդկության ճանապարհը զարձնում ուղղաձիգ, դեպի մեր մերժական վրեակ: Պատոնյան կարգին հակադրվում է կարգի նոր ըմբռնում, որի սահմանումն ամրողացնում են Օրիգենն ու Ավետիստինը<sup>55</sup>: Երշանակինտրոն ընթացքին հակադրվում է ուղիղ ու վերջավոր ընթացքը խաչելության խորհրդանիշով՝ վերապարձող ու նորոգվող ժամանակը դառնում է անվերադարձ, և զոհը՝ միակը Եթե պատմությունը վերապահնարժամ, և զոհը՝ միաներ իրենց իրեն քամքարժան հայացքի է ությունը՝ ի հակադրություն անարսագործալատնյան հայացքի: Պատաստանի շրջանակինտրոն պարունակները Պանտեի «Կրմեղիայում» ուղրապատույտ փոխանցումներ են, բայց շրջանագծերի կենտրոնով անցնում է ուղիղ գիծ, որի մի ծայրը լիմրոսում է՝ հեթանոս արդարների հանգստարանում, մյուսը Քամարանի լեռան զաղաթից հասնում է տասներորդ երկինք՝ էմպիրիյ, որ ավարտն է ամեն ինչի:

Հիթանոսական պարուց երգը զրամա է զառնում, երբ առեւ է հակոտնյա բները՝ երկրորդ պարը կամ անհատ-

<sup>55</sup> И. Д. Рожанский, Развитие естествознания в эпоху античности, изд. «Мысль» М., 1979, с. 53, 143, 152—153; նաև Г. Г. Майоров, Формирование средневековой философии, изд. «Мысль», М., 1979, с. 299.

կան ուրծողությունը որպես պատասխանող կողմէ: «Արեգա-թողում» շափից ավելի ընդգծված է այդ, պատարագում ձե-վականորեն է անջատված պարից: Խորհնացու ակնարկած ժողովրդական դրամայում դա արտահայտված է ցուցի բա-ռով՝ Հովհանիկիերպ, բայց հզակի իմաստով: Զպհոք է շփո-թել ցոյցի բառի հետ: Այս բառերը թվում են համաշանակ, ձևուս գրերում էլ երրեմն այդպիս են ներկայանում, բայց հո-լովման մեջ տարրերությունը երկում է. ցոյցից ցուցից, ցուցից ցցուցից: Նրանցից մեջը գրքային է, մյուսը խոսակցա-կան-ժողովրդական, և այս վերջինն է, որ կապ ունի դրա-մայի ու թատերախաղի հետ. նշանակում է ներկայացում, թատրոն, նաև ցուցամուլ, կատակարան, խեղկատակ: Խա-ղային տեսակի և կատարողի անունների նույնությունը նոր բան չէ: Այսպիս, չին հնդկական միմողրամայի մի տեսակ կոչվել է հաբճակ, նույն կերպ է կոչվել զերասանը: Ուշ ան-տիկ շրջանից հայտնի է միմաս ժամբը, և նույն կերպ է կոչ-վել դեռսանիր: Հայոց մէջնադարում թատերախաղը կոչվել է կատակ, խաղացողը նույնպիս նույնն է քառար. նշա-նակում է խաղավայր և խաղացող: Ցուցիր պահպանվել է հայերենի մի շարք բարբառներում, որոց դեպքերում աղա-վաղված՝ ցուցու (երգում), ցուցունիք, ցուցանիք (Երակ), ցուցիկ, ցիցարկա (Լոռի) և այլն: Տարածված է «ցուցիր մե-կր» Հերջորջումը (Սևանի ավազան), որ նշանակում է ձեռ-ցող, ժուղածու<sup>57</sup>:

Այսպիսով, պարբ և ցուցի բառերի հարադարումը մեկ ընդհանուր, միավորող հատկանիշի՝ երգի հիման վրա (երգի նաև գրացնի ու պատմության իմաստ ունի) տվել է երգի ցցոց և պարուց ինքնատիպ անվանումը, որ վկայված է միայն ենորենացու երկում: Դա այլ բան չի կարող նշանա-կել, եթե ոչ ժողովրդական պարերգական դրամա, իր խոր-հրդապաշտական հիմքով և քրիստոնեական շրջանում աշ-խարհիկ բովանդակությամբ ու զերով: Այս երկույթի քիչ թի շատ ավարտված տիպաբանական հատկանիշներն ակնհայտ

57 Ժամանակակից հայերենի խոսակցական ձեռքում երբեմն կարելի է լսել «ցիրկ մարդ», «ցիրկի մեկը»: Բայց հայերեն չէ և նոր է մտել ժո-ղովրդական բառապաշտար, բայց արտահայտության ձեզ չին է:

հն ռԱրեղաթողի Հանդեսում»: Բայց մեզ Հայտնի փաստը նոր է գիտված և գուցե աղավաղված է: Հինը պետք է փնտրել «տաղմ պարանցիկ երգոցն» կոչված երեսովթում, որի օրինակը շունենք, և՝ Թրակացու մեկնիշների ժշտութագրումներում: Բայց ոնքնալով դատական խաղի և հին պարերգի պատկերացումը, կարող ենք կանգ առնել միշնադարյան մեկ-երկու վկայության վրա:

Հովհանն Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկում (VIII դ.) բրդված է կատակերգական պարուց երգի մի Հատված: «Բնո՞ւ առաջ եղեն պարաւորքն և երգ առեալ բազում ինչ իրաց գովէին, որ յետոյ ի հոտել դիականցն շէր Հանհալ ասէին»<sup>58</sup>: Դովիասանական կամ դիֆիրամբային Հատվածը շկտ: պատմիչը բերում է միայն կատակերգական պարերգը:

Կերան գաղանք զմարմին զիականցն և զիրացան,  
Խուզ կերեալ ունեալ իբրև զարչ.  
Եւ աղուս հպարտ աղն քան զառիւծ.  
Գայլ քանի շատակեր էր՝ պայթեաց,  
Եւ արչ, զի զոր ուստեն՝  
Զմեստ առ ինքն ի սովոյ մեռաւ,  
Անդեղք, զի ազա՞ն էին, նստան  
Եւ այլ ու կարացին վերանալ.  
Մկունք զի շատ տառէին ի ծակս իւրեանց,  
Մաշեցան ոտք նոցա<sup>59</sup>:

Միշնադարի քերական-մեկնիշները կատակերգութիւն և հագներգութիւն ասկելով, նկատի ունեն այս կարգի ծաղրական-այլաբանական երգերը: Սա ժողովրդական «կումոսի» երգ է, որով ոչշարսն եպերէին և զբարիսն գովէին ձայնիւ հեղինական»: Մեզ Հայտնի է նման բնույթի մի երգ ևս, որի վրա ուշագրություն է հրավիրել Գարեգին Լևոնյանը: Բայց սա այլաբանական չէ և մասսամբ հիշեցնում է «Արեղաթողի Հանդեսի» երգերը: Այս երգը, որ թվում է զարձյալ խմբական,

58 Ցովհանն Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ. և առաջաբան Ա. Արքահամբանի, Երեան, 1941, էջ 246:

59 Նույն տեղում, էջ 246—247: Եկը հշանակում է ժողովրդական երգ ուստ Հ. Աճառյանի, սեմական հին փոխառություն է (Արմատական բառանուն, հ. 3, էջ 515):

կատակացին պատասխանն է Քրիստոսի օդուք էք աղ երկրի»  
խոսքի:

Աղ էք ւատանայ պայծառութեամբ յերկինս,  
Եւ հոգաբառութեամբ անմահացաւ  
Եւ եղն ազը կախան մարդկան:  
Աղ էք Աղամ ի դրախտին,  
Մինչ չք անցեալ զօրինօքն,  
Բայց յետոյ եղե ազը անպիտան:  
Աղ էք Կայէն, բայց յորժամ եղե եղբայրապան,  
Իրբն զհոռեալ եղե ազը անպիտան:  
Աղ էք Քամ որդի Նոյի,  
Բայց յորժամ ձիճաղեցա ի վէրայ Հօրէ,  
Եղե որպէս ազը անպիտան:  
Աղ էք Եսուս, բայց յորժամ  
Զանզբանկութիւնն վաճառեաց,  
Եղե որպէս զազը անպիտան:  
Աղ էք Յուզա, բայց յորժամ մատնեաց  
ԶՏէրն, եղե ազը Հոռեալ և զարչ,  
Հոտովն ելից զաշխարհ ամհնախն:  
Աղ էին Հին քահանացին ու յորժամ  
ԶՏէրն ի խաչ Հանին,  
Եղեն ամհնայն ազգաց ատելի:  
Աղ էին Հայրապէտըն,  
Բայց ուժանը Գերձուած խօսելով  
Եղեն իրբն զազը անպիտան:  
Աղ էին վարդապէտը և քահանայթ  
Եւ յորժամ ծալանան ի գործս իրեանց,  
Լինին որպէս զազը անպիտանՅո:

Մոտիվներն իսկապես Հիշեցնում են ուկրեզաթողը: Դժվար է այս խմբերգի ժամանակը որոշելը, բայց Հերձվածողնիերին ուղղված ակնարկը մտածել է տալիս, թի կարող է միջնադարյան լինել, եթի ոչ վաղ, ասլա թիրիս պավլիկյան համ թոնուրակյան շաբաթումների շրջանից: Խոսքի կառուցման եղանակով, ընդհանուր ոճով սա նման է Հովհան Մամիկոնյանի բերած հատվածին, այն է՝ ունի ժողովրդական կոմսի գծեր:

Միջնադարյան Հեղինակների ակնարկներում ժողովրդութեանը պական զրամացի Հին խորհրդապաշտական Հետքերը գրեթե

շեն երևում: Նրանցում տեսնում էնք ձեզ անդ ընդհանուր նշան-ներ և զգում ենք աշխարհիկ շունչը, նկատում ավելի կատա-կերպական, քան «ահաւոր» (վեճ՝ Հերոսական) միջնորդու: Մեզ հայտնի ավալներից բացառություն է կազմում Գրիգոր Մագիստրոսի պատահական ակնարկը, որտեղ տաղը պա-րանցիկ երգոցն երևում է պատմահերոսական բովանդակու-թյամբ. «Ե երեմն ի նոսա արի երենալ և հրաշից հիացման արժանի և ի վեր քան զմտածութիւն. որ և նոցա իսկ որոյդ հանդիսի մրցութեան տաղը և սովոր յօրինեալ անպատկա-նաբար ազատագունդն պարէին և ի հրապարակս գոեհից և քաղաքաց իրրու զգիւցազանցն երգէին»<sup>61</sup>: Թարգմանենք. «...քո մրցության հանդեսներում տաղեր ու երգեր հորինելով պարում էին ազատորեն, նաև՝ բազարների ամբոխային հրա-պարակներում, երբ պատմում էին զյուցազունների մասին»: Աս Հերոսական հազներգությունն է՝ «զնախնեաց պատմու-թիւն» աշխարհիկ եղանակով, ոռպես պարուց երգ, շրջանա-կենտրոն խաղ: Հայտնի չե և գմիշար է որոշել՝ Գրիգոր Մա-դիստրոսը ի՞ո՞ ժամանակից է խոսում, թե՞ անցյալից, տե-սա՞ծն է վերաբարդում, թե՞ կարգացածը: Դա ի՞նարկի պա-կառ էական է: Ամենակարենքը, որ այստեղ տեսնում ենք, Մովսես Գերգողի հիշատակած «պարանցիկ երգերի տաղն» է:

Պարերգական մեկ այլ միջնադարյան պատկեր գտնում ենք Դավիթ Զեյթոնցու քերականական դասագործում.

Սափս հարկանելով  
Կարաւեն լուսով,  
Եւ ժան առնեն պար զոլով,  
Եւ ճօճեն ճեմելով,  
Եւ տափս հարկանեն ծնծղայթով,  
Եւ խազս խազան թատերով...<sup>62</sup>

Այս հատվածը Ալիշանը վկայարերել է որպես ուսմկա-կան բանաստեղծություն (անկասկած այդպիսին է) «հտին դարերու քերականի մեկնիշից»<sup>63</sup>: Թատերագիտական ուսում-

61 Վրյումը Մագիստրոսի թշթերը, թ. ԺՅ, էջ 40:

62 Գոտիք Զեյրունցի, Մեկնութիւն քերականի, Երևան, 1981, էջ 77:

63 Պ. Ալիշան, Ցուցիկը հայրենեաց հայոց, Հ. Բ., Վեհնետիկ, 1921, էջ

117 Երեսոց Անդամ, Խաղաղ Ազգական բարձր  
մայ՝ կուտանք : Երեսոց Անդամ է Գլուխ ՀՀ  
Երեսոց Անդամ, Խաղաղ Ազգական բարձր :



» Ճանապարհութեան առաջնորդ, Կոմակենակ  
առաջնորդ, առաջ Երեսոց Անդամ է :

« Երեսոց Անդամ, առաջնորդ վազարդութեան առաջնորդ :

» Կոմակենակ :

» Ճանապարհութեան առաջնորդ, Արքայութեան  
առաջնորդ, վազարդութեան առաջնորդ  
Հանութեան առաջնորդ, Երեսոց Անդամ է :

» Երեսոց Անդամ, առաջնորդ վազարդութեան առաջնորդ,  
առաջնորդ : Վազարդութեան առաջնորդ է :

» Վազարդութեան առաջնորդ :

» Ճանապարհութեան առաջնորդ վազարդութեան :

» Կոմակենակ :

» Երեսոց Անդամ վազարդ վազարդութեան է  
կոմակենակ : Երեսոց Անդամ վազարդ կոմակենակ :



Եկ. 8. Կատակերգուելիք, Մատենադարան, ձև. № 6420

նասիրություններում էլ բերված է այս փաստը<sup>64</sup>: Այնուա-  
մենայնիվ, նկարագրվող երևույթի ժամանակը մեզ համար  
մնում է անորոշ: Սա ժողովրդական «կոմոսի» կատարելա-  
պես միջնադարյան պատկերն է, ամբոխը զնում է փողոցով՝  
թմբուկով, ծնծղաներով, երգով ու պարով, և ներկայացվում  
է ինչ-որ մի թատերախաղ: Վկայողը՝ Դավիթ Զեյթունցին  
XVI—XVII դարերի Հեղինակ է, ապրել է Լվովում, եղել է քա-  
հանա և ուսուցիչ հայոց եկեղեցուն կից դպրոցում: Դավիթ  
քահանան ուսուցանել է «արուեստ քերականութեան»՝ մեկ-  
նողական հարց ու պատասխանի եղանակով, սովորեցրել,  
այսպիս կոչված, դպրոցական «բեմբասացութիւն» միջնա-  
դարյան զրոյցների կամ խրատական առակների ճարտա-  
սանական-տրամախոսական վերարտագրություն: Նա մեզ  
հայտնի վերջին միջնադարյան քերականն է, որ ենում է  
Դիոնիսիոս Թրակացուց՝ միջնորդաբար կամ անմիջակա-  
նորեն: Ե՞րբ է նա տեսել, որտեղ է տեսել միջնադարյան  
«պարուց երգը», կամ ո՞ւմից է լսել զրա շափածո, ռամկա-  
բան նկարագրությունը, որ անվանում է քառար: Գուցե նկա-  
րագրվող փաստը սլավոնական աշխարհից է, և միայն նկա-  
րագրությունն է հայերեն: Գուցե քանավոր ճանապարհով  
ավանդված մի անողողակի հիշողություն է սա կամ քաղված  
է որեւէ զրական աղբյուրից: Որոշ շափով նման է Գրիգոր Մա-  
գիստորոսի ներկայացրած պատկերին: Համենայն գեպս, այս  
շափածո հատվածից, ինչպիսին էլ լինի նկարագրովով երե-  
վույթը՝ սլավոնական, թե հայկական, թունդ միջնադար է  
բուրում և իհարկե՝ ժողովրդականություն: Լվովի հայերը,  
որ անեցիների շառավիղներն էին, կարող էին պահած լինել  
բնաշխարհիկ բարերը, նաև ժողովրդական պարերգական  
դրաման:

XVII դարը մեզ տալիս է ժողովրդական դատական խա-  
ղի մի վկայություն, որի ծայրը վազ միջնադարում է՝ նշանա-  
վում է «Տարօնո պատմության» մեր բերած հատվածում,  
նաև քերական-մեկնիչների խոսքերում: Խաղի ընդհանուր

64 Գ. Առնեան, նշվ., աշխ., էջ 129—130, նաև՝ Թատրոնը միջնադար-  
յան Հայաստանում, էջ 103—104:

պատկերը՝ թափորապետ-դատավորի դիրքով ու դերով, «կոմսուհ» վարքագծով հիշեցնում է «Արեղաթողի հանդեսը»:

Այս խաղի ոչ լիակատար պատկերն անուղղակիորեն՝ պատահական առիթով վկայված է Զաքարիա Քանաքեցու «Պատմագրութեան» երկրորդ գրքում։ Պատմվում է ըստ շուրջ ծագած մի կոփիվ, որ տեղի է ունեցել Եղվարդ ու Զաքարյան գյուղերի միջև։ սովորական մի պատմություն անսովոր լուծումով։ Զաքարիան, որ եղել է այդ ժամանակ Հովհաննավանի սարկավագ, դեպքի ժամանակակիցն է կամ ականատեսը։

Այսպես, Զաքարյան գյուղի տանուտեր Հապուշ-Ղասիմը փակում է Եղվարդի արտերը ջրող առուն։ Եղվարդցիները ճարահատյալ դիմում են Երևանի խանին։ Սրան էլ առիթ է պետք մարդկանց իրար զեմ հանելու Եղվարդցիները, խանի խորհուրդ ու խրատով և իրենց տանուտերի գլխավորությամբ արշավում են զաքարյանցի Հապուշ-Ղասիմի վրա և իրենց արշավանքին տալիս զատական խաղի տեսք։ Բնտրում են «Ավելապուխ իշով թագավոր»՝ հավանաբար ժամանակին տարածված ամբոխային մի խաղ՝ միջոց «զշարսն եպերելոյ»։ «Եւ ահա զրո՞ տուեալ ժողովեցան ի մի, — պատմում է Զաքարիա Սարկավագը, — և ոմն երիտասարդ զգեցուցին ի հանգերձից իրեհանց, և եղին ի զլուխ նորա աւել, և նստեցուցին ի վերայ իշոյ, և անուանեցին զնա՝ Աւելապուխ իշով թագաւոր։ և ելին ամբոխիւ ամեներեան զուռնայով և դահուկով՝ շափոք և պարուք, խաղալով և խնդալով, ամենայն արք մինչև կանայք ևս երգելով։ Եւ յորժամ մերձ եղեն Զաքարյօրան գեղշին, տանուտեր աւագն խրատ ետ նոցա՝ և ասէ, մի գուցէ արին հեղուոք՝ և լինիք պարտապան արեան. այլ հարեալ ծեծաք՝ կիսամահ արարէք և թողէք, այն բաւական է նոցա մահացն։ Պատական խաղը տեղի է ունենում բոլոր կանոններում։ Եվ, ինչպես «Արեղաթողի հանդեսում», խաղը ծառայում էր կյանքի հարցեր լուծելուն, այստեղ ևս խաղը ծառայեցվում է դատի, որտեղ իրականության ու պայմանականության սահմանները մերձեցին են. սկսվում է կոփիվ, բայց առանց

65 Կաթարեայ Սարկավի Պատմագրութիւն, հ. 2, Վաղարշապատ,  
1820, էջ 118.

արյունահղության։ Կատարյալ ամբոխային հոգեբանություն, եթե կովի մեջ սպանություն չի լինում, կոփվը կոփվ չէ, խաղ է։ «Եւ աշա եկեալ հասին ամբոխին. և Հրամայեաց Աւելազուին, հարէք՝ ասէ, և սպանէք զշունդ զայտ Յայն-ժամ կալեալ զնա՝ արկեալ յերկիր առաթուր, և հարկանէին անողորմ աքացի և բանցի, փայտի և բարիւ»<sup>66</sup>։ Հակառակորդ կողմը զործում է նույն խաղի օրենքով. տապալում է Աւելազուին և ոտքի տակ առնում։ Հայտնի չէ, որքան ժամանակ է նա մնում «կիսամահ արարեալ», բայց Զաքարիա Սարկավագը նրան ոտքի է կանգնեցնում ոչ ինչպես «զՂաղարոս՝ չորեգորեայ մեռնալ», այլ... «Յետ երից աւորց ապա ողջացաւ, և եկեալ կորեաւ»<sup>67</sup>. Զաքարիան վերարտագրում է ժողովրդական զատական կատակերգության և իրական կենցաղին փաստի մի խառնուրդ և չի կարողանում մոռանալ հարության երեգորյա ժամկետը։

Խաղի պատկերն այն է, ինչ տեսանք «Արեղաթողի հանդեսում» և տեսնելու ենք XIX դարում զրապված փաստերում. «Թագավոր» և «Պատավվոր»՝ ավանակին նստած (Մազկազարդի շարականն է պակասում), շրջապատված պարերգակ ամբոխով, «Հափօք և պարուք», ինչպես Մարկոս Կրասոսի նմանակը՝ շրջապատված Սելևիայի պոռնիկներով, ինչպես Հաղթակամարի տակով անցնող Կեսարը, ինչպես «Արեղաթողի» թափորապետը՝ շաթալ-թագով ու թրքոտ գավազանով։ Դատական խաղի պատկերները տարրեր տեղերից ենք քաղում, բայց որքաւն նման են իրենց բնույթով ու տիպաբանությամբ՝ մի տեսակ համազրություն խնջուցքի, պատարագի, շքերթի՝ հասարակական գիտակցության ունիվերսալ ցուցը, իրականի ու պայմանականի, պաշտոնականի ու ժողովրդականի, ժաղորի ու մեծարման կարծես թե շփոթ, բայց հենց այդ շփոթն է բուն զրամատիկական վիճակը, այդ հակասականությունն է իմաստ տալիս խաղին։

Միջնադարյան ժողովրդական զրաման, հատկապես կատակերգությունը ոչ միայն զատ է, այլև կոնկրետ անձնագորությունների դատ։ Ժողովրդական կատակերգությունն է ամ-

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 119։

<sup>67</sup> Նույն տեղում։

սում է առակով ու այլաբանությամբ կամ որոշակի հասցեագրությունում կամ զատի տրվող երևությը միջնադարյան խաղում կոնկրետացվում է, ուղղվում որևէ անձնավորության: Այստեղ զործում է ոչ այնքան ընդհանրացման, որքան «փաստարկման» օրենքը, առակը տեղափոխվեւմ է անձնավորության վրա, և խաղը զառնում է ամրաստանության մի եղանակ: Հովհանն Մայրագոմեցու «Վասն թատերաց դիւականաց» ճառում ասված է այդ ժամանք, «մանաւանդ զկատակսն մտակորոյմ՝ որ ի մեջ լիտի բազմականացն իրք դայսահարս յափրին, ծոփին, դելոնն, աքսոտենն, զամեննեսեան ազտով բներանունն զազրացուցանեն, զոմանս հայցոյէ, զոմանս բամբասէ, զոմանս թշնամանէ և զոմանս ձաղէ խեղութեամբ, ամոթով կուրացուցանէ, ոմանց ստէ և յարգանօր սնափառեցուցանէ, իրք զշուն կատաղեալ զամեննեսան առ հասարակ խածանէ»<sup>68</sup>: Նման տեղեկություն է տալիս Սիմեոն հպիսկոպոսը, «և զուք անառակիր և արբենայք, և լկտիր և պոռնիքը անյայդ և զառնայք ի բահանայքն և բամբասէք և ոչ ձեզ նման կացուցանէք, ապա այլ վատթար տեսանէլ զբահանայքն, <...> զի՞՞վ ևս զու որ զաստուածային սպասաւորն բամբասնո, խաւիս առ նա զհայլի հորդութիւն <...> զի՞ տեսանես զշիւղ յական եղբար քո տէանէր զգերան ոչ տեսանես»<sup>69</sup>: Հին կատակերգությունից է գալիս այս երևություն: Հայտնի է, որ Արիստոֆանը Սոկրատին է ծաղրեկ «Ամպերում»: Բայց զա առավելապես ժողովրդական ծագում ունի, իման նկատի առնենք զատական խաղերի հնագույն ձեերը՝ պահպանված ափրիկյան ժողովուրդների մեջ: Միջնադարը հնագարյան խաղային բանհայուսության ժառանգորդն է և անհատական ծաղրի սովորությը հասցնում է նոր ժամանակներ ժողովուրդն ասում է «խաղը եղանք», «խաղը ու խայտառակ եղանք», «առականք եղանք»: Իսկ առակ նշանակել է օրինակ, հասարակության աշքի առաջ ի ցույց դրված կենդանի փաստ: Միջնադարյան հայցաքը կյանքը դիտում է ծայրահեղ կետերից՝ մի կողմից առարկա-

68 Տ. Յովհաննու Մանդակունոյ ճառը, Վենետիկ, 1860, էջ 134:

69 Վենետիկի Միջինադարյան ժատենադարյան, ձեռ. 633, էջ 38r—39v:

զական կոնկրետություն, անձի շոշափում, մյուս կողմից այլաբանություն և սիմվոլիկա։ Զաքարիա Քանաքեռու պատմածում, որն իրական դեպք է, խաղի վախճանը այլաբանական է։ Պարագլուխը ողջանում է երեքօրյա կիսամեռ վիճակից հետո և անհետանում, իսկ կաղմակերպողը՝ «երէց գեղջն Յոհան անունն՝ վախճալ անկաւ ի խոր ձոր անդր, և եմուտ մի աղուիսում՝ և զերծաւ»<sup>70</sup>։ Մարդն ինչպես պետք է տեղավորվեր աղվեսի որդում։ Փախուստն իրական է, թաքուստն այլաբանական։ Համեմատությունը գալիս է խաղի պայմանականությունից, իսկ իրական վախճանը խաղի արդյունքից։ Ծատ ընութագրական է դատական խաղերի ժողովը դադարական անվանումներից մեկը՝ «դատ-բեղադ», որ նշանակում է փորձություն ու փորձանք «Դատ-բեղադը» դարձել է նույնիսկ հատուկ անուն խաղի գիխավոր պերսոնաժի համար<sup>71</sup>։

Դատապարտվող օրյեկտի կոնկրետությունը միայն հայ ժողովրդական զրամացի առանձնահատկությունը չէ։ Դա հատուկ է առհասարակ միջնադարյան աշխարհիկ թատրոնին։ Եվրոպական միջնադարում էլ կա այդ երկույթը։ Ամենապերճախոս վեցյաւթյունը տեսնում ենք Շեքսպիրի «Համլետում»։ Պատառ եկող կոմեդիանտներին Դանիայի արքայազնը ընութագրում է հետեւյալ խոսքերով։ «Արանք ժամանակի խառցումը և համառոտ տարեգրությունն ան ավելի լավ է մահից հետո վատ տապանագիր ունենաք, քան թե կինդանության ժամանակ սրանց կողմից վատ հիշատակում»<sup>72</sup>։ Համլետի կազմակերպած ներկայացումո, որ կոչվում է «մկան թագարդ», բերում է ոչ թե հեղինակի ժամանակի ստացիոնար թատրոնի, այլ ժողովրդական «դատ-բեղադի» պատկերը։

Կատակերգությունը իր սոցիալ-հասարակական դերով միջնադարում նույնացվում է դատի ու դատաստանի գաղափարների հետ։ Գրա պատմական հիմքերը խորն են։ Միջնադարում թատրոնը կոչվել է նաև կատակերգութիւն, Արե-

70 Զաքարիա Սարկաւագ, նշվ. աշխ., էջ 119։

71 Վ. Բղոյան, Հայ ժողովրդական խաղեր, հ. 1, էջ 129—130։

72 Վ. Շեքսպիր, Էնտիթ երկեր, հ. 1, էջ 45։

մուտքում հիմնականում այդպես՝ կոմեղիա, և դրա պատմական հիմքերն էլ հայտնի են։ Դանտեն «Կոմեղիա» է անվանել իր անդրաշխարհային ուղևորությունն ու տեսիլքը։ Ընդունված է կարծել, որ սխալ չէ, որ պատճառը լեզուն է ժամանակի խոսակցական իտակերենը։ Սա պատճառներից մեկն է։ Դանտեի պատկերացրած անդրաշխարհը մի մեծ, շոշանակենտրոն ատյան է՝ դիկաստերիոն, «հանդիսաւանի իրաւանց ժամանութեանց»<sup>73</sup>, ուր գատաստանի են կանչված ոներեւ պատմական անձինք, ոչ թե «քալության նոխազներ», այլ դարի մեղավորները և հեղինակի անձնական ախոյաները։ «Կոմեղիան» շատ խոր մտածված վերնագիր է։ Հիշենք, թե ինչ էր տեղի ունենում հոռմեական թատրոններում բրիստոնեության արշալույսին։

### «ԴԱՏ ԲԵԴԱԴ» ԵՎ «ԽԱՂՔ ՈՒ ԽԱՅՏԱՌԱԿ»

Զաքարիա Քանաքեցու վկայությունից հետո մինչև XIX դարը գրականության մեջ չենք հանդիպում դատական խաղի նկարագրության։ «Արեգաթողի հանդեսը» բացառիկ մի փաստ է նրանով, որ չլինելով ժողովրդական, ունի ժողովքրդական խաղի տրամաբանություն։ Ընդունելով այս ծիսախաղը որպես միջնադարյան, նկատի ունենք նրա՝ վանական միջավայրում պահպանված լինելը։ Եկեղեցին ամենապահպանողական հաստատությունն է և մեզ տվիլ է միջնադարյան պարերգական դրամայի համեմատարար ամբողջական պատեկերը։ Ուստի, այս կատակերգական միստերիան ընդունում ենք որպես հիմնական կողմնորոշիչ, ուղեցույց պատկեր, տիպարանական օրինակ և նրա լույսով դողովրդական խաղային բանահյուսության այն փաստերը, որոնցում առկա են պարերգական դրամայի գծերը։ Ժողովրդական խաղային բանահյուսության ոլորտը շափաղանց լայն է ու բազմաշերտ։ Ուսումնասիրության առանձին բնագավառ է սա, անսպառ, առեղծվածներով լի։ Եվ ի՞նչ է այս-

<sup>73</sup> Նարեկացու այս խոսքը (նշվ. աշխ. և Հրատ., էջ 247) ամենաքնութագրական է, որպես երկնալին դատաստանի հիշեցում։

առեղ «Արևոտող» կատակերդական միստերիան, եթե ոչ Հին պրամայի գոլորշիացումներից առաջացած թեթև մի ամպ, որից թափվող կաթիլները զտված են միջնադարի մաղով: Եթ զնում էնք այդ ամպի հանդից, քանզի մեր փնտրած երեւլովի որոշակի հնտքն այդ է:

Սկսած անցյալ գարի 70-ական թվականներից մինչև մեր օրերը կուտակվել է խաղային բանահյուսության Հսկայական նյութ: Դրողները, բանահավաքները, բանասերները, բանագետներն ու ազգագրագետները (ա. Արովյան, Պ. Պողցյան, Բաֆֆի, Գ. Մրվանձոյյան, Ս. Հայկունի, Ե. Լալայյան, Գ. Տեր-Մինասյան, Տ. Նավասարդյան, Ե. Լալայյան, Գ. Բղոյան, Միք. Լիսիցյան և ուրիշներ) ստեղծել են փաստական տվյալների այնպիսի մի համայնապատկեր, որ կարող է մոլորեցնել մարդու հայացքը: Զեղողմնորոշված միտքը կարող է գնալ ու կորցնել ետզարձի ճանապարհը: Ուրեմն, մեր բոնածը մի արահետ է, զուցե նեղ, բայց հստակ: Վ. Բղոյանը տվել է խաղային բանահյուսության նյութերի որոշակի մի դասակարգում և բավական հեշտացրել դրամայի պատմաբանի ու տիսաբանի գործը: Անվիճնելի է, որ այս նյութի կազմը նոր ժամանակների հետ սոսկ արտաքին է, և նրա բոն արժեքը այդ չէ: Ծիսային և պաշտամունքային առնչությունները շատ հեռուն են տանում: Այսուհետ կան խորհրդապաշտական առումով մթին կետեր, հասակային միտքյունների, ֆրատրիալ (ցեղախմբային) հարաբերությունների, կրոնական, սոցիալդաստիարական հակասությունների արձագանքներ, անհատականի ու հասարակականի բախման հիշողություններ, նաև սոցիալական հոգեբանության նոր գրանորումներ և հաղար ու բան, որ կողմնակիցրեն է առնչվում մեր խնդրին: Բոլոր դեպքերում մեզ հետարքը բայց դրամայի անդրադարձան կետերն են, նրա տիպաբանությունը բնութագրությունները: Դրամատիկականի հետքեր, նաև սուր գրանորումներ շատ կան խաղերում: Կարելի է ասել, որ չկա խաղ առանց դրամատիկական պայմունքի, բայց բոլոր խաղերում չէ, որ գրամատիկը՝ հանդես է գալիս որպես անհատի ու խմբի հարաբերություն, բոլոր խաղերում չէ, որ կան պարերգական-շրջանակենտրոն

ձեի հիշողություններ, «քավության նոխաղի» գաղափարը՝ Դրանք արտահայտված են խաղերի որոշակի մի տեսակում, որը պայմանականորեն պետք է անվանենք ժողովրդական դիկաստերիոն:

Ժողովրդական դիկաստերիոնը ենթադրում է խաղի որոշակի մողել սցուժետային սխեմայի մեկ-երկու տարրերակ և դատող ու դատվողի հավաքական մի կերպար՝ արխետիպ: Այց է երպարը վկայված է մի քանի անուններով, որոնք բռնություն էլ. Եթե նկատի առնենք խաղի սոցիալ-դասակարգային բովանդակությունը, մասսամբ և ազգային բողոքի շերտը, նոր են. Շահ, Խան, Փաշա, Մելիք, Ղոչուն, Ղաղի: Խաղերը որպես կանոն, կոչվել են գլխավոր գործող անձի անունով: Դատող ու դատվող դեմքը ժողովրդական գիտակցության մեջ պատկերացնել է արևելյան բռնացողի կերպարանքով: Պարսկական ու թուրքական տիրապետության շորսարյուրամյա շրջանը ժողովրդին տվել է մեղավոր ուժի և առհասարակ իրավունքի արևելյան պատկերացում: Արդար ուժն էլ չի պատկերացվել այլ էրարք, քան բռնությանը հակոտնյա բռնություն, դարձյալ խան ու փաշայի կերպարանքով: Դատող ու դատվողի միակ արգային անվանումը գտնում ենք Զաքարիա Քանաքեռցու վկայության մեջ՝ Ավելագլուխ իշով թագավոր: Թվում է նաև իմաստափոխված է «Շահ» անվանումը: Վաղ միջնադարից վկայված «խաղացին», վերտեցին և շահ արարին» խոսքը մտածել է տալիս, թե «ի շահ ածել», որ նշանակում է «շահեցուցանել, յարգել զքանքարս»<sup>74</sup>, պաշտամունքային խաղի հնագույն անվանումն է կեղծ աստվածության՝ պարսից բըռնապետի տիտղոսանվան պատահական հնչյունական նմանությամբ: Ուժի գաղափարը պաշտվում է ի դեմս կռոց կամ մերժվում է ի դեմս վախի խրտվիլակների: Եվ ահա կուրքն ու երկյուղի օբյեկտը, լինելով դիկաստերիոնի կենտրոն, պարսկական բռնապետության երկարատև շրջանում միանգամայն տրամարանորեն կարող էին հանգել շահ-բռնապե-

<sup>74</sup> Նոր բառդիրք հայկակեան լեզուի, հ. 2, էջ 458:

տի գաղափարին: Եթե մեր կուահումը ճիշտ է, պետք է մտածել, որ ժողովրդական խաղերի արխետիպի վերը հիշատակված անուններից ամենահինը Շահն է, և «Շահ-շահի» անվանումը գուցե կարելի է թարգմանել՝ «Խաղ թագավորի»: Մյուս անունները, որ ստորակարգվում են «Շահ» անվանք, պետք է համեմատաբար ոչ առաջացած լինեն: Պարսից շահին խաղի վերածելը չեր կարող այդքան հիշտ լինել, և շահի գաղափարը մարմնավորվել է խան ու Փաշա անուններում: Բոլոր դեպքերում «Խաղ թագավորի» անվանումն ավելի մոտ է մեր խնդրին, մասնավանդ որ դատական խաղի XVII դարի վկայությունը «թագավոր» անունով է:

Ասելով «Խաղ թագավորի», ճանապարհ ենք բացում դեպի մեր միթոլոգիական պայմանաձևը. թագավորը դատում է անհնազանդ որդուն: XIX դարի երկրորդ կեսին պատումներով գրառված և ոռուական-ժողովրդական համարվող «Մաքսիմիլիան թագավոր» գրամայի հետազոտողները փորձել են պատմական ոչ հեռու անցյալում որոնել հիմնային թագավոր Մաքսիմիլիանի և նրա քրիստոնյա որդու՝ Ադոլֆի բախումը, հասցնելով այն ամենաշատը մինչև Պետրոս Առաջինի և Ալեքսայ Միխայլովիի ժամանակները<sup>75</sup>: Բայց մենք արդեն գիտենք, թե որքան հին է ըմբոստացող բարքայազնի և նրան դատող ու պատժող Հոռ թեման՝ թարգավոր-դատավորի գաղափարը: Սա միշտային և ոռուականից առաջ բազում հոլովումների ենթարկված իրազրույթուն է կամ առասպել: Մաքսիմիլիան անուն էլ ոռուական նշանակում է վեհապետ: Համարիստոնեական վարչարանական հետքեր կան այստեղ. Հեթանոս վեհապետը քարցաքննում է որդուն, որդին անդրդվելի է մնում քրիստոնեական հավատում, վեհապետը նրան բանտ է ուղարտում, երեք անգամ կանչում, հարցաքննում, տանջում, բանտ կում, մահապատճի ենթարկում: Թազմից կրկնված և վարդնում, մահապատճի ենթարկում:

<sup>75</sup> П. Н. Берков, Вероятный источник народной драмы «О царе Максимилиане и его непокорном сыне Адольфе». — «Труды Ин-та древнерус. лит. Ин-та русской литературы», XIII, М., 1957, с. 311—314.

իսկապես դրամա է, ինչպես ուսումնասիրողներն ու գրառողներն են վկայում, ապա, միանգամայն պարզ է, զատական խաղ է, թագավոր-դատավորի միջնորդված Հիշողություն:

Այսպիսով, աստված-հայր-թագավոր-դատավոր, սա ոչ թե նվիրապետություն է, այլ մեկ ուժ, մեկ պատկեր: Դա նույնն է, ինչ թագավոր-շահ-խան-փաշա-զաղի և ամենը՝ իշխան էվ, իշարկե, գործ ունենք մեկ ընդհանրացված դեմքի՝ արխետիպի հետ, և իրագրությանն էլ ծանոթ ենք: Արտաշեսը դատապարտում է Արտավազդին, Պիղատոսը Քրիստոսին, Տրդատը Լուսավորչին, Աստված Տղամարդին, Մաքսիմիլիանը Աղոթիքին: Հավատաքննության այս պատկերը կրկնվում է «Խան» խաղի տարբերակներից մեկում:

— Ի՞նչ մարդ ես, ազա, ի՞նչ պաշտօնի ես ծառայում, — Հարցնում էր խանը:

— Ես անտառապետ եմ, խանը սազ լինի:

— Ի՞նչ ես անում անտառում:

— Պաշտպանում եմ, ման եմ զալիս... խանը սազ լինի:

— Դու ա՞րբ ես, ի՞նչ ես, որ անտառումն ես ման զալիս, — վրա էր լեռում խանը և ընդհանուր ծիծագ առաջացնում: Այնուհետև Հրամայում էր, որ նա իր արշության համար շաթրների կույզը մի լավ ձև ուներ ու սուզանք կնարեր:

Գալլ ս էր ներկարար, որին դարձյալ Հարցնում էր.

— Ի՞նչ մարդ ես, ի՞նչ Հավասի ես ծառայում:

— Ներկարար եմ, խանը սազ մենու:

— Ի՞նչ է նշանակում՝ ներկարար ես, ի՞նչ են անում այդ ներկարար Հարամզադաները:

— Եսանք սազ մնա, — պատասխանում էր նա, — ներկարարները այն մարդին են, որոնք սպիտակ թիւր չուրն են կոխում և ոն Հանում:

— Վա՞յ, շան շան որդիներ, զուր ի՞նչ մարդ եք, որ սպիտակը չուրն եք կոխում և ոն Հանում?!

«Դատավորը» տուգանք ու կաշառը է Հավաքում (սա նոր շերտ է՝ մահմեղական արեներից եկող), անվճարունակ-ներին «բանու» ու «աքսոր» ուղարկում, ոմանց «կախաղան» բարձրացնում՝ կախել տալիս թեատրակերից: Այս ամենն արվում է ծաղրով, կատակով ու սրամտություններով՝ որքան

մեղքը փոքր, այնքան պատիճը մեծ: Այսպիս զրամ, ուտեւիք ու գինի ևն հավաքում և խաղն ավարտում են ընդհանուր խնջուքով: Սա, իհարկե, խաղի աղավաղված վերջարանն է:

Սյուժետային պատկերն ավելի կատարյալ է Վ. Տեր-Միհնասյանի՝ 1893 թ. արևմտահայ զյուղերում զիտած «Շահշահ» խաղը: «Մեկն ընտրվում էր ոնս կամ շահ, երեսը մըրուում, զլխին թղթե կամ թաղփք շաթալ թագ դնում, թիկոնքին մի սավան կամ ոչխարի մորթի առնում, մեջքը թրքուա գոտի կապում, ուսկրին ցախի դյուրավառ խորձեր ամբացնում, ձեռքն էլ առնում էր մի ահազին, սրածայր ձողը որի ծացրին տատանվում էին շորի հին ու մին կտորները: Մի շարք երեխաներ նույնպես երեսները մրոտած ու ցնցոտիներ հագած շրջապատում էին նրան և հետեւյալ երգը երգելով, վազում դեպի մոռակա գյուղը.

Այլ իմն զել, թալլ (թե ալ) իմն գել.  
Գացեր, բերեթ Նառոյի տել (բած Հովհ.):  
Նառոն քնի խոր քուն,  
Կեշկեն (շունը) ցոխ վեր գիխուն.  
Անձեղ ցախի, մատ տոն,  
Հարկեց, կոտրեց զելի ճան.  
Փախավ, մատավ աճմու զեղ,  
Մինձ խորձ քաշեց վըրեն թեզ:

Այս խմբին ընդառաջ էր գալիս մի ուրիշ խումբ, որը նույնպիսի պատրաստությամբ դուրս եկած էր լինում մոտակա զյուղեց: Կանչում էր գավուշ-զուռնան, որը հենց որ սկըսում էր ածել, այդ երկու խմբերը հարձակվում էին միմյանց վրա և սկսում կավելել<sup>77</sup>:

Պատավորի ղեմքը ծանոթ է «Աբեղաթողի հանդսից»: Ծանոթ է նաև խմբերգը «Տարոնո պատմությունից»՝ ամառանական, ավելի հավանական է՝ էղոթերիկ-հմայական խոսքերով: Կատակերգականի պատկերացումը, ինչպես «Աբեղաթողում», այնպիս էլ այստեղ և ուրիշ խաղերում տիպիկ ժողովրդական է՝ եղջյուրավոր զլխարկ (մեզ անհայտ սորհրդանիշ), ցնցոտի, աղը ու մուր, ցնցոտիավոր պարավոր խորհրդանիշ), ցնցոտի, աղը ու մուր, ցնցոտիավոր պարավոր խորհրդանիշ), ամբոխային, աղմկալից մթնոլորտ: Երկու խըմ-

բերի հանդիպումը և բախումը ֆրատրիալ հակասության հիշողություն է: Ի դեպ, պարերգական տրամախոսությունը (դիխորեիա) նույնպես ֆրատրիալ ծագում կարող է ունենալ և ազդի շարունակությունը «կարմինա-տրիումֆալիա» է: Հաղթողները բռնում են պարագլխին կամ շահին, նստեցնում ավանակեին՝ թարս, ավանակի պոչը տալիս են ձեռքը և զուռնա-դհոլի նվազակցությամբ, ամբոխի աղմուկի ու հարայի բուցի միջով տանում դեպի գետը, կրակ տալիս ուսերին ամրացված ցախի խորձը և շահին ցցում գետը: Երկրորդ տարրերակում շահին ցցում են ցորենի հորը: Երկու դեպքում էլ ակներե են պաշտամունքային խորհրդանշշերն ու ծիսային շերտերը: Կա նաև երրորդ մի ավարտ: Հայտնվում է քահանան խաչ ու ավետարանով, մեկ-երկու աղոթք է կարգում, շահին իշեցնել է տալիս ավանակի վրայից և հաղթվողներից փրկանք պահանջում: Երավիճակը կարծես թե փոխված է, բայց զարձյալ տեղի է ունենում անսպասելիություն: Հաղթվողները միանում են հաղթողներին և քահանային զետին տապալում՝ հողաթափալ, ցեխաթավալ: Վերջապես միջամբոտում են զյուղի ավագները և մի կերպ քահանային աղառում զվարճացող ամբոխի ձեռքից: Քահանան զյուղի միծամորների օգնությամբ փախչում է ուսունա-դհոլի աղմկալից երածշտության և ամբոխի հարայի բուցի ուղեկցությամբ<sup>78</sup>:

Խաղի մթնոլորտը և սյուժետային տրամարանությունը նույնին են, ինչ «Աբեղաթողի հանդիսում» և կրկնվում են ստեղծաբանական տարրերակներով:

Խաղի բոլոր գրառված տարրերակներից թերես հնարավոր է կաշմել մի համահավաք նկարագրություն, բայց դա կտա՞ր արդյոք հնադարյան պարերգական դրամայի լիակատար պատկերը: Խաղի գրամատիկական առանցքը դատողի վիճակն է իր «մակընթացությամբ» ու «տեղատվությամբ» և ծայրահեղ ու անսպասելի կետերով: Նոր նստվածքներից

78 Նույն տեղում, էջ 92:

գոյցի այնքան էլ էական չէ արխետիպի պատմական կոնկ-  
բհտացւմը մահմեղական բռնատիրողի կերպարանքով։ Բայց  
դա իր հետ բերել է խաղի ոչ միայն բովանդակային հիմքի  
քայլքայում, այլև զրամատուրզիական էառուցվածքի փլու-  
զում։ Շատ տարրերականներում մոռացվել է իրադրության փո-  
փոխությունը. դատողը վերածվել է հարկահավաքի ու կա-  
շառակերի, իհարկեան համեմատիրությանը, բայց  
անպատիժ։ Այս փաշան կամ խանը իր վեղիբ-շաթիրների  
անկարը ու ծաղրվող խմբով շրջում է զյուղում, երեմն տնից  
տուն, սպառնում, պատիմներ սահմանում, փեշքեշներ հա-  
վաքում հավ ու ճիվ, յուղ ու գինի, միրդ ու շարադ, և խաղն  
ավարտվում է կերպումով։ Այժի մորթին, պարող այծա-  
մարդը, գինին, թոնրի խուփն ու խաչերէաթը, «դատավորի»  
զլիխին մաղլող ալլուրը խաղի մեջ զործում են անխորհուրդ,  
զուտ որպես կատակային վիճակն ընդգծող հանդամանքներ,  
և զա շատ հասկանալի է՝ սիմվոլների իմաստազրկումը օրի-  
նաշափ է։ Բայց երբ զատողը չի ընկնում դատվողի դրության  
մեջ, եղծվում է դրամատիկական խաղի տրամաբանությունը։  
Բաֆֆու «Սալլիք» վեպում նկարագրված խաղից երևում է,  
որ պարսկահայերի մեջ XIX դարի կեսերին «դատավորի»  
կերպարին տրվել է նույնիսկ հերոսական տեսք։ «Քանի  
զվարճալի խաղերով են անցնում բարեկենդանը մյուս պա-  
հեցող ազգերը։ Բայց հայը յուր բարեկենդանի խաղերի մեջ  
անգամ ոչ մի ուրախալի իրողություն չի հանդիսացնում,  
որովհետև աշխարհիս թատրոնի մեջ, նրա կյանքը անցել է  
ցավալի եղերգությամբ, նրա օրը միշտ սև է եղել, նա չէ ճա-  
շակել ոչ մի ուրախությունը։ Հեղինակի ոռմանտիկական  
երևակայության մեջ իրականությունը պատկերանում է  
կարծես շափականցված։ Բայց կա մի ճշմարտություն։ Պարս-  
կահապատակ հայը գոյց չէր կարող իշխողին պատկերել այն-  
պես, ինչպես ուսուահպատակ հայը, որին տեսնում ենք  
Պոռշյանի «Հացի խնդիր» վեպում։ Եվ Բաֆֆու, և Պոռշ-  
յանի նկարագրած խաղերում շատ քիչ բան կա հնադարից ու  
միջնադարից։ Փորձենք, այնուամենայնիվ, զուգադրել երկու

տարաբնույթ փոխակերպումների հնիքարկված պատկերները:

### Բաֆֆի

Փողոցի մէջ ձիավոր և Շետիակ մարդկանց խուռն բազմություն է արշավում: Թրգի էշիքաթիք փառավոր հազուստով բաւորից առաջ լնիացող ձիավոր՝ մի գոր խան է ձեացնում: Նրա հայեալիան կերպասից զուզող բինշի խայտաճամուկ զրաշակները փողփողում են քամու շօրծանքի զնմ, նրա դակիզի դոյլնզուին փաթեթը փառում է Հարցորավոր զուզներով: Հպարտ, փեզիլով, նստել է նա մի պատվական երիշարի վրա, որի պարանոցը զարդարվում է արծաթի սաշմաչով (պալարակապով). նո զինված է այդ բարբարոս ցեղի զոր իշխանների ոկն. արտահան կնո թուրք քարշ է ընկոծ նրա կողքին, ձեռքին ունի եղեղատից թերթն մորայն (նիշակ). մի լայն հեղկահան վահան՝ թափանցիկ առակենաման կաշոց՝ զցած է նրա մեջքի վրա, զաշարի զաշուշնը մի զույզ ատրճանակների հետ, թեք խրած է նրա քիրամնի շակ հասա զոտու մէջ, փորի վրա: Եթե մէնք վիր առնենք այդ ձարտված իշխանի երիքից նրա սարսափնի զիմակը՝ կտեսնենք միզ նանոն ննեզ պատկերը դրա տակ, յուր շիլ աշերով, ուն զանգրված մարտութիւն և ահավոր մոռլուս դիմքավի, որ յուր անհամամատ բնունակությունը կարող է ցույց տալ ամեն տեսակ զորձերի մէջ: Իշխանին հետեւզ մյուս ժիւած քիր նրա թիկնապահներն ու ձա-

### Պառշան

Ուստածուստ բաշմած է մեր փոքրեցի նզդարր իշի վրա, պոչը ձեռքին բանած, երևոր զնպի ետ՝ մի երկար զերեմաստի ճիպուտ էլ մյուս ձեռքին իրեն շիրուիս զնիքն զեմ արած, նրա զրբխին զրած է մի զգագած պարսից խանին երկար զտակ՝ վրան հին փաթաթած. նրա երեսը բած է աթարով վասպով տան օնոռի մուր, նրա վիզոր ձգած է զանազան ոսկեների կտարներից շարք. Հազած ունի նա մի պատառուտուն, ծլանքները հազար անգից քարշ բնիկած զարսիկի արխալցանին. նրա կուրծքը բաց է, նույնական մրավ սեացրած, կողքից ու էլ երկար փայտն սուր կախած երկու երկու երիշասարդ, նույնական այլանդուկ հաջնիմած, բաշում նն իշի սանձը. երկուսն էլ քամակիցը մի-մի մէծ զավազանի ծայրերը սրած՝ բուռմ նն իշին, զափ ու զտունն աւացին ածելով՝ քաշում է այդ հանցեսը զնպի տանուտների կտուրը, իսկ խուն ամբոխը միշտ յալլա է կանչում: Եթ առա խանը իշի վրա նրանուծ մտավ տանուտների բակը: — Չու, չու, ոչ, չոչ, զնաւ, այ պատկած էշ, ինչ ևս նազ աւանում, էս պատիվը խանին ա, բունը չո շի, — ասում էին բզոզներն ու խեղզ իշին վիր հատում ու ստիպում, որ տանուտների սանց զուխքներիցը բարձրանա: Բայց ճար չկա, էշը կարող չէ այդ անեկը, — Դե, զեզիր, նազիր, առաջ եկեր, — Հրամայում է ընդհանուր

ուսներն են ներկայացնում. ըրտերք բոլորը պարսից հին ձեփ զրա՞ն են հաղեւ, դիմունքն ցաւառնման սազավարութիւնը՝ ըրտօնութ վերջավորությամբ, երկային ուղակեներից ցանցատեսակ հյուսած հագուստով զրահաւոր, և առքին նիգակ և թուր:

Հետեւակ է ազգայիշունը բազեանում և հետաքրքր երեխաներից և զատարկապորտ մարդկանցից, որ միմյանց զրելավ, աղդամակելով ման են զայիս փողացից փողոց, և ամեն մի դոսն առաջ կանգ առնելով կոչում հեռառութաթ, ուստաւթեա— այսինքն պաշար, պաշար:

Տանեարք զուր է զալիս Մի էկպանի արտիլ (շաբթ) պատշամախոսում է. — Անհմատ-իսուց— որին աւտված երկար կյանք տա, փարզ ու պատիվ տա, որի թուրը աստված միշտ կարով անէ, և յուր թշնամիների վրա հազմայիշուն տա— Ահմատ խանը, մեր ամենակարող իշխանը, մեր զիսի աերոց յուր թշնամիների հետ նոր պատերազմ ունենաւու համար, զուր, ամենախօսնարա՞ն զպատակներդ պետք է սուսալթ տաք նրա քաջ, պատերազմող զորքերին, որ այժմ հացի կարոտ են Եթե մի անրախօս մարդ համարձակիր այդ բարձրագույն հրամանին դեմ կենալ— նա յուր գլուխ տերը չէ:

Ամեն տանից զուրս են բերում դինի, արագ, եղ, բրինձ, ձու, տալիս են այդ մարդկանց, որ դրանք հավաքում են իրանց պարկերի մեջ և հայցելով խանի հզոր ձեռքի հովանավորությունը՝ երկարակեցություն են մաղթամ

կաւալարիչը, որ միշտ մեկ կողմից մյուսն է վաղում և յալլա կանչել տաքիս, կամ ճանապարհ բաց անում,— ինչ եք սպասում, բարձրացրեք խանի մոխրաթաւուբը:

Սիթազ՝ որ էստեղ տես, ամեն կողմից վեր են կալնում անեղու անսառնին յուր վերա բազմած խանի հնոտ միասին ուսերթի վերա և ենում սանցություներով: Յալլա, զուրում է բազմությունը, իսկ վերիցից ալյուրը շաղ են տաւուս խանի և իշի զլիքն: Փոշին ոզք բակը բռնում է, բոլորը ալյուրովում են, ում երեսին կամ զլիքն էլ որ քիչ է թափվում, ինքն յուր ընկերի մեջքից վերցնում քուր է յուր երեսը, իսկ մեր խանի համար՝ էլ մի հարցնիւ, երեակայիր մրի ու ալլուրի մեջ կոլովված մի գունդ միւս:

— Գլուխ, զուրս տվեք, Աշտարակու իշխաններ, մեր ոզօրման խանին,— կարպազում է էնդհանուր կաւալարիչը:

Վեր են կենում բոլորը սեղանի վրայիցն և իրանց տեղը կանգնած՝ խոնարհությամբ զուրս իշխանում վայ նրան, ով մի փոքր ուշ զըսւաը կուսցրեց. ալյուլ է անում խանն յուր կառավարչին, և բարակ ճիւղուց կոլում է այդ հանդուզն մարդին:

— Յալախօս, — հրամայում է խանը— քաշեցնք տանուտերին մեջդան:

Տասը-թանը այլանդակ հագուստած երկտասարցներ մասնաւում են տանուտերին, պառկեցնում են են տանուտերը ֆուլախի մեջ պրում:

— Հարցրու դրան, — հրամայում է խանն յուր նազիրին, — մայում է խանն յուր նազիրին,

նրանք Բայց խանը չէ կամ ենում Հեռանեալ, շաթիրը նրա կողմից ձայն է տալիս, թէ խանը պահանջում է դիշ իրասի, այսինքն՝ նրանց հացն ուստի համար — առամների վարձ, տալիս են մի թափի աբ ասի փող ես:

Այսպիս, գյուղի բոլոր տեսրից առատ պաշար հավաքելով, զում են գյուղից դուրս, մի առանձնացած տեղ և բոլոր ընկերներով, մինչև կես զիշեր սկըսում են կերութում անել և ուրախանեալ<sup>80</sup>:

դա քանի գիտանի էր, որ մեր հրամաներ չկատարեց, մեղ շան տեղը չըցեց, մեր առաջը չկավ:

— Թողություն կանես, խանն առպած կենա, — խնդրում է տանուտերը պառկած տեղից. — Ես քո մեծությունի համար պատրաստություն ի տեսնուուր բատեղ իմ իշխաններով. տեսնում ես՝ հրամանուց համար սուփերն բաց արած ա. վարդի շարրաթը շանքյառու մեջ լիթը հազիր դրած, ավուշը ձողու ծերին կախ արած, որ հրամայես թէ չէ՝ խորովենք, անուշ անես. քո բնձեղ էլ, լավ ժայիկ տուր, ստեները կապած գաւու բատեղ պատրաստ, երբ որ ուշեա՞ փլազի դիմին առաջդ կրտերենք.

— Աֆարիմ, աֆարիմ, տանությունը. արգեք, բաց թողեք դրական:

Երկու հեղինակները նկարագրում են նույն խաղի (նկ. 12) տարբեր դրսենորումները: Ուշագրավ է մի բան. խաղի սիթմը նույնն է. հեղինակները միմյանցից հեռու և անկախ կարծես տող առ տող ձայնակցում են մեկը մյուսին: Բայց թվում է նաև, որ ոչ այնքան խաղերի տրամադրությունն է տարբեր, որքան հեղինակների վերաբերմունքը: Հարկահանության թեկուղ կատակացին պատկերը ոռմանտիկ վիպասանի սրտով չէ, և նա շրջանցում է խաղի մանրամասները. «մենք ավելորդ ենք համարում նկարագրել բարեկենդանի այն բազմաթիվ խեղկատակները...»<sup>81</sup>: Պոոշյանի համար կարսորը խաղի կատակացին մանրամասներն են, և դրանցում են ի հայտ գալիս զատողի ու զատվողի վիճակները, խաղացին անսպասելիությունները: Դրությունները փոխվում են

80 Նույն տեղում, էջ 206—207:


81 Պ. Պոոշյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1953, էջ 338—339:

82 Բաֆֆի, հշվ. Հատոր, էջ 207:



Նկ. 6. Ալեքսանդրիայի թատրոնը (ֆրազմենու)։

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ



խոսքից խոսր, արարքից արարք: Նախ դատողը, իր «շքախմբով» հանդերձ, հարևան գյուղից է (ֆրատրիալ հակառակթյան հիշողություն), և առաջին դատվողը այս գյուղի առաջին մարդը՝ տանուտերը: Դատվողը գետին տապալված, ոտքերը ֆալախայում ոլորված վիճակում է և հաճոյախոսության ցույցեր է անում: Ի վերջո նա արդարանում է և ազատվում կապանքից: Իրադրությունը շրջվում է: Ազատվողը «դատավոր» չի դառնում, բայց իր պատրաստած դառն ու



նկ. 12 «Խոսնա խոտը բատ Հ. Թացակյանի:

թթու անակնկալներով խանին գնում է զժվար կացություններում: Խանը հնարամիտ պատասխաններով ու արարքներով պետք է պահպանի իր՝ «դատավորի» վիճակն ու հեղինակությունը:

Առնում է իւկույն մեր տանուտերը դավաթով լիբր բացախր և խոնարհությամբ մատացում խանին:

Եաւ էլ լավ զիսի բարձրապատիվ խանը, որ շարրամի կողմածը ոչ այլ ինչ է, եթե ոչ թունդ բացախ, բայց ոչինչ զիմք չըուց տաւով առնում է ձեռը և մոռեցնում բերանին:

— Շիս՝ յ, յիշ լավ էր շինած, սիրս հօփացավ, շատ ծարավ էիր:

— Այ տպա, Հորոց մոտ է երեք, — հրամայում է տանուտերը:

Վերջնում են շահելերը ծողու ծայրին կախած սպանած աղուավը և առաջ է երում:

— Ֆարրա, — հրամայում է խանը, — վեր կալ ես կարաւլ, երբ որ մեր երկիրը կերթանք, փլավի զլիխն տապակուծ առաջս կը երես:

— Ըստի բեր էդ զարը, — անօրինում է տանուտերը:

Մոտ են բերում ուսները կապած, տնիրի մեջ զրած սև կատուն և համեցեր անում խօսնենք:

Երկու էռպմերն էլ հիմարի գեր են խաղում: Բայց իրավիճակը երկար տևել չի կարող, գրությունները պետք է փոխվեն: Խանի զերակատարը կարող է շարունակել. Նրա հնարամատությունից է կախված գործողության հետագա ընթացքը: Բայց նա պետք է շատ շրաբդացնի կոլիղիան, քանի որ դիմացինի նախատեսած անակնկալները կարող են մի տեղ սպառվել: Բացի այդ Խանը պետք է վերականգնի իր՝ «դատավորի» դիրքը, այլապես խաղը կզրկվի իր իմաստից: Ընդունելով քացախի բաժակն ու սատկած աղուավը Խանն արդեն ի չիք է գարձրել տանուտերի ոտնգությունները: Մնում է վիրուսել մեղադրանքը, և դրա առիթը սև կատուն է, որ հայտնվել է երկու ֆրատրիաների միջև: Խանը սկսում է հոխորտալ, բայց նրա զայրույթը կանխվում է. կատուն մեջտեղից վերացվում է, մեջտեղ է բերվում աստծո զարը:

— Այ անորմաներ, ձեր զարը կատու զառա՞վ, շուտ, շուտ կապուտէնեք Աշաբակու բոլոր իշխաններին, քոթիփ միջին պահ վատացնեմ, ընշանիք որ խելթերը զլուխը զա, ել ես կատուն ոչխար շինեն, — հրամայում է խանը: Բայց նրա այս բարախն ել չի կատարվում, որովհետեւ խելթյան

մյուս կողմից առաջ է բերվում մի մեծ և պարարտ որձ ոչխար և գյուղի կողմից բնակչութ խանին:

— Եսու չնորհակալ եմ Աշտարակի զեղի մենք ու պատկից, իրանց պատիվն իմ աշքի, իմ զիխի վրա...<sup>84</sup>

Խաղճական այստեղ կարող է ավարտվել, բայց «դատավորը» իրադրությունը սրբլու նոր առիթ է գտնում: Նա թողնում է տանուտերին ու մեծավորներին և դատի հանդիսարան է քաշում «քավության նոխաղին»՝ մի անմեղ մարդու և նրան ստիպում ծունը դնել իր պատվական նժույգի՝ ավանակի առջև:

— Ըստեղ կա մի ևելանենց ևելան, նրա համար ինձ խարար ա հասել, որ շատ վաս մարդ ա, որ օրական երան տանը հինգ ազգատ կշտանալու տեղակի տասն ա կշտանում, որ շաբաթ-կիրակի ժամ գնալու փոխարձն, յրի կուն-տուավու ժամից ետ չի դառնում. Եղ մարդին ևս ուտե՛ պատմեմ, թե որ դա ձեր միջին ա, էս սհաթիս զա իմ առաջին շոքի շը, շուտ, ո՞ւր ա էն մարդը, տանուաեր, ձեռաց բատեղ ստեղծիր<sup>85</sup>:

Խանի վերջին խոսքերը միայն սրամտության համար շեն ասվում: Մաղի կանոնը պահանջում է, որ կեղծ ամբաստանության և թարգման որնէ անմեղ մարդ: Եթե գյուղում չկա կամ տվյալ պահին ներկա չէ այդպիսի մեկը, նրան պետք է ստեղծել հորինել: Բայց ահա, այդ անմեղ մարդը չի ներկայանում և ուղարկում է իր կաշառքը՝ խանի «աշքը կապելու» համար:

— Էս արագը զրկել ա, խանն ապրած կենա, քո մեծությունի համար ևելանը, որ անուշ անես, ինքն էլ հիմի քո զուլուզին կպանի:

— Դուքս տուր, զլուխ տուր, իրեք հետ զլուխ տուր խանին, և խան ազա, — ձայն է տալիս ֆարբաշը, և խեղճ ևելանը կատարում է յուր պարտը:

Նայիրը շաշում է ևելանի կոնիցը, շոքացնում իշխ առաջին: Բավական միջոց բությունից հետո բարեհանում է խոսել խանը:

— Ես միտք ունեի, և ազա ազա, շատ խիստ պատժել ֆեղ, համա քո լիձեն իմ աշքերը կապեց. վեր կաց, արի ձեռս պաշիր ու ազատ ես<sup>86</sup>,

<sup>84</sup> Նույն տեղում:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 340:

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 341:

Խանը ծունկի է իշեցնում ևս մ՛ր քանի «իշխանների», խորիմաստ հայացքով լուսում, ստանում իր ընծանները, բոլորին ներում և՝ «մնացեք բարով»: Բայց խանին թույլ չեն տալիս մնկնել: Բոլորը շրջապատում են նրան և կարող են ցանկացածի պես վարվել: Խանն իր «շրաբնմբով» գերի է: Կարող են նրա գլխին բամփել, մորուքն այրել, աքացի հասցնել, եթե լավ չի խաղացել զերը, լավ չի զվարճացրել: Բայց աշտարակցիներն այդ բանը չեն անում. նրանք լավ են ճանաշում Փարափի գյուղի հայտնի կատակարան ու մասիսարա եղայարին: Բաղդեցնում են նրան պատվավոր տեղում, կենացը խմում, խմում են նաև երկու գյուղերի միաբանության համար «և ապա նույն կերպիվ յալլա կանչեռվի, իշին բարձրացրած» ճանապարհում հարևան գյուղը: Եղայարին ճանապարհում են և սկսում գովարանել աշտարակցի մասիսարա Ղուկոյին, որ այգտեղ չէ, գնացել է հարեւան գյուղերը՝ խանություն անելու: Պարզվում է, որ այս Ղուկոն ամենաճանաշշված ժողովրդական կատակերգակներից է և Բարեկենդանին շրջում է ամրող Արարատյան գավառում: «Ղուկոն երեկ եշմիածնումն էր, — պատմում է մենքը, — շատ քիչ շանց տվեց կոտորեց ամենքին ու թողեց ծիծագեցներով»<sup>87</sup>: Ուրեմն, Ղուկոն, իր մասիսարա տղերքով, մտել է «Արեգաթողի հանդես», խառնվել աթուրմա ու լախտի խաղացող վանականների խմբին և բոլորին հավաքել իր շուրջը Բոնել է մի վարդապետի, շարձրել իր «ոյինակիրը». Ճեռն է տվել իր ավանակի սանձը, թի՝ պահիր մինչև գործ վերջացնեմ: Մի աթոռ է դրել Ղուկոն մայր տաճարի դիմաց, հրապարակի կենտրոնում, նստել ու ներկայացում սարքել, թի՝ տղերք, առաջ շերեք վարդապահետներին ու եպիսկոպոսներին, դրանց դատում գատաստանն անեմ: Ղուկոն մի քանի ժամ իրենով է արել բոլորին, զվարճացրել աշխարհականին ու հոգևորականին, «Արեգաթողը» մի լավ ծաղկեցնել ու նվերներ հավաքել՝ ահազին ապրանք՝ թանկարժեք կտորեղեն, գրպանի դանակ, երեսսրբիչ, սապոն... «Ես որ ասում եմ Ղուկոն դոշաղ ա...

<sup>87</sup> Սույն ահպամ, էջ 341—342:

աշտարակցի ա, մեզ ո՞վ կհասնի»<sup>88</sup>, — պարծենում են համագուղացիները:

Պոռշյանի այս նկարագրության մեջ խաղը կարծես կիսատ է մնում. խանը հեռանում է ոչ միայն անպատճ, այլև պատվով: Դա, հավանաբար, խաղի տարրերակներից մեկն է: Ավելի վաղ զրապված մի տարրերակում, «Սոս և Վարդիթեր» վեպում, «զատավորը» պատմվում է: Եվ պատմվում է դատը չսկսած: Խաղը նույնն է, թեպետ կոչվում է «Շահ»: Ոչ մի նշանակություն չունի: Հայտնվում է մունետիկը, թե՝ «Ճամփա տվիքը, շահը զալիս ա»: Մեկ-երկուսն էլ, թե՝ «աթոռ դրեք»: Գնում են մի ծակ աթոռ: Հայտնվում է Շահը «մի բողիշիք վրա նստած, երևոն ալբոս, ոսկոսի ալանգերը շնչին, մի բուլա բամբակից միրուք շինած, մի ոչխարի հին քուրք թարս հաքին, մի ճղտոտված փոստ զլխարի, մի արջորի ջղա (պոչ) գտակածալին, երկու մարդ էլ գտակները շուր տված, երեսները մուր քսած, մի մին աթարոց (կրակ խառնելու փայտ) ձեռներին, իշի նողտեն քաշելով...»<sup>89</sup>: Շահը էշից իշնելիս ընկնում է, շաթիրները վերցնում են նրան, զնում փալանին, փալանից իշեցնում, զնում աթոռին: Շահը ճառ է ատում, լույի է կոչում «Օսմանլիք» դեմ... Մասնակիցներից, թե հանդիսականներից մեկը բամփում է Շահի զլխին, մյուսը աթոռն է տակից քաշում, ու մինչ Շահը ոտքի կկանգնի, «մի մասխարա մարդ» ճրագը պահում է նրա միրուքի տակ, բամբակեր բնելուում է, մեկ ուրիշը փարշով ջուրը շուր է տալիս: Շահի զլխին, Շահը մի կերպ գլուխն ազատում է, կորչում<sup>90</sup>: Սա խաղը իսկական ավաշտակետն է, որ հանդիպում ենք շատ տարրերակներում:

Բանագետները և գրողները խաղի ամենատարբեր մանրամասներ են նկարագրում, բայց մեզ համար ամենահեշտ կանը խաղի սյուժենատային տրամարանությունն է, որ արդեն հայտնի է, և օպսիսը, որ, թվում է, ակներև դրսնորում շունի: Խաղը պատվում է մեկ անձի շուրջը, և այդ անձը, անեկան նրանից դատում է, թե դատվում կենտրոնում է: Նրա

88 Նույն տեղում, էջ 342:

89 Նույն տեղում, էջ 259:

90 Նույն տեղում, էջ 260:

շուրջը պտտվողները կազմում են երկու պար, առաջինը «շքախումըն է», երկրորդը ամբոխը, որի մի մասը հանդիսական է, մի մասը խաղի մասնակից: Պարերգական դրամայի օպսիսը ավելի հստակ է երեսում կատակերգական երթում կամ կոմոսում: Կոմոսի պատկերն ավելի հստակ է երեմիա եպիսկոպոս Տեր-Սարգսյանցի (Տևկանց) «Տոհմային հիշատակարանում» բերված նկարագրության մեջ: Սա խաղի՝ Վասպուրականի տարրերակներից է, որ տարածված է եղել նաև վանական միջավայրում, օրինակ Վարագավանքում: «Դատավորն» այստեղ կոչվում է Փաշա: Ահա Փաշայի և նրա «շքախմբի» պատկերը: «Մի մարդու ոտք հին, պատուած ճզմա հագուցեր, մի պատառ-պատառ եղած սպիտակ վերնավարտիկ հագուցած, մարդ վերնավարտիկի գրավաններու բերանեն ձեռքեր և թևեր դուրս հանած, մրան մի ծամկոտած ու մաշած հապո մի ձգած, էծու երկար մազերով սպիտակ մի մորուք հարմացցուցած, երես, թիթ ու բերան ալուրի փոշի քսած, այնպես որ աշը հազիվ երևի, գլուխ մի հարզի սակառ կործած, ձևու մի երկար ձող տված՝ իբրև շրուխի կոթ, մեկ ծայր լայնաբերան փարշ մի անցուցած՝ իբրև շրուխի լուզա, ետև էշու գլուխ և երես դեպի էշու հտեւ, էշու վրա հեծուցած, 10—12—15 պատանիք և երիտասարդ դատաստանի պատկերի միջի սատանայից և դեպ կերպարանք մտած, փաշայի շուրջը բոլորելով՝ յուր հավատարիմ պաշտոնյայք, երթան ահուելի և զարհուրելի տեսողաց»<sup>91</sup>:

Այս պատկերը թվում է ավելի հին կամ հնին աղերսվող: Կատակերպ ժղովականի ժողովրդական ըմբռնման հատականիշների կողքին նշամարվում են և ծիսային ատրիբուտներ (այժի մազից մորուք, դեմքին քսած ալյուր), նաև սարսափի խորհրդանիշներ: Խաղը նախատեսում է հակասական զգացումներ՝ ծիծաղ և սարսափի: Փաշան գնում է հեծյալ՝ ավանակին թարս նստած, այսինքն թարս է քշում իր էշը, բայց այնպես, «որպես թե բովանդակ աշխարհի տերն ինքն է», իսկ նրան շրջապատող «շքախումըն» առաջ է ընթանում վայրենի աղաղակներ արձակելով: Դների ու սատանաների այս շրջանա-

91 Վ. Բղոյան, Եղվ. աշխ., Հ. 1, էջ 80:

ԷԵՆԹՐՈՆ ԵՐԱՐ ԺԱՄՊԻՆԱԿ առ ԺԱՄԱՆԱԿ կանգ է առնում Հանդիսականներից մեկին «Ճերրակալելու» Համար, ամբոխը փախչում է սարսափած, «Փաշայի սևագունդ մարդիկ» Հետապնդում են, բռնում ում կարողանում են և շրջանի կենտրոն գցած, տանում: Խումբը կանգ է առնում գյուղի հրապարակում, եկեղեցու մոտ, Փաշան նստում է ամբոխի կենտրոնում և «սկսում զատը»: Փաշայի գահավորակը կիսամաշ մի կողով է, ծխամորճը կավե փարչ, որի մեջ այրվում է աթար Փաշան վշշում է և ծուխ արձակում: «Դատ-բեղազը» տեղի է ունենում ծխի ու աղմուկի մեջ: Փաշան Հարցաքննում է, պատիժներ շահմանում և սուրճ պահանջում, մատուցում են մրաջուր՝ մեծ ամանով: Փաշան ձեացնում է, թե ինչում է՝ մրաջուրը թափվում է այծի մազից սարքված, ճերմակ մորուքին: Արեւելյան պատվի խորհրդանիշը անարգված է, և Փաշան այլևս պատվազուրիկ է՝ նրա հետ ամեն կերպ կարելի է վարվել: «Գատավորը» «խաղը ու խայտառակ» է լինում, գործողության ընթացքը շրջվում է, ամբոխն աղատություն է ստանում:

#### Այստեղ է խաղի պերիպետիան:

Կոմուր աղմուկ ու ծիծաղ է բարձրացնում, բայց ցուցք զարձած պարագլուխը տեղի չի տալիս, շարունակում է հոխորտալ ու սպառնալիքներ կարդալ: Փաշան փրկագին է պահանջում, և նրա առջե է զրվում աղմուկ լի կողովք: Եթե այս պահին ընթառատարը կարողանում է հնարամիտ դտնվել՝ որեւ սուր խոսքով կամ արարքով, ամբոխը հետաքրքրությունից լուսում է, իսկ եթե ոչ՝ նրա տակից դուրս են քառական աղմուկը, և Փաշան տապալվում է: Տեկանցի զրատած Լոկրորդ տարրերակում իրարանցման պահին որեւ մեկը ճրագը մոտեցնում է Փաշայի «սատղավարտին» եամ մոռուքին, Փաշան դին է նետում այրվող կողովք ու մինչ ուզում է աղատվել այրվող մոռուքից, նրա գլխին է դատարկվում ջրով լի կուժը, և «խաղը ու խայտառակը» կատարյալ է՝ «ինկվիդիցիան» ու «մկրտությունը» խառնվում են իրար, զվարճացող ամբոխը Հարձակվում է Փաշայի վրա: Բախման վիճակը հասնում է իր կումինացիոն կետին: Ինչ է լինելու «զատավորի» վերը՝ որոշում է զիավածը: «Վայ

այն մարդուն, — զրում է բանահավաք Հովհաննիս Մալխաս-  
յանը, —որ հանձն կառներ դադի (զատավոր—Հ. Հ.) դառ-  
նաւը. Էլ ինչ հայհոյանը, Էլ ինչ հարվածներ ասես, որ չորս  
կողմից շեն տեղում նրա զլիսին»<sup>92</sup>: Իրական ու պայմանա-  
կան վիճակները շփոթվում են, կյանքի իրադրությունը շփոթ-  
վում է խաղի իրագործիքան հետ, իրար ևն խառնվում ժիծա-  
զը, հայրուցիքը, զվարճախոսությունը, հարայջոցը, զուռ-  
նա-դժուի ազմուկը: Հանդիսականներից շատերը, որ լավ դի-  
տեն խաղի պայմանները, շփոթում են իրականն ու պայմա-  
նականը, դերն ու դերակատարին: Դերակատարին էլ, եթե  
թիին է դիալզում այրովող բամբակի կամ այծամազ մոռուքի  
հոտը, մանավանդ երբ արացիներ ու բունցը հարվածներ  
է ստանում, կորցնում է պայմանականության ոդացումը:  
Կրակից փախչում է, ջուրն է բնինում, շրից փախչում, ալ-  
յուրի տոպրակն են զլիսին թափ տալիս, աշքերին ալյուր են  
փշում:

Փաշայի մորուքի այրելը այն նշանն է, թե ամրոխը զառ-  
նում է դատավոր, Փաշա «քավության նոխաղ», դա կատա-  
րում է «թագավորը մերկ է» Բակատագրական խոսքի դերը:  
Փաշային շրջապատող ամրուսի օգակը՝ «խորոս-կոմոսը»  
գնալով նեշանում է, փախուստի ճանապարհները փակվում  
են: Հնարամիտ ու կատակարան դերակատարը կարողանում  
է միջոցներ գտնել (զա նրա շնորհըից ու տաղանդից է կախ-  
ված)՝ սրամառություններ է անում, զլուկակոնծիներ տալիս՝  
մրակոլու ու ալրաթաթախ և, եթե հասցնում է ժամանակին  
ազատվել «խաղը ու խայտառակ» կերպարանքից՝ դեն նետել  
ցնցոտի թիկնոցը կամ այծի մորթին, խաղից դուրս է գալիս  
պատվով, նրա անձը զառնում է անձեռնմխելի, նույնիսկ մե-  
ծարելի Դերասանն ստանում է իր խաղի գնահատականը<sup>93</sup>:

92 Դույն ահզում, էջ 133:

93 Դերասանին մեծարելու կամ անարդելու սովորությունը, ինչպես  
նկատում ենք, զայթս է ողոգովրդական զրամայի դատական բնություն և ունի  
հնագարյան ավանդներ Հայունի է, որ հին Հռոմում վաս խազացող դե-  
րասանը ներկայացնում անմիջապես հետո ծեծի էր նեթարկվում: Հայունի  
է նաև, որ Եերապետի զարաշքանի թատրոնում հանդիսականը կարող էր  
ողմեկը, սուլեկ, ուսելիքի մնացորդներ նետել բեմ, նույնիսկ բարձրանալ  
բեմ, միջամտել խաղի ընթացքին, կոիվ սարքել Բարքերի միջնադարյան

Ֆթե Փաշան չի կարողանում կամ չի հասցնում ազատվել ժպտումից, եթե նրա միջոցները չեն ազդում ամբոխի վրա, միաշայի «շքախումբը» իրարանցում է ստեղծում, պառակտում կոմոսին, և երբ իսկապես «շունը տիրոջը չի ճանաշում», Փաշան մի կերպ գուրս է պրծնում «կախարդված» շրջանադից և անհետանում, իսկ «շքախումբը» փախչում է տարբեր ուղղություններով: Բոլորն ի վերջո հավաքվում են աշբից հեռու մի տեղ, ազատվում «դիվական», «խայտառակ» զգեստներից ու տապազինից, լվացվում և «յուրյանց մարուր հանդերձ հաղնելով գան բազմեն ի շարս մարդկանց»<sup>94:</sup>

Կատակերգությունն ավարտվում է, սկսվում է մեծարանի խնչույքը, որն արդեն խաղային ու տարերային չէ, այլ ծիսային ու կաղմակերպված և շատ դեերով նման է պատարագին Սա նույնպես շրջանակինտրոն ծես է, ըստ ժողովրդական ըմբռնման՝ արարողություն, որտեղ զիմավոր անձը սեղանապետ—«արարողապետն» է քրմական իրավունքներով ու քրմի վարքագծով: Նա զննի է հեղում, բոլորը պետք է պինի հեղեն: Տեղի է ունենում պարզ ծիսական արամայուսություն. մեծարողն ասում է «կենդանություն», մեծարվող՝ «անուշ արքայություն», ապա փոխվում են զերերը՝ մեծարվողն է մեծարող, մեծարողն է մեծարվում: Այս զվարթ ու լուրջ ծեսը հայոց ավանդական խնչույքն է, ուր օրհնանք ու հաճոյախոսություն է շուալվում, իհարկե «արարողապետի» թույլտվությամբ, «ում լեզվումը մի քիչ հունար կա, սուփիրի ու գինու կամ արադի թասի վրա յա փորձում», և ամենքի խոսքի վերջը նույնն է. «Տեր Աստված՝ վերջներս բարի անես: Կենդանություն: Հավասարական սաղ ըլիք, ուրախ»<sup>95:</sup> Ժողովրդական նվազածուների «դաստան» («դասգուսանաց») կենացներ է ծաղկացնում, հացն ու գինին որպես կյանքի հարատեսության խորհրդանիշեր, զարդարում են

վայրենությունից բացի, այսուղ տեսնում ենք ժողովրդական հին ավանդույթից հաւասարակային ազատության, ծիսական զատի, հրապարակալին-ներ՝ կառավագային ազատության, ծիսական զատի, հրապարակալին-ներ՝ միշտագրայան թատրոնական կենցաղից, և որոնց նշանները հասան ենոր՝ Շամանակներ:

94 Վ. Թղոյան, հշվ. աշխ., Գ. 1, էջ 84:

95 Խ. Արովյան, վերը Հայաստանի, Երևան, 1955, էջ 52:

ռուրախության բևմբ՝ խրախճանքի սեղանը. շեն պահի առավածքած մեզ, մեր տունը, տոհմը, ազգը, ցեղը: Ամեն ինչ պարտվում է ֆրատրիայի գաղափարի շուրջը:

Թերեւս պետք է համաձայնել այն ննթաղրությանը, որ դատական խաղերի դիմավոր դեմքը «բովանդակում է հեթանոսական գատող ու պատժող աստվածության տարրեր»<sup>95</sup>, որ խաղի հիմքում կան և մեռնող ու հառնող բնության պաշտամունքի հնաբերք, և նախնաղարյան դուալիզմ, և ֆրատրիալ դիտակցություն<sup>97</sup>: Մեզ հայտնի գրասումներում, իհարկե, դժվար է ցուցց տալ հնաղարյան տանող շոշափելի օդակներ. դա երեսում է խաղի տիպարանության մեջ և առանձին խորհրդանիշերում, որոնք հանդես են գալիս ոչ այնքան խորհրդապաշտական, որքան առարկայական դերով: Ամենաէկանը խաղի հնաղարյան և միջնաղարյան բնույթն է՝ կատակարանության, ծնիսի ու թատերական պայմանականության ժողովրդական բմբանումներով, կենցաղի ու պաշտամունքի միասնությամբ: Մաղրի ատրիբուտները (գլխարկի տեղ պղնձե լազան, կոտրած կճուճ կամ կողով, նժույզի տեղ ավանակ, ոսկու տեղ ազք) միախառնվում են ծիսացին խորհրդանիշերին՝ թոնրի անթրոց ու խաչերկաթ, ալյուր, զինիւրի մորթի, հղջուրներ, նվիրաբերվող գառ և այլն: Միախառնված են հանդես գալիս կատակացինն ու ծիսացինը, ծիծաղելին ու սարսափելին, կատակն ու պատիժը, իրականն ու պայմանականը, կենցաղացինն ու պաշտամունքացինը: Այստեղ չեա, այսպես կոչված, մաքուր ամրիվալինտ լինակ, երկատիվածություն, և դա ժողովրդականի առանձնահատկությունն է<sup>98</sup>:

95 Յ. Պետրօսյան, Աշխ., էջ 118:

97 Հմետ, Վ. Թղայան, նշվ. աշխ., հ. 1, էջ 42—43:

98 Բուռ գրականագիւտ Մ. Բախտի նոր միջնաղարի ժողովրդական մշակույթը դիտում է որպես հակագրությունների պլատի, կենցաղի ու ծնիսի երկատիվածություն (տես Մ. Բախտի, Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса, М., 1963, с. 173): Անձի արագագորդ է Ա. Գորեբիս տեսակները, որ «միջնաղարի մշակույթի պատկերն ավելի բարդ է և այնտեղ պետք է տեսնել ոչ այնքան հակագրության, որքան հակագրամիքանության զիժ շնմատ. Ա. Գրեզու, Աշխալում սույն պատկերն է» (Տ. Ա. Գրեզու, Աշխալում սույն պատկերն է, Երևան, 1981, էջ 272—278):

Բայտ մեր ընտրած պատմատիպաբանական հայեցակետի, հայ ժողովրդական զրաման հնթաղրում է հիմնականում երկու խաղային ժողել՝ անձի ու ամբոխի հարաբերություն, որ դրված է համայնքի (կամ ֆրամրիայի) համերաշխության գաղափարը, և երկու խմբերի կամ երկպար (զիսորեական) հարաբերություն, որ, անկասկած, ֆրամրիալ հակառակուների հիշողություն է<sup>99</sup>: Կան, ի՞արեկն, տիպաբանական բացառություններ, որոնք այնուամենայնիվ ընդհանուր եղբ ունեն վերոշիցալ երկու մողելների հետ<sup>100</sup>:

Երկպար խաղի մի օրինակ մեզ արգեն հայտնի է Զարարիա Փանարեցու վկայությամբ: Ուշ միջնադար հասած այս պայմանաձևը տեսնում ենք նաև XIX դարում: Այսպես, պարագլուխը, Շահ լինի, Խան, թե Փաշա, դուրս է գալիս զյուղից իր օյինցաղ-մասսաբաների խմբով և աղտոտ լաթը պարզած որպես դրոշ գնում է հարեան գյուղը՝ «շառ կտրելու»<sup>101</sup>: Ճանապարհին, պատահականորեն կամ պայմանավորված:

99 Հմմատ. Պ. Աղայան, նշվ. աշխ., հ. 1, էջ 44:

100 Շամփին-Գարոնիսարի խաղերում («Փառուող կանչավալը», որտեղ Պատավորից բացի գործում են նաև հինգ անձ՝ Փառուող, Արագա, Ջելակե, Բժիշկ, Հարու: Այս խաղը ներկայացվել է թուրքերին և հիշեցնում է մի կողմից փոքրասիական օրբա-օյսնուն (Հայութաբակամասը), մյուս կողմից խալական կոմեդիա դիլ'արտեն: Միայն զատական բնույթին է այս խաղը մերձեցնում հայ-ժողովրդական դրամային, իսկ սյունեատային տրամարանությամբ նաև չունի ոչ մի ազերո հնագույն շրջանակինարոն-արքիստիպային դրամայի հետո Աս կարծես ուրիշ մողել է, զուցե գարձալ հին, հայ միջնադարից եկողութառտերագիտ Պատնիկ Ստեփանյանը վկայալ երում է արենիլան եկողութիւ թարոսի ուսումնասիրով իգնազ Կունոսի տեսակետը, որ XIX դարի թուրքարքում արարածված օրթա-օյսնուն ծագումով հունական է և XVII դարից է մուաք զործել Արևելք (Ուրգագիծ արեմտաշաք թատրոնի պատմության, հ. 1, Երևան, 1962, էջ 61—64): Օրթա-օյսնուի զերասանները եղել են հունվանը և հայերը Հնարագոր է, որ բանագոր զրամայի այս տեսակը կապ ունենալ միշտը թատրոնի հետ:

101 Ժողովրդի մեջ տարածված «դատ կտրել» արտահայտության հակառակ իմաւան է «շառ կտրելու» Արոշ զավաներում խաղերը կոչվել են այսպիսէ: Շառ արակ տկան փոխառություն է, նշանակում է ամբոխ, իսուություն: Վար արակ տկան փոխառություն է, ամբ ունի շ է բ (ծաղրական երգ բառի հետ (Հ. Անապյան, Հայրեն արձատական բառարան, հ. 3, էջ 496):

սրանք հանդիպում են հայու ան զյուղից եկող ռշառ կտրող-ներինաւ Երկու շառագլուխները<sup>102</sup> կանգնում են զեմ-դիմաց և միմյանց դիմում հայցոյանքներով։ Ֆրատրիալ պայքարի հին հիշողություն է ասա Գրա ամենավաղ վկայությանը հանդիպում ենք Սեբեռոսի «Պատմության» Անանունին վերագրվող հատվածում, ուր Հայկի և Բելի կոփին սկսվում է հիշտ այսպես։

Հանդի կալաւ Հայկն և ասէ ցնա, «Զի՞ պիդեալ գաս դհետ իմ. զար-ձիր աներէն ի տեղի քո, ոի մի մեռանցից այսաւր ի ձեռաց իմց. ցանցի ոչ վրիպի նետ իմ իմբօր։ Պատասխանի ետ թէլ, և ասէ. «Վասն այնորիկ՝ զի մի անկցիս ի ձեռս մանկուուց իմոց և մեռանցիս, այլ եկ ի ձեռս իմ, և կեցաց ի տան իմում խաղաղութեամբ, ունենով ի գործս զմանկունս ի տան իմոյ սորսականս»։

Պատասխանի ետ նմա Հայկն և ասէ. «Եռն ես զու և յերամակէ շանց՝ զու և շոկովորց քու Աւ վասն այնորի կ Բասիկցից իսկ այսաւր ի քեզ զկա-պարծու ամք»<sup>103</sup>.

Այս հատվածը, ինչպես նկատել է Հայնրիխ Գեղցերը՝ նախնական-բանահյուսական նկարագիր ունի<sup>104</sup> ի տարրերություն Խորհնացու տարրերակի, ուր Հայկն ու Բելը խոսում են դեսպանորդների միջոցով և հոկտորական, մշակված ոճով։ Վ. Բոլյանը այս հատվածը համարում է ֆրատրիալ հակասության հիշողություն<sup>105</sup>, Ղստ իս, տրամախոսությունն ունի խաղային-դրամատիկական նկարագիր և թվում է քաղված է «Հայկեան հանդէս» կոչված խաղ-մրցություններից<sup>106</sup>։ Հիշենք Գրիգոր Մագիստրոսի խոսքը. «Ո՞ւր Հայկեան հանդէս և հիացուցանելի գործառնութիւն»<sup>107</sup>: Նման մի պատկեր գտա Հովհան Մամիկոնյանի «Տարոնո պատմությունում»։ Պարսից զորավար Վախտանգի զինվորները նույն ոճով են խոսում Գայլ Վահանի հիտ։ «Այ շարաբարոյ Գայլ Վահան, մինչ դիտես, եթէ ծառայելոց ես Արեաց արքային, ընդէ՞ր այդպէս

102 «Հառաջունեալ զիմավ, արինուուշտ կամ զլուխ խռովութեալ. Հառաջուիս (հույն տեղան)։

103 «Պատմութիւն Սաբեռոսի», աշխա. Գ. Արքարյանի, Երևան, 1979, էջ 45 - 50։

104 Մ. Արելյան, Երկեր, հ. Ա, էջ 50։

105 Վ. Բղոյան, նշվ. աշխա., հ. 1, էջ 44։

106 Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 185 - 188։

107 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 59 (թ. 2թ)։

անշամբիս յանդգնեալ: Արդ՝ արի, եկ առ մեզ, և լիր հարկատու, ապա թէ ոչ մեռանիս որպէս զշուն»<sup>108</sup>: Սա բոլոր գծերով ֆրատրիալ բախում է և ունի իր պայմանական դետերմինանտը՝ «պարուք դէմ ընդ դէմ»: Դրա հիշողություններից մեկը պիտօք է համարել ժողովրդական «Յարխուշտա» պարը՝ դիմորիկական շարժում: Երկու խմբերը պարում են դեմ ընդ դէմ և ձեռքերով ուղղին զարկվում միմյանց: Դա արտաքին տեսքով նման է հին հունական ողբերգությունների խորացին սպահութիւնին<sup>109</sup>: Ֆրատրիալ բախուման մեջ ախոյանները միմյանց ֆիդիկապես ընկճելուց առաջ, փորձում են խոսքերով ընկճել: Դա հատուել էր նաև ըմբշամարտի ու կոփամարտի հին եղանակներին միջնադարյան խաղահրապարակներում: Մեր հիշատակած վիպական հատվածները ներկա անուղղակի անդրադարձումներ են, գուցե ոչ անմիջապես խաղերից առնըված, բայց համոզված ենք՝ խաղերի տպագործությամբ գըրված: Համեմայն զեսպ, ֆրատրիալ բախումներն իրենց հետքն են թողել երգային-վիպական և խաղային բանահյուսության մեջ: Աէջ էր է, որ խաղային այս պայմանաձևը հետարայում փոխվել է: Բայց դա պարզ տեսնում ենք դատական խաղերում: Այդ է ասում «Ղարդան Մամիկոնյանի ցուցմունք» (Հիշենք ցուցք բառը) կոչվող ժողովրդական ներկայացումը՝ տարածված շատ զավառներում՝ Հայոց ձորում, Ախալցխայում, Ղարագաղում և այլուր: Կողմերը ներկայացրել են պարսից և հայոց բանակները, իսկ հաղթող պարագութիւն վարդան զորավարին: Պատմական հուշը ժողովուրդը վերարտագել է ֆրատրիալ-դատական խաղի պայմանաձևում:

Խաղը հանգեցնում է շրջանակներուն գործողության: «Շառ կտրողների» խոսքակոփը դառնում է «փետրակոփիվ»: Գործում են մահակ ու մտրակ: Հաղթողները գերի են վերցնում պարտված պարագլխին, նստեցնում ավանակին (իհարկե՝ թարս), կամ՝ որևէ պատզարակ-գահավորակի և աղմկալից ժաղբական երգով, զուտնա-դհուլով պատեցնում են դյուզի փողոցներում: Կրկնվում է հին ու ժանոթ պատկերը: Հիշենք

<sup>108</sup> Հ. Հավանաննիսյան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 182—190:

<sup>109</sup> Վ. Թզայան, նշվ. աշխ., հ. 2, էջ 83—84: Հմմա. Քսենոփոն, Անաբախու, թարգմ. Ս. Կրկտաշարյանի, Երևան, 1970, էջ 118, 267:

Մարկոսի Կրտոսի նմանակ Գայոս Պակիանոսի ծանակումը Սելեկիայում կամ Հուլիոս Կեսարի «կարմինա-տրիումֆալիան»։ Գյուղական կոմուն ավարտվում է գետափին, առվի կամ որևէ ջրափոսի մոտ «Շառը» ջուրն են դցում, որտեղից նա դուրս է դաշիս «մաքրված» և ստանում իր շարշարանքի ու ստորացման հատուցումը՝ ինչ-ինչ ընծաներ և իր ընկերների հետ մասնակցում է Քրատրիայի խնջուցին։ Այս և «Արեղաթողի հանդեսի» ավարտակետերը կարծես նման են ըստ սյուժետային տրամաբանության և տարրեր՝ իրենց սիմվոլիկայով կամ բովանդակային հիմքով։ Թվում է, այստեղ կատակախաղի է վերածվում մկրտության խորհուրդը, ինչպես «Արեղաթողի հանդեսում»՝ հարության խորհուրդը։ Այստեղ կա ծիսացին-պաշտամունքային որոշակի հիմք, որի ակներև նշաններին բախվում ենք ամեն պահ։

Ծիսացին հիմքը նախ և առաջ երեսում է սյուժետային տրամաբանության մեջ։ Այստեղ զործում է հնագարից եկող և Ավետարանում հաստատված պարզ սկզբունքը՝ «որով դատաստանաւ զատէք՝ դատելոց էք և որով շափով շափէք՝ շափեսցի ձեզ»։ Գործում է կյանքի միջնադարյան-ժողովրդական ըմբռնումը. մարդը կամ «թագավոր-դատավոր» է (որոշ գավառներում այսպիս են կոչվում խաղերը) կամ զամված է անարդանքի սյունին, կամ փառքի ու լույսի մեջ է, կամ ետին թշվառության, կամ աշքի լույս կամ ոտքի փոշի։ Այս ամբիվալենտ հայացքին միջնադարը տալիս է քրիստոնեական մեկնություն և ստեղծում երկնայինի ու երկրացինի հակասությունը։ Բայց ժողովրդական հայացքն այլ է. կեցության ժայրահեղ միճակները ժողովրդուն իմաստավորում է միասնաբար՝ ոչ որպես հակասություն, այլ՝ մեկը մյուսի շարունակություն. այսօր թագավոր ևս, վաղը կարող ես ետին մուրացէանը լինել։ Սոցիալական կյանքի այս դիալիկտիկան համերաշխավում է ցերեկվա ու գիշերվա պարբերականության, մեռնող ու կենդանացող բնության զաղափարի հետ։ Ժողովրդուն, ինչպես առասպելում, այնպես էլ խաղում, ծեսում, զուշակություններում, երազներում մարդկային-սոցիալականը տեսնում է բնության երևութների ու առարկաների տեսքով, իսկ բնության երևութները, իրերը, կենդանիներն

ու բույսերը մարդկայնացնում է՝ մարդուն թարգմանում է բնության միջոցով և բնությունը մարդու

Խորհրդանշական խմաստներ ենք վերագրում խաղի արտաքին, առարկայական ատրիբուտներին, բայց խորհրդանշական է նախ և առաջ ինքը՝ խննթակերպ, էշին թարս նըստած «դատավլորը», որին բոլորը նվիրաբերում են ինչոր բան, ոչ ոք չի հրաժարվում այս նվիրաբերությունից. էշմիածնի վանականներն անգամ այստեղ ենթարկվում են աշտարակցի սօվինը Պուելոյին: Ուրիմն, խաղի նախահիմքն խակապես ծիսական-պաշտամուրային է: Ժամանակը քայլացի, չնշել է շատ նշաններ, բնապաշտական մոտիվները հանգեցրել սոցիալ-էկոնոմական փաստերի, տվել նրանց տեղացին, պատմականորեն կանկրետ նկարագիր, որ օրինաշափական է, չո՞ն ու նվիրաբերումը դարձրել ընծա ու կաշառք: Հարցութամյակների նստվածք է այս ամենը, տիզմ ու ամառ, որի տակ խեղդված է հնագույն խորհրդապաշտական շերտը: Դատի միջնադարյան-ժողովրդական դադարիարն իսկ, որ ունի հնագարյան տրամարանություն (օրինակները մեզ արդեն հայտնի են), գդվար է ընկալվում, մանավանդ, երբ առար շշաթիրներից ու պարսիկ «աարքազների» կողքին, որ ահդից որտեղ հայտնվում է «ոռսի նաշալնիկը» (Գ. Տեր-Աղքասանդրյանի գրառում)<sup>110</sup>, բոլորովին նոր գեմք: Բայց միւնույն է՝ հայ ժողովրդական գրաման իր տիպարանությամբ մնում է հինք չի վերածվում XIX դարի կատակերգության, չի ընդունում նոր գրամայի տարրեր, ոչ մի շափով չի հնթարէվում հայոց քաղաքային կենցաղում արմատավորվող գրական թատրոնի ավորությանը: Թիֆլիսում XIX դարի 40—50-ական թվականներից կյանք էր մտնում հվրոպական տիպի նոր թատրոնը և այդ նույն ժամանակ, թարեկենդանի տանին, փողոցներում խաղացվում էր «Զեյնորան», որ «Խանից» հայ-վրացացական մի տարրերակն է<sup>111</sup>: Թատերական այս

110 Վ. Բլայան, նշվ. աշխ., հ. 1, էջ 94:

111 Հմմտ. Դ. Ջշանելաձե, Հրազդական թատրոն Խորհրդապահ ան 70—73: Մինչև վերցին առբիներու հատական խաղերը տարածված են վրացարենակ զույների միջավայրում, մասնավորապես վարձիալի շրթնական պահանում: Հսու թի լսած բանագործ տեղեկությունների, հունական, նաև օսմանական պատմական խաղերում («կոսմոս» կենտրոնական գեմքերից մեկը եղել

Համակարգերը միմյանց կողքի են, բայց պատմատիպարանական առումով հեռու են մեկը մյուսից և ծառայում են նույն աշխարհում ապրող սոցիալական տարրեր խավերի: Թիֆլիսի քաղաքային թատրոն մտնող նոր բուրժուան, քաղենին, մտավորականն ու ուսանողը, ազգային թատրոնի գաղափարով մտահոգված հայ համալսարանականը այս ամրոխային ծաղրական երթը զիտում են կողքից, իսկ դարավերջի նկարիչ վանո Խոչարեցյանը վերաբռտադրում է այդ որպես էթնոգրաֆիական ունիկում (նկ. 11): Դատական խաղերին բնականորեն նույն հայացքով են մոտենում հայ գրողներն ու բանահավաքները, քննձեռնելով ուսումնասիրողներին ինքնատիպ ազգագրական-բանահյուսական նյութ:

Արդ, ի՞նչ ներքին կապեր կան մեր քննության առարկայի և գրական դրամայի միջև:

### ՎԱՆԱ ՓԱՇԱՆ ԵՎ ՔԱԶԱՐԸ

Երեմիա եպիսկոպոսի (Տեկանց) գրառած վասպւրականի «Փաշա» խաղում արտաքին, երկրորդական թվացող մանրամասներ կան, որոնք «թագավոր-զատավորին» կարծես մտերմացնում են հայ ժողովրդական հերիտիվ բախտավիրն-զիր ու բախտավոր «ասպետի» հետ: Այդ կապը շատ պարզ է երեսում Հովհաննես Բումանյանի հերիտաթում, Դերենիկ Դեմիրճյանի հայտնի կատակերգությունում, մասսամբ նաև Ավետիք Բասհակյանի «Աղա Նազարում»: Ընդհանուր զուգահեռը և որոշ կետերի համընկնումները կարելի է բացատրել ժողովրդական խաղերի անմիջական կամ միջնորդված ազգեցովթյամբ՝ մի բան, որի համար արտաքին կովաններ շունենք, ելնում ենք ընդամենը տիպարանական հատկանիշները բանահյուսական հիմքում՝ Սրվանձոյանի գրառած «Թըժիկոն» ժողովրդական դրույցում: Ի դեպ, սա հերիտիվ չէ, ըստ

Է այծոկերպ խեղկատակը): Նույն է զիայում պ. Խոչարեղյանի նկարը, որը թէ է, դատական խաղի հավաքական մի պատկեր է՝ հայկականի հունականի, գուցե և օսեթականի տարբերութ:

ժանրային առանձնահատկությունների, այլ իսկապես զրոյց, միջնադարյան ուրիշական գործարքաւոր է: Հայտնի է նաև, որ բախտավոր «ասպետի» զրոյցը, որպես սյուժեհետային պայմանաձև, միջադարյան է: Թումանյանը նշել է «Քաջ նազարի» մտահղացմանը հիմք ծառայած մի շարք աղբյուրներ՝ արևմտյան և արեւելյան, զրանց թվում՝ «Գրժիկոն»<sup>112</sup>:

Գրժիկո կամ Գրժիկոն անունը (*Սրվանձտյանի գրառման մեջ տրված է այս երկու ձևով*) տարօրինակ է թվում: Հայ բանահյուսության և գրականության մեջ այս անվան երկրորդ մի վկայություն ինձ հայտնի չէ: Զրոյցի բովանդակությունից ելնելով, այս անունը կարող ենք բացատրել դրժկերապորիմ (տձեռութիւն, տգեղութիւն) և դժմիտ («գժնեայ մտօք, զառնացեալ, խայտառակ, ծաղածանակ»)<sup>113</sup> բառերի օգնությամբ: Հեղինակիս սուրբեկտիվ միտումին համերաշխ են տձեռորին, խայտառակ, ծաղածանակ զուգահեռները, բնդունենք, ուրիշն, զրոյցի հերոսի անունը, թեկուզ և պայմանաբար, որպես տիպաբանական մեկ միավոր:

Վանա Փաշան իսկական Գրժիկոն է և «գժնեայ մտօք», և տձե ու խայտառակ տեսքով: «Եքախմբի» դիվակերպ ու սատանայակերպ մարդիկ «յուրյանց էշավորյալ փաշայն խաղի վարի ծայրեն սկսեցին հառաջ քշել: Սև թորվան փորատիկ անթրոցի ծայրն անցուցած իրոք դրոշակ, տղայի մեկը՝ փաշայի առաջ քալեր...»<sup>114</sup>: Փաշայի «պատկերագրությունը» լրացնում է կեղծոտ լաթը որպես դրոշակ կապած թոնրի անթրոցի ծայրին: Գրժիկոյի ձեռքին նույն իրն է՝ թոնրի անթրոցը, որպես ցասման գավազան կամ խոսքի իրավունքի սիմվոլ<sup>115</sup>. «օր մի կավ, իր կովն առավ ու անթրոցը ձեռք բռնեց, տնեն ինկավ դուրս. և Առնեմ գլուխս կորսվիմ,— կը-

112 Հ. Թումանյան, Սրբերի ժողովածու, Հ. Յ., Երևան, 1969, էջ 430  
(ժանրության):

113 Նոր բառզիրք հայկագիան լեզուի, Հ. Ի., էջ 614:

114 Պ. Բայյան, նշվ. աշխ., Հ. Ի., էջ 82:

115 Գավազանը, որպես խոսքի իրավունքի և իշխանության խորհրդակից, շատ հին է. Հունական ռապուզները հոմերոսյան պոեմները պատմուիլ են սարդենի (զափնե) մահակը ձեռքներին: Այսօրվա Անգլիայում թագուհին պառամենտի նիստին մասնակցում է երրիմն միայն իր գայիսոն ուղարկելով:

սեր,— այս անզդամ կնկան ձեռքին»<sup>116</sup>: Ծիսային ու կենցաղային նշանները խառնված են երևում: Դրժիկոյի փախուստը նման է «զաշազ ընկնելու», բայց ի՞նչ ձեռվ. եղցուրափոր մի տնասունի հետ և չշառ կտրողի» կրակախառնիչը— «զայխոնով»: Յոթ ճանճի, որպես յոթ կենդանի շնչի, ոչնչացումը հիշեցնում է դիտարկված խաղերի կատակային հիպերբոլաները (մի լիտր օդի-մի գետ ջուր, տաս զաթաւ-տաս ջաղացի քար, հինգ հավ-հինգ երամ թոշուն, մի թաս օդի-«թվանքի գյուլլա» և այլն)<sup>117</sup>: Դրժիկոյին «գիր է անում» և գյուցազն կնքում հոգեսոր մի անձ՝ ուն զերվիշ, և թուղթը, որ պետք է շփոթության մատնի ամրուսին, նա կապում է «կովի ճակատին՝ կոտոշներուն մեջ»<sup>118</sup>, «Թագավոր-դատավորի» պատկերագրությունը չդառնում է կատարյալ. եղջյուրները սաղավարտի վրա չեն, ինչպես Խան-Փաշաշինը, բայց «մանդատը», ուր գրանցված է նրա «սխրանքը», կովի ճակատին է:

Այս ամենը համարենք Դրժիկոյին ու Խան-Փաշաշին եղբայրացնող երկրորդ տիպարանական ճիավորը:

Անսովոր ու արտասոց կերպարանքով՝ դժնատեսիլ ու ծաղակատակ «ասպետը» հեռանում է իր շենից, անցնում օտար ֆրատրիացի սահմանները: Սա երրորդ տիպարանական միավորն է:

Չորրորդ միավոր, արտասովոր անձանոթին պատվով ու Հանդիսավորությամբ տանում են «ղղջակ», որը Դրժիկոյի զրուցում «քոշկ ու սարայ» է, «Խան-Փաշա» խաղում՝ տանուտերի տուն: Այս իրադրությունը և խաղային է կյանքից է: Գալիս: Օտարի առշև շփոթվելը, չափից ավելի մեծ պատիվներ տալը և միշավայրի գլխին նստեցնելը թերևս ավելի հատուկ է արևելյան կենցաղին: Համաշխարհային դրամատիկական գրականության մեջ այս իրագրության դասական օրինակը տալիս է Գոգոլի «Ռեիզորը». միշավայրն ստեղծում է դատավորին, հաճոյանում, կաշառում, զարմա-

116 Գ. Մրվանձայանց, Երկեր, Հ. 1, էջ 474:

117 Վ. Թղթյան, նշվ. աշխա., Հ. 1, էջ 97:

118 Գ. Մրվանձայանց, նշվ. աշխա., էջ 474:

նում ու խայտառակվում: Առասպելը անծանոթ օտարականի շուրջ հյուսվում է արագ ու ծաղկում խնչույքի սեղանի մոտ, խնչույք— «պատարագի» ներբողները դրսից եկածին հասցընում ևն աստծո գաճի մոտ (կենաց ծաղկեցնելը այս է որ կա), և մհծարվողն ազատություն է ստանում ներկայանալու այսպես կամ այնպես:

Խնչույքի տեսարանը և՝ Դըժիկոյի զրուցում, և՝ «Քաջ նազարի» Թումանյանի ու Խաչակյանի վերսիաներում, և՝ Դեմիքյանի կատակերգությունում (2-րդ արար): Խնչույքը դրված է Թումանյանի հերիաթի Հիմքում, և հերիաթն էլ ըստ էության շրջանակին առողջ խաղ-մհծարանք է՝ բացարձակուրեն դիֆիրամբային-ներբողական նրգերով: Կարելի է ասել, որ խնչույքը մեր խաղի հիմնական ափաբանական հատկանիշն է: Տեսնենք, ուրեմն, ինչպես է դրսեորչում բախտի «առապելը» հերիաթի ու խաղի խնչույքներում:

#### Գըժիկո

#### Փաշա

Գողաէն կը գաղրի Դըժիկոն,  
«Բող ձեր ասածի պես լինի»,  
կը սի առանձին տունը, վերին  
գլուխ կը նոտեցնեն, ամեն բա-  
րութենքն կը զնեն իր առջն ու  
իրենք ձեռները խաշ կապած ծա-  
ռայտթյուն կրնեն Դըժիկոն խոր  
մասմանքի մեջ է, թե այս փոր-  
ձանքն ինչպես ենք և թէ՝ կը  
վախնա զինքը շնորհնեն: Ասոնք  
այ կը կարծեն թէն ինչ խորունկ  
խելացի ու մեծ հոգի մարդ է, որ  
իրենց երեսը շնայիր, չի խսիր:  
կը հազան, կը հազդան հիշեց-  
նելու համար նշան, և Դըժիկոն  
շրաման կուտա որ նստին: Հան-  
դըստանակն շնորհ կը հարցանեն.

Փաշային յուր սարսրն նկա-  
ներ ի մեր սենյակ: Մարդիկ զիմա-  
շայն և զոր սպասամբոր հրավի-  
րելով վերի զորի բազմեցուցա-  
նեն և նորա զալուսն շնորհա-  
վորեավ, որպիսություն հարցանե-  
լով, խնդրեն պատմել, թե որ աշ-  
խարնեն զա, ինչ-թեն բաշություն  
արած է, երկրին ինչ բարիք պի-  
տի առնե: Նու ևս ասեր,

— Բարելոննեն, նինդեն,  
Եգիպտասնեն, մեծի Պոլսն և աշ-  
խարնի բոլոր քաղաքներն ու զե-  
ղերին անցանելով հասած է վա-  
նա քաղաք, որո մարդիկ քան զա-  
մհնայն մորդիկ քաղաքացն այ-  
նոցիկ, զորս տեսյալ էր Փաշայն,

119 Տարտոնի է, որ «Անիկորի» զաղափարը, իր սպունեալյին որամա-  
բանությամբ պատկանում է Պուշկինին. նա Պոզդնին պատմել է իր շուրջը  
տէզի ունեցած, զոյց և իր հորինած կամ ոմշակածք մի միջադեպ Թվում  
է, թե բանաստեղծիք՝ արեների բմացությունը և արենելյան երեսկայությունն  
է ոտեհուն այս իրադրությունը:

աԱզա, քո ձին, քո զենք, քո ծառաներ ու՝ ևս ևս թողեր, Հրամանք արա, Երթանք բերինքու Դրժմիկոն կըսեն. շնենք ու ձի վատկուս մարդկանց ապավեն է. ևս զործածած չեմ երբեք, ողեաք չէ եզած եթե մեծ կոփի բռնվիմ, այն ատեն ձի և զենք կը զործածած, իսկ ծառային երբեք ողեաք չունիմ, աշխարհ իմ ծառաներն են <...> ես Գրդիկոն ևմ, մեկ ափուն յօթն Հոգի կապահնենմ<sup>120</sup>,

շատ բարի և քաղաքական տևաւանքու շնոր յուր զյուցագնական չունեցած քաջությունիք պատճենով և զինքն Ազերանդորիք, Շահ-Թաջ-մազի և Շահ-Իսմայլիի շափ հաղովու և յուր մարդիկ ամեն պատճենից վերջ ասեին և վկայեին, բն բորոն ճիշտ և ստույշ են, զի մեր նորս զորացեաք վկայեմք, որ այս այսպիս լ<sup>121</sup>.

Իրազրությունը բացարձակորեն նույնն է. Հայտնին է տարօրինակ մի անծանոթ՝ կրակիսառնիշը ձեռքին, մի դեպքում անզեն և կովի հետ, մյուս դեպքում ժանդուած ու հին ասպավենով և «Էշալորյալ»: Երկու դեպքում էլ գործում է ոչ թե մարդու իրական արժեքը, այլ արժեքի սիմվոլը՝ թուղթ կամ բուշ՝ անթրոցին կապած կեզտոտ լաթ: Անծանոթը վայելում է օտար ֆրատրիայի հյուրասիրությունը, ձևանում խոր ու խոհուն անձ կամ Հանգուգն արկածախնդիր, զարդարված իր շունեցած անցյալով և իր գլխի շուրջը ճառագող լուսապակի տակ բազմած հուշեր է պատճում: Ահա այն բնավորությունը (Էթոս), որ խաղային-դիալվածային իրազրության ծնունդ է, անկախ նրանից դրույցից է անցել խաղին, թե խաղից զրույցին: Այս իրազրության մեջ նշմարվում է նաև Դոն Կիխոտը, թեպետ «տխուր պատկերի ասպետի» նկարագիրն այլ է՝ նրան իրազրությունը չի ստեղծում, ինքն է իր երեսակայած իրականությամբ մտնում տարապայման իրազրությունների մեջ Բայց նա էլ բախտի «ասպետի» նման փախչում է տանից, Հայտնվում անծանոթ միջավայրերում, իհարկե ոչ խնջույքներում, այլ պանդոկների համեստ սեղանների մոտ իր նախապապի հնացած ու ժանդուած զրահներով ու «Մամբրինի սաղավարտը»՝ դալլարից խլած պղնձե լազամը զլսին: Վասպուրականի «Փաշան» (նկ. 13) կարծես հիշեցնում է, որ խաղային արմատներ կան այս երկու արտա-

120 Գ. Արվանձանց, նշվ. աշխա., էջ 474—475:

121 Գ. Թողյան, նշվ. աշխա., հ. 1, էջ 82:

քուստ նման ու բախտով տարամետ ասպետների շուրջ  
ստեղծվող իրազրություններում:

Խնջույքի սեղանի մոտ վանա Փաշան լուր է, ինչպես  
Դըժիկոն, բայց ոչ նրա նման մոլորդած ու մտահոգ, այլ ցու-  
ցադրական ձևալիագեմ: Տպավորությունը և արդյունքը, սա-  
կայն, նույնն էն: Արժանապատվության ասիական ըմբռո-  
նումով մեծ ու խելոք մարդը պետք է իրեն ծանր պահի,



Նկ. 13 «Վանա փաշա» խաղը բատ Հ. Քաջակյանի:

շպետք է ժպտա ու խոսի: Այս խորիմաստ լոռությունն էլ ահա  
մտածել է տալիս, թե ով գիտե, ինչեր կան դրոշի տակ նըս-  
տած անծանօթի գլխում: Ժազեվրգական զրույցի հերոսը  
սկզբից ևեթ լոռությամբ է գործում: Փաշայի վարդագիծն  
ավելի կատակերգական է: Նա պատմում է իր կյանքը, վա-

յելում զինին ու կերակուրք, կշտանում և մոպցլվում: «Նորապահ մի յուրյանց իշխանություն մոռացած,—պատմում է Երեմիա հափսկոպոսը,— իրեւ ընկեր, ռատեին, խմեին, Կրգեին և ուրախություն առնելով զվաճարանեին, մինչև փորերնին կշտանար»<sup>122</sup>: Փաշան ձևանում է զգողությունը վիրավորված: Միշավայրից վեր ձևանալու դիտակցությունը նրան Հիշեցնում է, որ պետք է ծանր նստել ու շնասկանալ սեղանակիցների լեզուն: Սա էլ մի նշան է, թե «առարյալն» ու «գատավորը» տեղացի չէ, նրան չի վայելում տեղացի լինել՝ արդարությունը: Կրիշ աշխարհից պետք է լինի, որ Հեղինակությունը ու Հւ վաս ներշնչի: Վերջապես Փաշան պատիվ է անում սեղանակիցներին և Հօգոցներ Հանում, անորոշ ձայներ արձակում, մրթմքում: «Ժողովականները,— կարդում Հնք Թումանյանի հերիթում,— իրար աշքով են անում, հասկանում են, թե էդ հառաշանքն ու ձեռի թափ տալը ինչքան բան կնշանակեր...»<sup>123</sup>:

Դիմիրճյանի կատակերգությունում, որի կապը ժողովրդական խաղի Հետ, թվում է, ակնհայտ է, իրադրությանը տրված է այնպիսի տեսք, որ միայն թատերական կոնտեքստում կարող է իմաստավորվել: Նազարը, ըստ Հեղինակի ոհմարկի, մտնում է անվստահ և նստում գյուղական ավագանու շարքում: Նա հազում է: Տիրում է լուսիթյուն: Նազարը նորից է հազում: Խնջույքի արարողապետն էլ է հազում... Լոռություն:

Նազար.— Հըմ...

Բարգր.— (Եայում են նեան):

Ա. Բյուր.— Ի՞նչ ասավ:

Բ. Բյուր.— Ասավ՝ «Հըմ»:

Գ. Բյուր.— Ի՞նչ ասավ:

Դ. Բյուր.— Ասավ՝ «Հըմ», (Հերքով նոյն նազն ու պատասխանը՝ մինչև մի ծերունուն):

Մի ծերունի. — Ար ասավ՝ «Հըմ», ասել է Քյոռօղլին է<sup>124</sup>:

Վանա Փաշայի լուսիթյան պատճառը պարզից պարզ է. Ճաշը կերել է, պետք է ստանա վարձը: Այդ պահանջին տըր-

122 Նոյն տեղում:

123 Հ. Թումանյան, Երկեր, Տ., 3, Երևան, 1969, էջ 220:

վլում է խորագույն իմաստ, խնչվես Նազարի հառաշանքին ու լուսվյանը: «Հետո փաշայն նորեն յուր իշխանական գիրք բռնելով, բերան սրբելով, բեղերն ուղրելով, շան պես կռմուալով, խողի պես մոմուալով Հարցաներ յուր մարդկանց, թե այս գեշ մարդիկ բնավ չեն հարցաներ, թե փաշայն է՞ր աղագավ այս քաղաք և այս թաղն եկած է, որովհետեւ այլի արժանի չեր խոսել, այլ թարգմանավ: Նորա մարդկանց մին թարգման ձևանալով ասեր, թե փաշայն վերջի աստիճան զայրացած է, զի քանի օր և ամիս կամ տարի է, որ այս թաղն եկած է, բնավ նորա գալստյան պատճառ չեն հարցաներ: Մարդիկ բոլոր ի միասին հազար և բուր անգամ ներդություն խնդրելով ասեին, թե մեր մեծապես սխալած եմք այդ մասին, ուստի թողություն խընդրեմք, յուր գալու պատճառն թող ինքն բացատրե մեզ և ինչ հրաման ունի, մեր զիխու վերա կատարեմք»<sup>124</sup>: Փաշան հարկ ու տուգանք է պահանջում, ապա շղթայում է մի քանիսին, ծունկի շեցնում, զիխուներին մտրակ ու գավազան խաղացնում, ներում: Այնուհետեւ տեղի է ունենում այն, ինչ պիտք է լինի, ուրս փաշայի զիխու կողովին կրակ կուտայինք, — պատճեռմ է խաղի մասնակիցը, — որո նորա մորուք փետեինք, որո զիխու վերա ջուր լեցունեինք, որո աշքերու մեջ փոշի փշեինք և տինապես ձգձգելով աստ անդ քաշընեինք, որ բնավ փաշայի կերպարանք չեր մնար վրան»<sup>125</sup>:

«Թագավոր-ղատավլորի» պատկերը, թվում է, բոլոր դեպքերում խորային հիմք պիտք է ունենա: Որոշակիորեն այդ ակարով է ներկայանում խաչակյանի «Աղա Նազարը» հերթակի հետոր, «Եշը քշեց, բնկավ միծ ճամփան ու գնաց գրոշակը ձեռքին, թուրք մեշքին, շիրուխը բերնին, զլուխը՝ բարձր, փափախը՝ ծոծրակին, հպարտ, աղավայիլ...»<sup>126</sup>, Անցորդները ահ ու սարսափի են մատնվում, տեսնելով այս արտասովոր, էշավորքալ վեհապետին և աղաշում են խղճալ, արտասովոր, էշավորքալ վեհապետին և աղամայում էր խնայել: «Գնացեք ձեր ապրուստի ետեից, — հրամայում էր

124 Գ. Գևիրենյան, Օրգերի ժողովածու, հ. 5, Երևան, 1957, էջ 160—161:

125 Նույն տեղում, էջ 84:

126 Ա. Խանիակյան, Կրկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975, էջ 272:

նա, և ամենքից մի քիչ հարկ էր վերցնում, որից հայ ու ծխախոտ, որից օդի ու շամիչ և ուրիշ մանր-մուսր բաներ»<sup>127</sup>: Աղա նազարի ավարը բավական համեստ է՝ զրեթե մուրացկանի բաժին և գրանով էլ նման է Փաշազի հարկա-հավաքությանը: Վանա Փաշան երկու-երեք զուռուշ է ստա-նում իր խորիմաստ լուսվյան ու քրթմնջոցի համար:

Տիպարանական այս և այլ ընդհանրությունները վկայում են, որ բախտի ասպետի պատկերն ու ճակատագիրը հորինվել են խաղային հիմքի, եթե ոչ անմիջական, ապա միջնորդ-ված, անուղղակի ազգեցությամբ: Մրագրվածություն, իհար-կե, ոճուար է որոնիլ, չկա նման բան: Բայց խաղը, որպես զգացողություն, որպես ազգային գեղարվեստական մտածե-լակերպի հատկանիշ, խորթ չէ հատկապես թումանյանին: Թումանյանի հեթիաթը, ըստ սյուժեատային կառուցվածքի, խաղային է և գրամատուրգիական, այս հասկացությունների ժողովրդական իմաստով: Դա խնչույքային զրուց է տրամա-խոսությունների ու երգ-դիֆիրամբների բնույթով: մարդիկ հաճոյախոսություն են անում, անձանոթ հյուրին զնում մե-ծարգողի դիրքում, և «աշուղն էլ, որ էնտեղ էր, ձնոաց երգ է հորինում ու երգում»:

Բարով հկար, հազար բարի,  
Ճրգոր արծիվ մեր սարերի,  
Թագ ու պարծանք մեր աշխարհի...<sup>128</sup>

Երգը լուրջ է՝ հերոսական ներբող, հույսի ու հաւատու-անսքող զրսենորում, ուր կա նաև սոցիալական երազ, արդար ու հղոր միապետին հավատարիմ լինելու խոստում: Իսկ հեգ-նանըը շատ նուրբ է ու կարող է չնկատվել, եթե իրազրու-թյունը չլինի այնքան անհեթեթ, եթե պատռուի կոնտերսու-ըլինի կատակերգական.

Մատազ հնը մհեք քո զրոշին,  
Մեշքիդ թրին, տակիդ ուաշին,  
Նրա ոտին, պոշին, բաշին,  
Անհազթ հերոս թաշդ նազար,  
Որ մին զարկես՝ շարգես հազար<sup>129</sup>:

127 Նույն տեղում, էջ 273:

128 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, մ. 3, էջ 220:

129 Նույն տեղում:

Թումանյանի հեքիաթի տոնայնությունը մղում է խաղի, և թե չի զալիս խաղից, և երգային է, զվարի, հանգեցնում է կոտակերգական օպերայի զաղափարին։ Այս արամագրությունը շարունակվում է նաև մեծարման խնջութից հետո-թվում է ամբողջ հեքիաթը հորինված է սեղանի մոտ, բա-ժականակի աղմուկի մեջ, որտեղ դեր են խաղում ոչ թե ար-ժեքն ու մեծությունը, այլ նրանց սիմվոլները, թեկուզ և փոտած՝ մի լաթի կտոր ու մի ժանգոս երկաթ։ Մենք նկա-տեցինք, որ ժողովրդական խաղում էլ շփոթվում են իրականն ու պայմանականը, լուրջն ու կատակը, և Փաշայի գերակա-տարր ոչ միայն իսկական հյուրասիրություն է վայելում, այլև իսկական ծնծ ու շարդ է ուտում։ Թումանյանի հեքիաթն այդպիս է գրված այստեղ նույն մինույթուն է տիրում, բայց ծնծ ու շարդը չկա։ Այս երկակի վիճակների զաղափարը ա-ղոտ արտահայտություն ունի Սրբանձայանի գրառած զրոյ-ցում, բայց այստեղ կարծես որոշակի է հերոսի անունը՝ Դը-միկո, զժնատեսիլ ու ծիծաղելի, սարսափեցնող ու զվարճաց-նող։

Ինչ վերաբերում է Գեմիրճյանի «Թաջ Նազար» կատա-կերպությանը, ապա այստեղ ազելի քան պարզ են երկում ժողովրդական դրամատիկական խաղի գծերը։ Կատակերգու-թյունը կառուցված է դատական խաղի տրամաբանությամբ՝ սկզբից մինչև վերջ։ Կեդ հերոս ու վեհապետ, և նրան մե-ծարող ու տապալող ամբոխ։ Ո՞չ ժողովրդական զրոյցում, ո՞չ էլ թումանյանի ու իսահակյանի վերսիաներում «թագա-վոռ-դատավորը» չի տապալվում։ այդպիս է աշխարհի բանր վոռո-դատավորը» չի տապալվում։ այդպիս է աշխարհի բանր վոռո կամ առակ, այլ խաղ։ Այստեղ ամեն ինչ հեքիաթ-զրոյցը կամ առակ, այլ խաղ։ Այստեղ ամեն ինչ տեղի է ունենում շրջանակենտրոն խաղի օրենքներով, ազմուկի ու իրարանցման մեջ, որտեղ «շունը տիրոջը չի ձանաշում», ու իրարանցման մեջ, որտեղ «շունը տիրոջը չի ձանաշում», ու մեկն ի վիճակի չէ հաշիվ տալ իրեն, թե ինչ է անում, ինչ ոչ մեկն ի վիճակի չէ հաշիվ տալ իրեն, թե ինչ է անում, ինչ աղետ է պատրաստում իր գլխին, ինչ «դատ-բեղդադ»։ Թվում շաղետ է պատրաստում իր գլխին, ինչ «դատ-բեղդադ»։ Թվում շախատում է ընկնում վայրի մի զաղան՝ վագրը, լախտերը կենտրոն է ընկնում վայրի մի զաղան՝ վագրը, լախտերը կենտրոն է ընկնում վայրի մի զաղանին, փառք ու պատիվ է ստանում շախատում են զաղանին,

ակամա հեծյալը։ Գործում է խաղային դիպվածք՝ կատակերգական «ոյուխեն»։ Եթև մարդկային կեցության միջնադարյան-ժողովրդական ըմբռնումը զառնում է ավելի զորեղ. այսօր ոչնչություն, վաղը՝ թագավոր ու աստված, մյուս օրը՝ դարձյալ ոչնչություն։

Սա ոչ թե զրոյցի կամ հերիաթի, այլ խաղի տրամաբանությունն է և արդյունք է ոչ թե սոսկ դիպվածի, խաղային պատահականության։ Այդ պատահականությունը, ինչպես ցույց են տալիս մեզ ժանոթ խաղերի տարրերակները, ծրագրված է որպես ծիսային վախճան և ունի իր աշխարհայացքային հիմքերը։

Կյանքի նորոգման գաղափարն իր գոյարանական և սոցիալ-բարոյական արմատներով կերպավորվում է զատող ու պատժող աստվածության պատկերով և մյուս կողմից հանգում է երկրային տիրակալների ժամանակավոր լինելու գաղափարին։ Տոհմի ավագին ու քրմապետին զատելու նախնադարյան ծեսը արենցան միջավայրում ստացել է տարրեր փոխակերպումներ, որոնցից մեզ համար ամենարնութագրականը ժամանակավոր միապետի զաղափարն է և նրա հայտնությունը օտար աշխարհից։ Զեյմս Ֆրեդերիք նկարագրում է մի շարք նման ծեսեր, և գրանցից ամենահետարրոքիրը, որ բոլոր գծերով մեր խաղերն է Հիշեցնում, եզիպտականն է։ Վեհերին Եգիպտասոսում, — զրում է Ֆրեդերիք, — սեպտեմբերի 10-ին, այն է՝ պատական օրացույցի արեգակնային տարվա առաջին օրը, երբ նեղոսի ջրի մակարդակը հասել է բարձրադրույն էլեմենտ, կառավարությունը երեք օրով լուծարի է հնդարձնկել, և ամեն քաղաք ընտրել է իր սեփական էպառավարչին։ Այս ժամանակավոր տիրակալը (որևէ ֆելլահ—Հ. Հ.) կրել է ժաղըածուական սրածայր զլսարի, երկար, վուշե մորուք և արտառոց ու ծիծաղելի թիկնոց։ Պայմանը ծեռքին և զրագիրների ու դահիճների տեսքով ծրագրված մարդկանց ուղեկցությամբ նա ուղերզել է դեպի քաղաքի կառավարչի տունը։ Օրինական կառավարիչը թույլ է տվել այս հավակնորդին ստորացնել իրեն, իսկ հավակնորդը նստել է դահավորակին և դատ սկսել, որին պետք է ենթարկվեին և՝ կառավարիչը, և՝ նրա աստիճանավորները։

Երեքօրյա թագավորությունից հետո ժամանակավոր միապետը դատապարտվել է՝ մահապատճի՝ Հրկիզման։ Հրկիզմվել է սակայն այն փայտե վանդակը, որտեղ կալանավորված էր թագակիր ֆելլացը և որտեղից նա անվնաս դուրս է պըսծնում<sup>130</sup>։

Ինչպես նկատում ենք, այս ժեսում կրկնվում է մեզ արդին ծանոթ դատական խաղի մողելը։ Ավելին՝ խաղի սիմվոլիկան և իմաստաբանությունը բացարձակորեն նույնն են։

Այսպիսով, Վանա Փաշան ու Թաջ Նաղարը, որպես արխետիպեր, նույնը չեն, ինչպես նույնը չեն ժամանակավոր միապետն ու բախտի ասպետը։ Բայց նրանց խաղային թեմաները, նաև վարքագծերը եղերվում են։ Թատերական կոնտեքստում նրանք ուրիշ բարբառում են նման զծերով, ինչպես Զախուսի թագավորը և Անդերսենի մերկ արքան, Խեստակովը և Կրեչինսկին։ Ժամանակավոր միապետի ու բախտի ասպետի շուրջ ստեղծված իրադրություններում զորդում են երկու ունիվերսալ թատերական մողել՝ Հանգիսավոր երթը և խնջույքի սեղանը։ Գրանք շրջանակենտրոն խաղի երկու հրմական պայմանաձևերն են։ Թումանյանի Հերիաթում թևմատիկ և խաղային պայմանաձևերը համատեղված են, բայց արխետիպը Հանգեսէ գալիս «մարուր» տեսքով։ բախտի ասպետին մեծարում են, բայց զերցինս չի համարձակվում դատավորի ու հրանդականին։ Խաղակցանի Հերիաթում բախտի ասպետն աշխարհի է մտնում ոչ միայն զրոշակով ու թրուլ, բայց զրշով։ Նա զնում է «շառ կտրելու» թումանյանը շրջանակությունում ու արագությունում իր պատումի մեջ։ Գրանով նա հիմք է տալիս Դեմիրճյանին՝ ստեղծելու կատակերգություն ոչ այնքան Հերիաթի, որքան ամբոխային գատի ոճով ու տրամաբանությամբ։ Նաղարն այս տեղ շուտ է կռաջում իրագրության իմաստը և դանում է «թագավոր-դատավոր»։ Դեմիրճյանը զրել է ժողովրդական խաղ, ոչ թէ դասական կատակերգություն։ Դասականն այս դեպքում մեզ համար մակրի է, գրամատուրգիան փաստն ամբողջությամբ բարձր է առաջական գործությունը, ու թէ տեսակի բնութագրում։ Դեմիրճյանը դատական խաղի կոնտեքստում է իմաստավորել բախ-

130 Աճ. Փրզը, նշգ. աշխ., էջ 32<sup>11</sup>.

տի ասպետին, դրել է նրան դատող ու դատվող Փաշայի վիճակում։ Երկու արխետիպերի մերձեցումը տվել է մի կերպար, որը տարբեր է Թումանյանի Քաջ Նազարից և նման է Իսահակյանի Աղա Նազարին։

Ժողովրդական խաղի պոնտիկան շատ բան է որոշել այստեղ։ Ուստի, Դեմիրճյանի կատակերգության լեզվանական ու դրամատուրգիական պատկերը թվում է նույնիսկ անմշակ։ Բայց դա այլ կարդի մշակում է, այստեղ անտեսանելի շերտեր կան, որ կարող են ի հայտ գալ միայն խազային տարիքում։ Դեմիրճյանի գործը նախատեսում է բնամադրության ժողովրդական-հրապարակյան ոճ, երկդիմի, շփոթեցնող, այլարանական վիճակների շարք և ենթադրում է կարծես ոչ թե հայելակամար (պորտալային) բեմ (թևակետ որբա հիշեցումը կա պիսի սկզբում ու վերջում), այլ զյուղական հրապարակ, ժողովրդական կառնավալային մթնոլորտ։ Այստեղ նույնիսկ պալատը պալատ չէ, այլ գուցե թոնրատուն կամ ախոռ, պալատականները նման են Փաշայի ցնցոտիադարդ շքախմբին։ Նրանց անունները (Ղոսորուզա, Դանիոս, Խոդինի, Արշաթոթոշ, Ղառաղուսա, Ղոբոնթի, Ղուղուն) պատահականորեն շնորհ ընտրված։ Սրանք պարուապիս շշառ կտրողներ» են, էջին թարս նստած, աշխարհի բանը բարս պտտողներ։ Ի վերջո, ինչպես դատական խաղերում, այդ պտտոյտք կասեցնում է առողջ բանականությունը՝ Փաշայի մորուքն այլողը, որ ժամանակավոր միապետի գեղջկուհի կինն է։ «Դի հիմի կաց, քեզ խալիսի առաջ զբնողը ստեմ, որ աշխարհը տեսնի քեզ»<sup>131</sup>, խաղն ավարտվում է ծեծով։ Հեղինակն իր նախաբանում էլ ունի դրա ակնարկը։ «Եվ եթե այս երեկո ծեծի շնանդիպի (Հեղինակը—Հ. Հ.), այլ իր հերոսի պես ինքն էլ անսպասելի բախտով ձեր ծափերի ձայնը լսե, համեստորեն բեմ պիտի դուրս գա վերջին արարի մեջ՝ իր շնորհակալությունը հայտնելու ձեզ»<sup>132</sup>, վերջապես, խաղի տեսլարանային վճիռը և ոճական պատկերը պարզ են դառնում վարագույրը փակողի խոսքերով։ Բախտ չէ, Ուս-

131 Գ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, Է. 5, էջ 229.

132 Նույն տեղում, էջ 142։

տիան, Հյումար իմաստուն, այլ խրտվիլակներ և խաբեռ-թյուն»<sup>133</sup>: Գեմիրճյանը բախտի ասպետի զրուցը դիմել է ժողովրդական խաղի տիսապակով և ստեղծել երկդիմի այլարանություն, իր Հերոսի խոսքերով ասած՝ «երազ ու կես»: ինչպէ՞ս բանալ այս միկրոաշխարհի դուռը:

Բանալին վանա Փաշայի գրպանում է:

### ՎԻՊԱԿԱՆ ԱՆԴՐԱՇԱՋՈՒՄՆԵՐ

Ժողովրդական դրամատիկական մտածելակերպը դըբ-սերմում է ոչ միայն ինքնակա արմերով՝ որպես ծիսական-խաղային ամբողջություն, այլև միջնորդված ձևերով և տար-բեր կընտեքստներում: Ժողովրդական զրուցները, վիպա-կան ասքերը, Հերիաթիները երրեմն բերում են դրամայի ուղիղ կամ անուղղակի անդրադարձումներ կամ կրում են դրամատիկական պատճեցիալ՝ կենդանի իրազրության վե-րածվելու հնարամորություն: Այսուղի գործում է թերևս պարզ մի օրենք. Եթե կա ժողովրդական դրամա, ապա այդ դրա-ման պտնում է իր հանապարհը, դուսերվում ոչ միայն խա-ղային պայմանաձերով, այլև զուտ խոսքային արտահայ-տությամբ: Դրամայի ըլորտն ավելի լայն է մեր պատկե-րացրածից, նրա նշանները բազմազան են, և թատրոն երե-վուցիթի առօրյա պատեհերացումը բավարար չէ ժողովրդական դրամայի զրուցումները զննելու համար: Խնդիրն, իհարկե, կարող է շատ տարածվել, բայց մեր ընտրած պատմատիպա-րանական սխնման թերևս բավական է դրամայի մեկ-երկու վիպական անդրադարձումներ շոշափելու համար: Կանգ առ-նենք ամենաբնութագրական կետերի վրա:

«Փաշա» խաղի Մոկաց տարբերակում, որ գրեթե չի զա-նազանվում մեզ հայտնի գրառումներից, ենթադրվում է եր-կու հնարավոր վերջարան՝ բարեհաջող և անբարեհաջող: Փաշան ալարտում է դատը, ստանում իր պարզեները և նըս-տում խնչույթի: Պարում են, երգում, ծիախաղեր սարքում, ապա Փաշան պատրաստվում է հեռանալ և շնորհակալու-

133 Նույն տեղում, էլ. 250:

թյան իտուքիր է ուղղում գյուղի ռեսին Ռեսը նրան հանում է փաշայական դերից և, ինչպես ցուց են տալիս վերը հիշատակած տարրերակները, Փաշային պատվով ճանապարհ են դնում: Դերակատարը հեռանում է դերն ավարտված, ոչ որպես դատամոր, այլ բարեկամ: Խաղի կանոններով նախատեսված վերջարանն է սա: Բայց պատահում է, որ ծագում են այլ հանգամանքներ, և Փաշան ակամա ներքաշվում է նոր խաղի մեջ՝ զանում «թշնամի»: Անսպասելիորեն սկսվում է «երկրորդ գործողությունը», որը, թվում է, չպետք է լինի: Գյուղի երիտասարդությունը խափանում է Փաշայի հանդիսավոր ետղարձը, քիչից բերում «դատ-քննադն» ու կերածիսմածը: Երիտասարդները ըրիվ են տալիս նրա ծխամորդի հարդը և քաշչում ու շարչարում Փաշային: Փաշայի շքախումքը կռվի մեջ է մտնում, պաշտպանվում ու հարձակվում: Եվ քանի որ Փաշան դատն ամփառել է, նոր հարձակում շահետք է գործի: Նա փախչում է իր մարդկանցով շրջապատված, և ամբողջ խումբը նահանջում է կռվով: Փաշայի խրմրին հետապնդում են մինչև գյուղի սահմանները: Փախչողները հեռանում են ժեծ ու շարդ կերած, պատառուուված, երբեմն էլ վերքեր ստացած<sup>134</sup>,

Խաղի այս ավարտակետում ծխականությունից ու ֆրատրիալ բախման հիշողությունից բացի պետք է տեսնել նաև պատմական հիշողություն: Հավանաբար հին ավանդություն է երիտասարդության ընդդիմանալը, հարկածաններին պատուհասելը. գյուղի ավագանին հարկը տալիս է, իսկ երիտասարդները հարձակվում են հարկածանների վրա: Պատմականորեն իրական այս երեւոյթը վիպական դրսորում ունի «Սասնա ծուերում»: բանություն հանդուրժող մի «ծուռ»՝ Պավիթը, պատուհասում է Մսրա Մելիքի հարկածաններին: Խնդիրն այն է, որ վիպական այս դրվագը մեզ հայտնի գրեթե բոլոր պատումներում վերաբաղրված է զատական խաղի տեսքով: Եվ այստեղ պարերգական դրամայի գծերն ավելի հստակ են ու ամբողջական, քան բուն խաղերում: Հատվածն սկսվում է պարերգով, ավարտվում է պարերգով. առաջին երգը ներբողական է; երկրորդը՝ ծաղրական: Ենթադրվող շրջանի

<sup>134</sup> Վ. Յղոյան, հշվ. աշխ., Հ. 1, էջ 109—111.

Ակենտրոնում կանգնած է որպես ցուցի «խաղը ու խայտառակ» հարկանքը՝ Կողբաղին։ Ահա առաջին պարերը բայ Տարոնցի Կրպոյի պատմածի (գրառումը Պ. Արվենձյանցի)։

Արան թարափից լե Խոլբաշին էլա՛, առավ զոր ազգար, էկավ, օր տի զեր ի Մարաթոնկ, Դավիթի վրեն, Տեսավ, օր կընկտիք կայնած են ճամփու վրեն, բաց բողոք։

— Զբդի պար, ասեր, խաղընք, չուրի ես իգամ։  
Ասեցին։ — Մննք զինչ ասենք ու խաղանք։  
Չէ, չընք զինա, թէ զինչ ասենք։  
Խոլբաշին ուրանց ասեց։

«Եարձ կընկտիք կըկանք ազան։  
կըկեն կընկտիք զուզակը բառնան։  
Մէր Խոլբաշին զացեր Սասուն ի բան։  
Մուզաւ էզներ բերե լլծան։  
Էկարմիր կովեր բերե կթան։  
Գարուն բոլ կը շինենք եզ ու շորթան»։

Մեկ լե կիշե, օր կընկտիք  
Արանց զբդի կասեն ու կը խաղան։  
Հզոնք լե կասեն զասզար, կիգան...<sup>135</sup>

Սա կոչվում է «խաղ կապել», այս է՝ երգել շափով ու հանգով, տողը տողին, ձայնավորը ձայնավորին համաձայնեցնելով, շրջանաձև պարով։ Թիրես Գրիգոր Մագիստրոսի ասած «կարկատել հազներգութեամբ» այս է: «Պարանցիկ երգի» կամ «պարուց երգի» ձեերից է այս, որ հետո վերածվում է «ցցոց և պարուց երգի» կամ «շամփօք և պարուք» խաղի։ Կողբաղին պարուց երգի կամ «շամփօք և պարուք» խաղի։ Կողբաղին (այսուղի՝ Խոլբաշի) իր զորախմբով, ինչպիս Փաշա՝ «զիվան» անող, զնում է Սասուն և հանդիպում Դավիթի «զատրեկան» պիտի այս մասում՝ Կողբաղինի հարկահանության մեկնելուց տումբ այս մասում՝ Կողբաղինի Մանուկ Թորոյանի պատմածում (գրառաջ: Ալաշկերտցի Մանուկ Թորոյանի) ժաղրական երգով են հանապառը Կ. Մելիք-Օհանջանյանի) ժաղրական երգով են հանապառը Կողբաղինին։

135 «Սասուն» ԺՈՒՐՆԱԼ, 1977, էջ 29,

«Հու ո՞ւ, ալամենց փբոցլու քերան,  
Ուր զիկար բըց շուն վաղան,  
Կերթար բըց զեւ-գաղան»<sup>136</sup>;

Առաջին ծաղրողին միանում է Էրկրորդ «խորեսիսը» հակառակ կողմից: Տեսարանը դառնում է դիխորեական:

Մղեք տուն, էրեք դիվան,  
Յեւեք զուս, էրեք չիվան.  
Եւրթանք Սասուն առ ու թալան,  
Եւր բերինք մըզալ եղենք լճան,  
Եւր բերինք կեռիկ կովեք կթան:  
Կին վիրցոց, էղոնց բոեց.  
— <...>ձըր բերան՝  
Բե տան, թէ տան»<sup>137</sup>:

Դատական խաղերը հիշեցնող ես մի արտաքին նշան. Մոկացի Հովհանի պատումում (գրառումը Գ. Հովսեփյանի) Դամիթը հարկածանների դեմ է գնում Փաշայի «գայիսոնով», որ թոնիրը խառնելու երկաթն է: Դրժիկոյի ձեռքին էլ տեսանք այդ «ցասման գալազանը»:

Պավիթ էլավ՝ Պատվու անթարուց,  
Ինչ թռնիր կը խառնին,  
Առից, բնկալ մըլ դաշտին,  
Կանչից Աստված, կինաց դախ Կուգրադնը ասքոր,  
Կինաց, ասքարին խասավ...»<sup>138</sup>

Շարունակությունը դատաստանի պատկերն է:

Բոնեց զեռլբաշին էն,  
Քակեց զականք ու շարեց ի ճակառ,  
Ու զմզրախ էն էրեց բընց չան խառան»<sup>139</sup>,

Հաջորդ դրվագը Մսրա կանանց կատակային-ծաղրական պարերն է. կանայք զարձյալ խաղ են կապում Կողբաղնի շուրջը, կամ զիմավորում են խաղով: Բոլոր գեպքերում երգը շրջանակենտրոն-կոմուսային է՝ նման Հովհան Մամիկոնյանի

136 Նույն տեղում, էջ 183:

137 Նույն տեղում, էջ 184:

138 Նույն տեղում, էջ 449:

139 Նույն տեղում, էջ 30:

«Տարոնու պատմությունից» նախորդ գլխում բերված հատվածն:

Խոլբաշին Հեղ բժ լե էկավ մեջ ըդ կնկոց. Հեղ բժ լե կասեն ու կը խաղեն: և Խոլբաշի շան, Խոլբաշի. Իդա զիեն զացիր քընց գել զազան, Ըն զիեն էկար քընց շուն մազան. Մըրազզ է վիզզ քընց շան խառան, Բերանդ է բաց քընց պատուհան, Բերնեղ կերպա քընց շորկի տրկի թան, Թանձներ վրեն կապած քարվանս:

Խոլբաշին տանց.

«Տո շընացած, դել անզգամ, Աս զիցա, թե Սասուն զաշտ ու զուրան էր. Զզիցա, թե քար ու կապան էր: Ըն ճեներ, օր նոր են էլած, դիվանական նն. Ուրանց նետ կա քընց ձիթիցի զերան, Օր կը զարկեն, բերան կը բացվեր քընց պատուհան: Ըն մանկտիք օր հետո էր, ժողվան լցվան ի խարաման<sup>140</sup>:

Պատկերն ակնհայտորեն պարերգական է ու դատական. Դատվում է Մսրա Մելիքի «քավության նոխազը»: Իրազրությունն արգեն ծանոթ է, ծազրի եղանակը հնադարյան Ամեն ինչ Հիշեցնում է 53 թվի (մ.թ.ա.) Խառանի դատը Պարթեները այս եղանակով ծաղրում էին Կրասոսի նմանակ Գայոս Պակինոսին Հայ էպոսում տեսնում ենք առաջավորասիական հնագույն դատական խաղի հիշողությունը: Երկու դեպքում էլ ծանակվողին շրջապատում են կանայք՝ Սելևկիայում պոռնիկներ, այստեղ՝ «շընացած, դել անզգամ»: Սելևկունիքներ ի դեմս Գայոս Պակիանոսի ծաղրում են Կրասոսի կնաբարո էությունը, այստեղ Մսրա կանայք ու Կողբազինը գունչկարանում են, չգրվելիք խոսքեր են փոխանակում: Հասկանալի է, որ վիպասացները մեզ հաղորդում են դատի ու ծաղրի հայ միջավայրում տարածված ձեւը: Ժողովրդական կատակերգության կոմուսային եղանակն է սա. շրջապատում են «քավության նոխազին» ու երգով գոնչկարանում: Եվ պատասխանողն էլ ընտրում է նման խոսքեր. «Էն մեզ մարթ

140 Նույն տեղում, էջ 30—31: Ընդգծումն իմն է:

խոսքաշեն էր, ըսեց. <...><sup>141</sup>: Եվ ամենակականը. Կողքադանի խոսքերում պարզ հիշեցնում կա, որ Յասնա տան «Ճճերը» (չահելները) «դիվանական նն», այսինքն՝ իր գլխին «դատ-բեղադ» են սարքել: Եվ նորից է կրկնվում «մղեր տուն, էրեր դիվան, մելիք գուս, էրեր շիվան» խոսքը<sup>142</sup>:

Կոմսացին-ծաղրական պարերպը, դատական բնույթով, պահպանված է վեպի գրեթե բոլոր պատումնային տարրերակներում, ստեղծաբանական միանման ու տարրեր փոփոխակներով: Պետք է կարծել, որ միշնագարյան պարերգական կատակերգության ոճն ու հղանակը, բովանգակովթյամբ ու ռճով շատ տարրեր «Արեգաթողի հանդեսի» խորային հատվածներից և դրամատիկական ֆունկցիայով նույնը, վիպասացները վերաբարադրում են բավական հայտատիրեն:

Կնքտիր կանչեցին ասին.

«Կուղրազին <...>:

Ի՞նչ իւ իկի լերան-լերան.

Տու կասիր՝ կերթամ Սասմաք,

Քառուսն աղջիկ բիրիմ արմագան,

Քառուսն կուռու կնիկ բիրիմ՝ էրկանը աւան,

Քառուսն հերկեն կնիկ բիրիմ՝ ուզու բանան.

Կուրաղին հսաց,

Արս չեր զիտը, նիտիրն ին գերան,

Էնունց խուռիրն ին կծան.

Ինչ կը զարկին մարդու չան,

Լև իէնին պատուխան:

Էնրտիր կասին.— Այս միր իրկնիր որտե՞ղ էն:

Էւար.

«Զիք իրենիր ինկած ին լռու դաշտ, կը խեժան»<sup>143</sup>...

Բանահավաքները շեն մոռացիլ հիշեցնել, որ այս նման երկխոսությունները երգեր են և վերաբարադրվել են երգով<sup>144</sup>: Նկատենք, որ բերված հատվածները դրամատիկական խաղի ավելի հին պատկեր են հուշում: Դատական խաղեսոր (որոնք մեզ ծանոթ են) պարերգական արամախոսություններ շունեն, թեպետ ըստ տեսարանակարգի (օպսիս) պատկանում

141 Նույն տեղում, էջ 184:

142 Նույն տեղում, էջ 186:

143 Նույն տեղում, էջ 449—450:

144 Նույն տեղում, էջ 450 (ծանոթագրությունը Պ. Հովհաննի):

և սպարերգական դրամայի տիպին: «Կողբազնի դատում» (մեզ համար պայմանական վերնագիր) կատակերգական խմբերգը (կոմու) կանանցից է կազմված և, ըստ էռթյան, միջնադարյան է կամ հին վարձակների պարերգի հեռավոր անդրադարձումն է: Դրա հնադարյան համեմատականը տեսանք ՍԵԼԻՀԻՒՅՈՒՄ: Կարծում ենք, այս դրամատիկական պայմանաձևը տարրեր է նոր ժամանակներ հասած դատական խաղաղի պայմանաձևից և ժողովրդական կատակերգության առանձին մի տեսակ է հատկանշում:

Ժողովրդական վեպի այս հատվածի ավանդման նախնական ձեռում դրամա տեսնելը թիրևս ծայրահեղություն է, բայց դրամայի անդրադարձում այնտեղ կա: Նույնը վերաբերում է վեպի բազմաթիվ պարերգական-դրամատիկական հատվածներին<sup>145</sup>, որոնցում լսելի են հին խաղերի ու խընջույքների հեռավոր ձայները:

Միջնադարում վեպերը պատմվել ու մասամբ երգվել են<sup>146</sup>, իսկ «Սասնա ծոերի» մեզ հասած պատումներում բավական մեծ տեղ են բռնում երգային, տրամախոսական և հատկապես երգային-տրամախոսական հատվածները: Վեպի առաջին՝ Գարեգին Սրբանձտչանի գրառած տարրերակում վիճական-պատմողական տարրը թիրևս ավելի մեծ է, բայց ոչ պակաս էական է գրառողի բերած հետևյալ տեղեկությունը: «1879 հունիս ամսույն՝ Մշո դաշտ Առնիստ գեղի երեսփոխան պ. Կրպոն ներկայացավ ինձ արժ. Օհան վարդապետի միջոցով: Սա կը պատմեր թե յուր վարպետը շատ բնդարձակն գիտեր այս պատմության, և թե մեջ ընդ մեջ

145 Աւա ծայրահեղությունը տուրք եմ տվել «Թատրոնը միջնադարյան Հայաստանում» գրքում (էջ 293—299): Վեպի ավանդման նախնական ձեռքում դրամա տեսնելու իմ ձգտումը վիճարեկել է բանագետ Սարգիս Հարությունյանը, «Եթե Հեղինակի հետ ինչ-որ վերապահությամբ կարելի է համաձայնվել, որ Հայ ներսուական բանահյուսության առանձին Էմուշներ թիրես թատերայնորեն ներկայացվել են միջնադարում, ապա բնավ չի կարելի համաձայննել այն տեսակներին, թի Հայկական ժողովրդական վեպերում դրամատիկական հայտուն գծերը պարագարուին ենթադրում են դրամատիկական նախահմբը («Լրաբեր Հասարակական դիտությունների», Երեման, 1979, № 5, էջ 108—109):

146 Մ. Արեգան, Երկեր, Հ. Ա., էջ 161:

շատ տեղեր ուսանալոր խաղեր կային, որ ձայնով կ'երգեր թէ՝ այդ վարպետը երկու վաշիկ աշակերտ ուներ, որոնք շատ կատարյալ սորված էին, և թն ինքն՝ բավական ժամանակ պատմած լինելով, շատ կտորներ մոռցած էր»<sup>147:</sup>

Տարոնցի Կրպոն Սրբանձայանին պատմել է վեպի՝ իր հիշողության մեջ մնացած ոչ ընդարձակ մի տարբերակը՝ առանց երգելու և տրամախոսելու, բայց չի մոռացել հիշեցնել Կողբագնի ու Մարա կանանց տեսարանի երգային-տրամախոսական լինելը։ Կրպոյի պատմածում սա միակ հատվածն է, որ Սրբանձայանը ներկայացնում է շափածո տողատումով<sup>148:</sup> Հատվածի դատական խաղ լինելը, ինչպես նկատեցինք, ակներեւ է։

Վեպի այս առաջին տարբերակում պատմողական տարրը մոտ երկու անգամ գերազանցում է տրամախոսականին։ Դա, եթե կարեոր համարենք գրառողի վկայությունը, գալիս է ավանդող Կրպոյից։ Բայց ահա այդպիս չէ Մոկացի նախոքում պատմածը (գրառումը Մ. Արեգյանի, 1886 թ.)։ Այստեղ երգն ու տրամախոսությունը հինգ անգամ ավելի տեղ էն գրադեցնում, քան պատմողական հատվածները։ Մի քանի տարբերակների համեմատությամբ ու թվարանական հաշվարկումով շի կարելի ինչ-որ օրինաշափություն որոշելու Մենք ենում ենք ակներեսությունից, որ ամեն զեպքում գիտական եզրակացության հիմք չէ։ Ուրեմն, թող համարվի այդ թեական կռահումը։ Տրամախոսական-երգային տարրը գերիշխանությունը փաստ է Մոկաց պատմումներում, և գիտենք, որ Մոկը (Մոկք) վեպի ճառագայթման կետերից ամենաէինտրոնականն է, եթե ոչ վեպի բնօրրանը<sup>149:</sup> Խնդիրն այն է, որ վեպին անուղղակիորեն անդրադանում է իր կազմավորման միջավայրի խաղային բանահյուսության որոշ առանձնահատկություններ, նաև զրամատիկական մողելներ։

Այն, ինչը կոչվում է էպոս, ժանրային առումով տարողունակ երևոյթ է և կարող է ցոլացնել բանավոր մտածելա-

147 Գ. Արվանձայանց, նշվ. աշխա., էջ 85 (բնդգծումն իմն է—Հ. Հ.)։

148 Նույն տեղում, էջ 99—100։

149 Ա. Սահմակյան, «Մասնա ծոերի» պատումների քննական համեմատություն, Երեան, 1975, էջ 31—39, 58—59, նաև՝ վեպի տարածման ու տեղակացման քարտեղ (40—41 էջերի միջին)։

կերպի շատ գծեր՝ զրուցի, առակի, երգի, խաղի «Սասնածոները» խոսքային արտահայտության ձևերի առումով բակը զրուցնքուն տարբեր է մեզ հայտնի էպոսներից։ Հարցը դրամատիկական պահերին և գործողությունների վերարտադրությանը չի վերաբերում։ Դա հատուկ է բոլոր էպոսներին ու վիպական տաքերին։ Հարցը վերաբերում է պարերգական տրամախոսություններով արտահայտվելու եղանակին, որը նախահիմքն է դրամատիկական հնագույն համակարգերի։ Իսկ վեպի սկիզբը՝ «Գառնամ զողորմին տը տամ...», որ օրջններգական ու ներբողային է (դիֆիրամբային), հուշում է ծիսականություն։ Խիստ էական հանգամանք է այս երգերը, կրկներգային բնույթի ձայնակցումներով, երբեմն մղում են պատարագային ու խնջույքային տպակորությունների, հիշեցնում ծիսական կցուրդներ (գերեր) և մտածել տալիս, թե մի գուցե Սասնա վեպը պատմվել է ֆրատրիալ-նախարարական խնջույքներում։ Այս կետում շենք ուզում կասկածել։

Երգով պատմելը հին ավանդություն է։ Հոմերոսյան պոեմներն ել այդպես են ալլանդվել։ Մոկացի Հովանը, ինչպես Գարեգին Հովսեփյանն է վկայել, շատ հատվածներ պատմել է երգով<sup>150</sup>, Այս ավանդությունը հայ իրականության մեջ գալիս է նախարարական խնջույքներից, որոնց տիպարանական պատկերը՝ ներբողական ճառերով ու կենացներ «ծաղկեցնելով» հասել է մեզ։ Հայոց խնջույքն այսօր էլ պարզ ծիսական մի պայմանաձև է և կրում է պարերգական դրամայի հատկանիշներ։ Այս ծեսը միանդամայն բնական ճանապարհով թափանցել է վեպ, որպես արտահայտության պայմանական-թատերային եղանակ։ Խոսքային վերաբետադրության, տարասներ (հետերոգենն) ձևերը՝ երգ, տրամախոսություն, տարասներ (հետերոգենն) պատմական կոնտեքստում, որպատմողական տարերքում և էպիկական կոնտեքստում, որքան անկախ և ինքնակա արժեքով։ Պատումը հաճախ ընդումիջարեկում է երգային տրամախոսությամբ, և դեպքերի պատճառահետևանքային ընթացքը հասունանում է երգից երգ, պատասխանից պատասխան։ Ակամա բախվում ենք

150 Նույն տեղում, էջ 67։

իսոսքի դրամատիկական գոյաձեւի, և դա օրյեկտիվ իրավիճակ է:

Դժվար է, իհարկե, դրամատիկական (էպիզոդների) ովարչ շղթայավորում համարել «Սասնա ծռերի» վիպական ամբողջությունը: Սա վեալ է՝ էպոսային աշխարհ՝ կամ էպոս որպես գոյաբանական համակարգ, որպես բնության ու մարդկացին կեցության վիպական որոշարկում (զետերմինացիա), աշխարհի էպոսային խորհրդապատկեր: Բայց այնուամենայնիվ իր էպոսային կենսափիլիսոփայությամբ հանդիրձ «Սասնա ծռերը» չի տեղափորվում՝ էպիկական արտահայտչակեղպի այն շրջանակներում, որ մշակել է Հեգելը հոմերոսյան պոեմների, որպես դասական էպիկայի, հիման վրա<sup>151</sup>:

151 Հմտությունը միշնադարյան Հայաստանում, էջ 293—295: Այս գրույիթի առիթով Արամ Պանալանյանը գրել է. «Ճ. Հովհաննեսյան այն կարծիքին է, թե «Սասնա ծռերը» պատումներում պահպանված երգային, խորհրդային, պարագային տրամադրության բազմաթիվ հատվածներ խոսում են այն մասին, որ «Սասնա ծռերը» էպոսային չել իր արտահայտության ձեռում» և որ՝ «այս ճաղոմքարդական վեպու դուրս է գալիս էպիկական հեղելյան դասական սահմաննեան շրջանակներից»: Չպետք է մոռացության տալ, ուսկըն, այն կարենը հանգամանքը, որ Շիշալ սահմանումը խարսխված է ՀՇ մենականուն «Ելիթականին» և «Ռդիստականին», մասմասը նաև խասանական «Օթրիք» վրա, որոնք Հեգելը բնորոշել է իրեն կափիկան պոեմները Վերջիններս, ինչոքն հայտնի է, մենարոկվել են որոշակի մշակման, ուստի և, հասկանալի պատճենում առար երկուում են ավանդմամբ: Մնջ հաւատ էպոսներից «Սասնա ծռերի» Հովհաննեսյանի կողմից վերն ակնարկված հատվածները այդ ավանդման արդարիքն են: Գրանք ցույց են տալիս, որ մեր կերպու ոչ թե «էպիկական պոեմ» է, այլ բառիս իւկական առումով՝ «ուղարդական էպոս» նույն այդ հատվածները հաստատում են մի կողմից «Սասնա ծռերի» հնագույն ասարքերը (այսպիս կոչված միներատիկ և խմբութիւնացին ակունքները), մյուս կողմից հավաստում նշա բուն ազդային ինչնօքինակ նկարագիրը («Պատմաբանասիրական» հանդեսը, Օրեան, 1930, № 1, էջ 267): Մյուն այս հոգվածի հրապարակումը զրուցել եմ վաստակաշատ բանագետի հնաւ «Մարերգ տեսականորեն համոզիլ են, — աւաց նաւ, — այց էպոսի հնաւ գոյուշը Հեգելը էպոսում զրամա օրունելու ձգություն կմեծ կարող բաժանել և շեմ էլ ուղում փակել մտքիք հանապարհը Փաստարկումները տրամաբանական են, բայց պետք չէ ծայրահեղության մեջ լնկնել: Գրքիդը՝ էպոսին պատմածներում ծայրահեղություն և որոշ հատվածներում կատ էպոսում

և նողիրն ավելի հստակ պատկերացնելու համար տարբերենք երեսլիքի երես շերտերը՝ վիպային հայացքը և վիպական խռովակերպը, ըստ այդմ սահմանազատելով էպոսային և Էպիկական հասկացությունները:

Թվում է, զրանք նույնը պետք է լինեն, և անհարկի բառախաղ ննք ստեղծում: Երբեք:

Էպոսային ասելով նկատի ունենք իրականության ընդգրկման տարածամանակային ժավալը, դիտման շրջանակները, գեղարվեստական կենսափիլիսոփայության որակը: «Սասնա ծուերն» այս առումով էպոսային է: Էպիկական ասելով հասկանում ենք խոսքային վերարտադրության եղանակը՝ արտահայտչական համակարգը՝ վերարտադրող սուբյեկտի զիրքը վերարտադրվող իրականության կամ օրյեկտի հանդեպ, երբ նպատակը պատումն է, ոչ թե գործողությունը: Այս առումով, «Սասնա ծուերը» մաքուր էպիկա չէ, քանզի այնտեղ ոչ սակավ նպատակ է զանում գործողությունը՝ վիճակների անկախ ներկայացումը պատումնային շղթայից (կոնտեքստ) դուրս Սա մոտենում է զրամատիկական եղանակին: Հեղելլյան ըմբռնման մեջ էպիկականի գաղափարը լուծված է էպոսայինում և սահմանված է մեկ սինկրետիկ հասկացությամբ՝ էպիկական: Դա պայմանավորված է Հեղելլու այնքան գրականագիտական վարդապետությամբ (գոկտրինա), որքան նրա փիլիսոփայական համակարգով, իրերի երեսությանությունն ամրողացնող մտածելակերպով: Բայց չմոռանանք, որ Հեղելի գեղագիտությունը հիմք է տալիս տարբերելու գեղարվեստական ներքին արտահայտչակարգը երեսլիքի ընդհանուր փիլիսոփայական դիտումից:

Այսպիսով, «Սասնա ծուերը» էպոսային է որպես գեղարվեստական-սիմվոլիկ գոյարանություն, աշխարհի խորհրդապատկեր և մաքուր էպիկա չէ իր պատմողակարգով: Այնտեղ պահանջում ենք տարասեռ օպակների արտաքին կապակցում-տեսնում ենք տարասեռ օպակների արտաքին հասդի, ծեսի ներ ոչ միշտ էպիկական հետեւղականությամբ: Խաղի, ծեսի ներ ոչ միշտ էպիկական մողելների անդրադառներն ակներեւ և դրամատիկական մողելների

գտիք, ինչ ուզում ես (այնահետ շատ բան կարենի է զտնել), բայց էպոսին գտիք, միշտ տարբեր ըրոշ վերապահությամբ ընդունելով այս պահանջը, կարձեռք մի տարբեր ըրոշ վերապահությամբ ընդունելով այս պահանջը, կարձեռք մի տարբեր ըրոշ վերապահությամբ ընդունելով այս պահանջը:

ին, թեսպետ դրանցով վեպը չի վերածվում ամբողջական դրամատիկական համակարգի Մեղ հայտնի չէ Սասնա վեպի թեմայով որևէ ժողովրդական դրամա Բայց գիտենք շղթայվածի առասպելի թեմատիկ կրկնությունը վեպի վերջին ճյուղում: Դա խենթացածի («ծուռ») կրուցն է անդրաշխարհային էակի՝ հոր ուրվականի հետ: Դավիթը հանդերձյալ աշխարհից դատում է կյանքից օտարված, երկրի կրծքին ծանրացած որդուն և ուղարկում հավերժական կալանավայր: Սա ճակատագրական մեղավորի դատն է՝ լուսավորված հնագույն ծեսի խորհրդապաշտական ցոլքով: Այստեղ չենք կարող չնկատել հայ հնագույն դրամայի վիպական անդրադարձումը:

### ԴՐԱՄԱՅԻՆ ԽԱՂԱՅԻՆ ՄՈԴԵԼԸ

Մի հեքիաթ կա թագավորի և օտար աշխարհից եկած դեսպանի այլաբանական դրուցի մասին: «Թագավոր մը վեր աթոռքին նստած էր, հեռու աշխարհն ելլի (դեսպան—Հ. Հ.) էկավ և առանց խոսելու թագավորի աթոռքի բոլոր կլոր եռ (շրջապիծ—Հ. Հ.) քաշեց, քերան խփից ու նըստավ: Թագավոր բան մը չհասկացավ, իշխաններ կանչեց բան մը չհասկցան»<sup>152</sup>: Եվ ահա, զտնվում է մի «իմաստուն ջուլհակ»: Պարզվում է, որ թել ոլորողը կարող է բացատրել շրջափակող գծի խորհուրդը: «Ջուլհակ քիչ մը կը մտածե, ապա կառնե երկու ճան (վեզ) և մեկ վառեկ ու կուդա: Կը հանե երկու ճանը, կը ճգե ելլիին առջեւ Ելլին կը հանե ծոցին և կը ցփնե ճանկ մը կորեկ: Ջուլհակ կը ճգե վառեկը, որ հետնույն կորեկներ կտցեց: Խազը վերջանում է: «Ելլին առոր վրա իր տրեխներ հապավ, գնաց: Հարցուցին ջուլհակին՝ թե ինչ էր այդ: Ասաց. «Այդ մարդ էկեր էր թե՝ թագավոր կուդա պաշարելու և կովելու քեզի հետ, պիտի խոնարհիս, թե՛ ճակատ պիտի տաս: Ես ճանը դրի իրեն առջեւ թե՝ զուր տղայի տեղ էր մեր առջեւ, գնացեք ճան խաղցեք, գուն ո՞ւր, մեղ հետ կովիլ ուր: Ճանած կորեկով հասկցուց

152 Գ. Մրգաննայանց, Երկեր, Հ. 1, էջ 459:

թե՝ անթիվ անհամար են մեր զորքերը։ Ես վառեկ մի հանի, որ կերավ ամենը, թե՝ մեր մեկը ձեր բյուրը կը շարդե»<sup>153</sup>։

Այս հերիաթ-զրուցը վկայաբերում է Վ. Բղոյանը՝ բացատրելու համար շրջանագծի իմաստը հայ ժողովրդական խաղերում։ Որպես ներփակության ու հոգու կաշկանդման խորհրդանիշ, շրջանագիծը նաև ծիսական պայմանաձև է<sup>154</sup>։ Դա, ինչպես ցույց են տալիս պարերգական զրամայի հնագույն վկայությունները (օրինակ՝ Հունականը՝ շրջանաձև հրապարակով), տիեզերքի երկրաշափական դետերմինանտն է և ժամանակի ու պատմության պարբերականության պայմանական երեակումը։ Օտարլածին կաշկանդելու և դատելու գաղափարը, ինչպես արդեն որոշել ենք, արտահայտվում է շրջանակենտրոն տեսքով ու տրամարանությամբ։ Սրվանձոյանի զրառած հերիաթում տեսնում ենք այդ նույնը ֆրամքիալ ու դատական խաղերի պայմանակերպ աշխարհի հանելուկային նշաններով։ Դւ պահն ու չուրհակը հանդես են պալիս օտար ախոյանի և հանգույցները լուծող դատավորի զերերով և զրամա են խաղում կամայական պայմանանիշերով։ Այս ամեստաֆիզիկան» մեզ համար կարող էր ոչ մի արժեք չունենալ, եթե շիմանայինք դրա խաղային զուգահեռները, մանավանդ դատական խաղի ֆիզիկական պայմանաձևը։ Գուցե անտարեր անցնեինք ֆիզիկական բնույթի շրջանակենտրոն խաղերի կողքով, եթե աշքի շզարնեին հին ծեսերի խորհրդանիշերը՝ շղթայլածություն, պատիժ, կրակ, շրջանաձև պտույտ և այլն վերշապես, այդ խաղերը տեղի են ունեցել Բարեկենդանի օրերին, մեծ պասին ու գարնանամուտին։ Մեր առջե դարձյալ մեռնող ու հառնող բնության գաղափարն է։

Շրջանակենտրոն խաղի ամենատարածված տեսակը կապվում է գոտու, որպես անձը շրջափակող, հոգին ու մարմինը օզակով, փակ ոլորտում պաշտպանող ու պաշարող առարկայի հետ։ Սա Արտաշեսի «ոսկեող շիկափոկ» պարանն է, որ նա «ընկեց ի մեջք օրիորդին Ալանաց» և կաշ-

153 Նոյն տեղում, էջ 459—460։

154 Վ. Բղոյան, նշվ. աշխ., շ. 2, էջ 22, Այ. Փրեզեր, նշվ. աշխ., էջ 276—277։

կանդեց իր Հռու տիրություն՝ Ուկն օղը ամուսնական մատանին է, առևանգման հին խորհրդանիշը երկաթի օղն, իջարկե, ավելի հին է, և, ինչպես տեսանք, Շիդարի շղթան էլ մի գոտի է՝ ժամանակը կաշկանդող, Երկրի ու ողու թարներված ուժը հավերժորեն ճնշող:

Դուռու, շրթայի և օղակի իմաստները խորհրդապաշտական ծեսիրում տարբեր դրսեություններ ունեն: Մի դեպքում բախվում ենք շրջափակման, մյուս դեպքում կենարունախույս ուժի անխուսափելիության ու անջուսալիության գաղափարն: Դարձյալ հիշենք Փափազյանի հավելումը Համելսի խոսքիրին, «ժամանակն իր շավից դուրս է սայմաշիլ, շղրան է պոկելու»: Միթուողիական նոր գաղափար է սաւ Շղթան, բայտ առասպելի, չի պոկելում, և օտարիմած ուժը չի աղոտագում, այլ պատվեւմ է կենարունի շուրջը այլուղղ մոլորակի նման, ինչպես պողպատալարը ձգող չնետված մուրճը մարդիկի ձեսքին:

Մեղ հետարրորդ խաղային մողելը վկայված է մի շարք ռենուններում: Լանտաշ'աղ, ջղախտի, նղախտի, լղատի, նինախտին, լախտի, գծալախտի, կենա լախտի, կարպետ լախտի, գոտու խաղ, շրջնաձեւ լախտի, շլանոցիկ, կրակտարոց, կուժ կրառուկ, տեղ խորուկ, շան կապ, դալլամ քռա և այլն: Թերեկով մեզ հայտնի գութե բոլոր անվանումները, ունեցում ենք, որ խաղի տրամարանությունն ու սիմվոլիկան տառություն են մեր հետապնդած ծիսային գաղափարի շուրջը: Անունների մի մասը պարզորեն ակնարկում է խաղի դրամատիկական բնույթը: Բանահավաքների բերած տվյալները բույց են տալիս, որ ժամանակին սա եղել է ծես, ինացացել են անգամ հեգուրականները և «Արեղաթողի հանդեսում», և աշխարհականների հետո Հետագայում միայն լախտախաղը վերածվել է տղայական ժամանցի: Պժգար է ասել, թե այս խաղի ձեռքից որն է ավելի հին՝ խմբակա՞նը, թե՞ անհատականը, խմբերի՞ բախումը, թե՞ խմբի ու անձի բախումը: Նկարագրված զատական խաղերում այս երկու գծերը միահյուսված են, մեկը մյուսի շարունակությունն են, բայց ի վերջը հանգը են անհատական ուժը զատելու զաղափարն: Լախտախաղը նույնագես դատական է, ավելի ճիշտ՝ պատժական, և պատիժն էլ, խաղը խմբական լինի, թե ան-

Հատակուն, բաժին է ընկնում անհատին, կախտախաղում բոլորը հավասար չեն տուժում, և վիճակները անհատական են՝ անձը անձի դեմ: Խումբը մեկի գեմ է, կամ մեկը խմբի դեմ, միևնույն է<sup>155</sup>:

Երջանակենտրոն խաղերը, բայտ տիպարանության, Վ. Բղոյանը ստորակարգում է տարբեր խմբերում՝ «կախտախաղեր»<sup>156</sup>, «Երջանակներ» հետապնդիշ խաղեր», «Խփել» խույս տալու խաղեր», «Ըոլորվանքի խաղեր»<sup>157</sup>: Մի քանի խաղեր էլ գրված են պատահական խմբերում: Այս բաժանումը մեր խնդրի տեսակետից այնքան էլ հարմար չէ: Ծիսական նշանները, որպես տիպարանական միավորներ, և խաղերի ընդհանուր տրամաբանությունը թելաղրում են այլ մոտեցում: Իսկ գործողության ընույթը հանգեցնում է մեկ ունիվերսալ վիճակի՝ կենտրոնաձիգ և կենտրոնախույս ուժերի հարաբերություն և բայտ այդմ էլ վիճակների ու լուծումների պարզից բարդ ձևերի: Այս տեսակի ցուցանակինտրոն խաղերը մեզ համար ամբողջանում են որւես մեկ խաղի փոփոխակներ (վարիացիաներ):

Ահա թերեւս ամենապարզունակը՝ Թուխ-Կրպոյի պատմած Բաղեշի հին խաղերից մեկը՝ «Սատանի մեռել»<sup>158</sup>: Վիճակ են գցում և խմբից մեկին թողնում մենակ: Պառկեցնում են նրան շրջանի կենտրոնում, բերանին, ոտքերին քարեր դնում, ասել է՝ շխոսես, շքայլես, և շուրջը պար բռնած պտտվում ու աղաղակում: «Արի», սատանա՛, զէս մեռել թաղա»: «Մեռյալը» վեր է թռչում և քարահալած անում պարերգակներին: Քարն ում որ դիպլում է, դառնում է «մեռյալ» ու պառկւմ շրջանի կենտրոնում: Խաղը մասամբ հիշեցնում է «Արեղաթողի հանգեսի» վերջը: Թվում է, այս խաղի մի տարրերակն է նրվանդ կալայանի գրառած «Դալլաք Բորան»՝ կոռվա խաղ, անվան ու բովանդակության կապը անհասկանալի: Մի փոքրիկ փոս են փորում, վիճակով խմբից դուրս

155 Այս տրամաբանությունն է գործում նաև ֆուտբոլում: Մասնմեկց տասնմեկի շեմ, բայց գնդակի մոտ միշտ երկու անձի բախում: Դրամայի պարզ օրենքն է, անկախ շարժող անձանց քանակից, բախման կետում հանդիպում են երկու անձ:

156 Վ. Բղոյան, նշվ. աշխ., Հ. 2, էջ 90—97:

157 Նույն տեղում, Հ. 3, էջ 58—62, 67—72, 106—107:

158 Նույն տեղում, էջ 64:

մնացածը՝ մի ուժը՝ դնում է փոսում, շրջապատռղները խրփում են նրան ու փախչում, իսկ կաշկանդվածը, եթե կարողանում է իր ավելի շուտ խփելով կանխել մեկն ու մեկի հարվածը, ազատվում է փոսից, խփվածն է փոսն՝ բնկնում<sup>159</sup>, նույնն է «Քթով փոսին»՝ տարածված Ղարաբաղի հաճերի մեջ (գրառումը Օ. Եղանյանի): Այստեղ փոսը փոխարինված է մեկ մետր տրամագիծ ունեցող շրջանագծով: Գրա երկրորդ տարբերակն է «Թթկովին», դարձյալ Ղարաբաղի խաղը Շրջանագծում կաշկանդվածը՝ պաշտպանում է գետնին դրված գլխարկը՝ իր անձի սիմվոլը, շրջապատռղները շանում են ոտքով շրջանից հանել գլխարկը: Իսկ Բարագետի «Կուժ կոտրուկ» խաղում (Ե. Լալայանի գրառում) խումբը պարանով է շրջապատռում պատժողի վիճակը կրողին, և վերջինս, եթե հանկարծ պարանն աղատվում է, պարանով հալածում է շրջապատռղներին<sup>160</sup>:

Ծղթայվածության ու պատժի գաղափարն ավելի առարկայական է երկում Վանա «Ծնողիկ», «Զվանոցիկ» (գրառումը Ե. Տեկանցի)<sup>161</sup> և «Ծան կապ կամ կատղած, շուն» (գրառումը Վ. Վարդապայանի)<sup>162</sup> խաղերում: Հրապարակի կենտրոնում տնկում են մի ցից և ծայրից կապում երկու մետրանոց պարան՝ «շան կապը»: Վիճակով խմբից դուրս մնացածը բռնում է պարանի ծայրը, մյուսներն իրենց թաշկինակները դնում են տնկված փայտի մոտ ու աշխատում են աղատել թաշկինակները, առանց շղթայվածից հարված ստանալու: Ծղթայվածը պտտվում է փայտի շուրջը, իսկ շրջապատռղները՝ նրա շուրջը, շանալով բոլոր միջոցներով ընկճել նրան: Հարվածներ են հասցնում, շալակն են թոշում, «Պարառեալ խումբն,— պատժում է ականատեսը,— շուանեաց խարազանաւ մատշի ի շնորհաւորել զշուանակալն: Մի կապած շան բոլորտիք եթէ 5—10 արձակ շունք ժողովին, որպէս քաղաքաւարութեամբ վարեն ընդ կապեալ շուն: Սորա եւս ընդ կապեալն առնեն: <...> օրինակի աղագաւ 10 ոշխարի շունք, որք ամեն աւր ի մասին երթան ի հօտ ոչ-

<sup>159</sup> Նույն տեղում, հ. 2, էջ 96—97, հ. 3, էջ 72:

<sup>160</sup> Նույն տեղում:

<sup>161</sup> Նույն տեղում, էջ 69—72:

<sup>162</sup> Նույն տեղում:

խարաց, ի սոցանէն մինն ըռնէ եւ կապէ, տես թէ նորա սիրելի, ծանօթ եւ եղբայր շունք ինչ կերպիւ վարեն ընդ կապեալն օտար. անծանօթ, իրրեւ թշնամի համարելով, յարձակին ի վերա, հաշելով, խածելով և խեղդոց տալով: Ահա մեր իւարազանաւ պատրաստի խումբ այսպէս վարի ընդ շոււանակալ անձն, որ որպէս կապեալ համարի ի մէջ նոցա»<sup>163</sup>,

Ինչպէս նկատում ենք, Երեմիա Տեկանցն այս խաղը մեկնում է որպէս բիոլոգիական, ոհմակային բնագգի՝ դրահճ՝ վերում ամրոխի ու անձի հարաբերության մեջ: Առանձնաւ ցած կամ սոցիալ-բարոյական այլ դիրքով ներկայացնել անհատի երևոցթը միջավայրն ընդունում է թշնամարար, առ ունձնացածի կամ օտարվածի մեջ տեսնելով իր թշնամուն: Եթե խաղը կյանքի զուգահեռն է, ապա այստեղ դրան տրը վում է ոչ թէ նշանային, այլ կենսահոգեբանական բացատրություն: Գրառողն ուշադրություն է դարձնում, սակայն, մի նուրբ սյահի վրա: Շղթայվածը եթե երկար է մնում այդ վիճակում, «պարառեալ խումբէն» մեկը կանխւում է յուրացիթներին, ասելով՝ «Հերի՞ք է, Հերի՞ք է, խալա՞լ ի, խալա՞լ ի»<sup>164</sup>, խաղը թվում է բավական կոպիտ ու բարբարոսական, բայց նրա ներքին տրամարանությունն էլ որոշ զգուշություն է թիւլաղրում: շրջապատողներն անզգուշ հարվածներից խռոսափում են, որպեսզի, եթե իրենք հանկարծ դառնան շվանակալ, զրա հատուցումը չստանան: Տեկանցը մի համեմատության էլ է դիմում, որ մեզ հիշեցնում է Շիդարի զրուցը՝ «ինչպես շարբինք կռանաւ հարկանեն զերկաթն»<sup>165</sup>, — գրեւմ է նա, զուցե պատահաբար, բայց նրա համեմատականը տրամադրում է:

Մի այլ ականատեսաւ ապուշեխցի ուսուցիչ Պետրոս Գահվիճյանը նույն խաղի Ակնա տարբերակում («Լող պահուկ») շվանակալի վիճակում տեսնում է ծաղրվող խենթի:

Մեծ բարեկնդանին ի քաշարն Ակնա,  
Հող պահուկ անվամբ խաղալ մը տեսա.

163 Մատենազրան, ձեռ. 4184, էջ 165 ա:

164 Նույն տեղում, էջ 162ա:

165 Նույն տեղում, էջ 161 բ:

Բարախն սիրուը, քրտինք վար վաղեն,  
 Սուիս մ'ըն է ևլին շառադույն ճակատեն.  
 Մերթ լա կարներ և մերթ ձիծաղի,  
 ևննդ է ան՝ մ'ըսեր, զի խաղ խաղցվի:  
 Վերջապես ելլեն, ճիգ մ'ըն ալ թորին,  
 Չեղավ նե ուրիշ կերպեր ալ փորձեն,  
 Մինչև որ գարնե հոգնողին մեկը,  
 Քաշության պասկ ձեռքն առնե ձաղկը<sup>166</sup>:

Խաղի հիմնական տարբերակներում պատժի գաղափարը  
 և առարկայական է, և խորհրդանշական թայց հայտնի է մի  
 մանկական խաղ՝ «Լախտիով պուտ», որտեղ պատժիք Փիզի-  
 կականից հանգում է սիմվոլիկ-խորհրդապաշտականի: Խաղը  
 կոչվում է նաև խարույկ: Շրջանագծի կենտրոնում խարույկ է  
 զառվում կամ դրվում է մի քար, որպես կրակի սիմվոլ: Անհա-  
 վասար թվով (կենա) տղաների խումբը միմյանցից մեկ քայլ  
 հեռավորությամբ նստում են կրակի շուրջը: Նրանցից մեկը,  
 որ շրջանում տեղ չունի, լախտը ձեռքին երեք անգամ ձախից  
 աջ, պատվում է նստողների շուրջը և անսպասելի կերպով  
 մեկին խփում է լախտով, լախտը զցում նրա զիրկն ու փախ-  
 շում: Նա պետք է պատվի ու նստի լախտի հարված ստա-  
 ցողի տեղում, իսկ վերջինս պետք է նրան լախտածեն անի: Եթե  
 չկարողացավ խփել, լախտը պետք է նետի հաջորդ նըս-  
 տողի զիրկը և փախչի: Եթե փախչողը խախտում է շրջանա-  
 գիծը, նրան «Հրկիզում» են. զիմից մի մազ են պոկում ու  
 նետում խարույկը<sup>167</sup>: Սա արդեն ակնհայտորեն հեթանոսա-  
 կան մերապրուկ է: «Այն պատկերացումը, որ մարդուն կա-  
 րելի է կախարդել նրա մազափնչը միջոցով,— գրում է Ֆրե-  
 դերը, — տարածված է գրեթե ամբողջ աշխարհում»<sup>168</sup>: Ըստ  
 այս նախապաշտամունքի, մազը եթե ընկավ կախարդի  
 ձեռքը, մազի տիրոջ կյանքն էլ նրա ձեռքին է. մազը աղոթե-  
 լով ու թաղելով կարելի է մարդուն մահվան մատնել քսան

166 Կ. Ճանիկյան, Հնությունը Ակնա, Թիֆլիսի, 1895, էջ 175 (բերում  
էմ քատ վ. Բղոյանի, Հ. Յ., էջ 69): Լող նշանակում է կուուրը հարթեցնե-  
լու դրան (Հ. Անայյան, Հայերեն արմատական բառարան, Հ. Յ., էջ 292):

167 Վ. Բղոյան, նշվ. աշխա., Հ. Յ., էջ 57:

168 Ջյ. Փրեզեր, նշվ. աշխա., էջ 268:

օրիվա ընթացքում «Հայերը, — շարունակում է Ֆրեզերը, — ուն չեն նետում կորիված մազերն ու եղունգները (նաև ընկած առամները), այլ թաքցնում են սրբազան համարված տեղերում (եկեղեցու պատի ճեղքում, տան առաստաղը կրող հիմնաւիշան սյան ճեղքում)»<sup>169</sup>: Մազն այրել շրջանագծի կենարնում արված խարույկի մեջ, թերևս նշանակում է զոհի մարդուն հիթանոս մի աստվածության, նայած ում տիրույթն է հնիթագրվում շրջանագծում, կամ ինչ ոգի է պաշտպանված այնտեղ:

Երշանակենարոն խազերի արտաքին նշանները շատ տարբեր եւ հակառական (գուցի և միամնական, եթե մեր իմացությունը բայց արարի ըմբռնելու) աղերսներ ունեն: Շատ բան մեղ անհայտ է: Բայց որոշակի է, որ այս խազերն ինչ-որ անխորհրդարք ժամանց չեն կամ զուտ մարզական միջոցներ: Սիմվոլիկան շատ կողմէն բռում է չվերծանված, և դա, հառկանալի է, չի նշանակում, թե խազերի իմաստը սահմանափակվութիւն է առարկայականությամբ:

Մեր խնդրի տեսակետից ամենից ավելի մշակված է երեւում, եթե կարելի է այսպիս անվանել, զասական լախտահազրությալ ֆիզիկական բախում, խաղացողների կողմէ զարթագիծ, բայց ոչ ֆիզիկական պարտությունն: Ամենաշնորհթագրականը, որպիս խմբի ու անհատի հարաբերությունն, «կենոտ լախտին» է: Վիճակ են հանում, մեկն թողնում շրջանի մեջ, գոտին զնում շրջանում՝ ծայրը դուրս Հինդից յոթ հոգի շրջապատում են «թուրան (լախտը) պաշտպանողն», աշխատում նրան շփոթեցնել և փախցնել «թուրան»: Ծախցնութը բոլորին քշում է շրջանագծի մեջ և սկսում լախտով ծեծել այնքան ժամանակ, մինչև ներսիններից մեկին հացողիք ըստքով խիել ծեծողի ոտքին: Այստեղ գծամեջ է մտնում ծեծողը և դառնում լախտը պաշտպանող՝ Խաղողի մտնում ծեծողը և դառնում լախտը պաշտպանող՝ Խաղած են, ուշադիր: Եթե դիտողը չի տեսնում շրջանագիծը, տպակորությունը դրամատիկական է: մարդիկ շարժման մեջ են և միաժամանակ զսպված, ներսինները առաջ են զցում

169 Նոյն տեղում, էջ 269:

170 Նոյն տեղում, հ. 2, էջ 95:

ոտքերը և մի ոտքը պահում են շրջանագծի ներսում, առաջանում է կաշկանդված ու շարժուն վիճակների հակադրություն. մեկը բոլորի գեմ, բոլորը մեկի դեմ, և՝ ոչ մի անկարգ իրարանցում: Թվում է, թե շրջանագիծը մի կախարդական օղակ է, և այդ օղակը բոլորին դնում է ներքուստ սևեռված վիճակի մեջ: Տարօրինակ է լախտը լինել անվանելու սովորությունը. մարդիկ կամ երկաթն են պաշտպանում կամ երկաթով հարձակվում: Երկաթի պաշտամունքի հեռավոր հիշողությունը կա այստեղ: Ո՞վ դիտե, թե նախկինում ինչ իմաստ է արվել այս զործողությանը: Տեկանցի ակնարկը դարքինների կոնաճարության մասին գուցե իմշ-որ բան հուշում է, բայց ավելի լավ է շատ հեռուն չգնալ մեկնություն: Ներում: Ուղղակի առնչությունը շղթայված երկաթի կամ մուրճով երկաթը կուելու ծիսական ավանդության հետ գուցե մի օր պարզվի մեզ համար:

Դրամատիկական առումով ավելի հետաքրքիր ու տեսարանային է խմբական լախտախաղը: Խաղում են երկու խըմբով՝ ներսիններ և դրսիններ: Ներսիններից յուրաքանչյուրը պաշտպանում է մեկ թուրա, խմբերը դրսից կամ ներսից նվազում են՝ մեկին ձեռքով դուրս են քաշում գծից, դերի պահում, մյուսին դրսից են ներս քաշում, փոխվում է շղթայվածների կամ «կոնաճարուղների» քանակը: Շրջանագիծը միշտ մնում է կաշկանդող միջոց. ներսինները պայքարում են առանց մի ոտքը շրջանագծից հանելու, դրսինները առանց շրջանագծի մեջ մտնելու, խփում են միշտ ծնկից ներքե, և երկու կողմից ել աշխատում են պակասնեցնել հակառակորդի քանակը. երկու կողմից ել շղթան կտրելու պայքար է զնում: Տեսարանը զառնում է ավելի դրամատիկ, երբ գծամիջում մնում է մեկը և իր միակ լախտով, առանց շրջանագծից դուրս գալու հարձակվում է շրջապատողների վրա, մինչեւ որ մեկը դրսից կարողանա խփել նրա ոտքին: Շղթա են կռում, շղթա են կտրում, կաշկանդման ու կաշկանդումից աղատվելու պայքար է տեղի ունենում, պտտվում են շրջանագծի շուրջը, տեղերը փոխում, իբար շփոթեցնում փոշոտ գլխարկները միմյանց երեսի զարկելով: Կարդում ենք Պոռշյանի նկարագրությունը: Գյուղի քանանան լախտախաղի մեջ է, թռչկոտում է «Ճժի» (գծի) շուրջը, աղմկում:

ԳԵՇ, օռհնա՞ծ, մի թիշ էլ կարգիս խնայեցեք, կամաց տվեր է՝—ասում էր մեր տեր հայրն ու էլ հետ թոշկոտում ճմի շորս կողմէ, աշխատակով լախոր բանով ձեռքից խելուու

— Ոչինչ, տերտեր չան, բարեկենդան օրեր ա, խելքներս կորել ա, — պատախանում էին մեր իշխաններն ու իրանց խաղի հետ ընկնում<sup>171</sup>,

Սրվանձտյանի վկայությամբ, այս խաղը կոչվում է նաև կրակտարոց: Ըստ Բդոյանի, կրակտարոցն այլ խաղը<sup>172</sup> Բայց մենք արգեն նկատել ենք, որ շրջանակենտրոն խաղերի շատ տարբեր անուններով են վկայված: Կրակապաշտության հիշողությունը այս խաղում, եթե ելնենք մեզ հայտնի գրառումներից, չի երևում: Փա կարեոր չէ, կարեորը լեզվական թեկուզ մեկ վկայությունն է, որ ինչ-որ մի աղերս է հուշում: Եթե կա երկաթի գաղափարը, հոգու տիրույթի ու շրջափակման գաղափարները, ուրեմն կրակն էլ հեռու չէ: Ուշագրավ է Բդոյանի այն բացատրությունը, որ այս խաղում պայքարը տեղի է ունենում հոգին կրող առարկայի շուրջը, և այդ առարկայի անկումը խորհրդանշում է հոգու կործանութը<sup>173</sup>: Հոգին կրող առարկան գոտին է՝ անձը պահպանող սիմվոլը: Հետաքրքրիքը է, որ կենտ լախտախաղի ժամանակ գծամիջի խաղացողը պաշտպանում է այնքան լախտ, որքան զրսինների բանակն է: Եթե արամաբանությանը հետևենք, զրսինները պայքարում են օտար տիրույթում կաշկանդված իրենց հոգիների համար: Սա, իշարկե, ենթադրություն է. գուցե խաղն այլ իմաստաբանություն ունի: Անվիճելի է առարկա և անձ հասկացությունների սկզբունքի նույնացումը, ինչպես աստվածության մարմնավորումը որևէ նյութի կամ առարկայի մեջ՝ հեթանոսական պաշտամունքի հիմքերից մեկը:

Լախտախաղը բոլոր արտաքին հատկանիշներով ֆիզիկական գործողություն է, բայց սիմվոլիկ առարկայի ֆիտիշացումը մտածել է տվել, որ այստեղ վիճարկվում է հոգու իրավունքը: Եթե արտաքին հատկանիշներով դատենք, կը տեսնենք, որ խաղի բնույթը զատական է, նույնիսկ թվում է, թե կրկնվում է «Շահ-Խան-Փաշա-Ղաղի» խաղը հուզժ պայմանականորեն, միայն գրությունների սիմվոլիկ վերարտագրությամբ և սիմվոլիկ նշանների միջոցով: «Այս խաղն-

171 Պ. Պոռշյան, Երկերի ժողովածու, Հ. 1, էջ 76:

172 Վ. Բդոյան, նշվ. աշխ., Հ. 2, էջ 21:

բում,— գրում է Բղոյանը,— ամենանախնականը, որ մենք կուհում ենք, ծիսական շերտն է, Մեզ թվում է, որ դրանք նախապես խաղ շեն եղել, այլ միստիկական զործողություններ, որ գոյանալու էին ոգեպաշտական հողի վրա»<sup>173</sup>: Բայց փոքր-ինչ պարզունակ է թվում Բղոյանի և նվազագրությունը, թե շրջանագիծը տոհմի տնակն է խորհրդանշում կամ պահեստը<sup>174</sup>: Շրջանագիծը, եթիւ եննենք տիեզերքի ու պատմության հնագույն պատկերացումներից, որ ամբողջացրել է Պլատոնը, տիեզերաբանական դետերմինանում է: Մեկնություններ կարող են շատ լինել: Մեզ համար ամենաեականը հնագույն դրամայի մոդելն է, հնագույն ծեսերի ունիվերսալ պայմանագիծը, որոնց մասին արդեն խոսել ենք:

### ԱՌԻՐՈ ԿԱՐԱՊԵՏԻ ՈՒԽՏԱՎՈՐԻ

Եւ ինքն էր պահեցող յոյժ և  
միայն զարկչուր շափով և սակաւիկ մի  
հաց ձաշակէր <...> և պարան կա-  
պեալ էր ի սենեկի իւրում, և յորժուած  
տքնէր և աշխատէր, անկանէր լանչօրն  
ի վերաբ պարանին և սակաւիկ մի  
ննչեր:

Հռվիան Ասկերեանի վարելց,  
Մատևադարան, ձեռ. 4512:

Հայտնի չէ, երբ էր, որ քրիստոնեական սրբավայրերում հայտնվեց միջնադարյան խաղաճրապարակների ասպետք՝ սրբի լուսապսակով և այժմորուս «զինակիրած-ծաղրածուի» ուղեցությամբ: Հին է այս ուխտը, թե նոր, չգիտենքր: Գիտենք, որ Գրիգոր Լուսավորիչը «կարգեաց ի նաւասարդի մեծ կրն տանել սուրբ Կարապետին և Մկրտչին Յովհաննու»: Փահվեանը դալիս է Սուրբ Կարապետի վանքից և մեր առջև բացում է կյանքի ու աշխարհի միջնադարյան պայմանագույն պահանջմանը, մարդկային վիճակների հակադրամիտունական ուստաձեր, ոչ որպես որամատիկական ընթացք, այլ ընթացք ուժմատնեալային արշակուր և առ հնարամիություններ և առ առամիություններ և առ

173 Հայութակ Հայութ անօպուտ:

174 Հայութ անօպուտ:

Հարթության վրա է. ճիշտ է՝ շրջանաձև հրապարակում, բայց ոչ նրա «կախարդական» շրջագծում, այլ երկնքի ու երկրի միջև:

Լարախաղացությունը հին արվեստ է՝ տարածված Արեւի լեռում, Առաջավոր Ասիայում, Հռոմում: Հայ մատենագրության մեջ այս երկույթի ամենահին վկայությունը տալիս է Դավիթ Անհաղթի «Սահմանքը». «Եւ են ընդունայն արհեստութիւնք՝ լարախաղացութիւն, ձողախաղացութիւն, որք ոչ օգտեցուցանեն զկենցազս և ոչ վնասեն»<sup>175</sup>, Սրբության ոչ մի ակնարկ: Ըստ հունասեր փիլիսոփայի, նաև ըստ միջնադարի պաշտոնական գաղափարախոսության, ոգու աշխարհից դուրս է տեսականորեն և գործնականորեն շեզոք կամ անօգտակար աշխատանքը: «Ընդունայն» նշանակում է անխորհորդ և անտուրիկա՝ գործողություն կամ պատկեր, որը չունի դիտման օբյեկտ, նշանակյալ, չունի իր ակներեսությունից դուրս այլ իմաստ: Վերջապես, դարձյալ ըստ Դավիթ Անհաղթի, «արուեստ ունակութիւն ուն է և գիտութիւն» և «զամենայն ինչ ըստ կարգի առնէ»<sup>176</sup>, ի՞նչ է լարախաղացությունը այս առողմով: Դա ժողովրդական «սրանչելիք» է՝ հրաշագործություն, որ խախտում է իրերի բնական ընթացքը, աստվածային նախասահմանությունը, ստեղծում աշքի ու բանականության համար արտառոց պատկեր: Ըստ Արոն Գուրեմիշի, այս տեղից է ծագում միրակլի գաղափարը<sup>177</sup>: Լարախաղացությունը ժողովրդական սրբի հրաշագործությունն է, որ ստեղծում է կյանքի «ընդունայն» մի պատկեր: Միջնադարում ժողովրդական կրոնասիրությունն ըստ էության հակառակած չէ պաշտոնականացված հավատին, բայց նա ստեղծում է իր տեսիլքները, հաշտեցնում երկինքն ու երկիրը<sup>178</sup> և իր հրաշագործության ասպետին, որը հնագարից է գալիս, տանում է քրիստոնեական սրբի դուռը, նրա գլխին դնում Աստծո որ-

175 Դավիթ Անյաղը, Սահմանք իմաստափրութեան, աշխ. Ս. Արեւատյանի, Երևան, 1960, էջ 104:

176 Նույն տեղում, էջ 102: Հմմտ. Գ. Օգանեսյան, Օբ эстетической ориентации Давида Непобедимого, сб. Философия Давида Непобедимого, М., 1984, с. 207—214:

177 Ա. Գորեաւի, նշվ. աշխ., էջ 318:

178 Հմմտ. Նույն տեղում, էջ 275—277:

դուն մկրտողի աջր: Հետեաբար, «ընդունա՞յն» է արդյոք լաւ-ըսկաղացի՝ այս էքսցենտրիկ աստվածասիրի գործած հրաշքը:

Հայ լարախաղացը, ինչպես ժողովուրդն է ասում՝ Փահ-իւանը սուրբ Կարապետի ուխտավորն է. նա դալիս է քրիստոնեական մարդարեի՝ Հովհաննես Մկրտչի տաճարից: Բայց այս Մկրտիչը ժողովրդականացած է և հայացված. նա հանդես է դալիս կարծես ոչ այն դիմագծով, ինչ Հովհաննես Նախավկան համարբիստենեական միջավայրում: Եթե սա Բագամանի տաճարի սուրբն է, ուրեմն հրաշագործության ասպետն էլ մկրտվել է եփրատ-Արածանիի ջրերում: Դա հայտնի չէ: Զգիտինը՝ որ դարերում է ժողովրդականացել ու հայացել Հովհաննես Մկրտիչը: Վաղ միջնադարից վկայված կարապ բարը, որ նշանակում է «Հորդորիչ ճանապարհի», առաջընթար սուզո՞ւանդակ, նախընթաց աւետար, սեփականեալ անոն Հովհաննես մկրտչիւ<sup>179</sup>, ժողովուրդը դարձել է հատուկ անուն, Հետին դարերում՝ «Մշու սուլթան սուրբ Կարապետ»: Գրական վկայություններին նայելով զդվար է տարրերել հատուկ ու հասարակ անունները, քանի որ ձեռագրերում փոքրատափի ու մեծատափի խնդիրն անորոշ է. Մկրտիչն էլ կարող է գրվել փոքրատափ, Քրիստոսն էլ: Պայմանականորեն կարապիտի ժողովրդականացման փաստ կարող ենք համարել Հայսմավուրբը, որը որպես տոնացույց մատյան ամբողջացել է X դարից (914 թ.)<sup>180</sup>:

Այսպես, Գրիգոր Լուսավորիչը հեթանոսական «առասպեկտի» փոխարեն հաստատեց Հովհաննես Մկրտչի տոննը: Բայց ինչպես վարվեց նա նավասարդյան «աշխարհախումբը» զարդարող գուսանների հետ Նրա՞նց էլ մկրտեց, կամ նրա՞նք էլ Բագավանում մկրտվեցին: Ժողովրդական ավանդությունը Կարապետին նույնացնում է Տարոնի պահապան երկարամագ սրբի հետ, որը ուազմի աստվածություն է՝ կանգնած հայրենյաց պաշտպանների թիկունքին: «Եւ յանկարծակի տեսին այր մի դիմատոր,— կարդում ենք «Տարոն պատմությունում,— որ լոյս փալլէր ի հերանց նորա, և զա-

179 Նոր բառպերը հալկաղեան լեզուի, հ. 1, էջ 1064:

180 Մ. Ավելալեզան, նշվ. աշխ., էջ 26:

Ճըս թշնամիացն կուրացուցաներ: <...> սուրբ Կարապետն մենք ի թիկոնս համսեալ կայ, և ընդ մեր՝ ինքն պատերազմի»<sup>181</sup>: Տրամարանական է, որ Հարշագործության ասպետը գնաց Տարդն և գտավ իր մկրտչին Ծիրինկատար սարի կանալ ստորոտում, ինն աղբյուրների մոտ, «Ինչնակնեան» մեջ յանի տեղում, որ թաղված էր Հովհաննես Մկրտչի և սուրբ Աթանազինեսի սուկերաց մի մասը (Բաղավանից հետո կամ տուաշ, Հայտնի չե) և Հիմնվել էր Գլակա վանքը (VI դ.) «Մշո սուրբ Կարապետը»: Ավանդությունն ասում է, թև Զենոռ Գլակը «Ուաղաչեր մեր սուրբ Էուալիովորչին, որ հոն մնա, որ կոսիրեին մնալ սուկերք կարուտյալ Աթանազինեի և Հովհաննու»<sup>182</sup>: Ենցն ավանդությամբ, այս վանքի ուխտավորներն են եղել միջնադարյան Հայատանի երգիշները, գուսաններն ու լարախաղացները: Ենթադրվում է, որ Սայաթ-Նովան էլ եղել է այստեղ: «Սուրբ Կարապետի կարողութեանով սովորեցա քամանչեն ու շոնդուրն», — ասում է ուշ միջնադարից եկող մեր բանմասեղծը»<sup>183</sup>:

Սուրբ Կարապետը Համաքրիստոնեական մի գաղափարի նորոգումն է ազգային-ժողովրդական հողի վրա: Լարախաղացներին հովանավորողի ու ձիրք տվողի դերը նրանն է: Թիգեմս սխալ չե ուսումնասիրողների ենթադրությունը, որ այս հասկացության մեջ հեթանոս մի աստվածության հուշ է ամփոփված: Հայ լարախաղացի զգեստավորման և խոսքերի մեջ խոսում է քրիստոնեական սուրբը: Լարախաղացը Հայտնը վում է կարմիր կամ ծիրանագույն ատլասի շողօղում արխալուղով, ինչպես Քրիստոսը կարմիր քղամիղով խալ բարձրանալուց առաջ: Սրբալուղը կոճկված է և պարանոցի մոտ բաց, առանց կոճկեների, պարանոցը զարդարում են մետաքսեր, ճերմակաթույր, ժանեկաղարդ կրծկալ-օծիքը և հուռություն ժամապակենները: Հուսութեանը, որ եռանկյունաձև են, ների ժամապակենները:

181 Յավիկոննեան, նշվ. Հրատ., էջ 106: Այս վկայությունը բերված է Ա. Ղանալանյանի «Ավանդապատումամ» (էջ 393): Ավելի օքն ավանդություն, որ պատասխանի մեր Հարցագրմանը, առայժմ հայտնի չե: Ավանդություն, որ պատասխանի մեր Հարցագրմանը, առայժմ հայտնի չե:

182 Ա. Ֆականյ, Այցելություն ի Հայաստան. 1878 թ., Երևան, 1885,

էջ 56:

183 Սայաթ-Նովան, Խաղեթ, Երևան, 1859, էջ 10:

գարդարված են գումավոր ծոպերով, հեռվից նմանվում են՝ ծաղիկների։ Նրանցում թղթեր կան, որոնց վրա աղոթքներ են գրված նարեկացուց կամ «Ժամագրքից»։ Հուսությները նրա թալիսմանն են<sup>184</sup>, Պարզ երեսում են բնության հեթանոսական պաշտամունքի և քրիստոնեական հավատի նշանները։

Ներկայացումն սկսվում է զուռնա-գնոլի աղմկալից նժարածությամբ, կարախաղացը վերցնում է հավասարակշռության ձողը՝ «թարազուն» և գանդաղ ու հանդիսավոր արջանում թեք լարի վրայով։ Չողափայտը և նրա ուղիղ մարմինը խաչ են և առամում։ Թվում է, այս ակնհայտ պատկերը նաև ներքին լմասություն է և ննթաղրում։ Ճշմարտության գաղափարը մարմնավորվում է այստեղ մարդու, որպես տիեզերքի կենտրոնի, տիեզերական հավասարակշռությունը կրողի և արդար դատաստանի կշեռքը պահողի տեսքով, իսկ խաչը համաշափության ու հավասարակշռության երկրաշափորեն ամենաճշգրիտ պատկերն է։ Կարախաղացը, վեր բարձրանալով, սրբազն արարողություն է կատարում, քանզի իր գործը նա համարում է ապաշխարանք, սրբին ծառայելու մի ձև։ Նա համում է կայմի ժայրը և կանգնում։ Երաժշտությունը լուսում է։ Լարխաղացը կանգնած է ուղիղ, հպարտ, հանգիստ ու կենտրոնացած և իր այս կեցվածքին նա տալիս է ճակատագրական դատապարտվածության իմաստ։ Նա բարձրացել է այստեղ աստծո ու նրա մարգարեի կամքով, որպես հնարավոր զոհ, և տպավորությունն այնպիսին է (սիմվոլներն էլ այդ են ասում), թե մարմնավորում է խաչելության ու հարության զաղափարները միատեղ։ Ապա նա ձողափայտը մոտենում է շորթերին, ինչպես խաչն են համբուրում, և հայացքը երկնքին, բարձրածայն արտասանում է։

— Մշու սուլթան սուրբ Կարապետ, մեռնեմ քո զորութենին. ես վերու էս թարազու քու զորութենով ուժովցած. ընձի ամոթով շանեսա<sup>185</sup>:

184 Համ բանահպար Հովհաննես Մալխատյանի նկարագրության (տես Վ. Բոյցան, նշվ. աշխ., հ. 1, էջ 177):

185 Սրբությանը զիմելու այս բնութանակած խոսքը, լսել եմ մի լարախաղացից օրեանում, 1953 թ. (Տերյան փողոցի № 129 շենքի՝ թաշկական բնատիտուտի հանրակացարանի բակում):

Սա նման է պատարագի սկզբում արտասանվող «ողջույնի աղոթքին», որով քահանան իրավունք է աղերսում մոտենալու Տիրոջ սեղանին՝ կարախաղացը, որ դրված է հնարավոր զոհի վիճակում, փրկություն է խնդրում իր «որից» Ահա նրա աղոթքի երկրորդ մի ամրերակը.

Ավ, տեր, բարերար առաջած,  
Դու պահես, պահպանիս՝  
Վատ լեզվից, չար մաքդին,  
Չար աշքից, ազատես  
Փորձանքից...<sup>185</sup>

Լարախաղացը կանգնած է երկնրի ու երկրի միջև, որպես միջնորդ, արդարության կշեռքի օգնությամբ։ Աղոթքի մեջ Հայտնի երրորդ տարբերակում կա այդ վիճակի ակնարկը.



Նկ. 14. Լարախաղաց և ձաղրածու բառ վ. Խոշաբեղյանի։

— Տեր առաջած, եթե ես արքար եմ, թող իմ ձեռքի թարաղում զառնու արքար զառնուանի կշեռք ու ինձ զիւնով շատ<sup>186</sup>,


185. C. Ալեւուսան, Աշխ., աշխ., 12 33:

186. Խո՛յ իմ 1952 թ., Հենքինականման, կայսրական մաս։ Անյանի անվան բանի պահանջման ամենաբարեկան պատճեն առաջ կատարվել է անյանի միջնադարության առաջնահայրական պատճեն։ Այս պատճենը անյանի անվան բանի պահանջման ամենաբարեկան պատճեն է անյանի միջնադարության առաջնահայրական պատճեն։

Աղոթքից հետո լարախաղացը աչ ոտքը սեղմում է լարին, դանդաղ սահեցնելով առաջ հրում, ապա հենման կետից պոկում է ձախ ոտքը և թոփշքածեն վազքով անցնում լարի մյուս ծայրը ու պարելով ետ գալիս: Զուռնաշին ու գհուշին վլում են երաժշտությունը, լարախաղացը պարում է պարզ պարաբայլերով, թեթև. նա դեռ բարդ «տրյուկներ» չի անում, մկաններն է տաքացնում և փոքր ինչ անց դարձյալ կայմի վրա է: Մյուտեղ հայտնվում է նրա «զինակիրը»՝ այժմորուս և ավելացը ծաղրածուն, կարճ ճիպոտը ձեռքին: Նա գալիս է արայ լուսը. Ծի պոտը «թարազու» դարձրած: Մաղրածուն երբեմն հայտնվուս է անսպասելիորեն, բարձրածայն սուլոցով, ճիշով.

— Դու եղ ո՞վ եւար, որ հետար մինդի գլուխ ու արխային-արխային նստար, — զիմում է նա լարախաղացին:

— Ես բըս չուխտ աշկեր խանող էղա, — պատասխանում է լարա-



Նկ. 15 Լարախաղաց և ծաղրածու ըստ Հ. Քացակյանի:

Խաղացը: — Ես սուրբ Կարապետի զօրութենով Շէլա, որ ժողովուրդ ուրախրցնեմ, տու ո՞վ ես!

— Ես քենէ մենէ մարթ Էմ: Տու կանա՞ս իմ կյործ անի, կանաս ժողովուրդ խրնզցընեա<sup>188</sup>:

188 Նման խոսքեր բերված են Արքունի կիսիցյանի «Старинные армянские пляски» (Ереван, 1983, с. 34) աշխատությունում ուսուելու

Լարախաղացը և ծաղրածուն ներկայանում են որպես Հակոբանյա դիմակներ՝ մեկը իմաստուն, ամենակարող ու անձնուրաց<sup>189</sup>, մյուսը Հիմար, վախկոտ ու անհեթեթ (նկ. 14, 15): Լարախաղացը գործում է, եթե Հիշենք վեհի ու ողբերգականի միջնադարյան բմբոնումը, «ահաւրապէս, ըստ գործեցելոցն գերազանցութեամբ, ամենայնի դիւցազնաբարար»<sup>190</sup>, ծաղրածուն՝ Համաձայն կատակերգականի՝ «կաղի կազս ինչ և քամացելիս»<sup>191</sup>: Այդպես էլ Հորինված են նրանց երկխոսությունները: Զարմացած ու միամիտ ձևացող ծաղրածուն դիմում է Հերոսին:

— Այ փահեան, ո՞վ է տէել քեզ էդ հունարը:  
Հերօսը պատասխանում է:

— Այ մասխարա, զու չէ՛տե՞ս, որ հունարն ինձ տէել է Մշուսութան սուրբ Կարապետը:

— Ես էլ ևմ զնում սուրբ Լարապէտ, որ ես էլ ստանամ էդ հունարը՝ այ փահեան:

— Դու իմ հունարը չես ստանա, այ մասխարա, զու կստանաս քո մեջքին երկրորդ սապաւրը<sup>192</sup>:

Բարգմանությամբ Պատմողը եղել է Վանի վիլայեթի Գավերան զյուզից գաղթած դհուլի նշան Գեորգյանը: Փետք է նկատել, որ Լարախաղացության ամենահանգամանալիք նկարագրությունները տրված են Սրբ. Ըստցյանի այս աշխատությունում, բայց ուստիրեն թարգմանությունը, հայերեն տեքստի բացակայությամբ, խիստ նվազեցնում է նյութի ազգագրական արժեքը:

<sup>189</sup> Մանկությունից Հիշում եմ Լարախաղացության խիստ յօւրահատուկ ու բնութագրական մի պատկեր: 1946 թ. Խ. Արովյանի անվան մանկավարժական ինստիտուտի շնորհի մոտ (ներկայիս Խանջյան փողոցի մայթի անգում) ու այնքան բարձր կապված Հաստ պարանի վրա անշամարձակ ու վախիցած պարում էր մի մանկահասակ՝ մոտ տաս-տասներուց տարեկան լարախաղաց: Ներքնում կանգնած էր մայրը, ծափ էր զարկում ու երգում պարզունակ մի պարհղանակ: Կինը Հատաքրքրվագներից մնակին ու ասաց, թէ Երազում ո. Կարապիսը պատվիրել է իրեն որդուն լարախաղաց աղաքանի, հագաքած զրամով մատաղ անել, այլապիս աղաքի կյանքը երդարձնել:

<sup>190</sup> Հ. Ածոնց. Հիոնիսի Փրակիյսկի և արմանեա տօլկօվատելի, ՊՏՀ. 1915, ս. 89.

191 Նույն տեղում, էջ 129:

192 Գ. Խոնյան, Թատրոնը Հին Հայաստանում, Երևան, 1947, էջ 135—136:

Այս պարզունակ խոսքերում հետեւալ իմաստը կառ Ամենքին չի տրված աստվածությանը հաղորդակցվելու շնորհը. Հավատ է պետք և հոգու պատրաստություն սրբի զուր գնալու համար, բանզի սուրբը չի սիրում գետնաբարչ, անմիտ կատակարանին: Բայց ծաղրածուն էլ հիմար չէ: Միջնադրում նա իմացել է, որ ինքը հողով ազրատ է և, եթե միամիտ էլ է, երկնքի արքայության դռները բաց են իր համար<sup>193</sup>: Բայց ծաղրածուն ուզում է այնուամենայնիվ իմանալ, թե որտեղ է լինելու ինքը մահվանից հետո:

— Դարդաշ փառեան, ո՞ւմ տեղն է նեղ, իմշ, թե քոնր:

— Է՛տրիշ իմբ: Իմ տեղը գմզար է, — պատասխանում է լարախազացը:

— Ըե մի, զու քո գոռողությանից ունել ես, փրգել ու մեծ-մեծ խոսում ես, թէ տեսեք, փառեան եմ, քանզի ըստ վրա եմ կանզնել, խաղ եմ խաղում: Դու որ քո տեղից ընկնես, ո՞ւր կընկնես:

Լարախազացը պատասխանում է.

— Ո՞ւր պիտի ընկնեմ, գետին:

— Լավ, զու որ գետին ընկար, ե՞ս ուր ընկնեմ:

— Ո՞ւր կընկնես: Դու էլ գետին կընկնես:

Լարախաղացը, թվում է, խուսափում է իսկական պատասխանից. թողնում է, որ ծաղրածուն ինքը որոշի իր տեղը հանդերձալ կյանքում նա էլ որոշում է.

— Թե որ ես ընկա, կգնամ մինչ ոե քհանեամը...<sup>194</sup>

Հին և ժողովրդական կատակերգության մեջ ծաղրածուն ներկայանում է ծառայի դերով: Այս ծաղրածուն էլ լարախաղացի ծառան է և ունի ծառայի բռլոր դերը. մի կողմից խորամանկ է ու սրամիտ, կատակարան, բարդ իրավիճակները ուրարդեցնող, մյուս կողմից՝ բոլթ, անհասկացող, պարզ իրավիճակները իմճռու:

— Այնի յեր, — ոսում է նրան տերը:

— Խ'եւ, Բ'եւ, Յ'եւ: Ջինին ի՞նչ աւ

— Ա՞յ մարդ, չ'նի չ'լ, սինի ժանրով ցույց է տալիս, օգում դրամ:

— Ենր չ'եց նուռ իւնելու, — ոսում է տերը:

— Ենիսո՞յ Ամայալ ի՞նչ աւ

<sup>193</sup> Հայոց Առաքեալու համար այս էլլուստրացիան է:

<sup>194</sup> Հայոց Առաքեալու համար այս էլլուստրացիան է:

- Հսիր, ա՞յ մարդ, մանշալ չէ, խանչալ, խան... շա... ա... ալ
- Հա-ա-ա, հա... խանչալ՛!
- Տո՛, հա, հա էլի, հա՛, խանշալ<sup>195</sup>,

Գալիս է մի պահ, որ ծաղրածուն ուզում է լարախաղաց դառնալու: Մինչ տերը հանգստանում է կայմի ծայրին, նա վեցնում է ձողափայտը և նվագածուներին հրամայում նվագել.

- Դե՛, փշի, շան տղա զուռնաշի:

Սաղրածուի գերակատարը, պատահում է, որ լինում է իր «ուստից» ոչ պակաս լարախաղաց: Բայց իրադրությունը պահանջում է, որ չնսեմացնի վարպետին: Նա վերցնում է ձողափայտը և բարձրանում մինչև կայմի ծայրը և որպես թե սարսափից ու ուրախությունից գոռում.

- Օխա՛յ, քամին մտավ՝ շալվարս<sup>196</sup>:

Նա ոտքը դնում է լարին և մեկ-երկու քայլ անում: Ծվռմ է, քիչ է մնում, որ նա հավասարվի սուրբ Կարապետի ուխտավորին: Բայց գրանովի կիմաստաղրկվի ներկայացումը, և հերոսը կնսեմանա: Սաղրածուն չի անում այդ քայլը: Նա սարսափի է խաղում, ճշում, աղաղակում և դեմքին կոմիկական տագնապի ետ է վերագառում եկած ճանապարհով: Ներկայացման շարունակության մեջ ծաղրածուն դառնում է պատրաստակամ, հասկացող ու հնազանդ ժառանակ ծառա: Նա ոգնվորություն է խաղում, հիանում իր վարպետի գործով, գետնի վրա կրկնում նրա շարժումները, զլուխկոնծիներ տալիս և դրամ է հավաքում որպես թե ոչ իր տիրոջ, այլ իր համար: Հերոսի համար ստորացոցիչ է վարձատրություն խնդրելը: Նա շրագված է լուրջ գործով՝ ժառայում է իր աստվածությանը, իսկ դրամ համար հավաքելու գործը թողել է իր ժառային՝ սրբություն ու հերոսություն շնանաշող, գետնաքարը «Փիլիսոփայությամբ» ապրող անձունի մարդուն, գործնական կյանքի ստրուկին<sup>197</sup>:

Եղ ահա մի կետ, որտեղ լարախաղացը հիշեցնում է

195 Նոյն տեղում, էջ 40:

196 Լոված խոսք է (1956 թ.):

197 Հմմտ. «Թատրոնը միջնադարյան Հայաստանում», էջ 251—252:

պարծենկոտ անծանոթին՝ վանա Փաշային ու Քաջ Նազարին։  
Կեղծ հերոսականության ակնարկը նույլ է, բայց որոշակի։  
Լարախաղացը չի իշխում իր բարձունքից, բայց զուցե ակտա-  
մա, հիշեցնում է, որ ինքն էլ է խաղում։

— Փահէւան ախաղեր, — կանչում է ծաղրածուն։

— Հրամմեն, ախաղեր չան։

— Տո՛, ձենդ կարի, — զառնաւով զուռնաշիներին, ասում է ծաղրածուն։

Գլխավոր զուռնաշին անիմաստ գեղդեղահնքը է արձա-  
կում, որպես թե չի կարողանում լուիլ։

— Տո՛, քեզ եմ ասում, շան թուլա, ձենդ կարի։

Զուռնան լուսմ է։

— Գալդ ուստի՞ց, զնալդ ո՞ւր, — զիմում է ծաղրածուն լարախաղա-  
ցին։

— Գալս դժուղից է, զնալս Մհերա, Զանգիւթի ժամի զուռը մուրազ  
առնելու, թաղրի ասոծուն կանչելու, որ ժողովրդին օդինի։

Բատերայնորեն նուրբ է այս կետը։ Լարախաղացը կար-  
ծես հեգնում է մահմեղական սրբությունները և պարծենում  
ոչ իր, այլ ոմն ինքնակոչի անունից։ «Օտարման էֆեկտ»  
աստվածը, ինչպես տեսնում ենք, բանահյուսական հիմք  
ունի։

— Փահէւան ախաղեր, — զարձյալ կանչում է ծաղրածուն։

— Հրամմեն, ախաղեր չան։

— Էս հոնարը, էս շնորհը ո՞ւմ ըլի։

— Ասոծուն ըլի, — պատասխանում է լարախաղացը, — տասներկու  
առաքյալին ըլի, Հիսուսի շորս ավետարանին ըլի...»

Եվ ավելացնում է։

— Շիրզանի շելքերուն ըլի...»

— է վալլա, փահէւան ախաղեր, էղ հոնարը ո՞ւմ համար ես ծախսում,  
զիտիս։

— Սարգիս ազայի համար, — ասում է լարախաղացը, ակնարկելով  
հանդիսատեսներից ամենահարստա մեկին։

— Տո՛, փլի, շան տղա զուռնաշին, զայի 195.

195 Բառ Հ. Մալխասյանի (Վ. Թույան, Եշվ. աշխ., 4. 1, էջ 170 —  
180)։

Մաղրածուն գնում կանգնում է Սարգիս աղայի առաջ, թե՝ վճարիր Վճարը նա հասարակությանը ներկայացնում է եղածից մի բանի անդամ ավել, որպեսզի պատվախնդրություն արթնացնի հանգիստականների մեջ<sup>199</sup>:

Ներկայացնումը տևում է մոտ չորս-հինգ ժամ, փոքր ընդմիջումներով, որոնց ընթացքում ծաղրածուն նոր ինտերմեդիաններ է հորինում, կամ լարախաղացն է նրան գրանորվելու արիթներ տալիս: Բայց Արշակ Սարգսյանի պատմածի<sup>200</sup>, լարախաղացը մի փայտ է տնկել աւալիս զետնին, փայտի զբեխին զնում մի բասակ («արախչի») և ծաղրածունին ասում, թե Պարսկաստանից բժիշկ («գուշաշչի») է եկել, զնա կամ հետք կովիր, կամ «խարշը» տուր:

— Նայի՞ր, ահանո՞ւմ ես, քուողը զիմին, քյանդիրի տակ նստած, ազատում է:

### Ծաղրածուն մոտենում է փայտին.

— Բարի Հաջողում դուլաշչի, բարի Հաջողում: Գուշա՞շ և ես ուզում: Գուշաչ կեպնեմ հնուց, բայց իմացիր իմ պայմանը, մէջթից շըռնես, ոտքից շըռնես, ձեռքից շըռնես...  
Զուռնաշին կորի եղանակ է փշում, ծաղրածուն մի տեսաբան է հորի-  
թում կոր է բանում փայտի հնա, վերը զնուին փուլում:  
— Ոտս կոտրեց, ո՞տս... Սնցի՞, սնցի՞ բերեք...

Ներկայացնան ընթացքում ծաղրածուի դերը գնալով փոքրանում է, լարախաղացինը մեծանում: Հնարները գնա-  
լով բարդանում են: Լարախաղացը կանգնում է սինիի վրա, սահում լարի վրայով, ոտքերը գնում է պղնձե կաթսայի մեջ, գնում փոքր թոփշներով, ոտքերին դանակներ է կապում ու

199 1941 թվի դարնանը Երևանի Յոնչալը կոչված թաղում (Ներկայացնաշինի պարագաներում) կինոթատրոնի բակի կողմանը. Սեղրակ Սարգսյանի փուլը ուշայրենից էր ունենում մի լարախաղաց: Սաղրածուն գույնզգույն խո-  
ղոսը ելույթ էր ունենում մի կարմիր թթով մի մարդ էր, աղմբ-  
լաթով, երկար բեղերով ու Հսկայական կարմիր թթով մի մարդ էր, աղմբ-  
լաթով, ու աշխալում էր ու ուղարկան էր այդ ժամանակ, մոտեցա նրանց և  
կոտ ու աշխալում էր, որ գինդ ատրեկան էր այդ ժամանակ, մոտեցա նրանց և  
զարգեցի զիճակախաղի մի տոմս՝ կարմիրբանակայինի պատկերով: Տոմ-  
սը, ինչպես հետազոտությամբ բացահայտված էր ու շահածած: Սաղրածուն  
ուր, ինչպես հետազոտությամբ բացահայտված էր ու շահածած: Սաղրածուն  
ուր, զնուի գնալով կարմիրբանակայինի պատկերով: «Աբլիգացի», արկ-  
դացի, հարսոր մանեթի արլիկացի»:

200 С. Լիսազան, Խշկ. աշխ., էջ 40-41:

պարում, պարան է կապում ոտքերից՝ ճոճանակ սարքում, մի երեխայի նստեցնում ճոճանակին, ինքը պարում է վերնում, երեխան ճոճվում է ոտքերից կախված։ Վերջապես, սա դարձյալ ժիսական գործողություն է, նստում է պարանին, ոտքը զնում ոտքին, ձեռքերն ազատ թողնում, «զո՞րի գառը վեր է առնում, մորթում, քերթում, մի բուզը կտրում իրեն է պահում, մյուս մասը ցած տալիս»<sup>201</sup>,

«Աստծո զառը» զո՞հաբերվում է երկնքի ու երկրի միջև։ Սա արել է Մուշից եկած լարախաղաց Հաջին։ Ավանդությունը, թվում է, պետք է հին լինի. այդ են ակնարկում արտաքին նշանները։

Լարախաղացները, ինչպես հայտնի է, ելույթ են ունեցել մեծ մասամբ կրոնական տոներին, վանքերի ու եկեղեցիների մոտ։ Խաչելության ու հարության գաղափարները կերպավորող գեմքը կարծես հանդես է գալիս կիսաստվածության գերով, և պարանը, որ ապաշխարանքի ու ինքնակեղերման միջոց էր, ինչպես տեսանք Ոսկերերանի վարքում, դաշնում է նաև զո՞հարան։ Ճակատագրով դատապարտված, քրիստոնեական սրբի հետ խոսող, իր անձը նրան նվիրարերած հերոսը զո՞հաբերության փաստով խորհրդանշում ու հաստատում է իր ոչ երկրային վիճակը։ Ուխտավորի համար եղել է մեծ շնորհ, երբ իր զո՞հաբերությունն իրականացվել է նրա հրաշագործ ձեռքով։ Բայց խաղի խորհրդապաշտական բովանդակությունը միախառնվել է զվարճությանն ու ժամանցին (սա թերևս հեթանոսական հիշողություն համարենք), երբ լարախաղաց Հաջին՝ Քրիստոսի գերեզմանին ուխտ գնացողը, վեր է առել կրակարանը, ոչ որպես ատրուշան, ոչ էլ նույնիսկ բուրվառ կամ կերոն, այլ խորովածի «մանղալ», միաը կտրատել, շարել շամփուրին, խորովել ներքենում կանգնածների ապշահար հայացքների առջև ու բաժանել ընկերներին<sup>202</sup>. Սա լարախաղացի հմտության բարձրակետն է, որ տեսնում ենք նաև Կ. Պոլսի «Արամյան թատրոնում», անցյալ դարի 40-ական թվականներին<sup>203</sup>:

201 Ա. Թոյյան, նշվ. աշխ., Հ. 1, էջ 183—184։

202 Նույն տեղում։

203 Գ. Լևոնյան, նշվ. աշխ., էջ 172, 173։

Խաղ կրակի հետ բավական տարածված է նոր և նորագույն կրկեսային արվեստում։ Պետք է կարծել, որ միջնադարում դա չէր կարող լինել ինքնանպատակ ու անխորհուրդի եղել Են լարախաղացներ, թերևս հազվադեպ, որ երեմն վայր ևն որել հավասարակիշության ձողը և պարել զույգ ջաներով<sup>204</sup>։

Ապաշխարանքի ու զո՞րի գաղափարը նշմարվում է նաև շետեյալ լիաւատում։ Ուխտավլորներից մեկը երեխային զնում է լարախաղացի ուսերին կամ կապում մեջքին, այսինքն՝ Նվիրացերում է խաչին։ Դա արել են խորին երկյուղով, խաչակինքում ու լալով, հույսը սուրբ Կարապետի զորության վրա։ Երեմն այդ արել է ծաղրածուն, երեխային վերցնելով անսպասելիորեն կամ բռնությամբ։ Լարախաղացը երեխային ուսերին առած հասել է լարի կենտրոնը և աղոթք ուղղել իր սրբին։

— Մշտ սովորան սուրբ նարապետ, օգնական ճգիր, որ ևս էս երեխին սաղ սալշամ։ Յ տամ իր մորը<sup>205</sup>,

Ճակատագրով դատապարտվածը սրբի ստքերին է մոտեցնում անմեղ մանկանը, նրան էլ է բաժին հանում սրբի զորությունից, հազորդակից դարձնում աստվածային հրաշքին։

Ազբեցականի ակնարկները շեզոքանում են, երբ ամեն ինչ վերջանում է բարեհաջող (ուրիշ կերպ չի էլ լինում), և ծաղրածուն Հորինում է մի նոր ինտերմեզիա։ Լարախաղացը նստում է հանգստանալու, ծաղրածուն հրամայում է երաժիշտներին նվազել քոչարի և զնում, կպչում է կանանցից, թե՛ եկեր պարենք։ Ոչ մեկը չի պարում ծաղրածուի հետ Շաղրածուն նստում է գետնին ու սկսում ողբաւ։

— Փառցեանին սիրում են, ինձ չեն սիրում։ Ես կդնամ, չուրը կընկ-նեմ։ Գանակ տվիք, ես ինձ մորթիմ։ Կնանիթ ինձ չեն սիրում...

Այլ դիմում է լարախաղացին։

<sup>204</sup> Այս պատճեն ակնաշատին էմ ևզել մոնիկությունա տարիներին  
Երեմանմ (1944 թ.)։

<sup>205</sup> Ը. Արմատան, նով. աշխ., էջ 49.

— Փառհետն ամսագիր, ևս կնոնիք ինձ չեն սիրում: «Ղա՞յ», Հոզ ու մոռխիքը զլխիս... Ես ի՞նչ անեմ, զու ասա, ես ի՞նչ անեմ, ես ո՞նց ապրեմ: Գնամ շո՞րթն ընկնեմ, թե՞ դանակն առենմ, ինձ սպանեմ:

Լարախաղացը միսիթարում է նրան.

— Զե՞ս, չե՞ս, ամսագիր ջան, մի խեղղվի, քեզ համար կին կզտնենք, կամուսնանաւ, Յալանչի ամսագիր... Դու հունար ունեցիր, Հունար, իմ Հունարը...

— Թողեք, ամսագե՞ր, թողեք, զնում եմ ջուրն ընկնեմ:

Դնում է, չեն թողնում, բռնում են:

— Թողե՞ր, զնում եմ...

Բաց են թողում, չի զնում:

— Փշի՞—, զիմում է զունաշուն,— փշի, ամսագե՞ր, ես քեզ զինի եմ՝ խմացնելու, նվազեք, սփառ պարեմ: Փափուրի ամ պարում, զբի՞...<sup>203</sup>

Մաղրածոն պարում է իր «դարդը», իսկ լարախաղացը բարձրանում է Հսկա ոտնացուպերի վրա ու «երկնքից» նայում իր գետնաքարշ ծառացին:

Ասպետի ու ծառացի փոխարարերությունները ծանոթ են գրականությունից ու թատրոնից. տիպարանական զուգահեռները բավական շատ են, և ակունքը, ինչպես տեսնում ենք, խաղացին-բանահյուսական է:

Լարախաղացությունը, որպես միշնադարյան ժողովքը-դական միրակլ, շունի ֆարուկա՝ դրությունների պատճառացնուհանքային ընթացք: Դա անկախ էպիզոդների շղթա է, որի սկիզբն ու ավարտը տեսնում ենք Հնարների աստիճանական բարդացման մեջ, որ նշանակում է հերոսականի վեհացում, աստվածայինի ու հրաշալիի հաստատում, և ծաղրածուի դերի նսեմացման մեջ, որ նշանակում է առօրեականի պարտություն: Սա, իհարկե, պայմանական վիճակ է: Երկնայինը հաստատվում է վեհացումով, երկրացինը մարդու է ծիծագով: Երկու արխետիպերով մարմնավորված աշխարհը միասնական է ժողովրդի գեղարվեստական գիտակցության մեջ: Ասպետի ու ծառացի երկխոսությունը երկու խուլերի վեճ չէ, այլ կենսականորեն պատճառարանված սկրգ-

<sup>203</sup> Նույն տեղում:

բունքների ներքին կապ, մեկի առկայությունը մյուսի մեջ՝ Պարզ երևում է Դոն Կիխոտ և Սանչո Պանսա հարաբերության բանահյուսական-խաղային մողելը, որպես ի սկզբանե տրված բնական վիճակ։ Կարդալով Սերվանտեսի վեպը, տեսնում ենք, որ դեպի երկնայինը ձգտող ասպետն աստիճանաբար մոտենում է երկրային ողջախոհությանը, իսկ նրա՝ հողին կառչած ծառան բարձրանում է առօրեականից, ըմբռունում անձնաղոհության, որպես բարձրագույն առաքինության, իմաստը, թեպետ այս հավասարակշռության մեջ նրանցից ոչ մեկը չի զոհում իր էությունը։ Կյանքը, ըստ միջնադարյան պաշտոնական հայցագրի երկրեսու է, բայց ոչ միասնական. մի կողմից՝ ներդաշնակություն ու կարգ և վերին իրավունք, մյուս կողմից՝ խախտվածություն, արսուրդ, ծաղը ու կատակ։ Սա նաև, ինչպես նկատել ենք, Բախտինի պատկերացրած ամբիվալենտ վիճակն է։ Միջնադարի ժողովրդական արվեստում կյանքը պատկերանում է որպես հակառամիասնական, անխղելի վիճակ։ Լարախաղացությունը դրա ննթագիտակցական խաղային մողելն է, նախախորհուրդակիցը Դոն Կիխոտ և Սանչո Պանսա, իիր և Սաղրածու, Դոն Ժուան և Սգանարել, Նեսշաստլիվցե և Սշաստիլիվցե դիմակայիմած զուլգերի։

Միջնադարի մարդկային իդեալը ասկետն է՝ իր անձը աստծուն կամ սրբությանը նվիրաբերած անձը: Լարախաղացությունն այդ իդեալի ժողովրդական մեկնությունն է: Խաչի գաղափար և երկրային լավատեսությունն, զոհի գաղափար առանց զոհաբերության, ապաշխարանքի գաղափար խաղային տարերքի մեջ: «Կարեկցանքը խաչ չէ» արդյոք, — ասում է Նիշշեի «Ջրադաշտը», — որին բնելովում է ամեն որ, ով սիրում է մարդկանց: Բայց իմ կարեկցանքը խաչելությունն է»<sup>207:</sup> Այս հայացքին է կարծես համերաշխվում հրաշագործության ժողովրդական ասպեկտը:

207 Фр. Нации, Так говорил Заратустра, СПб., 1913, § 28:  
«... и вспомнил я съезжавшуюся, старинную пасхальную мессу, и пр. фестивальную службу...»

Մարդու մեխանիկական հավասարակշռությունը պետք է պահպահ գործառնությունը լինի ամենահաստատ կամուսմ է սոսկ խաղ ու զվարճապիթք, կարգիս պարզունակ խարեւմբյուն։ Բայց էության, դա խաղային իմաստավորումն է և սիմվոլացումը տիեզերքի, ամենամեծ ամենաանտարակուսիլի ճշգրտության։ Ըստ ժողովրդական կրօնասիրության, դա ճանապարհ է զետի հավերժական վիճակի, նշանակութ է համամասնությունների ջշգրիտ քաժանում, արդար դատ, աարամիտ վիճակների ու դաշտումների համատեղում, որը միջնադարյան մարդու հայացրում հանգում է աստվածային ճշգրտության՝ քարոյապես արդար վիճակի։ Դրա երկրաշափական զետերմինանտներն են խաչը, որպես չորեքկողմյան աշխարհի նշան, և շրջանագիծը (ըստ Պատոնի՝ տիեզերքի գընդաձե ոլորտը), որպես աշխարհի շրու կողմերը կապող և նույն կետին վերադարձող անվերջանալի ուղի։ Երկրաշափական երեք ձեւերը՝ խաչը, շրջանագիծն ու քառակուսին, որ դրված են ճարտարապետական ստատիկայի հիմքում և հայ միջնադարյան ճարտարապետության մեջ առավելագույնս ակներեն են, ինքնին մղում են հավասարակշռության ու հավերժականության դաշտավայրներին։ Լարախաղացությունը դրա մարդկային-Հռուերանական և բարոյագեղարվեստական կերպարվորումն է։ Հիշենք նաև, որ հրաշապործության ասպետը ողջույնի աղոթքից առաջ շրու անգամ խաչակնքում է, ուղղվելով նախ գեղի արևելք, ապա՝ արևմուտք, հյուսիս և հարավ։ Կազի ամբողջական պատկերում կա նաև այն ակներեն իմաստը, որ մարդը վտանգի եղբին, անհաստատ քարձության վրա (ինչպիսին է կյանքն առհասարակ), իր բանական մարքագծով կարող է ավելի կայուն վիճակում լինել, եթե շատենք՝ ավելի գեղեցիկ ու վեճ, եթե համերաշին է տիեզերական հավասարակշռության օրենքին (թեպես դա կոչվում է առուրք Կարապետի ողբութենք)։ և զգունի գենման կիր հաս-

ժարդկացինք ձգվող կամուրջը։ Այստեղ ալլարանական ձեռվ մերձվում է խաչամաֆի բարոյական անմահությունը։ Ավելի մեկնությունը չի է խորթ և առաջին լարախաղացության, որպես Շողոմրդական միրակի, մեր ըմբռնեմանը։ Քրիստոնեական խորհրդանիշերի ժողովրդական իմաստավորումը, կարծում ենք, աւելի խորն ու բակմաշերտ է։

տառուն ու անվտանգ տեղում՝ ամուր հողի վրա, եթե բանական ու արդար չէ, չի նայում երկնքին:

Վեհության ու սրբության գիտակցությունը կրելով, հրաշագործության ասպետը ձգտում է վեր և սեփական կամքով կանգնում ֆիղիկական կործանման եզրին, հաստատում անմահության գաղափարը, ինչպես բոլոր ողբերգական հերոսները: Իսկ նրա «դինակիրն» ու բարեկամը (ոչ թե թշնամին, ինչպես ասում է Նիցշեի «Զրագաշտը»), իր արտաքուստ հակոտնյա վարքագծով, խորհրդանշում է երկրի ուժն ու ձողականությունը և երկինք նայող հերոսի նյութական հենակետն է, առօրյա բանականության թատերականացված նշանը: Գաղափարի աշխարհը վեհ է, աճավոր, ազատագործած ու ողբերգական, իրերի աշխարհը՝ կաշկանդված, գետնաքարշ, անխորհուրդ ու կատակերգական, և երկուսն էլ, ըստ ժողովրդական դիալեկտիկայի՝ հակադրամիանության տարերային գիտակցության, անխղելի են ու միասնական: Գաղափարը լուսավոր է և աննյութ, հողը ամուր, նյութեղեն ու խավար, գաղափարի գլուխը երկնքում է, ոտքերը հողին:

Ուժի է ոգու կաշկանդվածության դրաման տեսանք Շիդարի առասպելում, աղատագրման գաղափարը՝ կուսավորչի հաստատած սուրբ Կարապետի տոնում: Այս անտինոմիայում հրաշագործության ասպետը, որպես քրիստոնեության պատգամախոսի ուխտավոր և նրանից մկրտված, ներկայանում է որպես աղատագրված ոգու խորհրդանիշ: Եթե Խորվիրապից ելնող ջահակրի պատկերում խոսում է կամքի ու ոգու քրիստոնեական աղատագրման գաղափարը և իր թիկունքում ունի պրոմեթեայան խորհրդանիշի Տերտուլիանոսի մեկնությունը<sup>208</sup>, ապա այստեղ գործում է ժողովրդական ինտուիտիվ հայացքը, և դրանով էլ լարախաղացությունը ինտուիտիվ հայացքը, և դրանով՝ և հրաշագործության ասդառնում է մի նոր «առասպեկտ տօն», և հրաշագործության ասպետի արխետիւպը՝ շղթայված ուժի հակոտնյան: Աղա-

208 Հմմառ. Ա. Առաք. նշվ. աշխ., էջ 246:

տակովածն այլնս ոչ Շիղար է, ոչ էլ Պրոմեթեա: Պարող աստ-  
ղը (Նիցշեի համեմատությունն է) արդեն ուրիշ խորհրդա-  
նիշ՝ է, ուրիշ հուզական պատկեր: Դա հեթանոսական միստի-  
քիայի ավարտն է՝ ժողովրդական լավատեսությամբ ու կեն-  
սասիրությամբ, մարդկային կյանքի հաղթանակը բնության  
ուժերի հանդեպ:

Հայ հին և ժողովրդական գրամայի տարրեր ժամանակ-ներում վկայված, հավանական և ակներև տվյալները փոր-ձեցինք համեմատել բատ պատմատիպարանական գծերի, թե-մատիկ և ձևական հատկանիշների: Հաջողվեց արդյոք շո-շափել հին գրամայի երակը, տեսնել նրա փոխակերպումնե-րը, թե՞ մնացինք կամայական գիտումների և սուրյեկտիվ և թաղրությունների ոլորտում:

Ծիսական ավանդներում և խաղային բանահյուսության-մեջ գծվար է ցույց տալ մինչև վերջ գիտակցված միտումներու թանահյուսական գիտակցությունը մեկ անհատի շի պատկա-նում, այլ սերունդներին: Այդպես է նաև ժողովրդական գրա-մայում, որն ամրակայված ու անփոփոխ արժեք չի եղել, այլ ընթացք, խաղային-ծիսական սովորութների կենդանի շարժում: Այստեղ կան խաշաճնումներ, իմաստափոխված նշաններ, մոռացված խորհրդանիշներ և մյուս կողմից անկախ-երնակայություն, ուղիղ և ծուռ հայելիներ՝ մեկը մյուսում արտացըլվող: Սա ի վերջու մի լարիրինթոս է՝ անտեսանելի անցումներով, անհուսալի փակուղիներով, բազմահարկ, ար-տաքուստ խառը և ներքուստ կարգավորված, բայց մեզ հա-մար շատ կետերում անբացարելի աշխարհ:

Կրկնվող ու փոփոխվող ծեսների, տարերային խաղի և նրանց օբյեկտիվ բովանդակության միջև հնարավոր շե ու շպետք է որոնել ուղղակիորեն գիտակցված կապեր: Ստեղ-չագործողը մի տեղում աղատ է, մի տեղում ավանդապահ և ժամանակակի այն իմաստաբանությանը, որ մենք ենք փնտրում կամ վերստեղծում: Խորհրդապատական նշանների կողքին առկա են նաև պատահական գծեր, որոնք փոխանցվել են առկա են նաև պատահական գծեր, որոնք փոխանցվել են

սերնդից սերունդ պարզ կրկնությամբ, որպես սովորույթ, առանց հոգևոր բովանդակության լիակատար գիտակցման: Ավանդությունը բոլոր գեղքերում մեզ համար թանկ է և ունի գեռես անծանոթ, անմեկնելի շերտեր՝ մեր աշքին ու հոգուն անտեսանելի:

Սնկությունները, որոնց դիմեցինք, կապերը, որ փորձեցին տեսնել, կարող են վիճելի լինել: Ավանդողներից ոչ մեկը չի նախատեսել ուսումնասիրողի խնդիրները: Դրանք առաջացել են ինքնին՝ նյութի քննության ընթացքում: Հետազոտվող երևութը հին է, խորն ու հարուստ և կարող է հետազայտմ մղել նոր մեկնությունների:

Ուսումնասիրության եղանակը մեզ թելադրել է հեռանալ ժամանակային կապերից, հետեւ նշանների ու սիմվոլների տրամաբանությանը: «Տիպարանությունը չեղոքացնում է ժամանակը» (Կ. Լեի-Մտրոսս). Հնադարյան նշանը հայտնը-վում է նաև իր ժամանակից դուրս, և նոր թվացող երեսութը իմաստավորվում է անսպասելիորեն հին լույսի տակ: Սա իրողություն է, երբեմն բավական տեսանելի: Հին խորհգապաշտական դրաման, քրիստոնեական ծիսակարգը, ժողովրդական դատական խաղերը, իրենց համանման ու տարրեր պայմանաձևերով հնարավոր է, որ սերում են տարրեր ակունքներից, բայց, ինչպես տեսանք, գտնում են ընդհանուր հենակետեր, միավորվում ծիսական ընդհանուր աղերսներով, և բոլոր դեպքերում զործում է ժողովրդական աշխարհայացքը: Մի տեղում կաշկանդված ուժի և սպասման դադախարն է զրամայի բուն հիմքը, մյուս տեղում՝ ազատապրվածության, մի տեղում՝ դատ մյուս տեղում դատապարտվածություն: և բոլոր դեպքերում՝ անձի ու միջավայրի, մարդու և աշխարհի, անհատական կամքի և օրյեկտիվ վիճակների փոխհարաբերություն: Այս ամբողջը, ինչպիսի մեկնությունների էլ դիմենք, կազմում է դրամայի բանահյուսական-խաղային արմարուց, նրա գոյաբանությունը և մեկնահիմքը:

Չունինալով որևէ կանխակալ դրույթ, ինչ-որ բաներ ամեն գնով ապացուցելու տրամադրվածություն, ունենք, այնուամենայնիվ, մտահայեցողական մի պատկեր, որ հենվում

է արտաքին շերտում պարերդական դրամայի հայտնի պայմանաձերի, ներքին շերտում՝ խաղային դիտակցության, որպես թատերական արվեստի նախատարրի վրա։ Իսկ երեսոյին ինգնանուր պատմական իմաստը ոչ այնքան առանձնահատուիլ ու անկրկնելի, որբան օրինաշափական և ունիվերսալ նշաններում է։ Ազգայինը մնում է ազգային, ուստի առաքելույն, խոսք, բնավորություն, վարքագծի երանգ, հույսի գրականության կերպ։ Մեմաները սակայն մնում են համամրիկային ու ընդհանրական, որպես առասպելարանական տրված պայմանաձեւեր։

Փոքձել ենք սունձնահատուկը մեկնել օրինաշափականի յույսով։ Այս է եղել սնը քննախոսության և՛ եւակետը, և՛ նպատակը։

Զծավալվենք նոր փաստարկումներում։ Դրանց հնարավորությունը բացառված չէ։ Բայց համոզվելու համար թերթենք համաշխարհային դրամայի պատմությունը հնագարից միջնադար և նոր ժամանակներ։

ԱՌԱՍՏԵԼԱԲԱՆԱԿԱՆ, ՎԻՊՈՒԼՈՒՅԻ ԽՎ ԽԵՂԱՄԻԱՅԻՆ ԱՆՌԻԵՐ

- |                                      |                                      |
|--------------------------------------|--------------------------------------|
| <i>Արբուկիլ</i> — 37                 | <i>Արշաթոթոշ</i> — 244               |
| <i>Արքահամ</i> — 186, 187            | <i>Արտաշես</i> — 42, 43, 48, 55, 81, |
| <i>Ազալի</i> — 108                   | 257                                  |
| <i>Ազար</i> — 199                    | <i>Արտավազգ (Հմմտ. Շիզար)</i> —      |
| <i>Ազոլի</i> — 209, 210              | 25, 26, 32, 37, 39—43, 45,           |
| <i>Ազոնիս</i> — 52, 54, 55           | 47—51, 57, 59, 60, 66—70, 72,        |
| <i>Ազաղել</i> — 186                  | 74, 78, 79, 81—83, 86, 95,           |
| <i>Ազգահակ</i> — 24, 34, 36, 43, 45, | 100, 172                             |
| 48, 49, 65, 66                       |                                      |
| <i>Ահամակեր</i> — 71                 | <i>Բաթրազ</i> — 30, 31               |
| <i>Ահմատ խան</i> — 215               | <i>Բարոս (տես Դիռնիսոս)</i>          |
| <i>Ազա Նազար</i> — 232, 239, 244     | <i>Բէլ</i> — 184, 185, 228           |
| <i>Ազեքսանզը (վիպական Մակե-</i>      | <i>Բյուրասպի Ազդահակ</i> — 25,       |
| <i>ղոնացին).</i> — 236               | 33—36, 66                            |
| <i>Ամիրանի</i> — 37, 38, 58, 69      | <i>Գայցա</i> — 139                   |
| <i>Ամէկուս</i> — 49—52, 64           | <i>Գայցահե</i> — 139                 |
| <i>Ամբան</i> — 37                    | <i>Գերուտա</i> — 49, 63              |
| <i>Անահիտ</i> — 60, 72, 79, 80, 86   | <i>Գիլգամէշ</i> — 150                |
| 89, 96                               | <i>Գիւաշե</i> — 92                   |
| <i>Ապոլոն</i> — 124                  |                                      |
| <i>Աստված (վիպական դեմք)</i> — 38,   | <i>Գանդիզ</i> — 244                  |
| 58, 186                              | <i>Գավիիթ (Բիբլ.)</i> — 71           |
| <i>Ատափս</i> — 140                   | <i>Գավիիթ (Սասոնցի Գավիիթ)</i> —     |
| <i>Արա — 52, 55, 92</i>              | 246—248, 256                         |
| <i>Արամազգ</i> — 45, 79, 96          | <i>Գծիկո</i> — 232—237, 243          |
| <i>Արգավան (Հմմտ. Արզամ)</i> —       | <i>Գիռնիսոս (Բարոս)</i> — 125,       |
| 47, 49, 55, 64, 65                   | 127—129, 158, 164, 179, 181          |
| <i>Արդիիսուրա</i> — 86               | <i>Գոն Ժուան</i> — 281               |
| <i>Արես</i> — 138, 139               |                                      |

\* Ցանկում ներակայացված են նաև վիպականորեն ավանդված որոշ պատմական անուններ

Գոնե քիշուա — 236, 281  
 Եռակ — 199  
 Զոհակ-Դահակ — 34  
 Զիս — 30—32, 38, 58, 105,  
 128, 187  
 Էնդիւ — 185  
 Իսահակ — 186  
 Լիր — 186  
 Խելան — 219  
 Խէնտակով — 174, 243  
 Խոզինի — 244  
 Խողաշի (տես Կողբաղի)  
 Խային — 199  
 Խենուռոս Պյուրիդա — 25, 31,  
 33, 66, 67  
 Խողաղի (Խոլբաշի) — 247—  
 252  
 Խորդակագոն — 30  
 Կրեշինսկի — 243  
 Համելիս — 29, 58, 94, 157, 258  
 Հայկ — 228  
 Հելիսս — 54, 53, 66  
 Հերմես — 29, 31, 184  
 Հեփիստոս — 30, 32, 34, 35,  
 38, 67, 87, 124  
 Հորացիս — 157  
 Հուզա — 199  
 Հուզին (Ֆերիդոն, Ֆրիդոն) —  
 33—35, 44  
 Հազարսս — 172, 173  
 Հոռորուզա — 244  
 Հորոնթի — 244  
 Հուզպոն. — 244  
 Մամրին — 236

Մարկոս Առալինիչ — 37, 40  
 Մարսիւմիլիսան արքա — 209, 210  
 Միթրա (տես Միհր)  
 Միհր — 26, 30, 33—35, 37—  
 39, 60, 67, 83  
 Մշեր — 26, 31, 32, 37—40,  
 58, 79, 94, 137  
 Մուս Մելիք — 246, 247, 249  
 Նեսլուստլիվցի — 171  
 Նոյ — 150, 165  
 Շահ Թահմազ — 236  
 Շահ Իսմայիլ — 236  
 Շիզար (Հմբատ, Արտավազ, Ար-  
 տավազդ) — 26, 37, 41, 42, 45,  
 51—54, 59, 62, 64—73, 75—77,  
 83—86, 89, 91, 92, 94, 96, 97,  
 113, 133, 135, 138, 141, 145,  
 171, 172, 188, 196, 258, 261,  
 283, 284  
 Շիզար — 71  
 Ողիսես — 150  
 Ուստիան — 244  
 Զախումի Բագավոր — 243  
 Զացիկ — 50  
 Պան — 181  
 Պենելոպի — 150  
 Պինթիս — 108  
 Պոռմեթս — 27, 28, 30, 31,  
 33, 35, 38, 46, 57, 65, 67, 82,  
 83, 86—88, 129, 237, 284  
 Ռուանդ — 65  
 Ռոկապ — 37  
 Սաղայիլ — 171  
 Սաթևնիկ — 47—49, 65  
 Սալոմե — 127, 132, 133  
 Սանասար — 58

- Ամանելու Թակնաւ — 281  
 Ազանարիլ — 281  
 Աիրանուս — 181  
 Աուրը Խարապես (Հմմատ. Գի-  
 սանե և Հովհաննես Մկրտիչ՝  
 Աուրը Սարգիս — 92  
 (Նան անձնանունների ցանկում)  
 Աշաստիլցին — 281  
 Ապանդիար (Իսֆանդիար) — 25,  
 35  
 Ավանագին — 30, 32, 54, 58  
 Քամ — 199  
 Քաջ Խազար (Հմմատ. Աղա Նա-  
 զարի և այլ անձնանունների ցանկում)
- Քարք — 232, 233, 238,  
 240, 276  
 Քարոն — 151  
 Քյոռողիլ — 238  
 Քրիստոս (տես Հիսուս Քրիստոս՝  
 անձնանունների ցանկում, պատ-  
 մա-ավանդաբանական և այլ ա-  
 ռումներով)
- Օռա — 142, 172  
 Յավին — 181  
 Յենդոն — 49, 65  
 Յերիդոն, Յրիդոն (տես Հրու-  
 ցեն)

#### ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

- Աբգար Ա. — 14  
 Աբգարյան Դ. — 228  
 Աբեղյան Մ. — 21, 43, 45, 49,  
 53, 57—59, 67, 68, 112, 193,  
 251, 252  
 Աբիխ Հ. — 69  
 Աբովյան Խ. — 52—54, 69, 135,  
 207, 225  
 Աբրահամյան Ա. — 198  
 Ազաթանգեղոս — 6, 98, 99, 134,  
 139, 240, 142—144, 180, 183,  
 185  
 Ազոնց Ն. — 99, 134, 136, 138,  
 140, 141, 180, 191—193, 273  
 Աթանագինս Էպիւկոսոս (ա.  
 Աթանագինս) — 100, 269  
 Ալբանի Միխայլիչ — 209  
 Ալբան Դ. — 64, 79, 171, 168,  
 181, 200  
 Ակինյան Ն. — 34, 162  
 Աճառյան Հ. — 13, 57—60, 63, 65,  
 66, 74, 75, 81, 96, 144, 161,  
 188, 189, 197, 226, 261  
 Ալվազովեկի Հ. — 152  
 Անակ — 137
- Անանիա Շիրակացի — 180  
 Անանուն (մեկնիլ) — 192  
 Անանուն (պատմիլ) — 228  
 Անտրագորա — 150  
 Անդրսեն Հ. — 243  
 Անդրիկյան Ն. — 64, 65, 67  
 Անիկոս Ա. — 20  
 Անտոնիոս — 57, 110—113  
 Աշխազար Բագավոր — 65  
 Ապուինար Լառիկեցի — 149  
 Ապուլոն Հոռոսացի — 184  
 Ապուլոնսկայա-Սորավինսկայա Ի.  
 — 22  
 Առաքել Սյունեցի. — 192  
 Ասսավագոռ քուրմ — 60, 86,  
 95, 101  
 Ավուտսիի (ա. Օգոստինոս) —  
 150, 196  
 Ավղալրեգյան Թ. — 26, 28, 31,  
 32, 37, 54, 59, 60, 65, 70  
 Ավղալրեգյան Մայիս — 40, 122,  
 123  
 Ավերինց Ս. — 195  
 Արանգովկայա Օ. — 187  
 Արգամ — 55, 47, 48

Արդարուն կատակերգակ լա. Ար-  
դարիսն) — 120—124, 133  
Արիստոտել — 10, 22, 23, 72,  
102, 110  
Արխանցան — 204  
Արշակ թ — 182, 183  
Արշակունի Ա. — 18, 20, 161,  
162  
Արտաշես Ա. — 55, 96  
Արտավազ Ա. — 55  
Արտավազզ թ. — 55, 56, 59,  
66, 98, 110—113, 140  
Արհամայան Ա. 267  
Աֆրահան — 168

Բաղալլան Հ. — 96  
Բախտին Մ. — 220  
Բարդաման — 95, 96  
Բարդուղիմնոս առաքալ — 89  
Բարենդ Կենարացի — 149, 152  
Բարբոռ Թ. — 13, 31  
Բոյցան Վ. — 10, 14, 18, 20,  
96, 161—166, 168, 170—172,  
177, 182, 184, 205, 207, 225—  
229, 231, 233, 234, 236, 246, 257,  
259, 262, 265, 266, 270, 276,  
278  
Բերկով Պ. — 209  
Բշարաթ — 14  
Բողրի Մ. — 31, 38  
Բունիմ Մ. — 131  
Բունին Ի. — 29  
Բուռսան Ֆ. — 49  
Բյութանացի — 194

Գաթրճյան Հ. — 145, 150, 193  
Գանձենցան Պ. — 261  
Գայլ Վահան — 228  
Գայոս Պակիանոս — 107—109,  
230, 349  
Գեղեր Հ. — 228  
Գնել — 21  
Գոկուն Ն. — 174, 234, 235  
Գոյցան Պ. — 21, 92, 108

Գոլոսովկեր Յա. — 36  
Գորկիլ Ա. — 125, 226, 267,  
274  
Գրաբար-Գևոսեկ Մ. — 107  
Գրիգորյանվ Ա. — 50  
Գրիգոր Անագարգիսի — 44  
Գրիգորիս քրիստոնեակապոս — 183  
Գրիգոր Լուսավորիլ — 25, 30,  
35, 41, 42, 71, 73, 75, 96—100,  
134—139, 141—146, 158, 183,  
185, 266, 268, 283  
Գրիգոր Խաբեցի (Սերենց) —  
25, 41, 44, 45, 72, 85, 86  
Գրիգոր Մագիստրոս (Պահաժ-  
մուսի) — 25, 27, 33, 44, 61—  
63, 66, 71, 81, 98, 171, 172,  
189, 192, 193, 200, 228, 247  
Գրիգորյան Պր. — 44  
Գրիգոր Տղա — 76  
Գրիլապարցեր Յր. — 20  
Կեորգյան Ն. — 273

Գանգաման Մ. — 37  
Գանեմ Բ. — 29  
Գանեմ Ալիքիերի — 142, 152,  
157, 159, 185, 186, 196, 206  
Գավիթ Անհաղթ — 267  
Գավիթ Զելյոնցի — 192, 200,  
201  
Գավիթ քերական — 192  
Գեմիքըլյան Պ. — 232, 235, 238,  
239, 241, 243—245  
Գիոկեափանոս — 126, 128  
Գիռնիսիոս Թարկացի — 80,  
187, 190, 198, 201  
Գիռն Կասիոս — 110, 111  
Գյումեզիլ Ժ. — 30, 31  
Գորի Պ. — 81  
Գվորեցի Ի. — 112  
Գրուժինինա Ա. — 126

Եղիշեար (Ճողովրդական խաղար-  
կու) — 214, 220  
Եղինիկ Կողբալի. — 44, 45, 70,

- 71, 78, 171, 181  
 հազ կաթողիկոս — 101  
 հասլի մարդարենք — 127  
 հասլի Նէլյոն — 192  
 հվարինով Ե. — 179, 186, 187  
 հվարիգեղես — 28, 72, 98, 108  
 հվարիփոս Կևարացի — 74, 126  
 հրեման Ս. — 61  
 հփրեմ Ասորի — 179  
 Հաբարիս Քանաքեցի — 202,  
 203, 205, 206, 208  
 Ջենոր Գևակ — 269  
 Ջեթունյան Ա. — 186  
 1  
 էլիաս Արիստիկոս — 125  
 էլիոն Ռ. — 104  
 էմիլ Մ. — 34, 193—195  
 էնգելո Ֆր. — 27, 148  
 էպիլ Մ. — 7  
 էսքիլս — 27, 28, 31, 89, 186  
 էրժան Վ. — 13, 16  
 էփրիկյան Ս. — 61  
 Թելլոր Է. — 83  
 Թիդի Զ. — 84, 85  
 Թոմանն Ե. — 107  
 Թոմանն Զ. — 84, 87  
 Թոմանն Ռ. — 144  
 Թորոյան Մ. — 147  
 Թուխ Կրոպ — 259  
 Թումանյան Հովհ. — 232, 233  
 235, 240, 241, 243, 244  
 Ժուանվիլ ասպետ — 117, 132  
 Խեգարդի Ռ. — 22, 23  
 Խոաճակյան Ա. — 69, 232, 235,  
 239  
 Իվանովա Յու. — 54  
 Լալայան Ե. — 18, 20, 66, 207,  
 259, 260  
 Լանդ Ֆր. — 11  
 Լարինա Ե. — 11  
 Լաֆարգ Պ. — 31  
 Լինչ Հ. — 152  
 Լիսիցյան Սուս. — 207  
 207, 274, 277, 279  
 Լիսիաս — 31  
 Լիտվինսկի Բ. — 91  
 Լոռե Ա. — 28, 30, 283  
 Լուկաշ Յո. — 94  
 Լուկիանոս — 31, 35, 36  
 Լուկոմսկի Պ. — 109, 120  
 Լուկոնին Վ. — 37  
 Լիբ-Մարտոս Կ. — 27, 286  
 Լուկյան Պ. — 21, 153, 193,  
 201, 273, 278  
 Խալաթյանց Պ. — 25, 42, 45,  
 60, 72, 78, 86, 93, 94  
 Խախանով Ա. — 37  
 Խաշատրյան Պ. — 118  
 Խաչերյան Լ. — 192  
 Խաչիկյան Լ. — 91  
 Խոշրենյան Վ. — 178, 232, 271  
 Կալիխուլա — 127  
 Կանայան Սու. — 143  
 Կանտ Է. — 36  
 Կավագ Ա. — 34  
 Կավե — 32  
 Կիրիանոս — 125, 126  
 Կիսլյակով Ե. — 34  
 Կիրակոս Արևելյանցի — 44, 79  
 Կլավդիոս — 127  
 Կլեոպատրա — 111, 112  
 Կլուտեղ Ալեքսանդրացի — 78  
 Կորիլինա Մ. — 126  
 Կոզլով Ա. — 93  
 Կորշ Վ. — 106  
 Կունոս Ի. — 227  
 Կրասոս Մարկոս — 106, 107,  
 109, 203, 230, 249  
 Կրիժեցիկ Վ. — 118, 125  
 Կրկյաշարյան Ս. — 111, 229  
 Կրոպ (Տարոնցի Կրոպ) — 247,  
 251

- Հակոբ Մօքենացի — 52, 263  
 Հակոբ սարկովագ — 143  
 Համայ Արենլցի — 192  
 Համբարձումյան Հ. — 88  
 Հայկունի Ս. — 18, 207  
 Հապուշ-Գասիմ — 202  
 Հաջի (Լարախաղաց) — 278  
 Հարությունյան Ս. Բ. — 38, 53,  
251  
 Հարությունյան Անը — 21  
 Հեղեղ Գ. — Ֆր. — 9, 16, 224,  
255  
 Հեփողոս — 27  
 Հետման Բ. — 12  
 Հերովդիս — 127  
 Հերովդիսացար յան Սալոմե՝ ա-  
ռաստիւակիացական անունների  
ցանկում)  
 Հիլգարդ Ա. — 192  
 Հիսոս Քրիստոս — 38, 40, 44,  
45, 115—118, 121, 122, 124,  
125, 127, 131—133, 143, 144,  
147, 149, 154—157, 164, 183,  
196, 199, 176, 178  
 Հյուսիսյան Գ. — 227  
 Հովհանն (Մոկացի Հովհան) —  
248, 253  
 Հովհաննես ավետարանիչ — 116,  
186  
 Հովհաննես Քրասնանակերտցի  
130, 183  
 Հովհաննես Երդնկացի (Սորժո-  
րցի) — 191—193  
 Հովհաննես Երդնկացի (Պլուզ) —  
192, 193  
 Հովհաննես Մկրտիչ (Ա. Կարա-  
սիս) — 42, 98—100, 113, 127,  
133, 145, 266—270, 273, 275,  
279, 283  
 Հովհաննիսյան Ա. — 135  
 Հովհաննիսյան Հ. (Հեղինակը) —  
73—75, 87, 108, 110, 117, 119,  
169, 229, 254, 256, 267  
 Հովհաննիսյան Հովհ. — 70
- Հովհանն Մամիկոնյան — 198,  
199, 228, 248, 269  
 Հովհանն Մայրավանլցի (Մայ-  
րազոնեցի) — 204  
 Հովհանն Մանդակունի — 70, 77,  
155, 164, 204  
 Հովհանն Ոսկերնրան — 266, 278  
 Հովհաննյան Գ. — 122, 155  
 Հովհանոս Փրավիոս — 111  
 Հովհանիսյան Գ. — 248  
 Հովհիս Կեսար — 203, 230
- Զեմիղոկ Բ. — 104
- Զագարյան Ջ. — 126  
 Զագարյան Վ. — 117, 118, 131,  
146  
 Զազար Փարանցի — 181  
 Զաղինյան Ա. — 117  
 Զանալանյան Ա. — 87, 144,  
181, 185, 254, 269  
 Զափանցյան Գ. — 52—74, 56,  
58, 59, 65, 91, 92, 185  
 Զլտճյան Ա. — 162  
 Զուկո (Ժողովրդական խաղար-  
կու) — 231
- Ճանիկյան Կ. — 262  
 Ճեմճեմյան Ս. — 90
- Մաղղակ — 34  
 Մածան քրամապետ — 95—97  
 Մալխասյան Հովհ. — 20, 204,  
207, 276, 279  
 Մալխասյանց Առ. — 63  
 Մալորով Գ. — 196  
 Մանուչարյան Ա. — 147  
 Մառ Ա. — 28, 85, 195  
 Մառ Ն. — 36, 193  
 Մասհեյյան Հ. — 29  
 Մատթեոս ավետարանիչ — 116,  
118, 127, 134, 160  
 Մարտինոս Կ. — 122, 155,  
 Մարկիչ Ա. — 107

- Մարթս կ. — 27, 148  
 Մարտիմիանոս — 120, 126, 128  
 Մելետինսկի Ե. — 84  
 Մելիքության Վ. — 15  
 Մելիք-Օհանջանյան Կ. — 241  
 Մելքոնյան Հ. — 95  
 Մելք Ա. — 62  
 Մեսրոպ Մաշտոց — 151  
 Միկըր Վա. — 37, 88, 129  
 Միխայոլսկի Կ. — 130  
 Մինա զարք Բոլոնիցի — 162,  
 173  
 Միքելանջելո Բ. — 143  
 Մկրտչի Նաղաշ — 165  
 Մնացականյան Ա. — 132, 146,  
 147  
 Մոռորել Զ. — 84  
 Մոկուսկի Ա. — 119, 133  
 Մովսես Խորենացի — 21, 25,  
 33, 34, 45, 53—56, 7, 79, 81,  
 89, 95—97, 190, 183, 195, 197  
 Մովսես Քերոս — 191, 192, 200  
 Մոռոզով Պ. — 20  
  
 Յակոբոս Բ. — 195  
 Յանեն Տրայանոս — 98, 108  
 Յարիս Վ. — 70  
 Յոհանես Ե. — 7, 48, 117  
 Յոհեդ Բ. — 83  
 Յուստի Ֆ. — 60  
  
 Նազարեթյան Ա. — 39  
 Նալբանդյան Մ. — 135  
 Նախանքոսի — 252  
 Նաղաշ Հովհաննես — 164  
 Ներսեն — 126, 127  
 Նըսրը — 130  
 Նիցշե Ֆ. — 181—184  
  
 Շահնուրիան Ա. — 34, 35  
 Շարդին Ժ. — 34  
 Շավուշ Բ. — 140, 182  
 Շիբասիր Վ. — 11, 29, 52, 58,  
 157, 205
- Շմիգու Վ. — 28, 85, 195  
 Շոպեն Ի. — 54  
 Շուշանիկ (Մարտրոսովնի) — 114  
  
 Ռիմագիորոս — 193, 193  
 Ռոկան Ստ. — 135  
 196  
 Ռոզինես (Օրիգան) — 126, 150,  
 Ռոզես Բ — 106
- Ռևիլ Հ. — 27  
 Ռիլսոն Ջ. — 195
- Չամչյանց Մ. — 14  
 Չերեկոս Է. — 83, 85, 195  
 Չիկովահի Մ. — 37  
 Չուղասպյան Բ. — 34
- Պանոս Վ. — 11  
 Պանչևիկոս Ա. — 133  
 Պետրոս առաջին — 209  
 Պետրոսյան Էլմա — 19, 117,  
 132, 147, 226  
 Պետրոսյան Տ. — 14  
 Պիշտառոս — 115, 116, 118  
 Պլատոն — 30—32, 150, 195,  
 166  
 Պլինիոս Կրտսեր — 126  
 Պլոտինարօս — 106—110, 128  
 Պոկրովսկի Մ. — 106  
 Պողարյան Ն. — 63, 171  
 Պոլարսամբրես — 109  
 Պորտեր Բ. — 93  
 Պորֆյորոս Գուսան (ա. Պոր-  
 ֆյուրոս) — 120, 132  
 Պուշկին Ա. — 144, 235  
 Պոռշյան Պ. — 20, 161, 207,  
 264, 265
- Զալյոյան Բ. — 53  
 Զառուկյան Գ. — 77  
 Զանելիձել Դ. — 231  
 Զավախիչյան Բ. — 32

- Անալիլ. — 189  
 Անդեր Պ. — 180, 185  
 Անդրին Պ. — 104  
 Անտորի Է. — 104, 105  
 Անդրեասոն-Մայթ Բ. — 84  
 Անդանսկի Ի. — 196  
 Անատոլը — 81, 92
- Անհաջողան Անդրևյանկ — 53, 252  
 Անհակ Պարթե — 161, 162, 173  
 Անդամբ-Նովա — 269  
 Անդրեյոն Բ. — 144  
 Անդրդիս վարդապետ — 63  
 Անդրդյան Ա. — 277  
 Անդրոսին Թիրական (<sup>Գրաւ-</sup>  
<sup>մատիկուս</sup>) — 49—51, 58, 64  
 Աննկեն Հ. — 126  
 Անեռոս — 228  
 Անդրիանտիս — 281  
 Անդրեն Կոփիսկովոս — 90, 125,  
 133  
 Անդրեկս — 108  
 Անդրատ — 71, 115, 204  
 Անդրելէս — 15, 127, 153  
 Անդրեն — 106  
 Անդրանիկոս — 106  
 Անտանիսկալվիկ Ա. — 122  
 Անդրեանցյան Պ. — 227  
 Անդրեանոս Ալունցի — 192  
 Անդրանց Լ. — 12  
 Անդրանդյան Պ. — 18, 20, 48,  
 49, 65, 207, 232—234, 236, 241,  
 251, 252, 256, 257
- Վազարչ Ա. — 21, 95—97  
 Վազարչ Բ. — 98  
 Վազինդեր Հ. — 93  
 Վայցան Բ. — 84, 87  
 Վանական վարդապետ — 4, 45,  
 52, 57, 66, 91, 172  
 Վասակ Մամիկոնյան — 182,  
 183  
 Վասիլ Վ. — 15
- Վարդան վարդապետ — 44, 45,  
 78, 79  
 Վարդան Արեւելցի — 192  
 Վարդան Մամիկոնյան — 229  
 Վարդանյան Վ. — 260  
 Վասելովսկի Ալեքսանդր — 12,  
 193  
 Վեսելովսկի Յու. — 20  
 Վասիլուսկի-Գերնգրոսս Վ. —  
 18, 20
- Տե Կոսա քրմապետ — 105  
 Տեր-Ազրեսանցրյան Պ. — 207,  
 231  
 Տեր-Հովհաննեսիան Պ. — 207,  
 231  
 Տեր-Ղեղոնցյան Ա. — 143  
 Տեր-Մինասյան Ե. — 34, 39,  
 189  
 Տեր-Մինասյան Վ. — 18, 20,  
 32, 37, 39, 160, 161, 164, 167—  
 169, 171, 173, 207  
 Տեր-Մկրտչյան Պ. — 143  
 Տերոսովիանոս — 125, 283  
 Տիրերիսոս — 127  
 Տիգրան Ա. — 55  
 Տիգրան Բ — 55—57, 97, 113  
 Տիգրան Պ — 95  
 Տոլսոսյ Լ. — 29  
 Տրայանոս — 126, 128  
 Տրդատ Պ — 99—101, 140, 141,  
 158, 184  
 Տրոհովի — 89  
 Տիկանց Ա. — 199, 269  
 Տիկանց Ե. — 18, 207, 232,  
 260, 261, 264
- Քադֆի — 20, 207
- Փառանձեմ թագուհի — 21  
 Փափառոս Բուլանդ — 21, 182  
 Փափաղյան Վահրամ — 94, 258
- Քալանթար Լ. — 122

- |                                    |                                   |
|------------------------------------|-----------------------------------|
| <i>Թագակլոն</i> Հ. — 178, 237, 272 | <i>Յիրզոռուսի</i> — 34            |
| <i>Քլաուզե</i> Գ. — 130            | <i>Յրանկֆորտ</i> Գ. — 195         |
| <i>Թսենֆոն</i> — 31, 229           | <i>Յրանկֆորտ</i> Գ. Ա. — 195      |
| <i>Օգոստոս</i> Թկտավիանոս — 127    | <i>Յրեղեր</i> Հ.—Հ. — 50, 55, 83, |
| <i>Օհան վարդապետ</i> — 251         | 243, 257, 262, 263                |
| <i>Օբբելի</i> Հ. — 101             | <i>Յրեյդենբերգ</i> Օ. — 195       |

## Գլուխ առաջին

ԾՂԲԱՅՎԱՆԻ ԱՌԱՍՊԵԼԸ ԿԱՄ	ՀՆԱԳՈՒՅՆ	ԽՈՐՃՐԴԱՊԱՇՏԱԿԱՆ	
ԴՐԱՄԱՆ			25
Միթողակական պայմանաձեռ			27
Խենթ արքայազիք զրուցք			41
Աբատավազ և Երշաբր, թէ՝ շղթարված փախատական			59
Դավասարդյան խորհուրդ			73
Երր է ստեղծվել Երդարի սառասպել տօնը»			94

## Գլուխ երկրորդ

ՄԻՍԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱՁԵՎԸ ԵՎ ՆՐԱ ՄԻՋԱԴԱՐՑԱՆ	ՓՈԽԱԿԵՐ-
ՊՈԽԵՐԸ	102
Carmina triumphalia	103
Ասոյան-Հանդիսարան և misterium magnum	114
Հուսավորչի միստերիան	134
Միստիկական ողբերգություն	146
Կատակերգական միստերիա	160

## Գլուխ երրորդ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՅՆ ԴՐԱՄԱՆ ԵՎ ԽԱԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱՁԵՎԸ ԵՐԸ	
«Քավության նոխազ»	176
Պարերգական զրաման միջնադարյան հիշատակումներում	177
«Թառ բեղադ» և «խազք» և խայտառուկ»	188
Վանա Փաշան և Քաջ Նազարյ	206
Վիպական անդրադարձումներ	232
Դրամայի խաղացին մողելը	245
Սուրբ Կարապետի ուխտավորը	256
Ազրափակում	266
Առասպելաբանական, վիպական և խաղարկացին անոններ	285
Ահճանուններ	288
	290

ՀԵՆՐԻԿ ՎԱՀԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

### ՀՈՅ ՀԻՒ ԴԻԱՄԱՆՏ ԵՎ ՆԲԱ ՊԱՅՄԱՆԱԳԵՎԵԲԲԻ

Հրատ. Խմբագիր Ա. Հ. Շաղզամյան  
Նկարչական ձեռվորումը Կ. Կ. Պաֆադարյանի  
Տեխ. խմբագիր Հ. Գ. Հմայալյան  
Սրբազրի Մ. Գ. Բլեյան

ԱԲ № 1467

Հանձնված է շարժածքի 7. 06. 1989 թ., Առողջապես կ առաջարկության  
28. 09. 1990 թ.: Զափ  $84 \times 1081/_{32}$  թուղթ Ա 1: Տառապեսակ ցըրքի  
սովորական բարձր տպազգալիցանու վայր. 16,28 մմ., տպազգ.  
 $18,63 + 2$  թ. դունավոր + 4 թ. ան նկար. մասնակի ների. մամուկ  
16,28 Հրատ.-հաշվարկ 14,5 մասնութ. Տաքարանակ 1250; Հրատ.  
Ա 7312: Գամակի Բ388: Գինը 3 ո. 25 լ.:

ՀԿԱ Հրատարակություն, 375019 Երևան Մարշալ Բանյանյան պող. 24 բ-ր.  
ՀԿԱ Հրատարակություն տպարան, 375019, Երևան,  
Մարշալ Բանյանյան պող. 24:

272576

A II  
81936